

ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 5, No 1, 2017



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
5 (1)

Ցեղասպանագիտական հանդես

Journal of Genocide Studies

Журнал исследований геноцида

Լույս է տեսնում 2013 թվականից

5 (1), 2017

Խմբագրական խորհուրդ

Հայկ Դեմոյան, պ. գ. դ. (գլխ. խմբագիր)

Սուրեն Մանուկյան, պ. գ. թ.

(գլխ. խմբագրի տեղակալ)

Լևոն Աբրահամյան, պ. գ. թ.

Մելինե Անումյան, պ. գ. թ.

Արսեն Ավագյան, պ. գ. դ.

Ռոբերտ Թաթոյան, պ. գ. թ.

Վալերի Թունյան, պ. գ. դ.

Անահիտ Խոսրոնա, պ. գ. թ.

Աշոտ Հայրունի, պ. գ. դ.

Նարինե Մարգարյան, պ. գ. թ.

Ռուբեն Սաֆրաստյան, պ. գ. դ.

Գևորգ Վարդանյան, պ. գ. թ.

Ցեղասպանագիտական հանդես, Երևան:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2017.– 188 էջ:

Հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ

Հրատարակիչ՝ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Հասցեն՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Երևան, 0028

Հեռ.՝ (+374 10) 39 09 81, էլ. հասցեն՝ handes@genocide-museum.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նարինե Հակոբյան

Համիդյան կոտորածներն ականատես-վերապրողների վկայություններում 7

Ռոբերտ Թաթոյան

«Մի քանի թվեր»։ Ա-Դոյի «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները»
ուսումնասիրությունը (1912 թ.) և Հայկական հարցի վերարժարժման
ժամանակաշրջանում արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ
հայկական մամուլում ծավալված բանավեճը 32

Ավետիս Հարությունյան

Կոտորածների սպառնալիքը և անապահովության նոր դրսևորումները Վանի
նահանգում 1913-1914 թթ. հայ-քրդական հարաբերությունների համատեքստում 65

Դերենիկ Մելիքեան

Հիսիսային Իրանում քրիստոնեայ բնակչության (հայերի և ասորիների)
կոտորածները 1914-1916 թթ. 78

Նարինե Մարգարյան

Հայ տարագիրների ինտեգրումը Սիրիայի սոցիալ-տնտեսական կյանքում (1920-1924 թթ.).... 92

ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Շուշան Խաչատրյան

Կրոնի հիմնահարցը Մեծ եղեռնին վերաբերող ուսումնասիրություններում 111

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Ռեզինա Գալուստյան

Մեկ քայլ դեպի թուրքական ինքնության կառուցում. «մենք» և «նրանք»
կաղապարների ձևավորումը 1911-1913 թթ. 128

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Միհրան Մինասեան

Անտիպ փաստաթուղթեր 1909-ի Անտիոքի հայոց կոտորածին մասին 141

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ինեսա Ստեփանյան

Մարզվանի հայությունը ցեղասպանության տարիներին (1915-23 թթ.)..... 165

Էլինա Միրզոյան

Հրանտ Դինք. դրվագներ կյանքից և խմբագրական գործունեությունից 174

Հեղինակների մասին 185

CONTENT

HISTORY

Narine Hakobyan

Hamidian Massacres in the Eyewitnesses Testimonies 7

Robert Tatoyan

“A Couple of Figures.” The Study of A-Do “Van, Bitlis and Erzeroum vilayets” (1912) and Western Armenian Population Number Debate in the Armenian Press during the Period of Armenian Reform Package Negotiations 32

Avetis Harutunyan

The New Manifestations of Insecurity in the Province of Van during 1913-1914 in the context of Armenian-Kurdish relationships 65

Derenik Melikyan

The massacres of the Christian population (Armenians and Assyrians) in Northern Iran in 1914-1916 78

Narine Margaryan

The Integration of the Armenian Refugees into the Suria’s Social-Economic Life (1920-1924) 92

RELIGIOUS STUDIES

Shushan Khachatryan

The Religious Issue in the Armenian Genocide Studies 111

SOCIOLOGY

Regina Galustyan

One Step towards Turkish Identity Building: the Formation of “Us” and “Them” Concepts in 1911-1913 128

SOURCES

Mihran Minasyan

Unpublished Documents about the Massacre of Antioch (Antakya) Armenians in 1909 141

REPORTS

Inessa Stepanyan

Armenians of Marsovan during the Genocide (1915-23) 165

Elina Mirzoyan

Episodes from Life and Editorial Activity of Hrant Dink 174

About Authors 185

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Нарине Акопян

Гамидовская резня в свидетельствах очевидцев 7

Роберт Татоян

«Несколько чисел»: исследование А-До «Ванский, Битлисский и Эрзерумский вилайеты» (1912) и дебаты в армянской прессе по вопросу о численности населения Западной Армении в период возобновления Армянского вопроса 32

Аветис Арутюнян

Угроза погромов и новые проявления беззащитности в Ванской области в 1913-1914 гг. в контексте армяно-курдских отношений. 65

Дереник Меликян

Резня христианского населения (армян и ассирийцев) в Северном Иране в 1914-1916 гг. 78

Нарине Маргарян

Интеграция армянских беженцев в социально-экономическую жизнь Сирии (1920-1924) 92

РЕЛИГИОВЕДЕНИЕ

Шушан Хачатрян

Религиозный вопрос в исследованиях Геноцида армян 111

СОЦИОЛОГИЯ

Регина Галустян

Один шаг к построению турецкой идентичности: формирование концепций «мы» и «они» в 1911-1913 гг. 128

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ

Мигран Минасян

Неопубликованные документы о резне армян Антиоха (Антакия) в 1909 году 141

СООБЩЕНИЯ

Инесса Степанян

Армянство Марзвана в годы геноцида (1915-23 гг.) 165

Элина Мирзоян

Эпизоды из жизни и редакторской деятельности Гранта Динка 174

Об авторах 185

Պատմություն • History • История

ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նարինե Հակոբյան

1894-1896 թթ. արևմտահայության կոտորածները բավական լավ փաստարկված են տպագիր սկզբնաղբյուրներով, ինչպես նաև հետազոտվել են Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատանքներում¹: Թեման, սակայն, ուսումնասիրողների համար մինչև այսօր չի կորցրել իր գիտական կարևորությունն ու հետաքրքրությունը: Արևմտահայերի՝ 1890-ականների կոտորածների մասին օսմանյան պետական փաստաթղթերի գրեթե բացակայության կամ անհայտ լինելու պայմաններում թեմային նվիրված հետազոտությունների աղբյուրագիտական հիմքը հիմնականում կազմված է ժամանակի արևմտյան մամուլի, Օսմանյան կայսրությունում գտնվող օտարերկրյա առաքելությունների ներկայացուցիչների հաղորդած տեղեկություններից: Մասնագիտական գրականության մեջ, սակայն, կարծես քիչ է անդրադարձ կատարվել համիդյան կոտորածների վերապրողների հաղորդած տեղեկություններին:

Հոդվածը նվիրված է համիդյան կոտորածների ականատես-վերապրողների հաղորդած տեղեկություններին, որի նպատակը համիդյան կոտորածների ուսումնասիրության մեջ ականատես-վերապրողների վկայությունների՝ որպես սկզբնաղբյուրների դիտարկումն ու հետազոտությունն է: Այդ նպատակին փորձել ենք հասնել՝ համիդյան կոտորածների առանձին (հիմնական) ասպեկտները քննարկելով ականատես-վերապրողների վկայությունների հաղորդած տեղեկությունների, առանձին դեպքերում նաև դրանց հեղինակների ընկալումների գուճադրման, ինչպես նաև համեմատության արդյունքում: Դրա օգնությամբ փորձել ենք հասկանալ ինչպես յուրաքանչյուր վկայության աղբյուրագիտական առանձին արժեքը, այնպես էլ այն հավաքական խճանկարը, որը ներկայացնում են համիդյան կոտորածները գոհի տեսանկյունից:

Այդ նպատակով ուսումնասիրել ենք խնդրո առարկա հիմնախնդրի վերաբերյալ մեզ հասանելի բոլոր տպագիր վկայությունները՝ ինչպես առանձին գրքերի տեսքով հրատարակվածները, այնպես էլ տարբեր հրատարակություններում տեղ գտածները: Խոսքը Վերժինե Սվազլյանի հեղինակած «Հայոց ցեղասպա-

¹ Տե՛ս Kirakossian Arman J., *The Armenian Massacres 1894-1896: British Media Testimony*, Dearborn: The Armenian Research Center, 2008; Kirakossian Arman J., *The Armenian Massacres 1894-1896: U. S. Media Testimony*, Detroit: Wayne State University Press, 2004:

նություն. ականատես-վերապրողների վկայություններ»², ինչպես նաև «Հուշագրական ժառանգություն»³, «Վերապրողները կը վկայեն»⁴, «Hundred-Year Legacy of Courage: Celebrating the Lives of Armenian Genocide Survivors in our Community»⁵ գրքերի մասին է: Չնայած նշված գրքերում հիմնականում ներկայացված են 1915 թ. ցեղասպանությունը վերապրածների վկայություններ, սակայն հանդիպում են նաև այնպիսի անհատների վկայություններ, ովքեր վերապրել են (սաև) 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածները:

Ականատես-վերապրողի վկայության՝ որպես պատմական աղբյուրի ամբողջական գնահատման համար դրանց քննարկումը բաժանել ենք երկու ուղղության: Առաջին մասում մենք քննարկելու ենք այդ վկայությունների «ստեղծման և փոխանցման» գործընթացի հետ կապված հարցեր, իսկ մյուս մասում արդեն կխոսենք այդ վկայություններում ամփոփված փաստական նյութի մասին: Երկու ուղղությամբ քննարկումը կարևոր է ինչպես համիդյան կոտորածների պատմական պատկերը ստեղծելու, այնպես էլ այդ պատկերի ճշգրտությունը և հավաստիությունը գնահատելու համար:

1. «Ձև». ականատես-վերապրողի վկայությունը որպես պատմական աղբյուր

ա. Տեսական հարցեր

Ինչպես ցանկացած պատմական աղբյուր, ականատես-վերապրողի վկայությունը պատմական իրադարձության (համիդյան կոտորածների) մասին տեղեկությունն է: Այս դեպքում այդ տեղեկությունը մեզ է փոխանցվել կոտորածների փորձությունը հաղթահարած մարդու (բանավոր), կամ նրա թողած (ուղղակի կամ միջնորդավորված) գրավոր տեղեկության միջոցով: Քանի որ համիդյան կոտորածներից անցել է արդեն ավելի քան 120 տարի, մեզ հասած բոլոր վկայություններն արդեն գրավոր տեսքով են: Այսինքն՝ բանավորը ևս գրի է առնվել՝ վերածվելով գրավորի:

Հետազոտող Լորեն Շիրինյանն իր աշխատանքներից մեկում, փորձելով տեսական բնորոշում տալ ականատես-վերապրողների վկայություններին, նշում է, որ ականատես-վերապրողների հուշերն արձակ պատմություններ են՝ գրված իրական անձանց կողմից իրենց կյանքի մասին, որոնք միննույն ժամանակ տվյալներ են պարունակում տվյալ ժամանակահատվածի պատմության, սոցիալական խմբի մասին, որին պատկանում է հեղինակը: Նա վկայությունները դասակարգում է՝ առանձնացնելով **պատմական, գրական, գրական-պատմագրական հուշեր**,

² Վերթինե Սվազյան, *Մեծ եղեն. արևմտահայոց բանավոր վկայություններ*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1995:

³ *Հուշագրական ժառանգություն*, Գիրք ԺԳ, Երևան, 2011:

⁴ *Վերապրողները կը վկայեն*, Պէյրոթ, 2005:

⁵ *Hundred-Year Legacy of Courage: Celebrating the Lives of Armenian Genocide Survivors in Our Community*, Chhange: Center for Holocaust, Human Rights and Genocide Education, 2015.

ինքնակենսագրություններ⁶: Դասակարգման մեկ այլ փորձ է արված «Ցեղասպանություն» հանրագիտարանում, որտեղ դրանք բաժանվում են **հուշերի, օրագրերի**. վերապրողի կամ մեկ այլ անձնավորության կողմից **ցանկացած գրավոր, բանավոր կամ տեսագրված տեղեկություն** ցեղասպանության գործողության վերաբերյալ⁷: Նշված օրինակներն ականատես-վերապրողի կողմից վկայության ներկայացման գրավոր ձևի տարատեսակներն են կամ առնվազն թեմային առնչվող մասնագիտական գրականության մեջ հանդիպող դասակարգման փորձեր:

Այդուհանդերձ, ցանկացած վկայության՝ պատմական աղբյուր դիտարկելու հիմքում առաջնային կարևորություն են ստանում այդ նույն վկայության պարունակած փաստական նյութի փոխանցման մակարդակը և դրա հավաստիությունը: Ականատես-վերապրողների վկայությունների՝ որպես պատմական իրադարձությունը հետընթաց ժամանակահատվածում «վերստեղծելու» կամ «պատկերելու» համար օգտագործվող փաստական նյութի արժեքի մասին խոսելիս հարկ է նկատել, որ մասնագետների մոտ դժվար է գտնել մեկ ընդունված տեսակետ: Առանձին հեղինակներ դրանք շատ են կարևորում⁸, մյուսները՝ ոչ այնքան⁹: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ականատես-վերապրողների վկայությունները որպես պատմական աղբյուր, ունեն ինչպես «թերություններ», այնպես էլ «առավելություններ»:

Առաջին դեպքում դրանք դիտարկվում են որպես շատ վիճարկելի՝ ունենալով սուբյեկտիվության մեծ բաժին: Դրանք իրադարձությունը ներկայացնում են անձնական տեսանկյունից՝ զգացմունքային-հուզական մեծ «համեմունքով»: Բացի դրանից, եթե հաշվի առնենք, որ այդ վկայություններից շատերը գրի են առնվել իրադարձություններից շատ տարիներ անց՝ կրելով նաև ականատես-վերապրողի կողմից ներկայացման ձևի, ինչպես նաև բովանդակային որոշակի փոփոխություններ, ապա դրանց արժանահավատության աստիճանը բազմաթիվ մասնագետների համար էլ ավելի է նվազում:

Այդուհանդերձ, հիշելով թերությունները, չպետք է մոռանալ նաև դրանց ունեցած «առավելությունների» մասին, որովհետև ականատես-վերապրողների վկայությունները եղել և շարունակում են կարևոր աղբյուր մնալ մասնագետների համար, իսկ առանձին հետազոտությունների համար դրանք ունեն կենսական նշանակություն: Այդ «առավելություններից» առաջինը, թերևս, այդ աղբյուրների հաղորդած նյութի «կենդանիությունն» է, որը հնարավորություն է տալիս այլ աղբյուրների, օրինակ՝ դիվանագիտական փաստաթղթի, հաղորդած չոր տեղեկությունները «համեմել» անհատների ունեցած փորձառություններով: Հենց այս տեսակի աղբյուրներն են հնարավորություն տալիս պատմական իրադարձությունը դիտարկելու «անհատական հեռանկարով», ինչպես նաև տալու մանրամասներ, որոնք, օրինակ՝ կարող են բացակայել այս կամ այն փաստաթղթում: Այստեղ խնդրի վերաբերյալ

⁶ Տե՛ս Lorne Shirinian, *Survivor Memoirs of The Armenian Genocide*, England: Taderon Press, 1999, էջ 19:

⁷ Տե՛ս *Encyclopedia of Genocide*, Volume I, Oxford, England, 1999, էջ 241:

⁸ Մանրամասն տե՛ս Totten Samuel, *First-Person Accounts of Genocidal Acts Committed in the Twentieth Century: Annotated Bibliography*, Westport, CT: Greenwood Press, 1991, էջ xxvi-xxx:

⁹ Նույն տեղում, էջ xxxvi-xxxix:

տեղին դիտարկում է արել պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը. «Կարևոր հրահարձությունների վերաբերյալ ականատես-վերապրողների վկայությունները կարող են նույնքան արժեքավոր լինել, որքան պաշտոնական հրապարակումներն ու զեկույցները: Տվյալ տարբերակներում անհատները հաղորդում են տեղեկություններ, որոնք հնարավոր չէ գրնել այլ փաստաթղթերում»¹⁰:

բ. Թողնելով վկայություն. ինչո՞ւ և ինչպե՞ս

Վկայությունների թերությունների վերաբերյալ ցեղասպանագետ Սամուել Տոտենն առանձնացնում է հետևյալը.

- ա. վերապրողները կարող են գրագետ չլինել՝ այդպիսով չսփրապետելով գրավոր վկայություն թողնելու եղանակներին,
- բ. հեղցեղասպանական շրջանում վերապրողները, հնարավոր է, դեռ շարունակում են պայքարը զոյաբնելու համար, այդպիսով իրենց ապրած ողբերգության արձանագրումը չի դառնում նրանց համար ամենակարևորը,
- գ. վերապրողները, հնարավոր է, չունեն բավարար ֆինանսական միջոցներ՝ արձանագրելու և հավաքելու վկայություններ,
- դ. վերապրողները, հնարավոր է, չունեն իրենց փորձառությանը հետաքրքրվողների լսարան, այդպիսով որևէ մեկը չի հավաքում կամ աջակցում իրենց ողբերգության փաստագրումը,
- ե. վերապրողները, հնարավոր է, չեն վստահում այն մարդկանց ու նրանց մտադրություններին, ովքեր փաստագրում են իրենց պատմությունները,
- զ. վերապրողները, հնարավոր է, դեռ ապրում են այն նույն ռեժիմի իշխանության ներքո, որն իրագործել է ցեղասպանությունը, ինչն էլ կանխում է նրանց փորձառության փաստագրումը¹¹:

Թերևս հիշյալ բոլոր գործոններն էլ (միասին կամ առանձին) կարող են առկա լինել համիդյան կոտորածներին վերաբերող վկայությունների ստեղծման պատմություններում: Առկա վկայությունների պարագայում, սակայն, ակնհայտ է, որ հիշատակված թերություն-գործոնների մի մասը չի աշխատել, իսկ մյուս մասը կորցրել է իր նշանակությունը՝ պայմանավորված այդ վկայությունների բավական ուշ հավաքման և գրառման հանգամանքով: Օրինակ, եթե XIX դարի վերջին կամ XX դարի սկզբին ականատես-վերապրողը, հնարավոր է, երկյուղեր վկայություն թողնելուց, ապա, օրինակ՝ 1930-ական թվականներին այլ երկրում ապրող վերապրողը գուցե չունենար նման վախի զգացում:

Մեր համոզմամբ, սակայն, վկայության՝ որպես պատմական աղբյուրի գնահատման համար շատ ավելի ուժեղ փաստարկ կարող է լինել ականատես-վերապրողների կողմից վկայություններ թողնելու նպատակների, պատճառների կամ շարժառիթների քննարկումը: Այսպես, վկայությունները բանավոր պատմութ-

¹⁰ Hovannisian Richard, “Introduction,” in Stanley E. Kerr, *The Lions of Marash: Personal Experiences with American Near East Relief 1919-1922*, Albany: State University of New York Press, 1973, p. xxiii.

¹¹ St’u Totten Samuel, *First-Person Accounts of Genocidal Acts Committed in the Twentieth Century: Annotated Bibliography*, Westport, CT: Greenwood Press, 1991, էջ xliii-liii:

յուններից գրավոր տեսքի բերելու առումով, ինչպես գրեթե բոլոր կոտորածների կամ ցեղասպանությունների դեպքում, նախաձեռնողները հիմնականում գիտնականները կամ մարդու իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող կազմակերպություններն են: Համիդյան կոտորածների դեպքում, իհարկե, հաշվի առնելով դրանց ժամանակը, խոսք կարող է լինել միայն գիտնականների մասին: Այդ խմբում կարելի է դասել, օրինակ՝ Վերժինե Սվազյանի հավաքած կամ տարբեր այլ ժողովածուներում և այլ հրատարակություններում պահպանված վկայությունները: Այստեղ նպատակը կամ պատճառը պարզ է. նրանք այդ աշխատանքը կատարել են՝ հստակ նպատակ ունենալով պահպանել դրանք որպես պատմական աղբյուր: Այս խումբ վկայությունները հիմնականում աչքի են ընկնում վկայությունն արձանագրելու բավական բարձր մակարդակով:

Համիդյան կոտորածներին վերաբերող **երկրորդ** խմբի վկայությունների նպատակն իրենց ընտանիքի պատմություն ստեղծելն է, իրենց տատապանքների մասին տեղեկություն թողնելը, հաջորդ սերունդներին իրենց նախնիների մասին տեղեկություն տրամադրելը: Այսպես, վերապրող Մարկոս Տեր-Մարկոսյանը նշում է.

«Կեանքիս ճամբորդութեան ընթացքին այն շրջանին հասեր եմ, երբ մանկութիւնս խնամողները եւ երիտասարդութիւնս հսկողները վաղուց արդէն մեկնած են այս աշխարհէն: Վերյիշումը մը անոնց մասին՝ քաղցր պարտականութիւն մը եւ երախտագիտական գործ մ'է: Նպատակս է յիշատակել մեր ընտանիքի անձերը եւ անոնց կեանքը, որոնք իրենց լուսագոյնը ըրած են իրենց յաջորդներու մասին: Երկրորդ նպատակս է յիշատակութիւն մը ընել հայրենի ընտանեկան եւ ընկերային կեանքի եւ սովորութիւններու, որ անդարձ կորան ընդհատումով մը, հայրենի երկրի կորստով...»¹²:

Նույն շարքում կարելի է դասել նաև ամերիկահայ հեղինակ փիլիսոփայության պրոֆեսոր Արմեն Մարսոբյանի աշխատանքը: Նա իր գրքի¹³ նախաբանում նշում է, որ դեռևս 1980-ականների կեսին նրա քեռիները՝ Հմայակ և Արա Դիլդիլյանները, ովքեր հավաքել էին բազմաթիվ փաստաթղթեր, նամակներ և վկայություններ, փորձում էին իրենց ընտանիքի պատմությունը գրի առնել: Սակայն եղբայրներից մեկը հանկարծակի մահանում է, իսկ մյուսը՝ հիվանդանում: Արմեն Մարսոբյանը նշում է, որ այդ ժամանակ ինքն իրեն լուր խոստացել էր իրականացնել նրանց ցանկությունը, ապա հավելում, որ այդ գիրքը գրելով և ցուցադրություններ կազմակերպելով՝ ինքն իրեն համարում է իր ընտանիքի պատմության կրողը և փոխանցողը:

Հակոբ Ալթունյանն իր «Հօրս՝ Կարապետ Ալթունեանի յուշերը» վկայության նախաբանում¹⁴, որը վերնագրված է «Հօրս յուշերուն մասին», նշում է, որ իր հայրը սիրում էր ընտանիքի անդամների՝ իր շուրջը հավաքված լինելու ժամանակ իր

¹² Տե՛ս Մարկոս Տեր-Մարկոսեան, *Յուշեր եւ խոհեր*, Վենետիկ, Ս. Ղազար, 1958, էջ 8:

¹³ Armen T. Marsoobian, *Fragments of a Lost Homeland: Remembering Armenia*, London-New York: I. B. Tauris, 2015.

¹⁴ Տե՛ս Յակոբ Ալթունեան, *Հօրս՝ Կարապետ Ալթունեանի յուշերը*, Թորոնթո, 2013, էջ 5, 6:

հուշերից դրվագներ պատմել: Հոր պատմածները չմոռանալու համար որոշում են ժապավենի վրա ձայնագրել, ինչը և հետագայում տպագրում են¹⁵:

Առանձին դեպքերում սեփական փորձառության արձանագրման, դրա վերաբերյալ հիշողության պահպանման անձնական նպատակներն ընդգրկում կամ միգուցե ներկայացվում են որպես ազգագուտ նպատակներ: Վկայություններից մեկի հեղինակն ահա այսպես է ներկայացնում դրա արձանագրման նպատակը.

«Այս աշխատանքը սիրով կատարեցի, այն յոյսով, որ գուցե օգտակար հանդիսանամ իմ տառապեալ ազգին: Մեծ երջանկություն պիտի համարեմ եթե ապագայ սերունդը կարդայ ու իր սրտին վրայ դրոշմ է իր նախնեաց Սրբազնագոյն ճակատամարտը, նաեւ ջանայ հետեւիլ անոնց ազատատենչ ուղիին: Այդ պիտի ըլլայ իմ վարձատրութիւնը»¹⁶:

Այս նույն խմբի մեջ պետք է ընդգրկել նաև այն վկայությունները, որոնց արձանագրման նախաձեռնողները վերապրողների զավակներն են: Ավելին՝ առանձին դեպքերում անգամ վերապրողը վկայություն է թողել իր զավակի խնդրանքով: Այսպես, Երվանդ Կյուրեղյանը նշում է.

«Այս հուշերս ես գրի առա իմ տղա Վարուժանի խնդրանք, և այս հուշերս կթողնեմ զավիք սերունդներիս համար իբրև մի հիշատակ ու նաև մի կտակ: Թող սերնդեսերունդ կարդան և հասկանան, որ իրենց մեծ հայր Երվանդը ո՞ր երկրից է եղած, և նրա երկիրը ո՞ր քաղաքն է, և ո՞ր գյուղն է, և, մանավանդ, Երվանդի մեծ պապի պապերը ո՞ր երկրից են եղած և ինչո՞ւ իրենց երկրից եկած են, Քերծ գյուղը շինած են և ապրած են, ի՞նչ հանգամանքով փախած են և ինչո՞ւ են փախած: Այս ամենը գրեցիմ, որ չմոռանան իրենց տոհմական շառավիղը...»¹⁷:

Բավական հետաքրքիր է **երրորդ** խումբը, որի մեջ մտնող վկայությունների արձանագրման նպատակը մի կողմից մարդկության նկատմամբ իրականացված այս դաժանությունների դեմ բողոքի ձայնի բարձրացումն է¹⁸, իսկ մյուս կողմից ավելի հեռուն գնալով՝ փորձել են սեփական փորձառության մասին պատմելով՝ թույլ չտալ նման ողբերգությունների կրկնությունը՝ ուղղակիորեն հետապնդելով կանխարգելիչ նպատակներ: Ուշագրավ է, որ հիմքում չունենալով գիտական մոտեցում՝ ենթագիտակցաբար նրանք իրենց առջև դրել են այնպիսի նպատակ,

¹⁵ Նույն կերպ Տիգրան Տարազճյանն իր վկայության մեջ ներկայացնում է իր հոր՝ Հարություն Տարազճյանի պատմածները (տե՛ս Տիգրան Յ. Տարազճեան, *Հօրս յիշարակաները*, Թորոնթօ, 1995): Մեկ այլ դեպքում Ռուբեն Խաչատրյանը, ով ծնվել է 1903 թ., իր «Եղևնիի հավերժ ծխացող հուշեր» հուշագրությունում պատմում է, թե ինչպես էին 1910-1913 թթ. ձմռան ամիսներին Բազադիճ ավանի հայկական օդաներում պատմում 1895 թ. աշնան կոտորածների մասին (տե՛ս Ռուբեն Խ. Խաչատրյան, *Եղևնիի հավերժ ծխացող հուշեր*, Երևան, 2002, էջ 7):

¹⁶ Տե՛ս Նիկողոս Գազանճեան, *Յուշագրութիւն Եղևնիոյ 1895-ի ջարդէն մինչև 1915-ի հերոսամարտը եւ եղևնը*, Երևան, 2004, էջ 22, 23:

¹⁷ Տե՛ս Երվանդ Կյուրեղյան, *Իմ հուշերի ճանապարհով*, Երևան, «Լուսակն», 2009, էջ 18:

¹⁸ Տե՛ս Bertha Nakshian Ketchian, *In The Shadow Of The Fortress: The Genocide Remembered*, Cambridge, Mass.: Zoryan Institute for Contemporary Armenian Research and Documentation, 1988, էջ ix-x:

ինչպիսին մեր օրերում հետապնդում է ցեղասպանության վերաբերյալ կրթությունը: Այսինքն՝ նրանք անուղղակիորեն առաջ են քաշել «կրթել կանխելու համար» սկզբունքը¹⁹:

Նույն խմբի մեջ որոշ վերապահությամբ կարող ենք ընդգրկել այն վկայությունները, որոնց միջոցով դրանց հեղինակներն իրենց երեխաներին պատմել են Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած դաժանությունների միջով իրենց անցած ուղու մասին, որպեսզի նրանց ուժ տան: Այսպես, Նատմի Թովայանն իր վկայության²⁰ սախաբանում նշում է, որ 11 տարեկան է եղել, երբ առաջին անգամ լսել է իր Մարաշում ծնողների կյանքի պատմությունը, և իր մայրը պատմել է այդ դժվար փորձառության մասին, որպեսզի քաջալերի նրանց լինել խիզախ և հաղթահարել ամեն գիշեր արձակվող բրիտանական ռումբերի նկատմամբ ունեցած վախը²¹:

Մեր ուսումնասիրած վկայությունների արձանագրման շարժառիթների մասին խոսելիս պետք է նշենք, որ դրանց մի զգալի մասն էլ դժվար է ընդգրկել մեր առանձնացրած խմբերից որևէ մեկում, քանի որ դրանց շարժառիթների մասին կամ հիշատակություն չկա, կամ էլ պարունակում են քննարկված պատճառներից ոչ թե միայն մեկը, այլ միանգամից երկուսը կամ երեքը:

Այսպիսով, վկայությունների արձանագրման դրդապատճառների հետազոտությունը մեզ թույլ է տալիս դրանք հարաբերականորեն հավաքել չորս խմբերի մեջ: Յուրաքանչյուր խումբ ունի իր առանձնահատկությունները՝ կապված դրանք արձանագրելու նպատակների հետ (տե՛ս աղյուսակ 1): Գլխավոր եզրահանգումն այն է, որ վկայությունների արձանագրման և ոչ մի պատճառ չի նվազեցնում դրա հավաստիության աստիճանը:

Աղյուսակ 1

Վկայությունների արձանագրման նպատակները կամ պատճառները			
I խումբ	II խումբ	III խումբ	IV խումբ
Գիտական հետազոտությունների համար	Ընտանիքի, գերդաստանի պատմությունը պահելու համար	Ողբերգության մասին բարձրաձայնում կանխարգելիչ նպատակներով	Խառը (կամ չի նշվում պատճառը, կամ առկա են մեկից ավելի պատճառներ)

¹⁹ Տե՛ս օրինակ՝ Սարգիս Պալապանեան (Պալապան Խոնա), *Կեանքիս փար ու պաղ օրերը (Այնթասպ-Քենասպ-Հալէպ)*, խմբագիր՝ բժ. Թորոս Թորանեան, Հալէպ, 1983: Այս և ցեղասպանության վերաբերյալ կրթության այլ հարցերի մասին շատ հետաքրքիր վերլուծություն է առկա հետևյալ հոդվածում՝ Ellen J. Kennedy, *Redefining Genocide Education* (առցանց՝ http://www.genocidewatch.org/images/Genocide_Redefining_Genocide_Education.doc).

²⁰ Տե՛ս Naomi Getsoyan Topalian, *Dust to Destiny*, Massachusetts: Baiker, 1986.

²¹ Հեղինակը նաև նշում է , որ դա տեղի է ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Գերմանիան գրավել էր Ֆրանսիան, և Լիբանանը՝ որպես ֆրանսիական մանդատ, ներգրավվել էր (տե՛ս Naomi Getsoyan Topalian, *Dust to Destiny*, Massachusetts: Baiker, 1986).

գ. Վկայությունների արձանագրման ժամանակի հետ կապված հարցեր

Համիդյան կոտորածներին վերաբերող ականատես-վերապրողների վկայությունները՝ դրանց հեղինակների կողմից գրի առնվելու ժամանակի տեսանկյունից կարելի է բաժանել երեք խմբի: **Առաջին** և ամենափոքր խումբն այն հուշագրություններն են, որոնք գրվել են դեպքերի ժամանակ, անմիջապես հետո կամ շատ կարճ ժամանակ անց: Այսպես, 1895 թ. Խարբերդի կոտորածի մասին պատմող Հակոբ Քահանա Բարեչանյանի վկայությունը գրվել է հենց ջարդի ժամանակ²², այդ պատճառով էլ այդ վկայությունը կարելի է դասել օրագրերի շարքում. ուսումնասիրված վկայություններից մեզ հանդիպած թերևս միակ օրագիր-վկայությունն է 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածի մասին: Այս շարքում կարելի է դասել նաև Տեր Ղևոնդ քահանայի հուշագրությունը²³, ով հուշերը գրի է առել դեպքերից համեմատաբար կարճ ժամանակ անց: Ինչպես նշվում է վկայության առաջաբանում, նա այդ ամենը գրի է առել հատված առ հատված: Հիշարժան է այն, որ նրա գրառումները թուրքերը ոչնչացրել են տունը կողոպտելու ժամանակ, սակայն նա նորից գրի է առել իր փորձառությունը տարիներ անց՝ 1908-1910 թթ., Հալեպում²⁴:

Երկրորդ և ամենամեծ խումբն այն վկայություններն են, որոնք գրվել են բավական ուշ, որոնց հեղինակներն իրենց վկայությունների նախաբանում կամ առաջին գլխում նշում են, թե քանի տարեկան էին վկայությունը գրելու ժամանակ: Օրինակ՝ Եփրեմ Ճոնագյանն իր «*Իրաւունքը ճշմարտութեան, յուշեր չորս կոտորածներէ*» վկայության մեջ գրում է.

«Այսօր երբ այս տողերը կը գրեմ Լոս Անճելլոս, Քալիֆորնիոյ մէջ, եօթանասունհինգ տարիքս անցած եմ: Այն ատեն այդ տանիքին վրայ Թուրքիոյ Մարաշ քաղաքին մէջ հազիւ թե հինգ տարեկան էի: Բայց այդ առտուն, Նոյեմբեր 18, 1895-ը եւ յաջորդող դէպքերը ինծի համար կը մնան կենդանի եւ անմոռանալի»²⁵:

Սարգիս Պալապանյանն իր «*Կեանքիս փար ու պաղ օրերը*» վկայության նախաբանում նշում է.

«Հասել եմ կեանքիս աշունին. կը զգամ թէ տառապանքով, զրկանքով, ցաւով ու մահուան դէմ պայքարելով շահած կեանքիս պատմութիւնը,

²² Վկայության ծանոթագրության մեջ այսպես է նշվում. «...Այս արինտոս ու կրակոտ Խարբերդի պատմութիւնը գրած ու պահած էր մանրամասնօրէն, սուրի եւ հուրի մէջտեղէն եւ Ամերիկա 1907-ին հասնող վերոյիշեալ քահանան, թէ ականատես, եւ թէ իր շուրջը դարձող օրուան անցողարձերուն տեղեակ, միանգամայն իր կենաց եւ մահու սեւ ճակատագրին ներքեւ անկեայ հեծեժող եւ ազատուողը» (մանրամասն տե՛ս Յակոբ ՔՀՆՅ. Բարեչանեան, *Խարբերդի կոտորածէն, 1895 հոկտեմբերի 30*, Պօստոն, 1916, էջ 6):

²³ Տե՛ս Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տեր Ղևոնդ քահանայի յուշերը*, Երևան, «Անտարես», 2013, էջ 6:

²⁴ Այս խմբում կարելի է ընդգրկել նաև Մարիցա Նազյանի վկայությունը, որը նա գրի է առել 1918 թ. հունիսին (տե՛ս Մարիցա Նազյան, *Արսորի ճամբան*, գրեց՝ Հ. Յակոբ Ծ. Վ. Քօսեան, Պէյրուօ, 1975):

²⁵ Եփրեմ Ճոնագեան, *Իրաւունքը ճշմարտութեան, յուշեր չորս կոտորածներէ*, Պոսթըն, «Ժամանակակից հայ հետազօտական եւ վաերագրական Զօրեան հիմնարկ», 1990, էջ 7:

որ արինի եւ սպանդի անվերջ շարան մըն է, իմ սերունդին ալ խաչելութեամբը, զոր պէտք է աւանդ թողում երիտասարդ ու նոր ժամնող սերունդին»²⁶:

Իսկ Երվանդ Կյուրեղյանն իր վկայությունը գրել է հարյուր տարեկան հասակում²⁷: Եվ չնայած այն հանգամանքին, որ ականատես-վերապրողներն իրենց վկայությունները գրի են առել դեպքերից բավականին երկար ժամանակ անց, հնարավորինս մանրամասն, դեպքերի հստակությամբ և հաջորդականությամբ են նկարագրում իրենց տեսածն ու վերապրածը: Ասվածը լավագույնս փաստում է ականատես-վերապրող Գրիգոր Քաջբերունին իր հետևյալ տողերում.

«Այսօր երբ այս տողերը կը գրեմ, արդէն եօթանասուն ութը տարեկան եմ: Յիշողութիւնս այնքան խանգարուած է որ՝ կարճ միջոց առաջ պատահած դեպքերը եւ ճանչցածս մարդիկը կը մոռնամ սակայն մանկութեանս օրով պատահած դեպքերը եւ ճանչցածս դէմքերը՝ այնքան խոր տպաւորութիւն թողած են մտքիս վրայ, որ զանոնք կը յիշեմ երէկի պէս»²⁸:

Երրորդ համեմատաբար փոքր խմբում կարելի է ընդգրկել այն վկայությունները, որոնք մեզ են հասել անուղղակի. դրանք գրի են առնվել այլ անձանց, հիմնականում ականատես-վերապրողների զավակների կողմից: Այսպես, Հարություն քահանա Տ. Մեսրոպյանն իր «Կեանքի յուշեր» հուշագրության առաջին հատվածում, որը վերնագրված է «Մօրս յուշերը», նշում է.

«Նախքան իմ անձնական յուշերը, տալիս եմ՝ հանգուցեալ մօրս յուշերը, որոնք բաւականին հետաքրքիր և շահեկան են Վան-Վասպուրական և յատկապէս Թիմար գավառում կատարուած դեպքերը լուսաբանելու համար»²⁹:

Երրորդ խմբի կատեգորիայի մեջ կարելի է ներառել նաև այնպիսի վկայություններ, որոնց հեղինակները փոխանցում են իրենց պապերի պատմությունները: Այսպես, Հարություն Մուրադյանն իր պատմությունը սկսում է հետևյալ տողերով.

«Իմ հայրը՝ Հովհաննէս Մուրադյանը, պատմել է ինձ հետևյալ պատմությունը իր պապիկի Պողոս Մուրադյանի մասին»³⁰:

Իսկ Մելքոն Տեր-Մելքոնյանը նշում է, որ չնայած 1895 թ. գրկի երեվա էր, բայց ջարդի և թալանի պատմությունն այնքան հաճախ էր պատմվում իրենց տան մեջ, որ ականատեսի նման գիտեր և հիշում էր ամեն մանրամասնություն³¹: Միսաք Խրալյանն իր վկայության մեջ, անդրադառնալով Աբդուլ Համիդից առաջ և նրա օրոք

²⁶ Սարգիս Պալապանեան (Պալապան Խոճա), *Կեանքիս փար ու պաղ օրերը (Այնթապ-Քեսասպ-Հալէպ)*, խմբագիր՝ բժ. Թորոս Թորանեան, Հալէպ, 1983:

²⁷ Տե՛ս Երվանդ Կյուրեղյան, *Իմ հուշերի ճանապարհով*, Երևան, «Լուսակն», 2009:

²⁸ Տե՛ս Գրիգոր Ա. Քաջբերունի, *Կեանքիս համալսր պատմությունը*, Պէյրութ-Լիբանան, 1965, էջ 7:

²⁹ Տե՛ս Յարութիւն քահանայ Տ. Մեսրոպեան, *Կեանքի յուշեր*, Նոր Ջուղա, էջ 20:

³⁰ *Hundred-Year Legacy of Courage: Celebrating the Lives of Armenian Genocide Survivors in Our Community*, Chhange: Center for Holocaust, Human Rights and Genocide Education, 2015, p. 95.

³¹ Տե՛ս Մելքոն Տեր Մելքոնեան, Կեանքի և մահուան միջև, Բ տպագրութիւն, Պէյրութ, «Մշակ», 1974, էջ 13-15:

տիրող անիշխանություններին և անօրինություններին, այսպես է նշում՝ «Մեզի պատմեցին մեր հայրերը»³²:

Ականատես-վերապրողների կողմից իրենց վկայությունների փոխանցման ձևի առումով հարկ է նշել, որ դրանցում որպես «գլխավոր հերոս» հանդես է գալիս միայն մեկ անձ, սակայն հանդիպում են նաև այնպիսիք, որոնց հեղինակները նկարագրում են ոչ թե մեկ անձի, այլ մեկ ամբողջ տոհմի պատմություն: Այսպես, Եղիշե Մաղսուդյանն իր «Մաղսուդյանք. եղեռնապարծ րոհմի կյանքի պատմություն»³³ վկայությունում, Արմեն Մարսուբյանն իր «Fragments of a Lost Homeland: Remembering Armenia»³⁴, իսկ Կարինե Թերլեմեզյանն իր «Զավակներ Վասպուրական երկրի, Թերլեմեզյան րոհմ»³⁵ վկայություններում զուգահեռ ներկայացնում են իրենց գերդաստանների պատմությունները:

Այսպիսով, համիդյան կոտորածներին առնչվող վկայությունները, գրառման ժամանակահատվածը աչքի առաջ ունենալով, հարաբերականորեն հավաքվում են երեք խմբում (տե՛ս աղյուսակ 2): Այստեղ հարկ է նշել, որ այս տեսանկյունից վկայությունների առաջին խումբը ամենավատահելին է, համեմատաբար «թույլ» դիրքերում է գտնվում երկրորդ և հատկապես երրորդ խումբը: Այստեղ թերևս երևում է համիդյան կոտորածների ակնատես-վերապրողների վկայությունների մի զգալի մասի թերևս ամենաթույլ կողմերից մեկը:

Վկայությունների գրառման ժամանակահատվածը		
I խումբ	II խումբ	III խումբ
Կոտորածների ժամանակ կամ անմիջապես հետո	Կոտորածներից շատ տարիներ անց	Կոտորածներից շատ տարիներ անց, գրի են առնվել այլ անձանց կողմից

³² Միսաք Խրպեան, Բալահովիտ (հայ որբի մը ապրումները հայաջինջ սարսափներէն), հայրենի յիշատակարան, Սոֆիա, «Մասիս», 1938, էջ 6:

³³ Եղիշե Մաղսուդյան, *Մաղսուդյանք. եղեռնապարծ րոհմի կյանքի պատմություն*, Երևան, «Անտարես», 2013:

³⁴ Գրքում հեղինակը պատմում է Դիլիլիյան գերդաստանի մասին: Արմեն Մարսուբյանի կողմից գրված վկայությունն առանձնանում է գրքում գետեղված լուսանկարներով, որոնք արվել էին Արամ և Յուլյա Դիլիլիյանների կողմից, եղբայրները հիմնադրել էին Դիլիլիյան եղբայրներ լուսանկարչատները Մարզվանում, Ամասիայում, Սամսոնում, Կոնիայում և Ադանայում, բացի դրանից, Յուլյա Դիլիլիյանը գործի պաշտոնական լուսանկարիչն էր: Գիրքը մեծամասամբ ներառում է երկու ընտանիքների վկայություններ, որոնց հիման վրա Արմեն Մարսուբյանը կատարում է իր վերլուծությունները: Մեջբերումները հիմնականում բերվում են Արամ Դիլիլիյանի (Aram Dildilian) և Մարիցա Մետաքսյանի (Maritsa Me'daksian), ով պատմում է իր մոր պատմածները, վկայություններից (մանրամասն տե՛ս Armen T. Marsoobian, *Fragments of a Lost Homeland: Remembering Armenia*, London-New York: I. B. Tauris, 2015):

³⁵ Տե՛ս Կարինե Թերլեմեզյան, *Զավակներ Վասպուրական երկրի, Թերլեմեզյան րոհմ (Մի րոհմի պատմություն)*, Երևան, 2010:

2. Ականաբես-վերապրողների վկայությունների բովանդակային կողմը

Համիդյան կոտորածներին առնչվող վկայությունների՝ որպես պատմական աղբյուրի դիտարկման երկրորդ և կարևորագույն գրավականը դրանցում պարունակվող բուն տեղեկությունն է: Եթե ձևին վերաբերող մեր վերլուծությունը միտված էր պատասխանելու «ինչպես» և «ինչու» հարցերին, ապա բովանդակությամբ վերաբերող մասում քննարկելու ենք «ինչ» հարցը: Այսինքն՝ եթե ձևի (որի շրջանակներում մենք քննարկեցինք այդ վկայությունների արձանագրման ու պահպանման հետ կապված հարցերը) քննությամբ մեր նպատակը գլխավորապես դրանց արժանահավատության հետ կապված տեսական հարցերի քննարկումն էր, ապա բովանդակային մասի քննարկմամբ մենք նպատակ ունենք հասկանալու, թե իրականում ինչ տեղեկատվություն է «թաքնված» դրանցում: Մասնավորապես այդ տեղեկատվությունն ինչ կփոխի կամ ինչով կլրացնի համիդյան կոտորածների մասին մեր ընկալումները:

Հաշվի առնելով առկա նյութի քանակապես մեծ լինելը՝ այս բաժնում մեր առջև դրված խնդրի լուծմանը հասնելու համար ընտրել ենք հետևյալ սկզբունքը: Քանի որ խոսքը համիդյան կոտորածների, այսինքն՝ պատմական որոշակի իրադարձության մասին է, ապա դրա վերաբերյալ փաստական նյութը կարևոր է այդ իրադարձության պատճառների, ընթացքի և հետևանքների հետ կապված տարբեր խնդիրների պարզաբանման առումով (չմոռանալով, որ այս ամենը գոհերի մի խմբի՝ ականատես-վերապրողների տեսանկյունով ներկայացնելու մասին է խոսքը): Այդ նպատակով էլ առանձնացրել ենք ստորև ներկայացված չորս հիմնական ուղղությունների հիմքում ընկած հիմնական խնդիրները և առանձին-առանձին անդրադարձել դրանց:

ա. Կոտորածների պատճառները, շարժառիթները և սկիզբը՝ ըստ ականատես-վերապրողների վկայությունների

Վկայություններում կոտորածների պատճառների ու անմիջական սկզբի մասին առկա են ականատես-վերապրողների կողմից տարբեր ընկալումներ և գնահատականներ: Սակայն, որպես կանոն, ականատես-վերապրողների վկայությունները սկսվում են իրենց ծննդավայրերի, պատմական դեպքերի, ավանդույթների, սովորույթների, ծիսակարգերի, շրջակա վայրերի, հայ-թուրքական, հայ-քրդական հարաբերությունների մասին ընդհանուր պատմական և ազգագրական ակնարկներով: Ինչպես երևում է, համիդյան կոտորածների վերաբերյալ վկայությունները հարուստ են նաև այնպիսի տեղեկություններով, որոնք թույլ են տալիս կոտորածներից բացի պատկերացում կազմել XIX դարի վերջին քառորդի արևմտահայ կյանքի զանազան բնագավառների մասին: Ըստ Վերժինե Սվազյանի՝ առարկայորեն վերարտադրելով տվյալ ժամանակաշրջանի կյանքը, նիստուկացը, բարքերը, քաղաքական-հասարակական հարաբերությունները, վերապրողների վկայույթ-

յուններն անմիջական են, ճշմարտացի, վավերական և ունեն հավաստի վկայությունների արժեք³⁶:

Վկայություններում, ինչպես արդեն նշվել է, կոտորածների պատճառների մասին տարբեր գնահատականներ կան: Այսպես, օրինակ՝ Սարգիս Պալապանյանը, մանրամասն նկարագրելով իր մանկությունը, ներկայացնում է նաև այդ ժամանակ Այնթապում ապրող հայերի և թուրքերի հարաբերությունները՝ նշելով, որ Այնթապի իրենց թաղամասում թուրք և հայ բնակչության թիվը հավասար էր, որն էլ կոիվների պատճառ էր դառնում: Թուրքերն անընդհատ սարսափի մթնոլորտ էին ստեղծում հայերի համար: Նույնիսկ իր հասակակից թուրք տղա երեխաներն անընդհատ կովի պատճառներ էին որոնում հայ երեխաների հետ՝ իրենց թույլ տալով անբարո արտահայտություններ և գրգռիչ նախատիմքներ, նշում է Սարգիս Պալապանյանը և ավելացնում.

«Թուրքը նոյնն էր, լեզուն ըլլար անոյշ կամ կծու, յարգանք ու պատիւ ցոյց տար թէ ռիսակալ սեւ սիրտ. միշտ նոյն թուրքն էր: Ուրեմն պետք էր արթնութիւն, պատրաստութիւն ինքնապաշտպանութեան դիմելու, ըլլայ պտոյտներու ընթացքին, ըլլայ թաղային խաղերու: Թրքութիւնը չար ոգի մըն էր, ու ես այդ ոգին էր որ կը հալածեի, քանի որ այդ ոգին ուրուրի պէս կը սաւառնէր մութ անկիւններու մէջ»³⁷:

Այս վկայությունն, ինչպես տեսնում ենք, մեզ ցոյց է տալիս նաև անվստահությունը, որ առկա էր տեղի հայության մեջ ինչպես թուրքական իշխանությունների, այնպես էլ հասարակ բնակչության նկատմամբ: Այնթապի կոտորածներին նախորդող իրադրության մասին նմանատիպ գնահատականներ են առկա նաև Մելքոն Տեր Մելքոնյանի³⁸ և Նազարեթ Բարսումյանի³⁹ վկայություններում:

Մեկ այլ վկայության հեղինակ Վարդգես Մավյանն իր «Տրապիզոնի հայերը մեծ ոճրի ճանապարհին» վկայության առաջին մասում, որը վերնագրված է «Տրապիզոնի հայերի ձգտումները», նկարագրում է Տրապիզոնում ապրող ժողովուրդների՝ հայերի, հույների, թուրքերի նախասիրությունները, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները: Հեղինակը նշում է, որ չնայած հայերը թուրքերի և հույների համեմատ քիչ էին, բայց բոլոր ոլորտներում էլ մրցում էին հույների և թուրքերի հետ: Անդրադառնալով թուրքերին՝ նշում է, որ թուրքերի մեջ հայերի և հույների նման նշանավոր արհեստավորներ և առևտրականներ չկային, նրանք հիմնական-

³⁶ Տե՛ս Վերծինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. ականապես վերապրողների վկայություններ*, Երկրորդ համալրված հրատարակություն, Երևան, «Գիտություն», 2011, էջ 16:

³⁷ Սարգիս Պալապանեան (Պալապան Խոճա), *Կեանքիս ցուպ ու պաղ օրերը (Այնթապ-Քեսապ-Հալեպ)*, խմբագիր՝ բժ. Թորոս Թորանեան, Հալեպ, 1983, էջ 22:

³⁸ Տե՛ս Մելքոն Տեր Մելքոնեան, *Կեանքի և մահուան միջև*, Բ տպագրութիւն, Պէյրութ, «Մշակ», 1974:

³⁹ Տե՛ս Nazareth Barsumian, *Stowaway To Heaven*, Barrington, Ill.: Armenian Information Bureau, 1960:

նում պետական պաշտոններ էին զբաղեցնում, իսկ մեծամասնությունն աղքատ էր⁴⁰:

Մինչև կոտորածն Այնթապում տիրող տրամադրությունների մասին Սարգիս Պալապանյանը նշում է.

«1895 Նոյեմբեր: Ու շշուկներ: Կասկածի եւ կսկիծի լուռ գալարումներ: Ամէն տուն տխրութեան պատկեր մըն է: Շրթունքները կը վախնան խօսելու: Ահաւոր բան մը կը խմորի, կը կատարուի լուրջեան ու մուօին մէջ: Դուռ դրացի կը հաւաքուին խօսելու համար, բայց բոլորին ձայները քաշած են: Խօսուն են միայն հայեացքները, երբեմն հառաչ մը կը փրթի սեղմուած կոկորդէ մը...: Ճակատագիրը սեւ կը շնչէ»⁴¹:

Մարիցա Նազլյանի վկայությունից պարզ է դառնում, որ նույն տրամադրությունն էր տիրում նաև Արաբկիրում.

«...Լաւ կը յիշեմ որ սոսկալի ջարդը չսկսած, հայրս տխուր տրտում էր, աջէն ձախէն ակնաջը տխուր լուրեր հասած էին. երեկոյեան գործէն շուտով տուն կը դառնար եւ սրտմաշուկ դէպքերու վրայ կը խօսէր մօրս հետ, իսկ մենք փոքրներս չէինք հասկնար, ուշադրութիւն եւ կարեւորութիւն չէինք տար: Այդ օրերուն մինչ ամէն այր մարդ անտարբերութեամբ իւր գործին գացած եւ առաւօտեան ժամերը սահած էին, ահա քաղաքին մէջ իրարանցում մը սկսաւ. ... »⁴²:

Վկայություններից ակնհայտ է դառնում, որ բազմաթիվ վայրերում կոտորածները, դրանց ուղեկցող թալանը, կողոպուտն այդքան էլ անսպասելի չեն եղել, և արևմտահայությունը բազմաթիվ վայրերում արդեն լավ տեղեկացված է եղել, թե ինչ է կատարվում ամբողջ կայսրությունում: Գրեթե բոլոր վկայությունների հեղինակները նշում են, որ Արևմտյան Հայաստանի նահանգներում և Օսմանյան կայսրության մյուս շրջաններում տեղի ունեցող կոտորածների մասին լուրերն անընդհատ տարածվում էին: Եվ չնայած դրան, ինչպես 1915 թ., այնպես էլ համիդյան կոտորածների ժամանակ գրեթե յուրաքանչյուր շրջանում կամ բնակավայրում բնակչության շրջանում ակնկալիքներ են եղել, որ իրենց բնակավայրը գերծ կմնա ողբերգությունից: Վկայություններից նաև պարզ է դառնում, որ կոտորածները տարբեր շրջաններում տարբեր կերպ են սկսվել, սակայն ակնառտես-վերապրողների կողմից հաճախ է ընդգծվում դրանց խիստ անակնկալ սկիզբը:

Այսպես, Մարաշում տեղի ունեցած արևմտահայության կոտորածների մասին իր հուշերում մանրամասն տեղեկություն է հաղորդում Մարաշի Տեր Դևոնդ քահանան: Ըստ նրա՝ այդ ահռելի և սոսկալի կոտորածը սկսվեց 1895 թ. նոյեմբերի 6-ին՝ երկուշաբթի օրը՝ առավոտյան: Ս. Գևորգ եկեղեցու դիմաց գտնվող Ալատաղ լեռան

⁴⁰ Մանրամասն տե՛ս Վարդգես Մավյան, *Տրապիզոնի հայերը մեծ ոճրի ճանապարհին*, Երևան, «Ճարտարագետ», 2015, էջ 7-14:

⁴¹ Սարգիս Պալապանյան (Պալապան Խոճա), *Կեանքիս ցրտ ու պաղ օրերը (Այնթապ-Քեսասպ-Հալէպ)*, խմբագիր՝ բժ. Թորոս Թորանեան, Հալէպ, 1983, էջ 31:

⁴² Մարիցա Նազլյան, *Արսորի ճամբան*, գրեց՝ Հ. Յակոբ Ծ. Վ. Քօսեան, Բ տպագրութիւն, Պէյրով, 1975, էջ 13:

ստորոտից հազարավոր թուրք զինվորներ շարվել և անընդհատ կրակում էին եկեղեցու հետևի մասում գտնվող հայերի տների վրա: Ջեյթունի մեջ հայերի կողմից սկսված ու շարունակվող ընդվզումների պատճառով Մարաշը դարձել էր թուրք և արաբ զինվորների համար բանակատեղի: Պաղեստինից 40 հազար զինվորներով Ջեյթունի վրա հարձակվելու համար Մարաշ էր ժամանել հրամանատար Ֆերիք Մստաֆա Ռենզին: Ջինվորները, մի քանի խմբերի բաժանված, ցրված էին ամբողջ քաղաքով մեկ: Կառավարության հրամանով և դրդմամբ Մարաշի թուրք բնակիչներին էին միացած շրջակա նահանգներից և գյուղերից քուրդ, ապտալ, չերքեզ մահմեդականներ, տարբեր տեսակի զենքերով զինված, հայերի տներն էին մտնում, կողոպտում, թալանում, տան տերերին դաժանաբար սպանում՝ հաշվի չառնելով տարիք և սեռ⁴³:

Այսպիսով, ականատես-վերապրողների վկայություններում կոտորածների պատճառների մասին տարբեր մոտեցումներ ու կարծիքներ են արտահայտվում: Ամեն դեպքում դրանցում հաճախ է հիշվում, որ օսմանյան իշխանությունների և հայ բնակչության միջև անվստահությունը բավական խոր արմատներ ուներ և ամենևին էլ հանկարծակի սկսված երևույթ չէր:

բ. Համիդյան կոտորածների իրականացման մեխանիզմները և հանցագործների ներգրավվածությունը՝ ըստ ականատես-վերապրողների վկայությունների

Ականատես-վերապրողների վկայությունները կոտորածներին ներգրավված հանցագործների մասին բավական լայն պատկերացում են տալիս: Մեր ուսումնասիրությունների արդյունքում առանձնացրել ենք ներգրավվածության հետևյալ պատկերը՝ կառավարություն, տեղական իշխանություններ, կանտոնավոր բանակ, ոստիկանական ուժեր, մուսուլման մոլեռանդ հոգևորականներ, բանտերից ազատված հանցագործներ, տեղացի մուսուլմաններից բաղկացած անկանոն ջոկատներ և անգամ հարկահավաքներ ու ժանդարմներ⁴⁴:

Տեղական իշխանության մասնակցության և կոտորածը նախապես ծրագրված լինելու մասին է վկայում Մարաշի Տեր Ղևոնդ քահանան.

«...տեղույս կառավարութիւնը ամիսներ առաջ երկաթագործ տաճիկներու անհամար տապարներ շինել տուած եւ պատրաստած էր: Տանց պատուհաններու դնելու համար Եւրոպայէն եկած երկաթեայ ձողերը ծայրերնին ծռելով իբրեւ պաստօն, դռները, պատուհանները կոտրելու համար մէն մի թուրք ձեռքերնին առած փողոցները ինկած էին»⁴⁵:

⁴³ Տե՛ս Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տեր Ղևոնդ քահանայի յուշերը*, Երևան, «Անտարես», 2013, էջ 191:

⁴⁴ 1915 թ. Հայոց ցեղասպանության ընթացքում ոճրագործների հիերարխիայի մասին տե՛ս Մանուկյան Սուրեն, Հայոց ցեղասպանության ոճրագործների հիերարխիայի հարցի շուրջ, «Ցեղասպանագիտական հանդես». 2(2), 2014, էջ 100-126:

⁴⁵ Տե՛ս Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տեր Ղևոնդ քահանայի յուշերը*, Երևան, «Անտարես», 2013, էջ 192:

Հակոբ քահանա Բարեջանյանը նույնպես փաստում է, որ կոտորածն իրականացնելու ներքին ծրագիրը պատրաստվել էր դեռևս օրեր, ամիսներ առաջ: Թուրքերն իրենց տներում անընդհատ ժողովներ էին կազմակերպում, բացի դրանից, տեղական կառավարությունը գաղտնի սիրաշահում էր նաև քուրդ պետերին, էջիբաթների պետերին, շեյխերին⁴⁶:

Ինչպես նշում է Միսաք Խրապեանը.

«Այն տունին մէջ, ուր կ'իջեանէին հարկահաւաքները և ժանտարմաները, սարսափահար կը փախցնէին գեղեցիկ հարսները կամ աղջիկները: Սակայն անոնք կը հասկնային գիւղի քիւրտերէն և կը սկսէին տանջել, գանակոծել տան տղամարդը, պատրուակելով թէ երկու երեք տարուան տուրք չեն վճարած և հիմա պէտք է որ ամբողջը միասին կանխիկ վճարեն: Եթէ առարկէին թե սխալ է, խոշտանգումները կը սաստկանային: Անշուշտ այս գրկանքները կը խրախուսուէին հովանաւորող պէկերու և աղաներու կողմէ, մանաւանդ անոնց հանդէպ, որոնց դէմ ռիս կար կամ որոնք քիչ մը գլուխ ցցելու փորձ կ'ընէին: Աւելորդ է ըսել թէ ասոնց համար ոչ ոք կրնար կառավարութեան բողոքել: Կառավարութիւնը ինքն էր որ կը սարքէր այս բոլորը և իր պաշտօնեաները գիշեր ցերեկ պէկերու պնակները կը լզէին և շան պէս անոնց շուրջը կը թափառէին»⁴⁷:

Կոտորածին օսմանյան բանակի արաբական զորքի մասնակցության մասին է վկայում Նաոմի Թոփալյանը. «Մարաշի Ֆուռնուս ավանում հարձակումը սկսել էին օսմանյան բանակի արաբ զորքերը: Մյուս զորաբաժանումները քաշվել էին մոտակա բլուրները: Իսկ զինվորներին հետևում էր տեղական մահմեդականներից բաղկացած ամբոխը, որոնց հիմնական նպատակը թալանելն էր»⁴⁸:

Քրդական ջոկատների ակտիվ ներգրավվածության մասին հիշատակումներ կան գրեթե բոլոր վկայություններում: Օրինակ՝

«Քիւրտ ձիաւոր խումբ մը Ջանիկի Մուղիբի հարկահաւաք պաշտօնեայի գլխաւորութեամբ կը մտնէ Աւերակի գիւղի կալերը, երբ կալերու մէջ կը տեսնէ կուտակուած մաքուր հացահատիկը ու գարին, կը շլատայ: Շլացած պաշտօնեան ու իր հետ բերած քիւրտ ասագակները, Ջանիկի Մուղիբի անունով կը սկսի յոխորտալ կալուոր գիւղացիներու վրայ պետական հարկի բաժինէն անելին վերցնելով. երբ գիւղացիք վիճաբանելով կը դիմադրեն, անոնք զէնքի ուժով կը սպառնան իրենց դէմ կանգնող կալուորներուն, ու ծեծկոտուքը կը սկսի. մէկ երկու կալուոր երեց գիւղացիներ չդիմանալով քաշկոտուքին կ'իյնան գետին: Յափշտակիչները բռնի զէնքի դիմելով կը հաւաքէն կալերու մէջի դիզուած հացահատիկի բերքը ու կը հեռանան գիւղէն:

⁴⁶ Տե՛ս Յակոբ ԲՇՆՅ. *Բարեջանեան, Խարբերդի կոտորածէն, 1895 հոկտեմբեր 30*, Պօստոն, Մէս., 1916, էջ 7:

⁴⁷ Տե՛ս Միսաք Խրապեան, *Բալահովիտ (հայ որբի մը սպրումները հայաջինջ սարսափներէն), հայրենի յիշարակարան*, Սոֆիա, «Մասիս», 1938, էջ 15, 16:

⁴⁸ Տե՛ս Naomi Getsoyan Topalian, *Dust to Destiny*: Massachusetts: Baikar, 1986, էջ 5:

Այդ ծանր ու տագնապալից օրերուն, գիւղացիներէն շատ քիչեր, եթէ զէնք ունենային, անվախ կը դիմադրէին. իսկ զէնք չունեցող գիւղացիները զգոյշ էին ու վերապահ: Հայ անզէն ժողովուրդը քաջատեղեակ էր, որ առանց զէնքի չէր կրնար դիմադրել կամ կասեցնել քիւրտ ու թուրք թալանիչ ասագակախումբերուն: Մեր ժողովուրդը լաւ հասկ-ցած էր, երբ քաղաքական դէպք մը կը սկսէր վնասաւոր ու քաւութեան նոխազը՝ հայ անզէն գիւղացին էր: Օսմանեան թուրքերու նպատակն էր քիւրտերու միջոցաւ թշուառացնել հայ գիւղացին: Այդ տարիներու թշնամական դէպքերու պատճառով ծանր աղքատութեան մատնուեցան Վասպուրականի գրեթէ բոլոր հայ գիւղերը»⁴⁹:

Մուսուլման հոգևորականների ներգրավվածությունը փաստող բազմաթիվ վկայություններ կան: Օրինակ.

«...Այդ օրերու կրօնականը՝ Մէլիդ Խալիլ, կ'արտասանէ իր գրգռիչ ճառը արինաձարաւ խուժանին... »⁵⁰:

... «Ով որ կեաւոր մը մեռցնէ, անիկա արքայութեան մէջ 40 յաւերժահարսեր պիտի ունենայ՝ իբրեւ վարձատրութիւն իր բարի գործին»⁵¹:

Այնուհետև «թուրքերից և քրդերից կազմված ամբոխը և թուրքական ոստիկանական ուժերը, նախապես ծրագրավորածի համաձայն, լսելով թնդանոթից արձակված կրակոցի ձայնը, հարձակվում են քաղաքի քրիստոնյա բնակչության վրա... »⁵²:

Թուրքերի և քրդերի կողմից իրականացված վայրագությունների մասին պատկերացում կազմելու համար բավական է միայն մեջբերել ականատես-վերապրողի հետևյալ տողերը.

«Տաճիկ խուժանը եւ կիրթ ու մարգում զինուորը մարտիներով, դաշոյններով, սրեակ երկաթեայ տապար եւ երկաթեայ ծոածայր պաստօններով զարդարում կը յարձակէին հայոց տուներու վրայ, կանանց ահռելի վայնասունը, մեռեալներուն և վիրաւորեալներու հոնչիւնը եւ աղաղակները, մանկաց եւ տղայոց սարսափը երկինք եւ երկիր կը դողացնէին»⁵³:

Տրապիզոնում շրջակա թուրքական գյուղերից հավաքված թուրք և լազ ամբոխը, միանալով քաղաքի մահմեդականներին ու զինվորներին, կառավարության

⁴⁹ Տե՛ս Համբարձում Ահարոն Պողոսեան, *Վասպուրականցի գերդասարանի մը պատմութիւնը*, Երևան, «Զանգակ», 2014, էջ 21:

⁵⁰ Նիկողոս Գազանճեան, *Յուշագրութիւն Եղեւիոյ 1895-ի ջարդէն մինչեւ 1915-ի հերոսամարտը եւ եղեռնը*, Երևան, 2004, էջ 55:

⁵¹ Նույն տեղում, էջ 56:

⁵² Nazareth Barsumian, *Stowaway To Heaven*, Barrington, Ill.: Armenian Information Bureau, 1960, p. 27.

⁵³ Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարտչի Տէր Ղևոնդ քահանայի յուշերը*, Երևան, «Անտարես», 2013, էջ 193:

պաշտոնյաների ներկայությամբ ու քաջալերությամբ, սկսել էին կոտորել, թալանել, այրել քաղաքի հայերին՝ առանց խնայելու կանանց, երեխաներին ու ծերերին⁵⁴:

Բռնի իսլամացումը ևս հակահայկական քաղաքականության դրսևորումներից էր: Ուրֆայում տեղի ունեցածի մասին կարդում ենք.

«...Արիսն ու կոտորածը կը սկսին առանց արգելքի: Առջի օրուան պէս՝ տուները կը մտնեն եւ, երբ կը հանդիպին ներքնասենեակները պահուրտածներու, կ'ըսեն. «Իսլամացի՛ր, բան չենք ըներ»: Բայց իսլամութիւն ընդունի կամ ոչ, կը պատկեցնեն եւ սուրով ու տպարներով մարմինը կտոր կտոր կ'ընեն: Եթէ պատահի, որ խուժանը չկարենայ տուն մտնել եւ մտածէ, որ ներսը մարդ կայ՝ տունը կրակի կու տայ ու կ'անցնի»⁵⁵:

Հուսելիկում կոտորածն ավելի արդյունավետ իրականացնելու համար թուրքական կառավարությունը բանտերից ազատել էր թուրք հանցագործների և սանձազերծել լեռնային քրդերի: Սրերը թափահարելով՝ քրդերը սպանում էին բոլոր տղամարդկանց, ահաբեկում կանանց և երեխաներին, կողոպտում արժեքավոր իրերը, թալանում ձմեռվա համար պատրաստված առատ պաշարը: Վկայության հեղինակը պատմում է, որ իր պապիկը, որդուն շալակած, փախչում էր դեպի եկեղեցի, սակայն թուրքերը բռնեցին նրան և ստիպեցին իսլամ ընդունել, սակայն մերժում ստանալով՝ իր տղայի աչքի առաջ սպանեցին⁵⁶:

Խարբերդում Ս. Հակոբ թաղի Ս. Հակոբ Բարեջանյանին հրամայում են ուրանալ իր կրոնը, ինչին նա բացասական պատասխան է տալիս: Երբ փորձում են հարկադրել, նա խենթ է ձևանում, սակայն դա ավարտվում է նրա գերեվարությամբ⁵⁷:

Բռնի իսլամացման հարկադրանքը սովորաբար ավարտվում էր մահով: Այսպես, Վանում Դանիել վարդապետը սրախտոլխոլ արվեց Ս. Հակոբ եկեղեցու մոտ, որովհետև մերժել էր ընդունել կրոնավորության պահանջը⁵⁸: Նույն կերպ Խավեց գյուղի ծերունագարդ քահանան, երբ ընկնում է թշնամիների ձեռքը, նրան ստիպում են կրոնավորիս լինել: Այն բանից հետո, երբ նա ընդդիմանում է, կտրում են նրա ականջները, հանում աչքերը և երկար տանջելուց հետո սպանում⁵⁹:

Թուրքերի կողմից կիրառված մեթոդներից էր նաև ողջակիզումը: Այսպես, Հուսեյն Պալթա կոչված մի մարդ Ծակտար գյուղում, 12 հայ երիտասարդների խտտի մեջ տեղավորելով, այրում է նրանց⁶⁰:

⁵⁴ Տե՛ս Վարդգես Մավյան, *Տրասխիզոնի հայերը մեծ ոճրի ճանապարհին*, Երևան, «Ճարտարագետ», 2015, էջ 21:

⁵⁵ Նիկողոս Գազանճեան, *Յուշագրութիւն Եդեսիոյ 1895-ի ջարդէն մինչեւ 1915-ի հերոսամարտը և տղանը*, Երեւան, 2004, էջ 59:

⁵⁶ Տե՛ս Bertha Nakshian Ketchian, *In The Shadow Of The Fortress: The Genocide Remembered*, Cambridge, Mass.: Zoryan Institute for Contemporary Armenian Research and Documentation, 1988, էջ 9:

⁵⁷ Տե՛ս Յակոբ ԲՀՆՅ. *Բարեջանեան, Խարբերդի կոտորածէն*, 1895 հոկտեմբեր 30, Պօստոն, Մէս., 1916, էջ 5, 6:

⁵⁸ Տե՛ս Յարութիւն քահանայ Ս. Մեսրոպեան, *Կեանքի յուշեր*, Նոր Ջուղա, էջ 21:

⁵⁹ Նույն տեղում, էջ 22:

⁶⁰ Նույն տեղում, էջ 21:

Վայրագությունների անբաժան մասն էին կազմում նաև երիտասարդ տղամարդկանց մորթելը, կանանց բռնաբարելը և այլն: Հարություն քահանա Մեսրոպյանի վկայության համաձայն՝ 450 հայ երիտասարդների հավաքելով մի խոր ձորի մեջ՝ անխնա կոտորում են: Հետո մի խումբ տղամարդկանց ծովափ տանելով՝ մի մասին մորթում են, իսկ մնացածին՝ լցնում ծովը: Աղջիկներին և երիտասարդ կանանց բռնաբարում են ամենայն վայրագությամբ: Դրա հետ մեկտեղ իշխանությունները, մի կողմից կազմակերպելով այս սոսկալի զանգվածային կոտորածները, մյուս կողմից աշխատում էին խնամքով թաքցնել դրանք: Այդ նպատակով դեպքի վայր էին ուղարկվում շինծու «քննիչ հանձնախմբեր»՝ իբր թե տեղում քննություն կատարելու համար: Բայց հատկանշական է այն, որ այդ «հանձնախմբի» մեջ է լինում նաև մի հայ, որը մի ձորի մեջ գտնվող դիակների միջից դուրս է բերում 7 տարեկան մի ողջ երեխայի: Պարզվում է՝ երեխայի հայրը սպանվելիս գրկում սեղմել և փրկել է նրան⁶¹:

Վկայությունները համիդյան կոտորածների ընթացքի և գործող անձանց մասին մեծ քանակությամբ տեղեկություններ են պարունակում: Դրանցում առկա են այնպիսի մանրամասներ, որոնք չեն հանդիպում այլ աղբյուրներում: Խոսքն այն մասին է, որ վկայությունները բավական հիմնավոր պատկերացում են տալիս համիդյան կոտորածներն իրականացնողների խմբում բավական լայն շերտերի առկայության, ինչպես նաև այդ ոճրագործությունների մեթոդների մասին:

գ. Համիդյան կոտորածների ժամանակ ինքնապաշտպանվելու կամ փրկվելու դեպքեր ականատես-վերապրողների վկայություններում

Հայտնի է, որ որոշ վայրերում՝ Մասունում, Զեյթունում, Ուրֆայում, Շապին-Գարահիսարում, Վանում, հայերը դիմել են ինքնապաշտպանության, և այդ մասին առկա են ականատես-վերապրողների, որոնք այս դեպքում նաև ինքնապաշտպանությունների ղեկավարներ կամ մասնակիցներ էին, տարբեր վկայություններ⁶²: Հատկանշական է, որ XIX դարի վերջին քառորդի հայ ազատագրական պայքարին նվիրված հետազոտություններում⁶³ այդ վկայություններից շատերն օգտագործվել են: Այդ իսկ պատճառով հարկ չենք համարում այդ հուշագրություններին ման-

⁶¹ Նոյն տեղում, էջ 23, 24:

⁶² Այսպես, Մասունի ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս *Գեորգ Չաուշ*, Պեյրուֆ, «Յեղափոխական ալպում», 1972; Զեյթունի ինքնապաշտպանության մասին՝ Աղասի, *Զեյթուն և իր շրջանակները*, Պեյրուֆ, 1968; Avetis Nazarbek, *Through the Storm*, London, 1899; Զեյթունցի, *Զեյթունի անցեալն և ներկայէն*, Բ. Մասն, Բարիզ, 1903; Գ. Տեօվլէթը իր «Զեյթուն» աշխատությունը, ինչպես ինքն է նշում իր գրքի առաջաբանում, գրել է Աղասու, Մեմերճյանի, Տեր Հակոբյանի աշխատությունների, ինչպես նաև իր անձնական հիշողությունների հիման վրա, տե՛ս Գ. Տեօվլէթ, *Զեյթուն*, Փարիզ, 1945, Վանի ինքնապաշտպանության մասին՝ *Յուշեր Արմենակ Եկարեանի*, խմբագրեց՝ Լ. Աճեմեան, Գահիրէ, Նոր Աստղ, 1947:

⁶³ Մանրամասն տե՛ս Հ. Մ. Պողոսյան, *Զեյթունի սպարամբությունը*, Երևան, 1963, Լ. Մկրտչյան, *Զեյթունի սպարամբությունը 1895-1896 թթ.*, Ե., 1995, Վ. Մելիքսեթյան, *Զեյթունի հերոսամարտերը*, Երևան, 1960, Կ. Թառոյան, *Ժողովրդական շարժումները Մասունում*, 1890-1894, Երևան, 1966, Հ. Մ. Պողոսյան, *Մասունի պայքարությունը*, Երևան, «Հայաստան», 1985, Հ. Մ. Պողոսյան, *Վասպուրականի պայքարությունից (1850-1900)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1988:

րամասն անդրադառնալ: Սակայն եթե վկայությունների մի մասը հենց նվիրված է այս կամ այն հարաբերականորեն խոշոր ինքնապաշտպանության մանրամասն նկարագրությանը, ապա պակաս հետաքրքիր չեն նաև այն հուշագրությունները, որտեղ ներկայացվում են ինքնապաշտպանության, սեփական ընտանիքը և անձը փրկելու մասնավոր կամ փոքրիկ դեպքերը:

Այսպես, Տրապիզոնում հայերի ինքնապաշտպանության հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում Վարդգես Մավյանը: Հեղինակն իր «Տրապիզոնի հայերը մեծ ոճրի ճանապարհին»⁶⁴ վկայության մեջ անդրադառնում է 1895 թվականի սեպտեմբերի 22-ին Տրապիզոնում տեղի ունեցած կոտորածին, ավելի ճիշտ շեշտը դնում է «Սև անտառում» ծավալված դեպքերի վրա, որտեղ առավոտյան անսպասելի սկսված կոտորածից փրկվելու նպատակով հավաքվել էին շրջակա ութ գյուղերի բնակիչներ, այդ թվում՝ Վարդգես Մավյանի ընտանիքը: Հեղինակը կոտորածների ժամանակ ութ տարեկան էր, բայց մանրամասն նկարագրում է իր հոր մասնակցությամբ բազմահազար թուրք ամբոխին և համիդիներին ցույց տրված չորսօրյա դիմադրությունը⁶⁵:

Նաոմի Թովալյանի վկայությունից պարզ է դառնում, որ Մարաշի գավառի Ֆուռնոս ավանում հայերը երեք օր շարունակ դիմադրություն են ցույց տվել իրենցից մի քանի անգամ գերազանցող Ալի Բեյի զորքերին: Հայերին հաջողվել էր որոշ վնասներ պատճառել թուրքական զորքերին, սակայն եռօրյա կատաղի պայքարից հետո թուրքերը կրակի մատնեցին ամբողջ գյուղը և առաջացան դեպի Ջեյթուն⁶⁶:

Ուրֆայում ևս հայերը դիմեցին ինքնապաշտպանության: 1895 թ. հոկտեմբերին թուրքերը սկսեցին առաջին հարձակումը: Քանի որ հայկական թաղամասն առանձնացված էր ու գտնվում էր բլրի վրա, ուստի հայերին հաջողվեց դիմադրել և չթողնել թուրքերին մտնել հայկական թաղամասը: Չնայած դրան՝ թուրքերը կոտորեցին շուկայի մոտակայքում և թուրքական թաղամասում գտնվող մի շարք հայերի: Այնուհետև տեսնելով, որ հայերի դիմադրությունը հնարավոր չէր կտորել, թուրքական կառավարությունը դիմեց խորամանկության՝ հայտարարելով, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերը և թուրքերը լցված են վրեժխնդրությամբ միմյանց նկատմամբ, ապա անհրաժեշտ է զինաթափել երկու կողմերին՝ հետագա բախումներից և արյունահեղություններից խուսափելու համար: Այնուհետև համոզվելով, որ հայերն անգն են և այլևս չեն կարող դիմադրել, անցան հարձակման⁶⁷:

⁶⁴ Տե՛ս Վարդգես Մավյան, *Տրապիզոնի հայերը մեծ ոճրի ճանապարհին*, Երևան, «Ճարտարագետ», 2015:

⁶⁵ Նույն տեղում, էջ 14-24:

⁶⁶ Տե՛ս Naomi Getsoyan Topalian, *Dust to Destiny*: Massachusetts: Baikar, 1986, էջ 3:

⁶⁷ Մանրամասն տե՛ս Bedros Der Bedrossian, *Ourfatzi*, Translated by Tamar Der-Ohannessian (Granddaughter), 2005, էջ 26-28, Նիկողոս Գազանճեան, *Յուշագրություն Եղևսիոյ 1895-ի ջարդէն մինչև 1915-ի հերոսամարտը և տղանը*, Երևան, 2004, էջ 37-63:

Բավական մանրամասն նկարագրություններ կան վանեցի ականատես-վերապրողների հուշագրություններում⁶⁸:

Հանդիպում են նաև միայնակ դիմադրելու դեպքեր, ինչպես օրինակ՝ Այնթապում:

«Մինչ մեր եւ մեր դրացիներուն տուները ասարի կը տրուէին յաջորդաբար, զոհ տալով իրենց այր մարդիկը, անդին, մեր դրացին՝ Թիւթինճի Օհանը, առանձինն ու իր միակը զէնքով, կը դիմադրէր վայրագ խուժանին եւ կը փրկէր իր տունը անոր յարձակումներէն»⁶⁹:

Վանում ևս Չթճյան Արշակը, լսելով իրենց հարևան հայերի տների վրա թուրքերի հարձակման ձայները, վերցնում է հրացանը և ուղղում դեպի խուժանը: Թուրքերը սկզբից սահանջում են, այնուհետև ավելի մեծ ուժով պաշարում նրանց տունը: Սակայն ո՛չ նրանց համազարկները, ո՛չ էլ տունը հրկիզելու փորձերը չեն ընկճում Արշակին: Ծ՛նողների, եղբոր վիրավորվելուց հետո, ամուսինը՝ Հայկանուշը, շարունակեց օգնել Արշակին՝ մի կողմից բնակարան նետված կրակները ջրով հանգցնելով, մյուս կողմից՝ վիրավորներին խնամելով: Իսկ Արշակը դիմադրեց խուժանին առավոտից իրիկուն: Գիշերը, երբ թուրքերը դադարեցրին հարձակումը, Արշակն ընտանիքի վիրավոր անդամներին տեղափոխեց ամերիկյան հիվանդանոց, իսկ ինքն իր զենքով միացավ ընկերներին⁷⁰:

դ. Մշակութային և նյութական կորուստների մասին տեղեկություններն ականատես-վերապրողների վկայություններում

Ականատես-վերապրողների վկայություններում բավականաչափ տեղեկություններ կան նաև հայերի մշակութային և նյութական կորուստների մասին: Իհարկե, վկայությունների օգնությամբ հնարավոր չէ պատկերացում կազմել այդ կորուստների ամբողջական պատկերի մասին, սակայն վկայություններն իրենց հաղորդած տեղեկություններով այս կամ այն չափով լրացնում են առկա բացը⁷¹:

⁶⁸ Արտակ Դարբինեան, *Հայ ազգաբնակչության շարժման օրերէն (յուշեր 1890-էն 1940)*, Փարիզ, «Հայ ազգային հիմնադրամ» 1947, Մարկոս Տէր-Մարկոսեան, *Յուշեր եւ խոհեր*, Վենետիկ, Ս. Ղազար, 1958, Արսեն Հացագործյան, *Իմ կյանքի պատմությունը (ինքնակենսագրական հուշեր) Ծննդյանս 75-ամյակի առթիվ*, Երևան, 1957, Գրիգոր Ա. Քաջբերունի, *Կեսնքիս համեստ պատմությունը*, Պէյրութ-Լիբանան, 1965, Խոսրով (Գեորգ) քահանայ Շաքարեան, *Յիշարկարան կամ ընթաննական արձանագրություն վանեցի Շաքարեան Կոստ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*, 2004, Կարինե Թերլեմեզյան, *Ջավակներ Վասպուրական երկրի*, Թերլեմեզյան տոհմ (Մի տոհմի պատմություն), Երևան, 2010:

⁶⁹ Տե՛ս Մելքոն Տէր Մելքոնեան, *Կեսնքի եւ մահուան միջև*, Բ տպագրություն, Պէյրութ, «Մշակ», 1974, էջ 13:

⁷⁰ Արտակ Դարբինեան, *Հայ ազգաբնակչության շարժման օրերէն (յուշեր 1890-էն 1940)*, Փարիզ, «Հայ ազգային հիմնադրամ», 1947, էջ 69, 70:

⁷¹ Համիդյան կոտորածների շրջանում հայերի մշակութային կորուստների մասին տե՛ս Պարսամյան Սեդա, Հայկական մշակութային արժեքների ոչնչացումն ու դրա հետևանքները 1894-1896 թթ. համիդյան կոտորածների տարիներին, «Տեղասպանագիտական հանդես», 2(1), 2014, էջ 18-30:

Վկայություններում մշակութային կորուստների վերաբերյալ տեղեկությունները վերաբերում են հայկական եկեղեցիների և վանքերի ու կրթական հաստատությունների նկատմամբ վայրագ գործողությունների ներկայացմանը: Այսպես, Նատմի Թոփալյանի վկայությունը տեղեկություններ է տալիս այն մասին, թե ինչպես էին գինվորների կողմից կրակի մատնվել Մարաշում գտնվող աղջիկների քոլեջը և Մարաշի հոգևոր ճեմարանը⁷²: Մեկ այլ՝ Տեր Ղևոնդ քահանայի վկայությունից պարզ է դառնում, որ այրել են Մարաշում գտնվող Ս. Գևորգ եկեղեցին իր շրջակա բոլոր տներով, Սուրբ Կարապետ եկեղեցին ամբողջությամբ, Սուրբ Սարգիս եկեղեցին⁷³: Նույն աղբյուրն ահա այսպես է նկարագրում տեղի ունեցածը.

«...Երբ մեր բնակարանին տանիքն էի, տեսայ Արզ Պաշը Ամերիկեան միսիոնարանց Աստուածաբանական վարժարանը կ'այրէր... Տեսարանը ահռելի էր, խեղճ հայերուն տունները կը մտնէին, ինչ որ կայ տան մէջ, կահ կարասի եւ գոյք ամէնը կը կողոպտէին, կը յափշտակէին, տան տէրը կը սպաննէին, կը մեռցնէին, կը խողխողէին:

Աշխարհիս ընդհանուր ազգաց տարեգրութեան եւ պատմութեան մէջ երբեք նախընթաց չունեցող ոճրագործութիւն մը: Ընել տուողն ալ ոչ թէ վայրագ եւ խաժամուժ ամբոխը, այլ Օսմանեան անխիղճ եւ անաստուած տէրութիւնն էր»⁷⁴:

⁷² Տե՛ս Naomi Getsoyan Topalian, *Dust to Destiny*: Massachusetts: Baikar, 1986, էջ 5:

⁷³ Տե՛ս Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տեր Ղևոնդ քահանայի յուշերը*, Երևան, «Անտարես», 2013, էջ 202:

⁷⁴ Տե՛ս Վահան Տեր-Ղևոնդյան, *Մարաշի Տեր Ղևոնդ քահանայի յուշերը*, Երևան, «Անտարես», 2013, էջ 192: Այս վկայության մեջ բավական մանրամասն են ներկայացվում ինչպես մշակութային, այնպես էլ կյուրական կորուստները:

«Եկեղեցիներ այրած, դպրոցներ գոցուած, խանութներ եւ կրպակներ փակուած, հարիւրաւոր հայեր մեռած, փողոցներ հայ նահատակներու արեամբ ողողուած, ամէն տեղ հայուն համար սարսափներով լեցուն, ո եւ է հայ մը չէր կրնար համարձակիլ իւր տունէն դուրս ելնել...» (էջ 203):

«Մտան մեր տուն 4 կամ 500էն աւելի գազաններ, ինչ որ ունէինք՝ կահ կարասի, ուտելիք, հագնելիք, ամէն բան կողոպտեցին, յափշտակեցին, թալլեցին: Երբեք բան մը չթողուցին:

Անուազն երեք դանթարի չափ պղնձեղէն տեսակ տեսակ ամաններ ունէինք: 2 գեղեցիկ հին եւ արժէքաւոր գորգ, 8 հատ աղուոր կապերտներ, անկողին եւ վերմակներ, պատի ժամացոյց մը գոր Սաաթճեան Տէր Զաքարիա քահանայ իմ ամուսնութեանս ատեն նուէր բերած էր ինծի... » (էջ 194):

«Առտնին գրադարանս կրնամ ըսել առանց չափազանցութեան թէ ամբողջ Կիլիկիոյ մէջ ո եւ է հայ քահանայ մը անանկ ճոխ եւ խնամով պատրաստուած թանգարան մը չունէր: Պապուս՝ Արժանաշնորհ Տէր Կարապետ եւ թէ Տէր Կարապետին հօր Տէր Նահապետ անունի եւ ձերունազարդ քահանայից արծաթապատ մաշտոցները, կնիքները, որոնք ինծի համար նուիրական եւ միանգամայն յարգելի ու մեծարելի յիշատակներ էին, հին մագաղաթի վրայ գրուած ձեռագիր Սոկրատ պատմիչ անունով շատ գեղեցիկ գիրք մ'ալ կար գրադարանիս մէջ, ուրիշ ասոր նման ձեռագիր մ'ալ ունէի՝ Պատմութիւն Ազգին Նետողաց անունով: Սոկրատ պատմիչին յիշատակարանին այն թուականէն վեց տարիներ յառաջ պատճէնը առի եւ Վենետիկ Միսիթարեանց միաբանութեան երեսիներէն Հայր Ղևոնդ Ալիշանին ղրկեցի: Յիշեալ անգուգական հայագէտ եւ ազգասէր հօրմէն նամակ ստացայ՝ «Եթէ ծախել ուզէք այդ ձեռագիրը անպատճառ ինծի նախ յուր տուէք» ըսած էր:

Ափսոս երկու թանկագին ձեռագիրներն ալ կորան եւ չկրցայ գտնել: Թանգարանիս գրքերուն մէկ մասն ալ մեր տան առջեւէն անցնող ջուրին մէջ թափած էին...» (էջ 195):

Տիգրան Տարագչյանի վկայությունը տեղեկություններ է տալիս Պերենիկի հայոց եկեղեցու վրա հարձակման, վարդապետին հալածելու մասին⁷⁵:

Ինչպես նշում է Մելքոն Մելքոնյանը.

«Հայը տարիներ շարունակ կը տքնէր, կը չարչարուէր եւ իր արդար աշխատանքին փոխարէն խնայողութիւն մը կ'ապահովէր իր ապագային համար: Եվ ահա, օր մը, թուրքը կուգար եւ կը տանէր տարիներու տքնաջան աշխատանքին պտուղը...»⁷⁶:

Եկեղեցիների ավերումը բազմաթիվ վայրերում գուցակցվել է հայության ոչնչացման հետ: Այսպես, օրինակ՝ Ուրֆայում մոտ 8000⁷⁷ հայեր ապաստան գտան եկեղեցում: Եվ չնայած նրանց դիմադրությանը՝ մուսուլման խուժանին հաջողվեց կրակի մատնել եկեղեցին և այնտեղ ապաստանած բնակչությանը⁷⁸:

Վարդգես Մավյանը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում թուրքերի կողմից իրականացված դաժանությունների մասին.

«Ոչ մի բանի առաջ կանգ չէին առել անհոգի թուրքերը: Տարել էին այն ամենը, ինչ որ դարեր շարունակ կուտակել և սերնդից-սերունդ թողել էին պապերն իրենց թոռներին: Չկար ուտելիք և հագնելիք, իրենց մեջ թուրքերը բաժանել էին հայերի քրտինքով աճեցրած ու բազմացրած ոչխարների հոտերը և եղջերավոր անասունները...»⁷⁹:

Թե ինչ մասշտաբով էր տեղի ունենում հայության կողոպուտը, երևում է հետևյալ տողերից.

«Այո՛, լաւ կը յիշեմ, քիւրտերը բաւական հայ կոտորելէ ջարդելէ յետոյ սկսան նաեւ տները կողոպտել, աս ալ բաւական չէր, տեղ տեղ կրակ տուին տներու եւ այրեցին: Այրեցաւ մեր տունն ալ, այրեցաւ մեր ապաստանած տունն ալ, ուրիշ տեղ մը կ'երթայինք կ'ապաստանէինք, կրակը հոն ալ կու գար, այլոք կը փնտռէինք պատսպարան մը, կրակը մեր ետեւէն կու գար, կարծես կը հալածէր մեզ. այսպէս այրեցան մոխիր դարձան շատ մը տներ»⁸⁰:

Նմանատիպ նկարագրությունները բավական շատ են տարբեր վկայություններում⁸¹:

⁷⁵ Տե՛ս Տիգրան Յ. Տարագճեան, *Հօրս յիշարակները*, Թորոնթօ, 1995, էջ 12:

⁷⁶ Տե՛ս Մելքոն Տէր Մելքոնեան, *Կեանքի եւ մահուան միջև*, Բ տպագրութիւն, Պէյրութ, «Մշակ», 1974, էջ 15:

⁷⁷ Հնարավոր է, որ այս թիվը ուռճացված է: Մեկ այլ աղբյուրում այն նշվում է 3,000 (տե՛ս *Братская помощь пострадавшим в Турции армянам*, том II, отделе II, էջ 53):

⁷⁸ Տե՛ս Նիկողոս Գազանճեան, *Յուշագրութիւն Եղեւիոյ 1895-ի ջարդէն մինչեւ 1915-ի հերոսամարտը եւ եղեւոնը*, Երևան, 2004, էջ 59-62:

⁷⁹ Տե՛ս Վարդգես Մավյան, *Տրապիզոնի հայերը մեծ ոճրի ճանապարհին*, Երևան, «Ճարտարագետ», 2015, էջ 22:

⁸⁰ Տե՛ս Մարիցա Նազեան, *Աքտրի ճամբան*, գրեց՝ Հ. Յակոբ Ծ. Վ. Քօսեան, Պէյրութ, 1975, էջ 14:

⁸¹ Տե՛ս օրինակ, Միսաք Խրաբեան, *Բալսահովիտ (հայ որբի մը սպրումները հայաջինջ սարսափներէն)*, հայրենի յիշարակարան, Սոֆիա, «Մասիս», 1938, էջ 20; Abraham H. Hartunian, *Neither to Laugh nor to Weep: A Memoir of the Armenian Genocide*, Translated from the Original

Ականատես-վերապրողների վկայությունները գալիս են հարստացնելու համիդյան կոտորածների շրջանում հայության նյութական և մշակութային կորուստների մասին մեր իմացածը: Թեև դրանք չեն ներկայացնում համապարփակ տեղեկություն ամբողջ Օսմանյան կայսրության տարածքի մասին, այնուամենայնիվ չի կարելի թերագնահատել դրանց հաղորդած տեղեկությունները, որոնք երբեմն հարուստ են մանրամասներով:

Ամփոփելով նշենք, որ համիդյան կոտորածների վերաբերյալ ականատես-վերապրողների վկայությունների ուսումնասիրությամբ հանգել ենք հետևյալ եզրակացություններին: Վկայությունների մի մասն ունի աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ինչպես դրանցում պահպանված տեղեկատվության, այնպես էլ այդ վկայությունների պահպանման և գրի առնման բարձր մակարդակի առումով: Այսինքն՝ դրանք, լինելով «առաջին ձեռք» սկզբնաղբյուրներ, ունեն հավաստիության մեծ աստիճան: Վկայությունների մի զգալի մասը կարող է վիճարկելի հավաստիություն ունենալ, քանի որ դրանք գրի են առնվել տասնամյակներ անց, իսկ շատ դեպքերում ոչ միայն «երկրորդ», այլ նաև «երրորդ ձեռքի» կողմից: Մյուս կողմից ակնհայտ է, որ բոլոր վկայությունները հարուստ են փաստական նյութով համիդյան ողբերգության գրեթե բոլոր ասպեկտների հաճախ ամենայն մանրամասնությամբ ներկայացմամբ: Դրանք կարող են յուրաքանչյուր ասպեկտի խոր հետազոտության համար կարևոր աղբյուր դառնալ:

Armenian Manuscripts by Vartan Hartunian, Cambridge, Mass.: Armenian Heritage Press, 2nd edition, 1986, p. 13 and 17; Գրիգոր Ա. Քաջբերունի, *Վեանքիս համեսար պատմությունը*, Պեյրոթ-Լիբանան, 1965, էջ 22; Եփրեմ Ճոնագեան, *Իրատունքը ճշմարտության, յուշեր չորս կոտորածներէ*, Պոսթըրն, «Ժամանակակից հայ հետազոտական եւ վաւերագրական Զօրեան հիմնարկ», 1990, էջ 14; Խոսրով (Գէորգ) քահանայ Շաքարեան, *Յիշատակարան կամ ընտանեկան արձանագրութիւն վանեցի Շաքարեան Կոնստանտին*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 55, 56:

ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նարինե Հակոբյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրության են ենթարկվում 1890-ական թթ. համիդյան կոտորածների ականատես-վերապրողների տասնյակ տպագիր վկայություններ: Փորձ է արվում բազմակողմանիորեն վերլուծելու դրանք՝ հասկանալու և գնահատելու համար դրանց աղբյուրագիտական նշանակությունը: Վկայությունները դասակարգվում են՝ հիմք ընդունելով դրանց աղբյուրագիտական կարևորությունը և հավաստիությունը: Դրանց մի մասն ունի բացառիկ աղբյուրագիտական նշանակություն խնդրո առարկա ժամանակահատվածի դեպքերի ուսումնասիրման համար: Այս վկայությունները հարստացնում են թեմայի մասին մեր պատկերացումները լրացուցիչ տեղեկություններով, որոնք բացակայում են, օրինակ՝ դիվանագիտական փաստաթղթերում և այլ աղբյուրներում: Մյուս կողմից դրանք նոր հեռանկարներ են բացում համիդյան կոտորածների վերաբերյալ այլ գիտակարգերի շրջանակներում ուսումնասիրություններ կատարելու համար:

Բանալի բառեր՝ արևմտահայության կոտորածներ, ականատես-վերապրողներ, վկայություններ, Օսմանյան կայսրություն:

HAMIDIAN MASSACRES IN THE EYEWITNESSES TESTIMONIES

Narine Hakobyan

SUMMARY

In this article dozens of printed Hamidian Massacres' eye-witnesses testimonies of 1890s are investigated. An attempt is made to thoroughly analyze them, in order to understand and evaluate their value as a source. The testimonies are classified on the basis of importance or the reliability of the source. Some of them have a special value of the source for studying of the events of this period. These testimonies enrich our understanding of the subject with additional information, which is absent, for example, in diplomatic documents and other sources. On the other hand, they open up new prospects for research on massacres in other scientific studies.

Keywords: Armenian Massacres, eyewitnesses, testimonies, Ottoman Empire.

ГАМИДОВСКАЯ РЕЗНЯ В СВИДЕТЕЛЬСТВАХ ОЧЕВИДЦЕВ

Нарине Акопян

РЕЗЮМЕ

В статье исследуются десятки опубликованных свидетельств очевидцев Гамидской резни 1890-х годов. Предпринимается попытка их всестороннего анализа с целью оценки их ценности в качестве источника. Свидетельства классифицируются на основе их важности и достоверности. Некоторые из них имеют особое

значение в качестве источника для изучения событий данного периода. Эти свидетельства содержат дополнительную информацию, которая отсутствует, например, в дипломатических документах и других источниках. С другой стороны, изучение свидетельств очевидцев открывает новые перспективы для исследований феномена массовых убийств с точки зрения других научных дисциплин.

Ключевые слова: массовые убийства западных армян, очевидцы, свидетельства, Османская империя.

**«ՄԻ ՔԱՆԻ ԹՎԵՐ» ԱՆԴՈՅԻ «ՎԱՆԻ, ԲԻԹԼԻՍԻ ԵՒ ԷՐԶՐՈՒՄԻ
ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ (1912 Թ.) ԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԾԱՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՍՈՒԼՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ ԲԱՆԱՎԵՃԸ**

Ռոբերտ Թաթոյան

ԱՆԴՈՅԻ (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները» աշխատությունը, որը լույս է տեսել 1912 թ. Երևանում¹, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ականավոր հայ պատմաբանի ժառանգության մեջ: «Ուսումնասիրության մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և Կրթական դրութեան» ենթավերնագիրը կրող այս աշխատանքը կարևոր սկզբնաղբյուր է Մեծ եղեռնի շեմին վերոնշյալ նահանգների և առհասարակ Արևմտյան Հայաստանի² տարածքի սոցիալ-տնտեսական վիճակի լուսաբանման համար, աղբյուր, որը չի կարող շրջանցել տվյալ հարցերով զբաղվող ժամանակակից և ոչ մի ուսումնասիրող:

Ինչպես նշում է առաջաբանում ինքը՝ հեղինակը, գրքի համար նյութը նա հավաքել էր 1909 թվականի հունիս-օգոստոս ամիսներին Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ կատարած ճանապարհորդության ընթացքում. «Մենք այցելեցինք Վան, Մուշ, Էրզրում քաղաքները. մերանք այդ տեղերի առաջնորդարանները. այցելեցինք Կարուց-Անասպարի, Վարազի, Աղթամարի, Նարեկի, Ս. Կարապետի, Ս. Յովհաննեսի և Կարմրակի վանքերը. անցանք Բայազետի, Ուլքիլիսեի, Արճաշի, Թիմարի, Վան-Տուսի, Արճակի, Հայոց-Չորի, Շարափի, Գեաւաշի, Մուշի, Սասունի, Խնուսի, Էրզրումի և Բասենի գաւառներով. կարևոր կենտրոնաւրեղերում կանգ առանք և ծանոթացանք երկրի հետ: Ճանապարհորդութեան ժամանակ մեզ յաջողեց ձեռք բերել նիւթեր այդ երկրի աշխարհագրութեան և ազգաբնակչութեան վիճակագրութեան վերաբերեալ, տեղեկութիւններ ճանապարհների հաղորդակցութեան, երկրի արդի-

¹ Տե՛ս Ա. Դօ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները. Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և Կրթական դրութեան, Երևան, տպարան «Կովտուրա», VIII, 408 էջ:

² Հողվածի շրջանակներում «Արևմտյան Հայաստան» տարածքի տակ հասկանում ենք Հայկական լեռնաշխարհի՝ Օսմանյան կայսրության վերահսկողության տակ գտնվող հատվածի վրա ստեղծված վարչական միավորները՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիի և Սեբաստիայի վիլայեթները (այսպես կոչված «վեց նահանգներ»): Մենք օգտագործում ենք օսմանյան վարչական միավորների անվանումների երկու տարբերակ՝ ինչպես թուրքականից տառադարձված՝ *վիլայեթ*, *սանջակ*, *կազա*, *նահիե*, այնպես էլ պատմագիտական գրականության մեջ ընդունված դրանց հայերեն համարժեքները՝ *նահանգ*, *գավառ*, *գավառակ*, *գյուղախումբ*:

նագործություն, հողատիրություն և հարկերի մասին, նաև տեղեկություններ մասնատրասպես հայ ժողովրդի կացության և տնտեսական դրության վերաբերեալ»³:

Հեղինակը, ճանապարհորդության ընթացքում հավաքված նյութերը կարգի բերելով և կողմնակի աղբյուրներով լրացնելով, գիրքը հանձնում է տպագրության՝ արտահայտելով իր վստահությունն առ այն, որ տեղեկությունները որքան էլ թերի, այնուամենայնիվ կարող են օգտակար լինել Արևմտյան Հայաստանով հետաքրքրվողների համար:

Ա-Դոյի շուրջ 400 էջ ծավալով աշխատության մոտ երկու երրորդը նվիրված է Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգների նկարագրությանը և հայ բնակչության վիճակագրությանը: Հեղինակը ներկայացնում է Արևմտյան Հայաստանի այս երեք նահանգների հայերի թվաքանակն ըստ հայաբնակ բնակավայրերի՝ համապատասխան տվյալ նահանգի վարչական բաժանման՝ գավառակ առ գավառակ գյուղացուցակների: Գրքում զետեղված գյուղացուցակների մեծ մասը Ա-Դոն ստացել էր Արևմտյան Հայաստանի Հայ առաքելական եկեղեցու համապատասխան թեմերի առաջնորդարաններից: Որոշ շրջանների գյուղացուցակների համար որպես աղբյուր հեղինակը նշում է որևէ անհատ անձի (որպես կանոն՝ տեղացի մտավորական, առաջնորդարանի կամ օսմանյան որևէ պետական մարմնի տեղական բաժանմունքի հայագրի աշխատակից)⁴, կամ անանուն «տեղացիների»⁵, «տեղյակ մարդկանց»⁶: Առանձին դեպքերում Ա-Դոն կազմում է համեմատական աղյուսակներ՝ ներկայացնելով տվյալ վարչական միավորի հայաբնակ բնակավայրերի երկու կամ երեք աղբյուրից քաղված զուգահեռ տվյալներ⁷:

Ա-Դոյի կողմից հավաքված տվյալները գրեթե բացառապես արտացոլում են հայ բնակչության թվաքանակն ըստ տների (ընտանիքների): Բնակչության շնչերի թիվը ստանալու համար ուսումնասիրողը որպես մեկ տան անդամների միջին թիվ ընդունում է 7 շունչ (քաղաքային բնակչության պարագայում՝ 6 շունչ)⁸:

³ Նույն տեղում, էջ V:

Ա-Դոն նաև թողել է Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդության հուշեր, որոնց մի մասը հրատարակվել է «Նոր հոսանք» ամսագրում (տե՛ս Ա-Դո, Յուշեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդությունից, «Նոր հոսանք» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիր, Թիֆլիս, Ա. տարի, 1913, №1, էջ 134-141, №2, էջ 346-357, №3, էջ 562-569, №4-5, էջ 785-798, №6, էջ 1040-1046, №7-8, էջ 1235-1253, Բ. տարի, 1914, №1, էջ 75-91, №2, էջ 225-236, №3, էջ 397-416, №4, էջ 565-581, №6, 938-948):

⁴ Օրինակ՝ Վանի նահանգի Արճակ, Բերկրի գավառների համար՝ Շիրին Հակոբյան, Արճեշի գավառի համար՝ Արամ Մաֆրաստյան (Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները..., էջ 32, 35):

⁵ Օրինակ՝ Վանի նահանգի Թիմար գավառ (նույն տեղում, էջ 22):

⁶ Օրինակ՝ Վանի նահանգի Վան-Տոսպի և Շատալի գավառակներ (նույն տեղում, էջ 27, 65):

⁷ Տե՛ս հատկապես Մուշի դաշտի (Մուշի գավառակ) հայաբնակ բնակավայրերի վիճակագրությունն ըստ Մուշի առաջնորդարանի 1889 և 1909 թթ. տվյալների և Մշո առաջնորդարանի քարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի՝ 1909 թ. տվյալների (նույն տեղում, էջ 104-107):

⁸ Ընտանիքների անդամների միջին թիվը ստանալու համար Ա-Դոն իր ճանապարհորդության ընթացքում կազմել էր տվել զանազան գավառների 23 գյուղերի տների և նրանց անդամների ցուցակները ու ստացել ընդհանուր միջին թիվ՝ 6, սակայն քանի որ տեղացիների աջակցությամբ իր

Ա-Դոն իր տվյալներն ու հաշվարկներն ամփոփում է հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 1. Վիճակագիր երեք վիլայեթների հայ ժողովրդի

№	Վիլայեթ	Քաղաք	Գյուղ	Տուն	Շունջ
1	Վանի	3	387	16,203	102,910
2	Բիթլիսի	3	495	22,092	154,164
3	Էրզրումի	9	389	23,413	159,593
	Ընդամենը	15	1,271	61,708	416,667

Երեք նահանգների ընդհանուր ազգաբնակչության թիվը և դրանում հայերի տոկոսային հարաբերակցությունը ստանալու համար Ա-Դոն օգտագործում է 1896 թ. օսմանյան պաշտոնական վիճակագրությունը՝ անփոփոխ վերցնելով դրանից մահմեդականների ու այլ քրիստոնյաների թվաքանակի վերաբերյալ տվյալներ և գումարելով դրանց հայ բնակչության՝ իր հաշվարկած թիվը: Ստացված արդյունքը նա ամփոփում է ստորև տրվող աղյուսակում⁹.

Աղյուսակ 2. Երեք վիլայեթների ընդհանուր ազգաբնակչության թիվը

Վիլայեթներ	Ընդհանուր ազգաբնակչությունը	Մահմեդականների թիվը	%	Հայերի թիվը	%	Այլ քրիստոնյաների թիվը	%
Վանի	453,000	241,000	53	103,000	23	109,000	24
Բիթլիսի	421,000	254,000	60	154,000	37	13,000	3
Էրզրումի	670,000	500,000	74	160,000	24	10,000	2
Ընդամենը	1,544,000	995,000	64	417,000	27	132,000	9

Այսպիսով, ըստ Ա-Դոնի, Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներում հայերը կազմում էին ընդհանուր ազգաբնակչության 27%-ը (քրիստոնյա այլ հարանվանությունների հետ միասին՝ 36%)՝ 64% իսլամադավան ազգաբնակչության համեմատ:

«Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները» երկասիրությունը լույս տեսավ 1912 թ. հոկտեմբերի սկզբներին, և հեղինակի առաջին անելիքը եղավ գրքի օրինակներն ուղարկել հայկական մամուլի տարբեր խմբագրությունների¹⁰: Իր հուշերում Ա-Դոն հետևյալ կերպ է նկարագրում այն ընդունելությունը, որին արժանացավ աշխատանքը. «Գիրքս առաջին իսկ թույլից առաջ բերեց խիստ հեղափոխություն: Նրա մասին սկսեցին խոսել բոլոր թերթերը, և թերթերի էջերում հրապարակ տեղան հայկական հարցով շարք հեղափոխություն: Քննադատությանս գլխավոր առարկան հանդիսանում էր հայ ժողովրդի թվական տվյալները՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում: Արդարհայտվողները բաժանվեցին երկու մասի՝ թեր ու դեմ, ...քննա-

կողմից անձամբ կազմված Դիադինի վեց և Արճեշի երկու գյուղերի վիճակագրության մեջ շնչերի միջին թիվը 7-ից և նույնիսկ 8-ից բարձր էր, ապա նա որոշել է գյուղական բնակավայրերի հայ ընտանիքների համար հաշվել 7, իսկ քաղաքների համար՝ 6 շունջ: «Ըստ երևոյթին ուրիշների ձեռքով կազմած ցուցակները կատարել են շատ պակասատր, որի մեջ մենք համոզվեցինք մեր յետագայ դիտողությունների ժամանակ. Էրզրումի դաշտում կան շատ գիւղեր, որոնցում ընտանիքների միջին թիվը հասնում է 10-ի», - արձանագրում է ուսումնասիրողը (նույն տեղում, էջ 235):

⁹ Նույն տեղում, էջ 245:

¹⁰ Տե՛ս Ա-Դոն, *Իմ հիշողությունները*, Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 2015, էջ 165:

դաստիարակները հաճախ կրում էր կրքուր բնույթ, ուստի վերաձվեց այն բանակովի և մեկ ամբողջ տարի չիջավ հրապարակից: Տեղի էին ունենում խիստ հարձակումներ. տեղի էր ունենում նաև պաշտպանության խուսք»¹¹:

Եթե Ա-Դոյի գիրքը լույս տեսներ մեկ կամ երկու տարի առաջ՝ 1910-1911 թթ., ինչպես նախատեսում էր հեղինակը¹², ապա այն գուցե չարժանանար նման լայն արձագանքի: Իսկ 1912 թ. վերջերին գրքի հրատարակության պահը համընկավ Հայկական հարցի վերարժարման՝ Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգներում բարեփոխումների ծրագրի շուրջ ծավալվող գործընթացների մեկնարկի հետ: 1912 թ. հոկտեմբերին պայթեց առաջին Բալկանյան պատերազմը, որը հենց սկզբից անհաջող ընթացք ունեցավ Օսմանյան կայսրության համար: Արևելյան հարցի նոր սրացումը հնարավորություն էր ընձեռում հայերին, որոնք մինչ այդ Օսմանյան կայսրության կառավարման դեկը ստանձնած երիտթուրքական իշխանություններից ապարդյուն պահանջում էին լուծում տալ արևմտահայության խնդիրներին, արդեն եվրոպական դիվանագիտության առաջ բարձրացնելու Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը կյանքի կոչելու պահանջը¹³:

Ա-Դոյի քննադատներից Գ. Վարդանյանը Թիֆլիսում հրատարակվող Հայ հեղափոխական դաշնակցության օրգան «Հորիզոն» օրաթերթի 1912 թ. դեկտեմբերի 29-ի համարում հետևյալ կերպ էր ներկայացնում պահի առանձնահատկությունները. «*պ. Ա-դոյի աշխատութիւնը, զուգադիպօրէն, լոյս ընծայեց այն պահուն, երբ հրապարակ է ներսած հայկական հարցը այսինքն Թիւրքահայաստանի բարեկարգութեան խնդիրը: Եւ որովհետրև Հայկական հարցի լուծման մէջ մեծ դեր են խաղալու հայ ազգաբնակչութեան քանակն ու որակը, ուստի պ. Ա-դոյի աշխատութիւնը արագաւ ուրոյն դիրք մանասանդ ազգաբնակչութեան վիճակագրական տեսակէտից»¹⁴:*

Ա-Դոյի աշխատանքը գրախոսվեց և քննարկվեց ժամանակի արևելահայ և արևմտահայ այնպիսի հայտնի և ազդեցիկ պարբերականներում, ինչպիսիք էին «Հորիզոն» (Թիֆլիս), «Մշակ» (Թիֆլիս), «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս) թերթերը, «Արարատ» ամսագիրը (Ս. Էջմիածին): Ա-Դոյի ուսումնասիրության նկատմամբ

¹¹ Նույն տեղում:

¹² Ա-Դոյն չկարողացավ արագ ամփոփել 1909 թ. Արևմտյան Հայաստան կատարած իր ճանապարհորդության արդյունքները, քանի որ իր հեղինակած հետազոտություններից մեկի՝ «Ազատագրական շարժումը Ռուսաստանում» գրքի համար ցարական դատարանի կողմից դատապարտվեց մեկ տարվա ազատազրկման՝ 1910 թ. օգոստոսի 4-ից 1911 թ. օգոստոսի 4-ը կրելով պատիժը Նոր Բայազետի բանտում: Ազատություն ստանալուց հետո միայն ուսումնասիրողն ի վիճակի եղավ ստանձնելու ճանապարհորդության ընթացքում հավաքված նյութերի վերջնական դասավորման ու մշակման և գրքի հրատարակության պատրաստման գործը (նույն տեղում, էջ 160):

¹³ 1912 թ. վերջերին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողովը պատրաստում է Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգների բարեփոխումների նախագիծ՝ կից հիմնավորումներով, որը, արժանանալով Ազգային ժողովի, Ազգային կենտրոնական վարչության և պատրիարքի հավանությանը, 1913 թ. ապրիլի սկզբին փոխանցվում է Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Միխայիլ Գիրսին (մանրամասն տե՛ս Թաթոյան Ռ., *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին*, Երևան, ՀՅԹԻ, 2015, էջ 141):

¹⁴ «Ա-Դոյի Թիւրքահայաստանի վիճակագրութիւնների առիթով», «Հորիզոն», Թիֆլիս, 1912, դեկտեմբերի 29, № 289:

քննադատության ներկայանալը լայն էր՝ հուզական-կանխակալ-հրապարակախոսականից¹⁵ մինչև առարկայական-փաստարկված:

Ա-Դոյի թվերի նկատմամբ խիստ քննադատական դիրքորոշում որդեգրեցին Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությանը հարող գործիչները (չմոռանանք, որ Դաշնակցությունն այդ ժամանակ հայկական բարեփոխումների հարցի հետապնդման առաջնագծում կանգնած հայկական հիմնական կառույցներից մեկն էր), ուստի պատահական չէ, որ «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները» գրքի շուրջ բանավեճի կենտրոնական հարթակ դարձավ «Հորիզոն» օրաթերթը: Դրա համեմատ ավելի չափավոր և ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք դրսևորեցին «Մշակը» (խմբագիր՝ Համբարձում Առաքելյան) և թերթի շուրջ համախմբված գործիչները:

Բանավեճի մեկնարկը տվեց «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանի համառոտ գրախոսականը՝ տպագրված թերթի 1912 թ. նոյեմբերի 28-ի (դեկտեմբերի 11) համարում: Գիրքը գովասանքի ընդհանուր խոսքերով բնութագրելուց հետո գրախոսականի հեղինակը նշում էր. «Չոր սառն վիճակագրական տեղեկությունները, բերած Ա-Դօի ընդարձակ գիրքի մէջ, գալիս են սառն ջուր մաղելու մեր գլխին, ցոյց տալով, որ հայկական երեք գլխատր նահանգների...ընդհանուր ազգաբնակչությունը կազմում է 1,474,327 շունչ, և դրանց մէջ հայ ազգաբնակչությունը 416,667, այսինքն...միջին թույլ 28%»:

Հ. Առաքելյանը, ելնելով Հայկական հարցի վերաբերյալ ունեցած իր դիրքորոշումից, Ա-Դոյին վերագրում էր մտքեր, որոնք գրքում բացակայում էին. «Հեղինակը ցոյց է տալիս, թե անհիմն է այն կարծիքը, որ տիրապետում է շարերի մէջ, թե իբր թիրաքաց պաշտօնական վիճակագրական տեղեկությունները հայերի թիվ մասին սխալ են: Ճիշդ է, Վ. Քիսկե՛¹⁶ ցոյց է տալիս հայերի թիվը 3 վիլայեթներում... 346,339, մինչ

¹⁵ Որպես վառ հուզական արձագանքի օրինակ՝ կարելի է առանձնացնել 1914 թ. սկզբներին Ավետիս Ահարոնյանի հետևյալ տողերը. «Ու յիշեցի տիրութեամբ ու զգանքով այն ողորմելի, տրդայական բանակոխը հայերի թիվ մասին, որ անցեալ տարի աղմկել էր կովկասահայ մամուլը և ուր ամենից զգասարը, ամենից խելացին համարում էր նա, ով ամենից բարձր էր ճշում, թե «Հայաստանում հայ չկայ, թե ազգային քաղաքական գործելակերպը եղել է ոռմանտիկ», փոյթ չէ, թե այդ ճիշի հիմունքը լինէր մի քրդական մեթոդով վիճակագրություն: ...«Հայաստանում հայ չկայ»... երբ աշխարհի չորս ծայրերը սիռած մեծ ու փոքր Գրիգորները «ոեֆորմներ» են երագում հայրենի հողը թևակոխելու համար, երբ հեռաւոր ու գայթակղիչ Ամերիկայի հայն իսկ ետում ու թրթոում է վերադարձի տենչերով և երբ մայր երկրի հայրությունն իր բարոյական կորովով, իր հոգու մէջ անաղարտ պահած քաղաքակրթական կարելիություններով, դարերի տառապանքի մէջ թրձած կամքերով մի քանի անգամ անելի արժէ, քան իրենց շրջապատող բարբարոսները, որոնք վաղը քաղաքակրթականութեան վիթխարի անիւների տակ կարող են փոշիանալ ինչպէս երբէք աշխարհ եկած չը լինէին: «Հայաստանում հայ չկայ»... իսկ շա՛տ բուղար, սերբ, յոյն կար բալկանեան երկրներում նրանց ազգատութեան արշալոյսին» (տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, հունվարի 18, № 12):

¹⁶ 1890-ական թթ. ֆրանսիացի վիճակագիր, օսմանյան պաշտոնական աղբյուրներից քաղված հարուստ վիճակագրական նյութ պարունակող «Ասիական Թուրքիա» աշխատության հեղինակ (Cuinet V., *La Turquie d'Asie: Géographie administrative Statistique descriptive et raisonnée de chaque province de l'Asie-mineure*, tome 1-4, Paris, Ernest Leroux, 1890-1894): Վ. Քիսկեի աշխատությունից օգտվել են Ա-Դոն և հարցին անդրադարձած այլ ուսումնասիրողներ:

Ա-Դօի գրքի մէջ, ըստ հայկական աղբիւրների, նրանց թինն է 416,000, բայց, ինչպէս րեանում ենք, տարբերութիւնը շատ մեծ չէ»¹⁷:

Սակայն արդեն երկու ամիս անց Համբարձում Առաքելյանը կտրուկ փոխում է իր մտտեցումները Ա-Դոյի թվերի նկատմամբ, ինչն ըստ երևոյթին պայմանավորված էր 1913 թ. սկզբներին դաշնակցական մամուլում, մասնավորապէս «Հորիզոն» թերթի էջերում, Ա-Դոյի թվերի դեմ ծավալված քննադատական արշավով (դրա մասին կխոսվի հաջորդիվ): Հանդես գալով 1913 թ. փետրվարի 1 (13)-ին Թիֆլիսի Գրական-գեղագիտական սալոնում Հայկական հարցի վերաբերյալ կազմակերպված քննարկմանը, որտեղ, ի թիվս Հայկական հարցի այլ բաղադրիչների, անդրադարձ կատարվեց և արևմտահայության թվաքանակի թեմային, «Մշակի» խմբագիրը նշում էր. «Թիւրքաց կառավարութիւնը միշտ աշխարել է ցոյց տալ, որ հայկական վեց նասիանգներում հազիւ 7-800,000 հայ կայ: Վիրապ Քինէի գիրքն այդ թինն է տալիս: Վերջերս նույնիսկ հայերը կամենում են սպացուցանել, թէ հայերի թինն հազիւ 600,000 է, ինչպէս օրինակ Ա-Դօի գիրքը: Ես ինքս մի բօսլէ հասար ընծայելով նրա ուսումնասիրութեան գովեցի այդ գիրքը, իբրև մեր աչքը բացող մի աղբիւր, բայց Պարիզում մի դէպք եկաւ համոզելու ինձ, թէ որքան անճիշդ է Վ. Քինէի վիճակագրութիւնը, նույնքան անճիշդ է և Ա-Դօի վիճակագրութիւնը: Ֆրանսիական կառավարութեան կարգադրութեամբ 7-8 ամիս առաջ ֆրանսիական հիւպատոսներից մինը ճանապարհորդութիւն կատարելով հայաքնակ վիլայէթներում կազմել է անելի ճշգրիտ վիճակագրութիւն ազգաքնակութեան. նրանից երևում է, որ հայերի թիւը ավելի մեծ է, մոտ 1,200,000»¹⁸: Այս թիւը հասասար է Օրմաննեան սրբազանի կազմած մի վիճակագրութեան, դպրոցների մասին, որի հիման վրա ես մի քանի տարի առաջ «Մշակի» մէջ թիւրքահայերի թիւը որոշեցի 1,200-400,000»¹⁹:

Ա-Դոն չէր կարող չարձագանքել Համբարձում Առաքելյանի վերոնշյալ կարծիքին, ինչպէս նաև դրան նախորդած գրախոսականում արտահայտված «սառն ջուր մաղելու» մասին մտքին: «Մշակի» 1913 թ. փետրվարի 20 (մարտի 5)-ի համարում հրատարակվում է Ա-Դոյի պատասխանը, որտեղ նա փորձում է ձերբազատվել «Մշակի» խմբագրի կողմից իրեն վերագրվող տեսակետներից: Հայտարարելով, որ «Հայկական դատի ներկայ մօմենտում» անպատեհ է համարում բանավեճի մեջ մտնել իր գրքի քննադատների հետ՝ Ա-Դոն այնուամենայնիվ հարկ էր համարում մատնանշել երկու «անճշտություններ», որոնք տեղ էին գտել Համբարձում Առաքելյանի գրախոսականում: Նախ՝ նա արձանագրում էր, որ իր գրքի և ոչ մի տողում հնարավոր չէ գտնել հայերի թվաքանակի վերաբերյալ թուրքական պաշտոնական թվերի իսկությունը հաստատող որևէ ակնարկ: «Եւ ոչ միայն այդ մասին ակնարկ չը կայ, այլ ընդհակառակը... որոշակի ասել ենք, որ թիւրքերի թերը պակաս են մեր

¹⁷ Տե՛ս «Մշակ», 1912, նոյեմբերի 28, № 265: Ա-Դոյի գրքի վերաբերյալ Համբարձում Առաքելյանի գրախոսականում ներկայացված մտքերը երկրորդվում են Միքայել Մելիքյանի կողմից «Մշակ» թերթի 1912 թ. դեկտեմբերի 7(20)-ի համարում (տե՛ս «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները» գրքի առիթով, «Մշակ», 1912, դեկտեմբերի 7, № 272):

¹⁸ Մեզ չի հաջողվել պարզել Համբարձում Առաքելյանի կողմից հաղորդվող այս տվյալի աղբյուրը:

¹⁹ Տե՛ս «Մշակ», 1913, փետրվարի 1, № 28:

թերից 19-20%-ով», - շեշտում էր ուսումնասիրողը՝ եզրափակելով իր միտքը հոետորական հարցով. «...երթ է Համբարձում Առաքելյանին փոքր է թացել այդ փարբերութիւնը, միթէ այդ իրատնք է փայլա նրան մեզ վերագրելու խօսքեր, որոնք գոյութիւն չունեն մեր գրքում»²⁰:

Այնուհետև անդրադառնալով Հ. Առաքելյանի՝ Թիֆլիսի Գրական-գեղագիտական սալոնում հնչեցրած մտքերին, մասնավորապես Վ. Քինեի և իր տվյալների միջև հավասարության նշան դնելուն՝ Ա-Դոն նշում է. «Նախ պիտի ասենք, որ Քինեի հայերի թիւը հայկական վեց վիլայեթներում հաշուում է ոչ թէ 800,000, ինչպէս Առաքելյանն է ասում, այլ 665,000: ...Երկրորդ՝ ...մեր հաշիվով [Վանի, Բիթլիսի և Էրզրումի] երեք վիլայեթներում հայերի թիւը 417,000 է, մինչդեռ Քինեի հաշիվով 346,000 է, այսինքն այնքան, որքան թիրքական պաշտօնական թիւը, որը պակաս է մերից 18-20% ուլ»:

«Այսպիսով Առաքելյանը ոչ մի հիմք չունի ասելու, որ Քինեի հայերի թիւը հաշուում է 800,000, ասելի ևս հիմք չունի ասելու, որ մենք հաշուում ենք 600,000, քանի որ մենք բերում ենք թեւ միմիայն երեք վիլայեթների մասին, - շարունակում էր Ա-Դոն: - Եթէ մենք ուզենայինք որևէ կերպ սրանալ հայերի թիւը մեր թերի օգնութեամբ, պիտի վերցնէինք Քինեի վեց վիլայեթների վերաբերեալ թիւը 665,000-ը և վրան ասելացնէինք 20% այսինքն այն չափով, ինչ չափով որ փարբերվում է մեր թիւը Քինեի թից առաջին երեք վիլայեթների նկատմամբ, որով և կը սրանայինք 800,000-ից մի փոքր պակաս թիւ»²¹:

Վերոնշյալը հիմք էր տալիս Ա-Դոյին եզրակացնելու, որ Հ. Առաքելյանը «թերը բերել է միանգամայն հակադարձ կարգով, այսինքն մեր թերը վերագրել է Քինեին, իսկ Քինեի թերը մեզ, մի երևոյթ, որը տեղի չը պիտի ունենայ նման լուրջ հարցերի ժամանակ»²²:

Ամփոփելով արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ Ա-Դո - Համբարձում Առաքելյան բանավեճը՝ արձանագրենք, որ ոչ Ա-Դոյի թվերի վերաբերյալ «Մշակի» խմբագրի սկզբնական դրական կարծիքը և ոչ էլ հետագա քննադատությունը հիմնված չէին հարցի խորը ուսումնասիրության վրա, այլ մեծապես պայմանավորված էին պատահական գործոններով: Քանի որ արևմտահայության թվաքանակի հարցը հայկական բարեփոխումների շուրջ բանակցությունների համատեքստում նորից մտել էր օրակարգ, Հ. Առաքելյանը՝ որպես արևելահայ իրականության մեջ առավել ազդեցիկ թերթերից մեկի խմբագիր, հարկ էր համարում անդրադառնալ հարցին, սակայն այդ անդրադարձը կրեց մակերեսային բնույթ, ինչի վկայությունն է հենց Ա-Դոյի թվերի նկատմամբ նրա վերաբերմունքի նման արագ փոփոխությունը՝ դրականից դեպի բացասական:

Հ. Առաքելյանը հետագայում շարունակեց հետաքրքրություն դրսևորել արևմտահայության թվաքանակի հարցի նկատմամբ: Այսպես, 1913 թ. մայիսի 22-ին (հունիսի 4) նա այդ հարցով զեկուցում է ունենում Ռուսաստանի կայսերական

²⁰ «Մշակ», 1913, փետրվարի 20, № 39 (նամակը թվագրված է փետրվարի 12 (25)-ով):

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

աշխարհագրական ընկերության Կովկասի բաժանմունքի ընդհանուր նիստում²³: Հետագայում այդ գեկուցումը որոշակի լրացումներով հրատարակվում է որպես առանձին ծավալուն ակնարկ՝ «Թիւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը» խորագրով²⁴, սակայն ո՛չ ելույթը, ո՛չ էլ ակնարկը Ա-Դոյի թվերին որևէ անդրադարձ չեն պարունակում:

Ինչպես արդեն նշել էինք, Ա-Դոյի գիրքը մանրակրկիտ քննության ենթարկվեց արևելահայ դաշնակցական մամուլի կենտրոնական օրգան «Հորիզոն» թերթում՝ պարբերականին թղթակցած տարբեր հեղինակների կողմից: Մեկնարկը տրվեց Նիկոլ Աղբալյանի «Մի կարևոր գիրք» գրախոսականով²⁵ և դրան անմիջապես հաջորդած «Մի քանի թերթ» յոթ մասից բաղկացած հոդվածաշարով (1912 թ. դեկտեմբեր – 1913 թ. հունվար)²⁶, ինչպես նաև «Դարձեալ մի քանի թերթ» հոդվածով (1913 թ. սեպտեմբերի 6)²⁷: Եթե գրախոսականում անվանի դաշնակցական գործիչը սահմանափակվում էր ընդհանուր գնահատականներով, աշխատանքի՝ իր կարծիքով ուժեղ և թույլ կողմերը նշելով, ապա հոդվածաշարում նա արդեն մանրամասն ներկայացնում է Ա-Դոյի գրքում զետեղված վիճակագրական տվյալները, կատարում դրանց վերլուծության սեփական փորձը²⁸: Թեև այդ վերլուծությունը շատ կողմերով ուշագրավ և արժեքավոր է, սակայն տվյալ հոդվածի շրջանակներում մենք կներկայացնենք միայն Նիկոլ Աղբալյանի կողմից Ա-Դոյի գրքում նկատված հիմնական «պակասությունները» քննադատության հիմնական թիրախները:

Այսպես, Նիկոլ Աղբալյանն իրավացիորեն նշում է, որ Ա-Դոյի վիճակագրական աղյուսակները գուրկ են միօրինակությունից: Օրինակ՝ Վանի նահանգի 17 գավառներից 10-ի վիճակագրական տախտակներում նշված է հայաբնակ գյուղերի նաև մահմեդական ազգաբնակչությունը՝ առանց որոշակիացնելու, թե դրանք որ ցեղին

²³ Տե՛ս Արակеляնյ Գ.Ա., *Статистика армянскаго населения Малой Азии: Докладъ, прочитанный въ Обществе собраніи членовъ Кавккъ. Отд. II.р.Г.о. 22 мая 1913 г.*, Тифлисъ, Типъ. К.п. Козловскаго, 1914: Տե՛ս նաև «Մշակ», 1913, մայիսի 25, № 112:

²⁴ Տե՛ս «Արոր. միամենայ հանդես. Ընդհանուր գրական, գիրական-ժողովրդական և խաղաղասիրական», IV տարի, 1913 թ. դեկտեմբեր, էջ 41-79:

²⁵ Տե՛ս «Հորիզոն», 1912, նոյեմբերի 29, № 264:

²⁶ Տե՛ս «Հորիզոն», 1912, № 265, №266, 1913, №3, №№ 6-9:

²⁷ Տե՛ս «Հորիզոն», 1913, № 199:

²⁸ Այսպես, հիմնվելով Ա-Դոյի տվյալների վրա, Նիկոլ Աղբալյանը փորձում է հաշվել զուտ և խառը հայաբնակ բնակավայրերի թիվը՝ ցույց տալով, որ զուտ հայաբնակ գյուղերի թիվը Երզրումի նահանգում կազմում է բոլոր գյուղերի 20%-ը, Բիթլիսի նահանգում՝ 21%-ը, Վանի նահանգում՝ 43,5%-ը («Մի քանի թերթ II», «Հորիզոն», № 266), ներկայացնում է, թե խառը բնակչություն ունեցող գյուղերից քանիստ է հայ բնակչությունն ավելի, իսկ քանիստ՝ մահմեդականները («Մի քանի թերթ III», «Հորիզոն», 1913, №3), ներկայացնում է հայ և մահմեդական տների հարաբերակցությունը («Մի քանի թերթ IV», «Հորիզոն», 1913, №6), հաշվարկում է հայ և մահմեդական գյուղերի միջին մեծությունը («Մի քանի թերթ V», «Հորիզոն», 1913, №7), համադրում է խառը, զուտ հայաբնակ և զուտ մուսուլմանաբնակ գյուղերի տվյալները, կատարում դրանց համեմատական վերլուծություն («Մի քանի թերթ VI», «Հորիզոն», 1913, №8), խմբավորում բնակավայրերն ըստ տների թվի՝ պարզելով, թե ինչ հոծությամբ են ապրում մահմեդականները հայաբնակ խառը գյուղերում («Մի քանի թերթ VII», «Հորիզոն», 1913, №9):

են պատկանում՝ քո՛րդ, թե՛ թուրք, ինչը, ըստ Ն. Աղբալյանի, մեծ կարևորություն ունի, իսկ մնացած գավառների գյուղերի ցանկում նշված են միայն հայ տները:

Նույն «անմիօրինակությունը», ըստ Ն. Աղբալյանի, առկա է նաև Բիթլիսի և Էրզրումի նահանգներին վերաբերող բաժիններում. *«Մուշի, Բուվանդիսի, Մանազկերտի, Վարդոսի և Գեւջի գաւառներին վերաբերող տարածքներում յիշւած են ամեն հայաբնակ գիւղի թէ հայ և թէ մահմեդական տների քանակը. երբեմն յիշուած է նաև, որ մահմեդականները քիւրդ են. Հազրոյի, Բարսարի և Շիրանի ցուցակներում յիշուած է միմիայն հայ տների քանակը. Սասունի Շարսախ, Ծովասար և Առաջատր գիւղահամբերի ցուցակներում միայն գիւղերի անուններն ու հայերի ընդհանուր թիւը բոլոր գիւղերում. Տալտրիկի, Գիլիէ-Գուզանի և Խիանքի ցուցակներում յիշուած է ամեն մի գիւղի տների քանակը, բայց շունչերի ընդհանուր թիւն է տրուած... Վերջապէս Փասնաց գաւառի ցուցակում միայն գիւղերի անուններն են, ո՛չ տան թիւ կայ, ո՛չ ազգաբնակչութեան»²⁹:*

Ավելի ուշ՝ «Հորիզոն», 1913 թ. սեպտեմբերի 6-ի համարում գետնդրված «Դարձեալ մի քանի թեր» հոդվածում Նիկոլ Աղբալյանը նորից անդրադառնում է Ա-Դոնյի տվյալներին՝ համեմատելով դրանք 1913 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կարգադրությամբ Օսմանյան կայսրության հայկական թեմերում անցկացված մարդահամարի առաջին տվյալների հետ (Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Խնուսի գավառակի օրինակով)³⁰: Նիկոլ Աղբալյանի հաղորդումն ուշագրավ մանրամասներ է պարունակում Պատրիարքարանի այդ մարդահամարի վերաբերյալ. *«Վերջերս պատրիարքարանի կարգադրութեամբ սկսել են ցուցակագրել հայերին: Այդ ցուցակներից մէկը, որ կազմուած է սոյն 1913 թ. մայիս ամսին, այս ամստ ընկաւ մեր ձեռքը: Թւերը վերաբերում են Խնուս գաւառին: Ցուցակը կազմել է Խնուս բերդի քահանաներից մէկը: Այնտեղ յիշուած են գիւղերը, տների թիւը, շնչահամարը, դասանութինը, պանդուխտների թիւը, իսլամացած հայերի թիւը, զանազան տեղեկութիւններ դպրոցների, աշակերտութեան և այլնի մասին: Բոլոր տեղեկութիւնները գրում են յարուկ տպագրուած ցանցերի մէջ, որ ուղարկուած է ամեն տեղ»³¹:*

Այնուհետև Նիկոլ Աղբալյանը համեմատական աղյուսակի միջոցով ներկայացնում է Խնուսի գավառակի հայ բնակչության թվաքանակն ըստ Ա-Դոնյի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-14 թթ. մարդահամարի տվյալների (նշվում են միայն այն բնակավայրերը, որոնք հանդիպում են միաժամանակ երկու ցուցակում): Դրա համաձայն՝ գավառակի 24 հայաբնակ գյուղերում Հայոց պատրիարքարանը հաշվում էր 2,731 տուն, 21,089 շունչ հայ (պանդխտած հայերի թիվը գումարելով՝ 23,968), Ա-Դոն՝ 2,150 տուն, 15,295 շունչ (տե՛ս Աղյուսակ 3):

²⁹ «Հորիզոն», 1912, նոյեմբերի 29, № 264:

³⁰ 1913-14 թթ. ընթացքում Կ. Պոլստ Հայոց պատրիարքարանի կողմից անցկացված արևմտահայության հաշվառման (1913-14 թթ. մարդահամար) մասին մանրամասն տե՛ս Թաթոյան Ռ., *Արևմտահայության թվաքանակի հարցը...*, էջ 92-115:

³¹ «Հորիզոն», 1913, սեպտեմբերի 6, № 199:

Աղյուսակ 3³².

Գյուղերի անունները	Տների թիվը ըստ Ա-Դոյի	Ըստ «Նոր ցուցակի» (1913-14 թթ. մարդահամար)
Բերդ (Խնուս)	325	390
Սարլու	45	75
Արոս	95	124
Էլպիս	65	83
Չևիոմե	180	190
Հարամիկ	120	116
Խալիլ Չավուշ	85	120
Քաղքղիկ	110	128
Աղջամելիք	45	32
Շաբադին	50	48
Մարուֆ	45	49
Տուշան	60	57
Կարաքյոփրու	150	191
Ենիքյոյ	50	80
Խոպլու	120	161
Յահյա	40	35
Խըրթ	40	47
Բուռնապ	40	53
Գևանդուկ	120	158
Կարաչորան	220	352
Խըրըմ Խարա	45	51
Սարվորի	30	25
Կորալ	65	152
Մժնկերտ	5	14
Ընդամենը	2,150	2,731

Նիկոլ Աղբալյանն անվերապահորեն առավել հավաստի է համարում Հայոց պատրիարքարանի տվյալները՝ նշելով, որ երկու տվյալների համեմատությունը ցույց է տալիս, թե որքան տարբերություն կա Ա-Դոյի ներկայացրած և իրական թվերի միջև:

Ուսումնասիրողը հարկ է համարում համեմատել նոր թվերը նաև Վ. Քինեի տվյալների հետ՝ նշելով. «Նոյն զաատի համար Վ. Քինե՛ն տրայիս է 10,073 հայ, տարբերությունը հսկայական է՝ 13,915: Եթե մինչև իսկ Ա-Դոին հետևելով 20% վրայ գանք Քինեի թերած թիվն կտրանանք 14,866, որ իրականի համարեա կէսն է կազմում»³³:

Պատրիարքարանի տվյալները նաև թույլ են տալիս դաշնակցական գործչին անդրադառնալ հայ ընտանիքի անդամների միջին թվի հարցին. «Ա-Դոն միջին թույլ հայ ընտանիքի անդամներին 7 է հաշում: Նոր ցուցակը մեզ տրայիս է շարտ առելի»

³² Բնակավայրերի հերթականությունն ըստ աղբյուրի, գյուղերի գրության ձևն ըստ Հայկական համառոտ հանրագիտարանի «Էրզրումի նահանգ» բառհոդվածի (տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Դասարակերտ-Կովսական, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 1995, էջ 242):

³³ «Հորիզոն», 1913, սեպտեմբերի 6, № 199:

իրականության մօտ պարկեր: Ինչպէս րեասանք, Խնուս գաւառի 24 հայ գիւղերում սարում են 2,150 ընտանիք 23,968 անդամով, որ նշանակում է ամեն ընտանիք կազմւած է միջին թուով 11 հոգուց»³⁴:

Նիկոլ Աղբալյանն ամփոփում է Ա-Դոյի տվյալների վերաբերյալ իր ասելիքը հետևյալ տողերում. «Մենք բասարաք հիւնք չենք համարում մեր արած համեմարութիւնը լայն ընդհանրացումներ անելու համար, բայց նա բասական է վերջնականապէս ցոյց տալու, թէ Ա-Դօի թերը ոչ միայն սիսայ են, այլ որ գլխատուն է՝ շար ու շար վար են հայերի իրական քանակից (ընդգծումը հեղինակինն է - Ռ.Թ.)»³⁵:

Այսպիսով, Ա-Դոյի թվերը Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-14 թթ. մարդահամարի տվյալների հետ համադրելու միջոցով Նիկոլ Աղբալյանը կարողացավ ի ցոյց դնել Ա-Դոյի տվյալների թերի, իրականից ցածր լինելը: Դրա հետ մեկտեղ դաշնակցական գործիչը պահպանում էր Ա-Դոյի աշխատանքի նկատմամբ ընդհանուր առմամբ դրական վերաբերմունքը: Ամփոփելով Ա-Դոյի թվերի տեսությունն ու դրանց շուրջ բանավեճը՝ Ն. Աղբալյանն իր նույն «Դարձեալ մի քանի թեր» հոդվածում գրում էր. «Ատղներ եղան թէ նրա (Ա-Դոյի - Ռ.Թ.) թերած թերը... անճիշտ են, հին են, պատրաստական մարդկանց ձեռքով են հասարած, ուստի և անվարահեղի են: Գրողներից շարերը մոռանում էին, որ այդ թերի արժեքը հեղինակն ինքը շար լա գիտեր և բնա մրադիր չէր նրանց անվերապահ վարահոթեան արժանացնելու: Բայց նրան պէտք են եղել թեր, ու նա ջանք է թափել հայարնակ երեք նահանգների հայ ազգաբնակչության թիւը մօտաւորապէս իմանալ: Ոչ մի մարդ չէր կարող ասելի աղբիւրներից օգրուել, քան օգրուել է Ա-Դօն և ասելի նպատարաւ թեր տալ, քան րուել է նա: Ասելի նոր և արոյգ թեր տալու համար պէտք էր անձամբ հետազօտել հայ գիւղերը ազգաբնակչության թիւ րեասակէրից, որ մի մարդ չէր կարող անել, և ուրիշ անողներ էլ չկային»³⁶:

Ի տարբերություն Նիկոլ Աղբալյանի՝ «Հորիզոնի» այլ թղթակիցների կարծիքները Ա-Դոյի գրքի վերաբերյալ նվազ բարյացակամ էին: Ուշագրավ է Գ. Վարդանյանի՝ «Ա-Դօի Թրքահայաստանի վիճակագրությունների առիթով» խորագիրը կրող ծավալուն հոդվածը («Հորիզոն», 1912 թ. դեկտեմբերի 29 (1913 թ. հունվարի 11), № 289): Հատուկ արժեք է հաղորդում ուսումնասիրողի քննադատությանն այն հանգամանքը, որ նա ծնունդով Տրապիզոնից էր և քաջատեղյակ Օսմանյան կայսրության իրողություններին:

Ուսումնասիրողը քննադատության թիրախ է ընտրում մահմեդականների թվաքանակի հարցում Ա-Դոյի կողմից թուրքական պաշտոնական վիճակագրությանն ապավինելը՝ անդրադառնալով Օսմանյան Թուրքիայի վիճակագրական ընդհա-

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում: Հայոց պատրիարքարանի 1913-14 թթ. մարդահամարի Խնուսի գյուղացուցակը մարդահամարի այլ գյուղացուցակների հետ միասին հրատարակվել է միայն վերջերս՝ 1992 թ., ֆրանսահայ ուսումնասիրող Ռ. Գևորգյանի կողմից (տե՛ս նաև Kevorkian Raymond H., Paboudjian Paul B., *Les Armeniens dans l'Empire Ottoman a la veille du genocide*, Editions d'Art et d'Histoire ARHIS, Paris, 1992, էջ 434-435):

³⁶ «Հորիզոն», 1913, սեպտեմբերի 6, № 199:

նոր համակարգի խոցելի կողմերին. «Թիրօքիան իր 5-6 դարերի գոյության ընթացքում և ոչ մի անգամ չէ ունեցել վիճակագրություն Երոսպական մերթով նսագագոյն իսկ: Ես միայն այն ժամանակ է մարդահամարի դիմել, այն էլ իր հասկացած ձևով, երբ որևէ վրանագի մէջ է եղել»:

Ռուպես օրինակ Գ. Վարդանյանը մատնանշում է Բեդլինի կոնգրեսից (1878 թ.) հետո օսմանյան կառավարության վարած վարչաժողովրդագրական քաղաքակա-նության հայտնի փաստերը. «1870-80-ական թասկաններին յանկարծ դէմ առ դէմ գրնելով Հայկական հարցին՝ [Թուրքիան] անմիջապէս փոխեց վիրայէթների կազմը և ...այնպիսի նոր սահմաններ գծեց, որով երէկան հայաշար վիրայէթը կամ գաստը այսօր հրապարակ եկան քրդաշար կամ թիրքաշար ու դրա հետ միասին ներկայաց-րեց այնպիսի թեր, որոնց վրայ տննչով, աշխարեց Երոսպական. դիպլոմատիային ցոյց տալ, որ հայկ. հարց de facto գոյութիւն չունի»³⁷:

Հեղինակը, այնուհետև անդրադառնալով Ա-Դոյի կողմից 1896 թ. օսմանյան պաշտոնական տվյալների օգտագործման փաստին, նշում է. «Մենք տեսնում ենք, որ վիճակագրութիւնը եղել է 1896 թ.: Ու այդ գարշելի թասկանը, որ շարունակութիւնն էր նոյնքան գարշելի 1895 թ., երբ կարմիր արիւնն էր կաթում հայ աշխարհում: Ու Համիդը այդ ժամանակ յարմար դարեց վիճակագրելու իր հպարակ հայերին, երբ մի որոշ մաս արդէն յայտնի կորորածներին զոհ էր գնացել, մի մասը սարերն ու ձորերը սպախնել, իսկ միս մասն էլ տուն-տեղ թողած ժամանակատրասպես հայրե-նիքը լքած՝ օտար հողի վրայ սպախն էր որոնած: Եւ Համիդի «հանձարեղ» հրեշտոր ուղեղը սելի յարմար ժամանակ չէր կարող գրնել սրարիարիկա կազմելու»³⁸:

Շարունակելով խոսել օսմանյան վիճակագրության թերությունների մասին՝ հեղինակը մատնանշում է հայերի թերհաշվառման կարևորագոյն գործոններից մեկը՝ հայերի կողմից հաշվառումից միտումնավոր խուսափելու փաստը. «Ուրեմն պարզ չէ, թէ այդ սրարիարիկան ո՞ր սարիճան արժէք ունի, երբ նրա մէջ չկան այն հայերը, որոնք ժամանակատրասպէս պանդիարել էին, նրանք՝ որ քաղաքական անբարեյուտութեան տեսակէտից հրապարակ չէին եկած և նրանք, մանասանդ, որոնց հայ ժողովուրդը ինքը դիպլոմատ չէր մարցրել մարդահամարի մէջ (ընդգծումը հեղինակին է- Ռ.Թ.): Այս վերջին պարագան էական նշանակութիւն ունի, և այդ այն է, որ թիրքահայերը միշտ խուսափել են իրանց ընտանիքի, մանասանդ արու անտամների թիրք հարագարօրէն յայտնելու, որպէս զի ազարիս վճարելու գիտորագրութեան փոխարէն առնած ինչպէս և ճանապարհների շիտութեան համար առնած տորքե-րից: Ու այնպիսիները, մանասանդ ներքին գաստներում, այս և այլ կողմնակի պար-ճատներից շար-շար են»³⁹:

Ջարգացնելով իր այս միտքը՝ որպէս արևմտահայերի կողմից սեփական թիվը թաքցնելու միտումի ապացոյց՝ Գ. Վարդանյանն իր անցյալից մի փաստ է վկա-յակոչում. «Չպիտի ուշանամ յայտարարելու, որ ես 1893թ. ունեցայ մի գասակ, որ ես

³⁷ «Հորիզոն», 1912, դեկտեմբերի 29, № 289:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում:

թէ՛ն Տ... քաղաքի առաջնորդարանի ցուցակում մտնել էր, սակայն պետական ցուցակում չկար, եւ մինչեւ վերջն էլ չմտաւ»: Ու այդ յաջողութիւն էր անել մեզ՝ տալով մի անգամ միայն մի մեծիդիէ⁴⁰ մոնիտորին (զինտր. փորձը հասարդ): Ու պէտք է անելացնեն, որ շար անգամ առաջնորդարանի ցուցակի մէջ էլ չեն մտնում: Այդպէս էլ 10 դուրոշը բաւական է կնքող փոխդիրին ընծայ: Եւ որովհետեւ երեխան մեծանալուց յետոյ, ոչ մի անգամ ոչ մի վկայականի կարիք չի զգում, ուարի և այդպէս մարդիկ պրծնում են որոշ փորձերից: Եւ քանի-քանիսներ կան այդպէս»⁴¹:

Ըստ Գ. Վարդանյանի, եթէ հայ բնակչության թվաքանակի դեպքում օսմանյան վիճակագրությունն իրականից ցածր է, ապա մահմեդականների թիվն ընդհակառակը ցույց է տրվում իրականից բարձր. «...թիւրք կառավարութիւնը մահմեդականների ցուցակում շար անգամ հաշում է մինչև անգամ մեծածներին ու նրանց, որոնք որ պանդուխտ են ու այդ ժամանակ երկրում չեն գրնում: Ինչ վերաբերում է քրդական վիճակագրութեանն դա ho առաւապել է. վիճակագրել մի մարդկային հօր, որը ոչ տեղ ունի և ոչ տուն, այլ փարսայ զանազան եղանակներին այս կամ այն տեղ է թափառում և շար հասանական է, որ թէ այստեղ, թէ այնտեղ վիճակագրում: Արդար լինելու համար պիտի ստել, որ շար տեղեր էլ ըսկի հնար չէ եղած և չէ վիճակագրել քորդ համայնքը, օրինակ Տերսիւնը, որի կենտրոնը մինչև այսօր ոչ մի թուրք պաշտոնեայ ուրք չի կոխել»⁴²:

Այնուհետև Գ. Վարդանյանն անդրադառնում է արևմտյան հեղինակների վիճակագրություններին՝ թերահավատորեն մոտենալով դրանց: Որպես թերահավատության պատճառ՝ ուսումնասիրողը նշում է այն պարզ իրողությունը, որ եվրոպացի ճանապարհորդները իրենց թվերը քաղել են «թրքական այդ խիստ պղտոր աղբիւրից»՝ թուրքական պաշտոնական վիճակագրությունից: «Նրանք իրանց ճանապարհորդական սուղ ժամանակում հնարավորութիւն չեն ունեցել ...[Արևմտյան Հայաստանի] սպեցիֆիկ պայմանների հետ ծանօթանալու, - շարունակում է ուսումնասիրողը: - Նրանք թիւրք պետականութեան վրայ նայել են առանել կամ նազ չափով բարեհաճ աչքով և հավատարացել են նրանց ցույց տրած վիճակագրական տեսակներին, որով գրեթէ միաբերան թրքահայերի թիւը ներկայացրել են այն՝ ինչ որ իրականութեան չէ համապատասխանել»⁴³:

Ա-Դոն, հիմնվելով Բեռլինի կոնգրեսին հայկական պատվիրակության ներկայացրած վիճակագրության և իր հաշվարկների միջև առկա տարբերության վրա, գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թիվը 1878-1909 թթ. միջև ընկած ժամանակահատվածում նվազել է մոտ 45%-ով (1,330,000-ից՝ 736,000-ի): Գ. Վարդանյանն իրավացիորեն քննադատում է այդ տեսակետը. «Երևակայել, թէ մի ժողովուրդ 30 փարսայ ընթացքում գրեթէ կիսատկես նազել է՝ այդ... ֆանտազիա է»⁴⁴:

⁴⁰ Թուրքական արծաթե դրամ:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նշենք, որ 1878-1914 թթ. Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի դինամիկայի հարցում ուսումնասիրողների շրջանում դեռևս չկա գերիշխող տեսակետ: Ոմանք հետևում

Վերոնշյալ բոլոր փաստարկները Գ. Վարդանյանին թույլ են տալիս եզրափակել Ա-Դոյի գրքին իր անդրադարձը հետևյալ տողերով. «*ս. Ա-Դոի տասն թերթը համեմատաբար ատյի են, քան միս բոլոր վիճակագրիներինը, այնուամենայնիվ ... նրա տասն թերթն էլ շար հեռու են իսկական (ընդգծումը հեղինակինն է - Ռ.Թ.) լինելուց: ... Մենք հասարակացած ենք..., որ եթե երոպական մարտով (ընդգծումը հեղինակինն է - Ռ.Թ.) մի մարդաստանար լինի հենց այժմ իսկ, Թրքահայաստանի թե 3 և թե 6 վիլայեթներում հայ ժողովրդի թիվը իր պարկատելի տեղը պիտի ունենայ և հերևաբար նա ոչ թե ընդհ. ազգաբնակչության 23%-ը, այլ միս քրիստոնեայ ազգաբնակչության հեր եթե մահմեդականներից մեծամասնություն էլ չի կազմելու, յամենայն դեպս ոչ պակաս քան 40%: Իսկ եթե մահմեդական ցեղերը Թուրքը, Քիւրդը, Չերքեսը ջոկ-ջոկ վերցնենք այդ դեպքում հայերը բոլոր հայաբնակ վիլայեթներում մեծամասնություն կը կազմեն»⁴⁵:*

Արևմտահայության թվաքանակի շուրջ ընթացող բանավեճի մաս դարձավ «Հորիզոնի» 1912 թ. հունվարի 24-ի (փետրվարի 6) համարում զետեղված «Յ.Յ.Շ.» ստորագրությունը կրող «Թրքահայոց վիճակագրությունները» հոդվածը: Հեղինակը հենց սկզբից իր խիստ բացասական վերաբերմունքն է արտահայտում ոչ

են 1912 թ. Հայոց պատրիարքարանի տվյալներին, համաձայն որի՝ 1882-1912 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի վեց նահանգների հայ բնակչությունը նվազել է 612,000-ով (1882 թ.՝ 1,630,000, 1912 թ.՝ 1,018,000 (տե՛ս Գրիգոր Ջոհրայի՝ Մարսել Լեար ծածկանունով Փարիզում ֆրանսերենով տպագրված «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի տակ» աշխատությունը (Leart Marcel, *La Question arménienne à la lumière des documents*, Paris, 1913, էջ 63):

Անվանի պատմաբան Ազատ Համբարյանը, ներկայացնելով և վերլուծելով հայկական ու օսմանյան վիճակագրական տվյալները, ինչպես նաև ռուս և արևմտյան հեղինակների կողմից բերվող վիճակագրական տեղեկությունները, Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակը որոշելու համար որպես հիմք օգտագործում է 1844 թ. օսմանյան տվյալները և որոշելով հայ ազգաբնակչության անը նախքան 1878թ. տարեկան 0,7%՝ գալիս է հետևյալ եզրահանգումների.

1) 1860-ական թթ. վերջերին և 1870-ական թթ. կեսերին Թուրքիայում կար մոտ 3,000,000 հայ,

2) Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արևմտահայոց թիվը կազմում էր 2,583,692 հայ, որից մոտ 1,400,000-ը ապրել է Արևմտյան Հայաստանում,

3) արևմտահայ բնակչությունը 1878-1914 թթ. ընթացքում նվազել է՝ մոտ 3 մլն-ից իջնելով 2,583,692-ի (տե՛ս Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 110-111):

Արևմտահայության ժողովրդագրության հարցերով զբաղվող ուսումնասիրողներից Գեղամ Բաղայանի կարծիքով 1914-ին, 1870-1880-ական թթ. համեմատ, հայերի թիվը զգալիորեն նվազել էր՝ մոտ 3 միլիոնից հասնելով 2,5-ի (տե՛ս Բաղայան Գեղամ, Արևմտյան հայաստանի և Կիլիկիայի վարչաժողովրդագրական պատկերը, *Հայոց պատմություն, հարոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918 թ.)*, գիրք երկրորդ (1901-1918 թթ.), *հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին*), Երևան, «Ջանգակ» հրատարակչություն, 2015, էջ 64):

Գտնում ենք, որ թեև կոտորածներն ու արտագաղթն անշուշտ բացասական ազդեցություն են ունեցել արևմտահայության թվաքանակի վրա, սակայն դրա հետ մեկտեղ կորուստը որոշ չափով լրացվել է բնակչության աճի բարձր տեմպերով, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ 1878-1914 թթ. Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում հայ բնակչության թիվը մեծ չափով չի նվազել՝ մնալով 1,100,000-1,200,000-ի սահմաններում, իսկ Կիլիկիայում և Փոքր Ասիայում գուցե նաև աճել է:

⁴⁵ «Հորիզոն», 1912, դեկտեմբերի 29, № 289:

միայն Ա-Դոյի, այլ նաև հրապարակի վրա առկա այլ վիճակագրությունների նկատմամբ. «Իմ աչքին զրոյի հասասար են Վարժապետեանի⁴⁶, Ա-Դօի և այլ ազգայնոց բոլոր վիճակագրոյցները, իսկ օսմ. մարդահամարներուն գալով, չարժէ խօսքն անգամ ընել: Եթէ օրսար և պարտաճանաչ ձեռքերով կարենայինք ճիշտ մարդահամար մը կազմել, շար տարբեր և միփոխարական թիւերու հետ գործ պիտի ունենայինք»⁴⁷:

Ա-Դոյի տվյալների և արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ ընթացող բանավեճը հնարավորություն է տալիս հողվածի հեղինակին անդրադառնալու քրդերի էթնոկրոնական պատկանելության հարցին, քննադատելու բոլոր քրդերին որպես իսլամադավան ներկայացնելու օսմանյան իշխանությունների մոտեցումը. «Երբ Օսմ. «բարեխնամ» կառավարութիւնը հայերը կաթոլիկ, բողոքական, հռոմէական (հունադավան - Ռ.Թ.) և այլն անանելով կարողարժանի, միա կողմէն բոլոր ցեղերը քիտր անան րակ և իսլամ մեղեթե ըսելով շոսայլարար միլիոններու կը բարձրացնէ անոնց թիւը»⁴⁸:

Այնուհետև հեղինակը հատուկ շեշտում և զարգացնում է Դերսիմի (Տավրոսի) դոլբաշ քրդերի՝ ոչ իսլամադավան լինելու փաստը՝ բավականին ուշագրավ մանրամասնություններ հաղորդելով նրանց նիստուկացից. «Ինչպէս կրլլայ որ դարերով դոլբաշ ճանչած րարոսցին այժմ, այսինքն Համիդի օրերեն սկսեալ իսլամ կրլլան... Տարոսցին բազմակնութիւնը անբարոյականութիւն կրրասանի, թիփարութիւնը անձնասպանութեան հասասար, օրական հինգ անգամ նամազը կեղծութիւն և խաբէութիւն: Տարոսցին ոչ միայն զօրք կամ Համիդիէ չրար, այլ նաև թուրքին թոյլ չրար որ իր փողոցէն կամ գիւղէն անցնի: Յոյց րեք ինձ թուրք մը, որ Տարոսի ներքին ասիմանները րեասած ըլլայ: ...Տարոսուհին երթ թուրքի երեսը րեսնէ, երեք անգամ կրթքննէ և երեք անգամ կանիծէ շեթանը: Տարոսցին իր մէջ գրնասած հայկական վանքերը սրբութեամբ և անրիծ կրպահպանէ իբր սրբազան ասանդ, այդ վանքերը կր դիմէ ամեն հիանդութեան համար և բժշկութիւնը այն սուրբերէն կապանէ, րարոսցին մեր Ասազ ուրբաթի գիշերան, ողբայի արարողութիւնները կրպահպանէ և հացի խմորը իսաչով կրդրոշմէ»⁴⁹:

«Հորիզոնի» 1913 թ. № 27 (փետրվարի 3 (16)) և 28-ում (փետրվարի 5 (18)) տպագրվում է Բ. Գասպարյանի («Բ. Գասպ.») ծավալուն անդրադարձն արևմտահայության թվաքանակի հարցին և Ա-Դոյի վիճակագրությանը, որը կրում է «Հայերի թիւը» խորագիրը: Հեղինակը նախ խոսում է օսմանյան իշխանությունների՝ հայերի իսլամացման դարավոր քաղաքականության մասին՝ նշելով, որ բարենորոգումները կյանքի կոչելու դեպքում իսլամացված հայերը հնարավորություն կստանան վերադառնալու իրենց հայկական ինքնությանը. «Եթէ իսկապէս խղճի, խօսքի, ժողովների, մամուլի ազարութիւն մրնի մեր երկրի մէջ, եթէ մահմեդականութիւնը առա-

⁴⁶ Նկատի ունի 1874-1884 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանին: Նրա պաշտոնավարման շրջանում՝ 1878-1880 թթ., անց էր կացվել արևմտահայության մարդահամար, որի արդյունքները ներկայացվել էին մեծ տերությունների դիվանագետներին:

⁴⁷ «Հորիզոն», 1913, հունվարի 24, № 18:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում:

մելեալ կրօն լինելուց դադրի, ահագին քանակությամբ մահմեդականացած հայեր... հայրության գիրկը կը դառնան... Անպատճառ պայման չէ, որ նրանք քրիստոնեություն ընդունեն, բա է, որ հայ լինելու, հայերեն խօսելու, հայությունից օրսար չլինելու զգացումը վերագարթի»⁵⁰:

Հոգվածագիրն ուշագրավ փաստեր է ներկայացնում իսլամացված հայերի նիստուկացի վերաբերյալ. «Համէնի կողմերը փաստեակներով հայ գիտեր կան մահմեդականացած: Տեղ-տեղ նրանք դեռ հայերէն են խօսում: Մի քանի գիտերում կիները ամենևին թուրքերէն չեն իմանում: Բարերդի, Սպիրի շրջաններում հոչակատր Լալափաշան «թուրքացրել» է լեռնական հայերը: ...Նայում ես գիտացիների դէմքերին, բոլորը զուր հայ դէմքեր: Խօսում ես հեպր թուրք է, բայց կոչում է Փախագ-օղլու, Մարփիրու-օղլու... Հարցնում ես գիտի անունը - Գումն-Վանք է կամ Սեյիրի Եաղուր (Ս. Յակոբ): Շար տեղեր դեռ ես շարաթ երեկոյեան աշխատանք չեն անում, «հիշտէկ» է. դեռ իմոր հոնցեյիս, իսպ են քաշում իմորի վրայ. դեռ հայ ատրակներին ուխտի են գնում - խոնկ ծխում, մոմ վառում, դեռ ոչխար մորթելիս արինոսր դանակով անասունի մորթու վրայ կարմիր խաչանիշ են գծում... Ո՞ր մէկը հաշտեմ»⁵¹: Նշենք, որ հայկական բարեփոխումների շուրջ ընթացող բանակցությունների ժամանակաշրջանում իսլամացված հայերի թեման բավականին լայն արծարծում էր գտել հայ հասարակական-քաղաքական խոսույթում: Դրա վկայությունն է ոչ միայն արևմտահայության թվաքանակի հարցին անդրադարձող բազմաթիվ հոդվածներում տվյալ թեմայի արտացոլումը, այլ նաև այն հանգամանքը, որ 1913 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից կազմակերպված մարդահամարի՝ թեմեր ուղարկված հարցաթերթի հարցերից մեկը վերաբերում էր իսլամացված հայերի թվին⁵²:

Հոգվածի երկրորդ մասում հեղինակն արդեն անդրադառնում է բուն վիճակագրությունների խնդրին՝ սկզբում քննադատելով թուրքական տվյալները. «Թուրքական պաշտօնական աղբիւրներն անպայման ախարատր են. նրանք միշտ կրկնապատկում են մահմեդականների թերը և քչացնում «գետաուրի» թերը: Այդ ձգրումը մասնատրապէս զօրեղ էր Համիդեան շրջանում: Այժմ էլ դժբախտաբար թուրք գործիչները յետ չեն մնում այդ խնդրում՝ նախորդներից: Թիւրքական աղբիւրները հիմք են ծառայել նաև օրսար ճամբորդների - ինչպէս Վիրապ Քինէին, պրօֆ. Վամբերիին, Տրօպրերին, Ջելոնովին, պրոֆ. Ջուպանին, Լինչին և այլն: Եւ միթէ նոյն աղբիւրների ազդեցութեան փակ չէ եղել պ. Ա-Դօ»⁵³:

Թուրքական տվյալների թերի լինելը ցույց տալու համար հեղինակը ներկայացնում է Երուսաղեմի պատրիարքարանի պարտքի մարման նպատակով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի միջնորդությամբ օսմանյան կառավարության կողմից արևմտահայության վրա սահմանված տուրքի պատմությունը. «Յայրնի է, որ 1886-87 թերին Երուսաղէմի պարտքը աճել էր և ապտոնում էր մեր «ազգային կրօնական»

⁵⁰ «Հորիզոն», 1913, փետրվարի 3, № 27:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Տե՛ս Թաթոյան Ռ., *նշվ. աշխ.*, էջ 95:

⁵³ «Հորիզոն», 1913, փետրվարի 3, № 27:

այդ արավայրին: Կալսածների վաճառումը մօտ էր: Ազգային իշխանությունները ուր ու ձեռք ընկան և յաջողեցրին հայ ժողովրդի վրայ մի նոր հարկ դնել յօգուտ Երուսաղէմի: Զինարական փորձի 37^{1/2} դահեկանի վրայ կառավարությունը ասելացրեց մարդ գլուխ 3 դահեկան իբր Սաղիմական փորձ: Երեք փարի գանձելով այդ փորձը, կառավարությունը յայրնեց, որ արացել է 4,500,000 դահեկան Սաղիմի համար: Ուրեմն՝ կառավարությունը Բեդէլը էսկերի է ստել 500,000 հայերից: ...Արդ, եթէ 500,000 չափահաս արու հայ կար այն ժամանակ, ...ուրեմն վարահօրէն կարելի է սխտի, որ արու հայերի թիւը մէկ միլիոնից եթէ շատ չէր 90 թւերին, քիչ էլ երբէք չէր լինի: Մի այդ չափ էլ եթէ հաշունք բոլոր կիները, արդէն կըարանանք 2,000,000 կլոր թիւը»⁵⁴: Հեղինակը գտնում է, որ եթե հաշվի առնենք հարկից խուսափելու նպատակով բազմաթիվ հայերի՝ հաշվառումից խուսափելու փաստը, ինչպես նաև հարկից ազատված հայերի թիվը (հոգևորականներ, եկեղեցական պաշտոնյաներ, ուսուցիչներ, հաշմանդամություն և հոգեկան հիվանդություններ ունեցողներ, ինչպես նաև Կ. Պոլսի հայությունն ամբողջությամբ), ապա «հայերի թիւը 2^{1/2} միլիոն ընդունելը չափազանցություն չի լինի»⁵⁵:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է Օսմանյան կայսրության հայ բնակչության մի վիճակագրություն, որը, ըստ նրա, կազմվել էր 1880-1881 թվականներին Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի և Արիստակես վարդապետ Տեր-Սարգսյանի (Արիստակես Տեկանց) կողմից: Ինչպես հայտնի է, նշված ժամանակաշրջանում հայկական բարեփոխումների հարցի կապակցությամբ այս երկու գործիչները մարդահամար անցկացնելու նպատակով ուղարկվել էին Արևմտյան Հայաստան: Համաձայն այդ վիճակագրության՝ նշված ժամանակաշրջանում հայերի թիվը 2,660,000 էր (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

1.	Վանի վիլայեթ	400,000
2.	Բիթլիսի վիլայեթ	250,000
3.	Դիարբեքիրի վիլայեթ	150,000
4.	Կարինի վիլայեթ	280,000
5.	Խարբերդի վիլայեթ	270,000
6.	Սեբաստիայի վիլայեթ	280,000
	Գումար	1,630,000
	Թուրքիայի մյուս մասերում.	
1.	Տրապիզոնի վիլայեթ	120,000
2.	Բրուսայի վիլայեթ	60,000
3.	Այդընի վիլայեթ	50,000
4.	Ադանայի վիլայեթ	280,000
5.	Իսմիրի վիլայեթ	65,000
6.	Էնկյուրիի, Կոնիայի, Կաստեմունիի վիլայեթներ	120,000
7.	Հալեպի վիլայեթ	100,000
8.	Բաղդադի, Բեյրութի, Բասրայի վիլայեթներ	40,000

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Նույն տեղում:

	Գումար	835,000
	Եվրոպական Թուրքիայում.	
1.	Պոլիս	135,000
2.	Էդիրնե (Ադրիանապոլիս)	50,000

Հեղինակը, ներկայացնելով Աբդուլ Համիդի քաղաքականության արդյունքում Արևմտյան Հայաստանի ավերվածության պատկերը, որպես կոտորածների և արտագաղթի հետևանքով ժողովրդագրական պատկերի փոփոխության ապացույց՝ տալիս է արդեն 1912 թ. վերաբերող նոր վիճակագրություն: Հոդվածագիրը բավականին ուշագրավ մանրամասնություններ է հաղորդում վիճակագրության պատրաստման հանգամանքների վերաբերյալ. «Ազգային վարչություն⁵⁶ 3 անդամից բաղկացած կոմիտեոնը, որ պիտի գրառի հայկական հարստահարությանը խնդրով, պատրաստել է հայերի կամ սաելի լա է սաել 6 հայ նահանգների բաասկան ճշգրիտ, բայց համառոտ վիճակագրությունը, որ պիտի շուրջով յանձնէ տպագրություն: Այդ տեսակները մեծ աշխատանքով հանած են պատրիարքարանի թղթերից»⁵⁷:

1912 թ. վերաբերող վիճակագրությունում ներկայացվում էին միայն գլխավոր էթնիկական խմբերի թվերը (տե՛ս ստորև):

Աղյուսակ 5.

		Թուրք	Հայ	Քուրդ (թափառական)	Քուրդ (մստակյաց)
1	Էրզրումի վիլայեթ	260,000	205,000	95,000	35,000
2	Վանի վիլայեթ	47,000	185,000	40,000	32,000
3	Բիթլիսի վիլայեթ	45,000	172,000	42,000	35,000
4	Խարբերդի վիլայեթ	102,000	168,000	20,000	75,000
5	Դիարբեքիրի վիլայեթ	45,000	100,000	25,000	30,000
6	Սեբաստիայի վիլայեթ	215,000	100,000	15,000	35,000
		715,000 (26,5%)	930,000 (38,8%)	237,000	242,000 (15%) ⁵⁸

Թեև Բ. Գասպարյանը չի նշում Երուսաղեմի պատրիարքության պարտքի մարման համար սահմանված տուրքի և այլ տեղեկությունների, այդ թվում՝ 1880-1881 և 1912 թթ. արևմտահայության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալների աղբյուրը, սակայն կասկածից վեր է, որ դրանք նա ստացել է 1912 թ. հայկական բարեփոխումների ծրագրի ստեղծման նպատակով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողովից: Այդ տվյալները որպես հավելված կցվել էին բարեփոխումների հայկական նախագծին, որը 1913 թ. սկզբներին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը ներկայացրել էր մեծ տերությունների ներկայացուցիչներին: Հետագայում նույն տվյալները շրջանառության մեջ են դրվել նաև Գրիգոր Զոհրապի կողմից իր «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի տակ» աշխատանքում, որը նա հրատարակել էր Մարսել Լեար ծածկանունով

⁵⁶ Ըստ 1860 թ. ազգային սահմանադրության՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին կից գործող մշտական գործադիր մարմին:

⁵⁷ «Հորիզոն», 1913, փետրվարի 5, № 28:

⁵⁸ Թափառաշրջիկ քրդերը ներառյալ:

Փարիզում ֆրանսերեն⁵⁹: Նշված տվյալները գետեղվել են նաև Առաջին աշխարհամարտից հետո Փարիզի հաշտության կոնֆերանսին հայկական պատվիրակության ներկայացրած տարբեր տեղեկագրերում և հուշագրերում⁶⁰: Տեղին է նաև արձանագրել, որ Ա-Դոյի աշխատության շուրջ ծավալված բանավեճի շրջանակներում «Ա. Գասպ.» հողվածագրի կողմից «Հորիզոնում» Հայոց պատրիարքարանի 1882 և 1912 թթ. վիճակագրությունների գետեղումը նշված վիճակագրությունների առ այսօր հայտնի ամենավաղ հրատարակումն է. մինչ այդ պատմագիտական գրականության մեջ ընդունված էր համարել, որ դրանք առաջին անգամ հրատարակվել էին Գրիգոր Զոհրապի վերոնշյալ աշխատանքում⁶¹:

Ինչպես և «Մշակի» պարագայում, Ա-Դոն հարկ է համարում պատասխանել նաև «Հորիզոնին» թղթակցած հեղինակների՝ իր վիճակագրական հաշվարկների առիթով հնչեցրած քննադատությանը: Ուսումնասիրողի պատասխանը լույս է տեսնում «Հորիզոնի» փետրվարի 28-ի (մարտի 13), մարտի 1-ի (14) և 2 (15)-ի համարներում՝ «Ընթերցողի ուշադրությանը» խորագրի տակ:

Իր պատասխանում Ա-Դոն նախ ափսոսանք է հայտնում, որ իր գրքից, որի շատ բաժիններ նվիրված են Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգների հայ բնակչության սոցիալ-տնտեսական կացությանը (հեղինակը թվարկում է իր կողմից լուսաբանված թեմաները՝ նահանգների վարչական և աշխարհագրական նկարագրություն, քուրդ ցեղերի ու կեղեքիչ քուրդ բեկերի գործողություններ, պանություններ, բռնություններ, կողոպուտներ, հողային ու գույքային գրավումներ, հաղորդակցության միջոցների ու կապիտալի բացակայություն, տիրող օրենքների ու կառավարչական ձևերի, հողատիրության ու ճորտական կարգերի, հարկերի և դրանց գանձման համակարգ և այլն), իսկ այս բաժինները, ըստ հեղինակի, կազմում էին իր գրքի ամենահետաքրքիր մասը, միայն վիճակագրական թվերն են առանձնապես զրավել քննադատների ուշադրությունը: «Պատճառը հասկանալի է, - շարունակում է Ա-Դոն: - Բայկանեանս պետրոֆինների յաղթական պատերազմի շնորհիվ հրապարակ է եկել հայկական հարցը, նորից հայերը յոյս են կապել եվրոպական դիպլոմատիայի վրայ, դիպլոմատիայի, որը քանի-քանի անգամ թողել է յուսախափ դրությամբ և արեան ճապաղիքի մէջ հայ ժողովրդին: Քննում ու քննում են հայկական վիլայեթների ակնկալած կառավարչական ձևի և իրաակարգ արեղծելու վերաբերեալ խնդիրները: Այդ հարցում կարևոր տեղ է բռնում հայ ժողովրդի թիւը հայկական վիլա-

⁵⁹ Տե՛ս Leart Marcel, *La Question arménienne à la lumière des documents*, Paris, 1913: Հայերեն թարգմանությունը (առանց վիճակագրական հավելվածների) տե՛ս Գրիգոր Զոհրապ, *Հայկական հարցը փաստաթուղթերու յոյսին տակ*, Պէյրոյթ, «Շիրակ» հրատարակչատուն, 1973:

⁶⁰ Տե՛ս *La question armenienne devant la conférence de la paix*, Paris, Dupont, 1919, նաև՝ *Reponse au Memoire de la Sublime-Porte en date du 12 fevrier 1919*, Constantinople, 1919, նաև՝ *Population Armenienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat Armenienne de Constantinople*, Paris, Turabian, 1920: Մանրամասն տե՛ս Թայթյան Ռ., Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես», 4 (1), 2016, էջ 44-82:

⁶¹ Տե՛ս Բաղայան Գ., Արևմտյան հայաստանի և Կիլիկիայի վարչաժողովրդագրական պատկերը..., էջ 56:

յթթներում: Թւեր են պէտք, բայց թւեր չկան, թւեր, որոնք բոլիւէին հայկական աղբիւրներից, կրէին պաշարօսական բնոյթ, համարէին վարահէլի: Հրասպարակի վրայ միայն մեր թւերն են վերցրած հայկական աղբիւրներից, այն էլ միայն երեք վիլայէթների նկարումսը»⁶²:

Այնուհետև Ա-Դոն մանրամասն անդրադառնում է «Բ. Գասպ»-ի հոդվածին՝ ընդհանուր առմամբ դրական արձագանքելով հոդվածում զետեղված Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալներին և փորձելով հիմնավորել, որ դրանք էականորեն չեն հակասում իր հաշվարկներին: Ուսումնասիրողը հաշվարկել էր միայն երեք նահանգների հայ բնակչության թվաքանակը, ուստի այլ նահանգների համար նա հիմք է ընդունում Վ. Քինեի տվյալները: Քանի որ իր թվերը երեք նահանգների համար շուրջ 20%-ով ավել էին ֆրանսիացի վիճակագրի տվյալներից, ապա մնացած երեք նահանգների (Դիարբեքիր, Խարբեթո, Սեբաստիա) համար Վ. Քինեի տվյալները Ա-Դոն նույնպես ավելացնում է 20%-ով և ստանում Արևմտյան Հայաստանի վեց նահանգների համար 800,000 հայ բնակչություն թիվը: «Այսպիսով պարբերաբարանի հայերի թիւը մերից ակելի է 130,000-ով. բացի այդ, մեր հաշուով հայերը կազմում են ազգաբնակչութեան 27%-ը, իսկ պարբերաբարանի հաշուով 38,8%», - ամփոփում է հեղինակը⁶³:

Պետք է արձանագրել, որ Ա-Դոն, ձգտելով հաշտեցնել իր և Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրությունները, որոշակի խորամանկության է դիմում՝ համադրելով ոչ թե զուտ երեք՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգների, այլ Արևմտյան Հայաստանի բոլոր վեց նահանգների տվյալները: Մինչդեռ երեք նահանգների պարագայում տարբերությունն իր և Պատրիարքարանի տվյալների միջև բավականին շոշափելի է (Ա-Դո՝ 417,000, Հայոց պատրիարքարան՝ 562,000): Իսկ եթե հաշվի առնենք, որ Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության հրատարակված մասից դուրս էին մնացել Վանի Հաքյարի և Բիթլիսի Սդերդի գավառների հայ բնակչության թվերը (շուրջ 30,000 հայ, որից Սդերդ՝ 18,000, Հաքյարի՝ 12,000)⁶⁴, ապա տարբերությունն էլ ավելի է մեծանում:

Գ. Վարդանյանի քննադատության նկատմամբ Ա-Դոն շատ ավելի կոշտ է արտահայտվում՝ արհամարհանքով անվանելով նրա փաստարկները «թիւքրական վիճակագրութեան վերաբերեալ հազար ու մի անգամ ծամծամած ընդհանուր խօսքեր ու դարձածքներ»⁶⁵ անպատասխան թողնելով ինքնաբերաբար ծագող հարցը, թե արդյոք կարո՞ղ է փաստարկների «ծամծամված» ու «կրկնված» լինելն արժեզրկել դրանց իսկությունը:

Ա-Դոն փորձում է վիճարկել նաև «Հորիզոնի» էջերում «Յ.Յ.Շ» ծածկանունով իր ընդդիմախոսի հիմնական փաստարկը, այն է՝ իր կողմից որպես հայ ընտանիքի

⁶² «Հորիզոն», 1913, փետրվարի 28, № 45:

⁶³ «Հորիզոն», 1913, մարտի 1, № 46:

⁶⁴ Տե՛ս Թէոդիկ, *Ամէնուն ցարեցոյցը*, ԺԶ. տարի, 1922, Կ. Պոլիս, էջ 262:

⁶⁵ Նույն տեղում:

անդամների միջին թիվ 7-ն ընդունելը թերհաշվառում է, և միջին թիվը պետք է ընդունել 10: Մրա մասին Ա-Դոն նշում է. «Մեր ճանապարհորդության ժամանակ յաճախ մեր ձեռքն է ընկնում ցուցակներ, որ ընդամենը նշանակած էին հասարակաբան 10-ական անդամներից բաղկացած. այդ նոյն չափն էին կրկնում յաճախ շարերը մեր հարց ու փորձի ժամանակ: ...Եւ երբ մենք կազմեցինք և կազմել փոխը 23 փարբեր գիւղերի ծխացուցակները, ընդամենի անդամների միջին թիւ սրացանք 6: Իսկ մենք ընդունեցինք 7 թիւ, ի նկարի ունենալով այն հանգամանքը, որ յիշեալ ցուցակները յամենայն դէպս կարող էին պակասատր լինել»⁶⁶:

Ի հիմնավորումն արևմտահայ ընտանիքի անդամների միջին թիվը 7 ընդունելու իր տեսակետի՝ Ա-Դոն համեմատում է Վանի Հայոց ձոր գավառակի հայ բնակչության իր վիճակագրությունը նույն գավառակի՝ «Հորիզոնի» 1913 թ. հունվարի 17(30)-ի համարում⁶⁷ տպագրված վիճակագրության հետ, որի հեղինակ Վ. Մոկացյանը տեղացի մտավորական-ուսուցիչներից էր: Հայոց ձորի 27 հայաբնակ գյուղերում, ըստ Ա-Դոնի, կար 1,275 տուն, 6,783 շունչ, ըստ Վ. Մոկացյանի՝ 1,376 տուն, 8,378 շունչ հայ: Ա-Դոն ընդունում է, որ իր թվերը Մոկացյանի թվերից պակաս են 101 տնով և 1,595 շնչով, նշում, որ իր ցուցակով ընտանիքի անդամների միջին թիվը 5,5 է, Մոկացյանի ցուցակով՝ 6: «Մինչդեռ, - ավելացնում է ուսումնասիրողը, - մենք իբրև [ընդամենի - Ռ.Թ.] միջին չափ մեր գրքում վերցրել ենք ոչ թե 5², ոչ թե նոյն իսկ 6, այլ 7: Եւ եթե մենք մեր ցուցակի ընդամենի թիւը - 1,275-ը բազմապատկենք 7-ով, կստանանք 8,925, այսինքն Մոկացյանի բերած շնչահամարից ամբողջ 547 շնչով ատելի»⁶⁸:

Ա-Դոն իր պատասխանի երրորդ մասում փորձում է հերքել քննադատների այն տեսակետը, որ ինքն իրականից ցածր է ներկայացնում արևմտահայերի հարաբերակցությունը մահմեդական ազգաբնակչության նկատմամբ: Այդ նպատակով նա առաջարկում է վերցնել և համադրել ոչ թե Արևմտյան Հայաստանի նահանգների առկա վարչական սահմանների տարածքին վերաբերող թվերը, այլ զուտ այն մասերը, որոնք ընդգրկում են Հայկական բարձրավանդակը: «Հայերի թիւը... փոքր փոկոս է կազմում երկրի մէջ... սակայն փոքր փոկոս է կազմում այն չափով, ինչ չափով որ մեր վերցրած վիլայեթները իրենց ներկայ սահմաններով կազմում են շար ընդարձակ շրջան: Բայց բոլորովին այլ կերպարանք կստանան թերևս ու փոկոսները,

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Տե՛ս «Հորիզոն», 1913, հունվարի 17, № 12:

⁶⁸ «Հորիզոն», 1913, մարտի 1, № 46: Նշենք, որ կոնկրետ Հայոց Ձորի պարագայում ուսումնասիրողը չի հետևել իր մեթոդին և անփոփոխ է թողել տեղացի մտավորական Շիրին Հակոբյանից ստացած թվերը՝ 31 հայաբնակ բնակավայրում՝ 1,341 տուն, 7,215 շունչ հայ, այսինքն՝ որպես մեկ տան անդամների միջին թիվ ընդունել է 5.4-ը (տե՛ս Ա-Դո, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները..., էջ 47, 78): Համեմատության համար՝ ըստ Աղթամարի կաթողիկոսարանի 1914 թ. մարդահամարի տվյալների՝ Հայոց Ձորի 31 հայաբնակ բնակավայրերում կար 1,687 տուն, 10,164 շունչ հայ (տե՛ս Թեոֆիլ, Գողգոթա հայ հոգևորականության եւ իր հօրին 1915 աղետալի փարին, Բ. Տպագրություն, Թեհրան, 2014, էջ 62): Եթե հիմք ընդունենք կաթողիկոսարանի տվյալները և մեկ տան վրա հաշվենք 8 շունչ, ապա Հայոց Ձորի հայ բնակչության թիվը Մեծ եղեռնի նախօրյակին կազմել է շուրջ 13,500 շունչ, մոտ երկու անգամ ավելի, քան նշված է Ա-Դոնի մոտ:

եթե մենք մի կողմ թողնենք վիլայեթները իրենց ներկայ սահմաններով, վերցնենք նրանցից կենտրոնական սահմանակից այն մասերը, որոնք ընդգրկում են հայկական բարձրավանդակը»⁶⁹:

Այնուհետև Ա-Դ-ին առանձնացնում է Վանի, Բիթլիսի, Մուշի, Գենջի, Էրզրումի, Երզնկայի և Բայազետի սանջակները, որոնք, ըստ ուսումնասիրողի, մտնում էին Հայկական բարձրավանդակի մեջ, և համեմատում այդ վարչական միավորների համար իր վիճակագրական տվյալները նույն տարածքի համար Վիտալ Քինեի և Հենրի Լինչի⁷⁰ կազմած վիճակագրական տվյալների հետ:

Աղյուսակ 6.

	Սանջակներ	Ըստ Ա-Դոյի			Ըստ Լինչի		Ըստ Քինեի	
		Հայ	Հայ	Այլ ցեղեր	Հայ	Այլ ցեղեր		
1	Վանի	103,000	76,000	52,000	65,000	65,000		
2	Բիթլիսի	46,000	30,000	47,000	33,000	75,000		
3	Մուշի	81,000	61,000	64,000	55,000	68,000		
4	Գենջի	8,000	6,000	35,000	13,000	53,000		
5	Էրզրումի	118,000	68,000	238,000	90,000	292,000		
6	Երզնկայի	25,000	31,000	161,000	35,000	176,000		
7	Բայազետի	17,000	8,000	39,000	10,000	42,000		
	Ընդամենը	398,000	280,000	636,000	301,000	771,000		

Վերոնշյալ թվերը ներկայացնելուց հետո Ա-Դ-ին նշում է, որ եթե, ըստ Լինչի, հայերը կազմում են ընդհանուր ազգաբնակչության 30%-ը, իսկ ըստ Քինեի՝ 28%-ը, ապա իր տվյալներով 34% կամ անգամ 38%-ից էլ ավելի՝ կախված նրանից, թե մյուս էթնիկական խմբերի թիվը վերցվում է համապատասխանաբար ըստ Քինեի կամ ըստ Լինչի: Ավելի փոքր շրջաններում (Մուշի և Վանի գավառներ), շարունակում է Ա-Դ-ին, հայերը կազմում են բնակչության մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 54% և 60%-ից ավելի)⁷¹:

Հետաքրքիր է, որ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից, մասնավորապես Հայկական բարձրավանդակի տարածքն առանձնացնելու և միայն առանձնացված տարածքի համար բնակչության հարաբերակցությունը հաշվելու նշված սկզբունքը կիրառվել է և 1912 թ. Հայկական բարեփոխումների նախագծում: Դրան կից տրված վիճակագրական աղյուսակից դուրս էին թողնվել Հաքյարիի գավառը, Սղերդի հարավային հատվածը, Բշերիկը (Դիարբեքիի վիլայեթ), Մալաթիայի հարավային մասը (Իսաբերդիի վիլայեթ), Սեբաստիայի վիլայեթի հյուսիսարևմտյան հատվածը, իսկ մնացած տարածքի համար հաշվվել էր 1,018,000 հայ բնակչություն: Խիստ հավանական է, որ իր պատասխանը գրելու պահին Ա-Դ-ին ծանոթ էր Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրությանը. այն արևելահայ մամու-

⁶⁹ «Հորիզոն», 1913, մարտի 2, № 47:
⁷⁰ Հենրի Լինչը անգլիացի հայագետ, աշխարհագետ, ճանապարհորդ էր, ով Հայաստան կատարած երկու ճանապարհորդությունների (1893-1894, 1898) ժամանակ հավաքած նյութերի հիման վրա գրել է լայն ճանաչում գտած «Հայաստան» աշխատությունը (1901):
⁷¹ Նույն տեղում:

յուն հրապարակվել էր մոտավորապես նույն ժամանակաշրջանում (տե՛ս ստորև գետեղված աղյուսակը):

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ը									
Մ Ե Ր Գ Ը Հ Ը Մ Ե Ր									
Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Ա Ն Ա Տ Օ Լ Ի Ա Յ Ի Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ն Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր Ի									
1912 թ.									
(Կազմված հայկական պաշտոնական աղբյուրների հիման վրա)									
№	Ազգություն և ցեղ	Էրգրում	Վան	Քիթիս	Բարբերդ	Դիարբեք	Սըվազ	Գ Ո Ւ Մ Ը Ր	%
1	Քիւրճեր	240,000	47,000	40,000	103,000	43,000	192,000	666,000	25,1
2	Չերքեզներ (ղաղթականներ)	7,000	—	10,000	—	—	45,000	62,000	3,1
3	Պարսիկներ	13,000	—	—	—	—	—	13,000	
4	Լազեր	10,000	—	—	—	—	—	10,000	
5	Ցիգաններ	—	3,000	—	—	—	—	3,000	
6	Քիւրդեր (նստական)	35,000	32,000	35,000	75,000	30,000	35,000	242,000	
7	Քիւրդեր (թափառական)	40,000	40,000	42,000	20,000	25,000	15,000	182,000	7,1
8	Ղզըլբաշներ	25,000	—	8,000	80,000	27,000	—	140,000	5,3
9	Չազա-Թմբուլ-Չարբըլ	30,000	—	47,000	—	—	—	77,000	2,9
10	Եղիզիներ	3,000	25,000	5,000	—	4,000	—	37,000	1,4
11	ՀԱՅԵՐ	215,000	185,000	180,000	168,000	105,000	165,000	1.018,000	38,9
12	Նեստորական, հազուրի, քաղ- ղէացի	—	18,000	15,000	5,000	60,000	25,000	123,000	4,7
13	Յոյներ և այլ քրիստոնեաներ	12,000	—	—	—	—	30,000	42,000	1,6
		630,000	350,000	382,000	450,000	296,000	507,000	2.615,000	100,0
ՄԻՒՍԻԼՄԱՆՆԵՐ		ՉՄԱՆՔԻ ԳՐԾՆՆԵՐ		ՔՐԻՏՈՆՆԵՐ		Ը Ն Գ Հ Ը Ե Ր Թ Ի Ի			
Քիւրճեր	666,000	Ղզըլբաշներ	140,000	Հայեր	1.018,000	Գրիստոնեաներ	1.193,000		
Քիւրդեր	424,000 46,1%	Չազա-Թմբուլ-Չարբըլ	77,000 9,9%	Նեստորականներ	123,000 45,7%	Միւսիվաններ	1.178,000		
Սլ միւսիվաններ	83,000	Եղիզիներ	37,000	Յոյներ և այլ	42,000	Զանազան կրօններ	254,000		
Գումար	1.178,000	Գումար	254,000	Գումար	1.183,000	Գումար	2.615,00		

Վերոյիցվալ վիճակագրութիւնից զուրս են հանված նահանգների այն որոշ մասերը, ուր հայերը բազմաթիւ չեն:
Դուրս հանված մասերը նետեալներն են.
Հէքքարիան՝ Վանի վիլայէթում:
Սղբողի հարաւային մասը՝ Քիթիսի վիլայէթում:
Քիւրբըլ՝ Դիարբեքի վիլայէթում:
Մալաթիայի հարաւային մասը՝ Խարբըղի վիլայէթում:
Սըվազի վիլայէթի հիւսիս-արեւմտեան մասը:
Միւսն Էրզրումի նահանգն է ամբողջովն մտնում այս վիճակագրութեան մէջ:

Բարեփոխումների 1912 թ. հայկական ծրագրին կցված Արևմտյան Հայաստանի վիճակագրությունը («Մշակ», 1913, փետրվարի 23 (մարտի 8), №41)

Ա-Դոյի պատասխանն ու պարզաբանումները չգոհացրին նրա ընդդիմախոսներին: «Հորիզոնի» 1913 թ. մարտի 23-ի (ապրիլի 5) համարում տպագրվում է Ա. Միքայելյանի «Ա-Դօն և իր թւերը (մեթոդոլոգիական վերլուծում)» հոդվածը, որտեղ Ա-Դոյի վիճակագրությունը ենթարկվում էր գուցե մինչ այդ պահն ամենակոշտ քննադատության: Հոդվածում առանձնացվում են չորս խոշոր «պակասություններ», որոնք, ըստ Ա. Միքայելյանի, նսեմացնում էին ուսումնասիրության արժեքը: Դրանք էին՝

1. աշխատանքում գետեղված տվյալների ոչ համակարգված և ոչ միօրինակ լինելը. «Մի տեղ դուք ունիք տեղեկություններ քրդերի և հայերի թիվ վերաբերմամբ, իսկ շարք դեպքերում էլ այդ պակասում է: Մի այլ տեղ նա (Ա-Դոն - Ռ.Թ.) նույն իսկ հայկական գիղերի վերաբերմամբ ոչ մի տեղեկություն չունի, մի տեղ նա ցույց է

միայն գիտելի թիւը, մի այլ տեղ տնային, իսկ մի քանի շրջաններում և շնչերի թիւը: Այդ բոլոր անսխալեմ հասարակ թելերը միացնում է և ներկայացնում մեզ այնպիսի մի ժամանակ, երբ իսկական թելեր են պետք», - նշում է Ա. Միքայելյանը⁷²:

2. Ա-Դոյի աղբյուրների ոչ միօրինակ և ոչ միշտ վստահելի լինելը. «Նա (Ա-Դոն - Ռ.Թ.) իր տեղեկությունները քաղում է 17-18 աղբյուրներից, որոնք ինտրին մտրեցել են **զանազան ժամանակներում** (ընդգծումը հեղինակին է - Ռ.Թ.) և այլ նպատակներով, - շարունակում է հոդվածագիրը: - Այդտեղ կան առաջնորդարաններ, յուշարձաններ, զանազան «տեղեակ» մարդիկ, Էփրեկեանի բնաշխարհիկ բառարան, անձնական հարց ու փորձ և զանազան անձնատրոֆիներ: ...Նման աղբյուրները ո՛չ հասարակ և ո՛չ էլ մօտադուր եզրակացությունների համար հիմք ծառայել չեն կարող», - եզրակացնում է հոդվածագիրը⁷³: Որպես ասվածի ապացույց՝ հոդվածագիրը մատնանշում է հենց Ա-Դոյի աշխատանքում առկա համեմատական աղյուսակներում զետեղված տարբեր հեղինակների տվյալները, որոնց տարբերությունը հասնում է մինչև 15 %-ի (օրինակ՝ Արճեշ գավառակ՝ Արամ Սաֆրաստյանից և Ականցի ընթերցարանից քաղված տվյալներ, Մշո դաշտի հայկական բնակավայրերի վիճակագրության դեպքում՝ Մշո առաջնորդարանի և Նազարեթ Մարտիրոսյանի տվյալներ):

Ա. Միքայելյանն առանձին կանգ է առնում Հայոց ձորի հայ բնակչության՝ Մոկացյանի և Ա-Դոյի արդեն իսկ հիշված թվերի համեմատության վրա՝ նշելով, որ տարբերությունը հասնում է 1,895 շնչի: Նա չի ընդունում այդ առթիվ Ա-Դոյի բացատրությունը, որը բազմապատկում էր իր գրքում զետեղված Հայոց Ձորի հայ ընտանիքների թիվը 7-ով և ստանում Մոկացյանի թվից ավել բնակչություն. ««7» երևակայական է, բայց այդ գիտելի վերաբերմամբ թելերը իրական: Փաստը մնում է փաստ - աղբյուրները կասկածելի են: ...Այսպիսի թելերը (որքան էլ արհեստականորեն նրանք բացարկեն) իրենց բարոյական նշանակությունն ունենալ չեն կարող, որովհետև նրանք հասարակ են փարբեր ժամանակներում, փարբեր ձևով և փարբեր նպատակներով: Միօրինակությունը պակասում է»⁷⁴:

3. Ա-Դոյի կողմից Երիտթուրքական հեղափոխությունից հետո դեպի Արևմտյան Հայաստան դիտվող հայերի խոշոր ներգաղթի (հայրենադարձության) երևույթի հաշվի չառնելը և մինչ այդ ներգաղթը հավաքված թվերի հիման վրա բնակչության հաշվարկ կատարելը: «Ի՞նչ կը լինէր, եթե թելերի հաշի ժամանակ մի քանի տասնեակ հազարներ «սխալ» գեղինք, որն անելի համապարաստիան կը լինէր իրականութեան», - հռետորական հարց էր տալիս հեղինակը⁷⁵:

4. Ա-Դոյի կողմից երեք ամսվա ընթացքում երեք վիլայեթների ուսումնասիրության որպես այդպիսին անհնարին ձեռնարկ լինելը: Հոդվածագիրը հարկ չի համարում հանգամանալից կանգ առնել այս կետի վրա՝ նշելով, որ դա ակնհայտ ճշմարտություն է: Որպես իր ասածի ապացույց՝ Ա. Միքայելյանը մատնանշում է

⁷² «Հորիզոն», 1913, մարտի 23, № 65:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ Նույն տեղում:

Ռուսաստանում 1897 թ. մարդահամարի օրինակը. *«1897 թ. ժամանակ ամբողջ պետական մեխանիզմը մի քանի միլիոն դրամագրուսի ունենալով, հնարատրություն չի ունենում 3-4 տարայ ընթացքում 42 երուպական նահանգներում, Սիբիրում, իր ուսումնասիրությունները վերջացնել (ուսումնասիրությունից յետոյ 12-14 ամիս էլ ժամանակ է դրում վերաբուզման համար) և նրա հասարած տեղեկություններն էլ լինում են թերի, անհետաքրքիր իսկ մի Ա-Դօի 3 ամնայ անսուրբան, անձնական ուսումնասիրութեան պիրի՝ որևէ նշանակությունը տայ»⁷⁶:*

Իր քննադատական հոդվածի վերջում Ա. Միքայելյանը համեմատում է Ա-Դոյի թվերը 1912 թ. պատրիարքարանի վիճակագրության հետ՝ տարբերությունը ներկայացնելով որպես Ա-Դոյի տվյալների ոչ արժանահավատ լինելու լրացուցիչ փաստարկ: *«Այս բոլորից մեզ համար պարզ պիրի լինի, որ վերոյիշեալ գրքի թերը մեզ հինք ծառայել չեն կարող և նրանց օգտագործելը կը լինէր մի խոշոր սխալ: ...Նախ ճիշտ թեր, ապա եզրակացություններ»,* - եզրափակում է հոդվածագիրը⁷⁷:

Ա-Դոն այլևս հարկ չի համարում պատասխանել վերոնշյալ քննադատությանը⁷⁸, և արդեն 1913 թ. երկրորդ կեսին բանավեճը մարում է: Հետագայում Ա-Դոյի գրքի նկատմամբ քննադատությունն ընդունում է առավելապես հպանցիկ անդրադարձների ձև: Այսպես, դաշնակցական գործիչ Արշակ Ջանալյանը 1913 թ. ամռանը դեպի Կարին կատարած ճանապարհորդության մասին իր ակնարկում (տե՛ս «Հորիզոն», 1913 թ. սեպտեմբերի 7 (20), №200), խոսելով արևմտահայերի թվաքանակն ուսումնասիրելու դժվարությունների ու հնարավոր սխալների մասին, մասնավորապես նշում է. *«Այդպիսի մի արժեքատր ուսումնասիրություն անելու համար անհրաժեշտ է ոչ թե՛ շարքներով կամ ամիսներով, այլ տարիներով ապրած լինել երկրում: Այս միտքը ամենապերճաբան կերպով ճշգրտում է այն փորձով, որ արել է Ա-Դոն Վանի, Բիթլիսի և Էրզերումի վիլայեթների վերաբերմամբ լոյս հանած իր յայտնի գրքով: Այդ գրքի դեմ ես մի քանի անգամ բոռն բողոքներ լսեցի Երկրում (նկատի ունի Արևմտյան Հայաստանը - Ռ.Թ.), իրազեկ մարդկանցից, որովհետև նրա վիճակագրական տեսակները չեն համապարասխանում իրականության: Ես այս բանն առիթ ունեցայ տրուզելու համեմարելով Կարնոյ դաշտի ու Խնուսի ազգաբնակչութեան մասին Ա-Դօ-ի ներկայացրած թերը միանգամայն տրուզած (ընդգծումը հեղինակինն է - Ռ.Թ) այլ թերի հետը⁷⁹. տարբերությունը ահագին էր և, որ ուրախալի է սսել, ի նպաստ հայ ժողովրդի»:*

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ Արդեն 1940-ական թթ. գրված իր հուշերում Ա-Դոն ներկայացնում է «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները» գրքի վերաբերյալ արտահայտած «կողմ» և «դեմ» կարծիքների մի քանի նմուշներ՝ թողնելով դրանք առանց մեկնաբանության (տե՛ս Ա-Դո, *Իմ հիշողությունները...*, էջ 165-174):

⁷⁹ Ամենայն հավանականությամբ խոսքը Հայոց պատրիարքարանի 1913-14 թթ. մարդահամարի տվյալների մասին է: Մարդահամարի՝ Էրզրումի նահանգի գյուղացուցակները տե՛ս Kevorkian Raymond H., Paboudjian Paul B., *նշվ. աշխ.*, էջ 417-460: Տե՛ս նաև Бекгульянц Р., *По Турецкой Армении. Впечатления отъ поездки летомъ въ 1914 году*, Ростовъ на Дону. Типографія Я. М. Искандарова, 1914, էջ 68: Ըստ Էրզրումի նահանգի առանձին վարչական միավորների՝ Ա-Դոյի

Ըստ Արշակ Զամայանի՝ Ա-Դոյի գլխավոր սխալն այն էր, որ նա նախ շատ ավելի հավատով էր վերաբերվել դեպի իր տեղեկատուները, քան թե թվում է իրեն, և երկրորդ՝ իր ձեռք բերած «հատ ու կտոր» տեղեկություններից շտապել է ընդհանրացումներ անել. «Եւ նրա այդ սխալների մէջ կրննիսի ամեն ոք, որ այնքան կարճ ժամանակ և այնքան չնչին միջոցներ ունենալով իր տրամադրութեան տակ ձեռնամուխ կը լինի ուսումնասիրութիւններ տալու Երկրի մասին»⁸⁰:

Ա-Դոյի վիճակագրության հավաստիության՝ նոր, առավել թարմ տվյալների հետ համադրելու միջոցով ստուգելու մեթոդն իր շարունակությունն ու զարգացումն է ստանում Առաջին աշխարհամարտի տարիներին՝ կապված Արևելյան Հայաստան և ռուսական Անդրկովկասի այլ տարածքներ Մեծ եղեռնից մազապործ արևմտահայ փախստականների ներհոսքի հետ: Կովկասում ապաստանած փախստականներին տրամադրվող օգնությունը կանոնակարգելու նպատակով հայկական մարդասիրական կազմակերպություններն առաջնահերթ նախաձեռնում են հնարավորինս ճշգրիտ նրանց թիվը պարզելուն ուղղված աշխատանքներ: Այդ նպատակով կազմակերպվում են փախստականների տարբեր հաշվառումներ-մարդահամարներ, որոնց որոշ արդյունքներ ներկայացվում են ժամանակի հայկական մամուլում: Այսպես, 1914 թ. դեկտեմբերի 6(19)-ին «Հորիզոն» թերթի №273-ում տպագրվում են Էրզրումի գավառի Բասեն գավառակի արևելյան շրջանի 11 բնակավայրերից փախստական հայերի վերաբերյալ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության լիազոր Ա. Շարաֆյանի կողմից հավաքված տվյալները, այդ թվում՝ ըստ գյուղերի նրանց վիճակագրությունը:

«Հորիզոնի» 1914 թ. դեկտեմբերի 10 (23)-ի №276-ում տպագրվում է «Բասեն գաւառի 11 հայ գիւղերի ազգաբնակչութիւնը» անստորագիր հոդվածը, որում Ա. Շարաֆյանի տվյալները համեմատվում էին Ա-Դոյի՝ նույն բնակավայրերի համար ներկայացված թվերի հետ (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7.

Գյուղեր	Ըստ Ա-Դոյի (տոմ)	Ըստ Ա. Շարաֆյանի (տոմ)
Էգեպատ (Էգիպատ)	103	130
Կամուրջ (Քյովրիքյոյ)	90	120
Կիրդաբազ (Գրդաբազ)	35	60
Իշխան (Իշխու)	110	132
Չարսնեքար	42	40
Գոմձոր (Գոմաձոր)	160	120
Յուվերան	64	130
Ծանձաղ	47	50
Խոսրովերան	27	30
Եաղան	142	190
Ընդամենը	874	1043

և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-14 թթ. մարդահամարի տվյալներն ընդգրկող համեմատական աղյուսակները տե՛ս Թաթոյան Ռ., Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին (աղբյուրների համեմատական վերլուծության փորձ), «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2014, № 2 (1), էջ 31-57:

⁸⁰ «Հորիզոն», 1913, սեպտեմբերի 7, № 200:

«Աղիանակից երևում է, որ մի քանի գիտերից սակայն մեծ թույլ ընտանիքներ են գաղթել, քան կարող էին լինել այդ գիտերում ըստ պ. Ա-Դօի, - արձանագրում էր հողվածագիրը: - Այս հանգամանքը ցույց է տալիս, որ գիտերը սակայն մեծ են, քան Ա-Դօն էր կարծում»⁸¹:

Հողվածի հեղինակն այնուհետև նշելով, որ ըստ Ա. Շարաֆյանի տվյալների՝ վերոնշյալ բնակավայրերում նախքան գաղթը բնակվում էր 8,358 շունչ հայ, մինչդեռ ըստ Ա-Դոյի հաշվարկի՝ 6,118 շունչ (տնների թիվը՝ բազմապատկած 7-ով)՝ եզրակացնում էր, որ Ա-Դոյի թվերը պետք է ավելի քան 1/4-ով բարձրացնել, որ հասնեն իրականին⁸²:

«Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները» աշխատության վերաբերյալ 1913-1914 թթ. գրախոսություններ տալվեցին նաև այլ պարբերականներում («Արարատ», «Խօսք», «Բիզանդիոն»)՝ Դրանք առավելապես դրական բնույթ ունեին և սահմանափակվում էին գրքի բովանդակության վերաշարադրմամբ ու ընդհանուր բնութագիր տալով: Որոշակի բացատրություն է կազմում «Արարատ» ամսագրում տպված Գևորգ Ալթունյանի գրախոսականը, որը հատուկ քննական ծավալուն անդրադարձ է պարունակում Ա-Դոյի թվերին⁸⁴:

Նախ՝ գրախոսականի հեղինակն անդրադառնում է Ա-Դոյի աղբյուրներին: «Նրա աղբյուրներից ...ստաջին տեղը բռնում են վարսահեղի մարդիկ, տեղեակ մարդիկ, - նշում է Գ. Ալթունյանը: - Բայց ի՞նչ կարող է գիտենալ տեղեակ մարդը. նա ի՞նչ կարող ամենայն մանրամասնությամբ և հասարակության հասասար աստիճանով թույլ ձեռք Վան-Տոսպ գաւառի կամ Արձեշի, կամ Ալջասագի, կամ Հայոց Ձորի բոլոր գիտերի ազգաբնակչությունը. չէ՞ որ նրա այդ թուարկումն էլ հիմնուած կարող է լինել միայն ենթադրական չափումների ու հասանականությունների վրայ»⁸⁵:

⁸¹ Տե՛ս «Հորիզոն», 1914, դեկտեմբերի 10, № 276:

⁸² Նույն տեղում: Նշենք, որ 1919 թ.՝ որպես Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ) ներկայացուցիչ, արևմտահայ փախստականներից իրենց հայրենի բնակավայրերի մասին տվյալների հավաքմամբ է զբաղվել նաև հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Վարազդատ Տերոյանը: Ստացած վիճակագրական տվյալները նա մատիտով անց է կացրել նաև Ա-Դոյի «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները» գրքի համապատասխան աղյուսակներում, տվյալ բնակավայրի անվան դիմաց: Վարազդատ Տերոյանի կողմից Ա-Դոյի գրքում ավելացված վիճակագրական նյութը իրատարակվել է ուսումնասիրող Գեղամ Բաղայանի կողմից, ով նաև զուգահեռ՝ համեմատական աղյուսակների միջոցով ներկայացրել է նույն ժամանակահատվածում թեմական առաջնորդարանների կամ անհատ անձանց կողմից պատրաստված վիճակագրական տվյալները (տե՛ս Գեղամ Բաղայան, Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ, «Բաներն Հայաստանի սրիսիվներին», թիվ 1 (105), Երևան, 2005, էջ 212-220):

⁸³ Տե՛ս «Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Ս. Էջմիածին, 1913, համար Ա., էջ 69-80, «Խօսք» հասարակական, տնտեսական և գրական թերթ, Երևան, 1914, փետրվարի 1 (13), №5, «Բիզանդիոն» ազգայական հայաթերթ ամենօրեա, Կ. Պոլիս, 1913, փետրվարի 26 (մարտի 11): «Խոսք»-ի և «Բյուզանդիոն»-ի գրախոսականներին անդրադառնում և դրանցից մեջբերումներ է անում իր հուշերում նաև Ա-Դոն (տե՛ս Ա-Դո, Իմ հիշողություններ..., էջ 167-168):

⁸⁴ Տե՛ս «Արարատ», 1913, համար Ա., էջ 76-80:

⁸⁵ Նույն տեղում, էջ 78:

Գրախոսականի հեղինակը նաև քննադատում է Ա-Դոյի կողմից Էփրիկյանի և Մայերի հանրագիտակ բառարանների որպես աղբյուր օգտագործելը՝ նշելով. «*հասար ընծայել մեզ համար վերին աստիճանի կարևոր խնդիրը լուծելու համար զանազան հանրագիտակ բառարանների (որոնց մէջ յարկապէս սրարիարիկական ամենակոպիտ մեղանչումները հարիւրներով աիտուած են և Թուրքիայի համար անշուշտ կրկնապարհիկը կրլինի) մենք չենք կարող և Ա-Դօն էլ չպիտի անէր*»⁸⁶:

Հեղինակն այնուհետև կանգ է առնում Ա-Դոյի կողմից ներկայացվող վիճակագրական տվյալներից շատերի թվագրման բացակայության, դրանց հավաքման թվականի անհայտ մնալու վրա. «*Անթոնական աղիասկներից են Վան-Տոսպի, Արճակի, Բերկրի-Արադայի, Արճէշի, Ալջասագի, Հայոց Ձորի, Շարախի, Նոր-Դուզի և այլ բազմաթիւ գաւառների ազգաբնակչութեան վերաբերեալ տուած թուերը: Այդպէս է Աղթամարում եղած տեղեկագիրը, որից Ա-Դօն քաղել է Գեասաշի, Կարճկանի, Մոկսի, Կառկառի, Խիզանի, Սպարկերրի, Մամուրանք գաւառների հայ ազգաբնակչութեան թուերը: Նոյն վիճակի մէջ է նաև Մուշի առաջնորդարանի տեղեկագիրը, որից քաղուած են հետևեալ աղիասկները - Մշոյ դաշտի, Բիթլիսի գաւառի, Խոյս-Բոնաշէնի, Փասնաց գաւառի, Բուլանդրի, Կարդոյի գաւառների հայ ազգաբնակչութեան թուերը*»⁸⁷:

Գրախոսականի հեղինակն այդ հարցին առանձին կարևորություն էր տալիս, քանի որ դժվարանում էր ընդունել, որ առաջնորդարաններն «*ամեն տարի կամ մի քանի տարին մի անգամ ընդհանուր վիճակագիր են անում իրանց թեւերի և կամ իրաքանչիւր տարի իրանց մարեանների մէջ են կենդրոնացնում բոլոր գիտերում եղած մարեանները*»⁸⁸: Եվ իրոք, Ա-Դոյի տվյալների աղբյուրների քննությունը վկայում է, որ նրա կողմից օգտագործված բազմաթիվ տվյալներ վերաբերում են 1890-ական թթ. վերջին և 1900-ական թթ. սկզբին և նույնիսկ (Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանից» քաղված տվյալները) 1880-ական թթ. սկզբների վիճակին⁸⁹:

«*Հարց է, թե՞ արդեօք Թիւրքիայի այդ նահանգներում իրաքանչիւր գիտ ունի իր ծխականների մարեանները, որտեղից միայն ամենաճիշտ տեղեկութիւնը կարելի էր թերևս քաղել, - շարունակում է հեղինակը՝ մի ուշագրավ փաստ ներկայացնելով Գևորգյան ճեմարանում աշխատանքի իր անձնական փորձից: - Շար է սպարահում, որ Գ. Ճեմարան ընդունուելու համար Վանի, Բիթլիսի կամ Էրզրումի վիլայեթներից եկած հայ աշակերտը առանց որևէ ծննդական վկայականի է ներկայացել և յաճախ իրանց առաջնորդարանների կողմից վկայուած մի թուղթ է բերում - յետին*

⁸⁶ Նույն տեղում, էջ 79:

⁸⁷ Նույն տեղում:

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Էփրիկյանն իր բառարանում գետեղված վիճակագրական աղյուսակները հիմնականում քաղել է 1880-ական թթ. սկզբներին հայկական մամուլում տպված համապատասխան նյութերից (օրինակ՝ Բիթլիսի գավառակի վիճակագրությունը, որը տեղ է գտել նաև Ա-Դոյի գրքում, տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1882 թ. հունիսի 20 (հուլիսի 2), № 18, տե՛ս նաև Էփրիկեան Հ. Ս., Պարկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատոր առաջին, Ա-Ը, Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1902, էջ 365):

թուով կազմուած: Դրանք հանգամանքներ են, որ պէտք է ուշադրութեան առնուեն, որովհետեւ մեծապէս ազդում են ազգաբնակչութեան թոյն վրայ»⁹⁰:

Եզրափակելով իր դիտարկումները՝ գրախոսականի հեղինակը նշում է, որ նա չի կարող ասել, թե հայ ժողովրդի թիվն արդյոք Ա-Դոյի ներկայացրածից մե՞ծ է, թե՞ փոքր: Նա միայն արձանագրում է, որ Ա-Դոյի աղբյուրները չեն կարող վստահելի լինել, ապա ուրեմն նրա բերած թվերը չեն կարող ճիշտ լինել⁹¹:

Ամփոփելով հոդվածը՝ առանձնացնենք Ա-Դոյի գրքի հրատարակման կապակցությամբ նրա կողմից ներկայացված վիճակագրության հավաստիության և առհասարակ արևմտահայության թվաքանակի, այլ էթնոկրոնական խմբերի հետ հայերի հարաբերակցության հարցի շուրջ 1912-1914 թթ. հայկական մամուլում ծավալված քանակներն այն հիմնական արդյունքները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ժամանակակից ուսումնասիրողի համար:

1. Քննադատներին հաջողվեց վեր հանել Ա-Դոյի ուսումնասիրության որոշակի խոցելի կողմերը՝ աղբյուրների ոչ միատարր բնույթը, տվյալների՝ տարբեր թվականներին վերաբերվելը կամ թվագրման բացակայությունը, մահմեդականների թվաքանակի հարցում օսմանյան վիճակագրությանն ապավինելը, մեկ հայ տան (ծխի) անդամների միջին թվի՝ 7-ի՝ իրականից ցածր լինելը, բոլոր վիճակագրություններում առկա հայերի թերհաշվառման գործոնը հաշվի չառնելը և այլն. ներկայացվեցին ծանրակշիռ փաստարկներ առ այն, որ երեք նահանգների հայ ազգաբնակչության թվաքանակի՝ Ա-Դոյի հաշվարկը թերի և իրականից ցածր է:
2. Ա-Դոյի թվերին փաստարկված հակադարձելու նպատակով ի հայտ բերվեց մեծ քանակությամբ նոր վիճակագրական նյութ՝ Հայկական հարցի վերաբերման կապակցությամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1912 թ. կազմված վիճակագրությունները, 1913-14 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից անցկացված արևմտահայության մարդահամարի տվյալները, 1914-1915 թթ. արևմտահայ փախստականների հաշվառման տվյալները և այլն: Հայկական մամուլի այդ հրապարակումներն ունեն սկզբնաղբյուրի նշանակություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք այդ տվյալների՝ լայն շրջանառության մեջ դնելու առ այսօր մեզ հայտնի առաջին օրինակներն են, իսկ շատ դեպքերում որոշ տվյալներ հայտնի են միայն այդ հրապարակումների միջոցով:
3. Քննադատների կողմից Ա-Դոյի տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով կիրառվեց դրանք այլ՝ առավել թարմ և արժանահավատ վիճակագրական տվյալների հետ համադրելու և համեմատելու մեթոդը: Այս առումով և հատկապէս Մեծ եղեռնը վերապրած արևմտահայ փախստականների հաշվառման տվյալները, ինչպէս նաև իրենց կողմից հայրենի բնակավայրերի մասին հաղորդվող տեղեկությունները Ա-Դոյի և այլ աղբյուրների կող-

⁹⁰ «Արարար», 1913, համար Ա., էջ 79:

⁹¹ Նոյն տեղում:

մից հաղորդվող վիճակագրական տվյալների հետ համադրելն այն հիմնական մեթոդներից է, որը հնարավորություն է տալիս ճշգրտելու Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ տարածքների առանձին վարչական միավորներում հայ բնակչության թվաքանակը:

4. Ա-Դոյի երկասիրությանն արձագանքել են ժամանակի հայ իրականության ականավոր հասարակական-քաղաքական գործիչ-մտավորականներ Ավետիս Ահարոնյանը, Գևորգ Ալթունյանը, Նիկոլ Աղբալյանը, Արշակ Ջամալյանը և ուրիշներ, և նրանց տեսակետները Հայկական հարցի համատեքստում արևմտահայության թվաքանակի հարցի կապակցությամբ ինքնին արժանի են անդրադարձի:

Անկախ Ա-Դոյի ուսումնասիրության խոցելի կողմերից՝ «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները» աշխատության արժեքը ժամանակակից ուսումնասիրողի համար առաջին հերթին դրա աղբյուրներն են: Շնորհիվ Ա-Դոյի՝ մենք այժմ ունենք Արևմտյան Հայաստանի տարբեր թեմերի առաջնորդարանների գգրոցներից քաղված, առանձին անհատներից ստացված հարուստ վիճակագրական նյութ, որը եթե չպահպանվեր Ա-Դոյի կողմից, ապա Մեծ եղեռնի ընթացքում հայկական թեմերի բնաջնջման և առաջնորդարանների շենքերի թալանի ու ավերման ժամանակ անխուսափելիորեն կկիսեր հավերժ կորսված հազարավոր այլ փաստաթղթերի ճակատագիրը:

«ՄԻ ՔԱՆԻ ԹՎԵՐ». Ա-ԴՈՅԻ «ՎԱՆԻ, ԲԻԹԼԻՍԻ ԵՒ ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԷԹՆԵՐԸ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ (1912 Թ.) ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՐԾԱՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ ԲԱՆԱՎԵՃԸ

Ռոբերտ Թատոյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է անվանի հայ վիճակագիր և պատմաբան Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները. ուսումնասիրության մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և տնտեսական դրութեան» աշխատության 1912 թ. հրատարակման առիթով հայկական մամուլում արևմտահայության թվաքանակի հարցի շուրջ ծավալված բանավեճը, որը ժամանակագրական առումով համընկավ Մեծ եղեռնի նախօրյակին Հայկական հարցի վերաբացման շրջանի հետ (1912-1914 թթ.):

Ա-Դոյի երկասիրությանն արձագանքեցին ժամանակի հայ իրականության ակա-նավոր հասարակական-քաղաքական գործիչ-մտավորականներ Ավետիս Ահարոն-յանը, Գևորգ Ալթունյանը, Նիկոլ Աղբալյանը, Արշակ Ջամալյանը և ուրիշներ:

Ա-Դոյի գրքի քննադատներին հաջողվեց վեր հանել Ա-Դոյի ուսումնասիրության որոշակի խոցելի կողմերը, ներկայացվեցին ծանրակշիռ փաստարկներ առ այն, որ երեք նահանգների հայ ազգաբնակչության թվաքանակի՝ Ա-Դոյի հաշվարկը թերի և իրականից ցածր է: Ա-Դոյի թվերին փաստարկված հակադարձելու նպատակով ի հայտ բերվեց մեծ քանակությամբ նոր վիճակագրական նյութ, որն ունի սկզբնաղբ-յուրի նշանակություն: Քննադատների կողմից Ա-Դոյի տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով կիրառվեց դրանք այլ՝ առավել թարմ և արժանահավատ վիճակագրական տվյալների հետ համադրելու և համեմատելու մեթոդը:

Բանալի բառեր՝ Հայկական հարց, արևմտահայության թվաքանակ, Վանի նահանգ, Բիթլիսի նահանգ, Էրզրումի նահանգ, հայկական մամուլ, վիճակագ-րություն, ժողովրդագրություն:

“A COUPLE OF FIGURES.” THE STUDY OF A-DO “VAN, BITLIS AND ERZEROU M VILAYETS” (1912) AND WESTERN ARMENIAN POPULATION NUMBER DEBATE IN THE ARMENIAN PRESS DURING THE PERIOD OF ARMENIAN REFORM PACKAGE NEGOTIATIONS

Robert Tatoyan

SUMMARY

The article presents the debate in the Armenian press on the issue of the number of Western Armenian population that emerged in connection with the publication of a book “Van, Bitlis and Erzurum Vilayets: An Attempt of Study of Geographical, Statistical, Legal and Economic Situation of those areas,” by A-Do (Hovhannes Ter-Martirosyan), the prominent Armenian historian and demographer, in 1912. This publication

chronologically coincided with the re-opening of the Armenian question on the eve of the First World War (1912-1914).

Avetis Aharonyan, Gevorg Altunyan, Nikol Aghbalyan, Arshak Jamalyan and other prominent public and political figures and intellectuals of the time, has written reviews on A-Do's study.

A-Do's critics succeeded in highlighting some of the vulnerabilities of A-Do's work. They also raised strong argument that the A-Do's figures on the Armenian population of Van, Bitlis and Erzeroum provinces of Western Armenia were incomplete and far below the real picture. Thus the critics have used a method to compare A-Do's figures with the most up-to-date and accurate statistical data in order to verify the accuracy of A-Do's statistics. Thus a large number of new statistical data has been revealed to argue against A-Do's figures, and this statistics has the value of a first-hand source.

Keywords: Armenian question, Western Armenians, Van province, Bitlis province, Erzeroum province, Armenian press, statistics, demography.

«НЕСКОЛЬКО ЧИСЕЛ»: ИССЛЕДОВАНИЕ А-ДО «ВАНСКИЙ, БИТЛИССКИЙ И ЭРЗЕРУМСКИЙ ВИЛАЙЕТЫ» (1912) И ДЕБАТЫ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ ПО ВОПРОСУ О ЧИСЛЕННОСТИ НАСЕЛЕНИЯ ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ПЕРИОД ВОЗОБНОВЛЕНИЯ АРМЯНСКОГО ВОПРОСА

Роберт Татоян

РЕЗЮМЕ

В статье представлены дебаты в армянской прессе по вопросу о численности населения Западной Армении, начавшиеся в связи с изданием книги известного армянского историка и демографа А-До (Ованес Тер-Мартirosян) «Ванский, Битлисский и Эрзерумский вилайеты: опыт изучения географического, статистического, правового и экономического положения данных областей». Публикация данной книги в 1912 году хронологически совпала с возобновлением Армянского вопроса накануне Первой мировой войны (1912-1914).

Аветис Агаронян, Геворг Алтунян, Никол Агбальян, Аршак Джамалян и другие видные общественные и политические деятели и интеллектуалы того времени выступили с критическими замечаниями по поводу книги А-До.

Критикам А-До удалось выделить некоторые из уязвимых сторон и ошибок в его исследовании. Они также высказали веские аргументы в пользу того, что подсчеты А-До армянского населения провинций Ван, Битлис и Эрзерум Западной Армении являются неполными и не представляют реальную картину численности армян. С целью верификации статистики А-До, критики использовали метод сравнения его данных с более новыми и точными числами населения. Таким образом, было опубликовано большое количество новых статистических данных, которые представляют ценность в качестве первоисточника.

Ключевые слова: Армянский вопрос, западные армяне, провинция Ван, провинция Битлис, провинция Эрзерум, армянская пресса, статистика, демография.

**ՎՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԵՎ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1913-1914 ԹԹ.
ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ավերիս Հարությունյան

1908-1912 թթ. Վանի նահանգում քրդերի կողմից իրականացված հայերի բռնությունները և հալածանքները, ինչպես նաև Վանից ու Ադթամարից դեպի Կ.Պոլիս և Էջմիածին ուղարկված բոթաբեր հեռագրերը հաստատում էին, որ կոտորածի ասի ու սարսափը սավառնում էր Վասպուրականի հայության գլխին: Ինչպես «Կոհակ» պարբերականի խմբագրականն է վստահեցնում. «...հայկական անպարտ արիւնը առատորէն կը հոսի եւ կացութիւնն հետզհետէ անհանդուրժելի կը դառնայ: Չգիտցուիր թէ մինչեւ երբ այս ժողովուրդը իր օրինապահութեան եւ սահմանադրականութեան շնորհիւ նոխազ քաւութեան պիտի ըլլայ...»¹:

Միաժամանակ քաղաքական փոթորկալի հորիզոնը և իթիլաֆական Թուրքիայի նոր պարտությունները Բալկանյան առաջին պատերազմում (1912 թ. հոկտեմբերի 9 - 1913 թ. մայիսի 30) իրենց արձագանքն են թողնում արևմտահայ իրականության վրա՝ պատճառ դառնալով ինչպես մերձնակատային, այնպես էլ հայաբնակ շրջանների, այդ թվում նաև Վանի նահանգի հայության կոտորածների սպառնալիքի²: Կարևորելով այդ հանգամանքը՝ «Մշակ»-ը փաստում է. «Մեր հարևան ժողովուրդները չափազանց տխուր, մռայլված ու զայրացած են և իրենց մաղձը թափում են հայերի վրա, եթե ոչ գործով - առ այժմ, այլ գոնե սպառնալիքներով»³:

Տարածքային կորուստներին համահունչ՝ Բ. Դուռը 1912 թ. դեկտեմբերի 8-ին քննության առավ նաև Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրագործելու հարցը՝ նպատակ ունենալով կանխել մեծ տերությունների միջամտությունը երկրի ներքին գործերին: Սակայն հայերի գրեթե բոլոր իրական պահանջները մերժվեցին:

Իրադարձությունների զարգացման համընդհանուր հարթակում անհանգիստ են անցնում 1913 թ. Ծննդյան տոները նահանգի մի շարք բնակավայրերում, մասնավորապես Արճեշում, որտեղ առևտրական գործունեությամբ էին զբաղված 100-ից ավելի հայեր Վանից և Բաղեշից: Տեղի զինվորական հրամանատար հաջի Զայիդ փաշան, որ մինչ այդ լավ վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ, կեղծ լուրեր է տարածում և հեռագրեր ուղարկում Կ.Պոլիս առ այն, որ հայերը զաղտնի պայթուցիկներ են արտադրում և ռազմական պատրաստություններ տեսնում՝ ապստամբելու համար: Վստահության մթնոլորտը վերականգնելու հույսով հայերը

¹ Տե՛ս «Կոհակ», Կ.Պոլիս, 1912, օգոստոսի 22/4, թիվ 32:

² Տե՛ս «Правительственный вестник», Петербург, 1912, 6 (19)с. XI.

³ «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 26, թիվ 88:

դիմում են գավառի կայանկամին, ապա Վանի առաջնորդի միջոցով նաև՝ Վանի վալիին, որը հարթում է գործը⁴:

Արևմտահայերի նկատմամբ գործադրված բռնությունների, սպանությունների և անապահովության մղձավանջը շարունակվեց և նոր դրսևորումներ ձեռք բերեց նաև այն բանից հետո, երբ իշխանությունը 1913 թ. հունվարի 10-ին իթիլաֆիստներից կրկին անցավ իթթիհաթականների ձեռքը: Հայկական հարցի վերաբացումը, Քյամիլ փաշայի իթիլաֆական իշխանության հրաժարականը և իթթիհաթականների կրկին իշխանության ղեկին անցնելը, ինչպես և սպասվում էր, թուրք և քուրդ հասարակական-քաղաքական շրջաններում առաջ բերեց դժգոհության նոր ալիք հայերի դեմ:

Իշխանափոխությունից հետո օսմանյան խորհրդարանի քուրդ պատգամավոր, ազատական հայացքներով հայտնի Աբդուլ Գատերի աջակից Վանի նահանգապետ Իզգեթ բեյը հանուն իր պաշտոնի ապահովության դիմում է իթթիհաթականներին՝ նրանց միանալու և հայրենիքի բարօրության համար միասնաբար գործելու ակնկալիքով: Սակայն նրա առաջարկը մերժվում է: Իր հեղինակությունը պահպանելու և իշխանությունն ամրապնդելու համար նա կեղծ տեղեկատվությամբ Վանի օտարերկրյա հյուպատոսներին հայտնում է, որ Կ.Պոլսից Մահմուդ Շևքեթ փաշան հեռագրով իր գոհունակությունն է հայտնել իր «վարչական կարողութան համար»⁵:

Հայերի և քրդերի միջև համերաշխություն հաստատելու և հողային հարցերը լուծելու համար վալի Իզգեթ բեյի նախաձեռնությամբ կազմվում է մի հանձնաժողով, որին անդամակցում էին հայ և թուրք երևելիները՝ մյուֆթին, Վանի առաջնորդ եպս. Սարաճյանը, Պ. Գավհամաճյանը, Գ. Չիտեճյանը⁶: Սակայն այն էական արդյունք չի տալիս, քանի որ քուրդ ավագակներն ազատորեն զինում էին քրդական գյուղերը, իսկ վալիին էլ «ոչ մի բան չէ արել դարման անել»⁷:

Հայկական հարցի վերաբացումն իր անմիջական անդրադարձն է ունենում նահանգի ազգամիջյան հարաբերություններում: Լոնդոնի «The Times» թերթը 1913 թ. փետրվարի 6-ի իր համարում նշում էր, որ Վանից ու Սղերդից ստացված հեռագրերի համաձայն՝ հայերի ու մահմեդականների հարաբերություններն օրեցօր սրվում են⁸:

Որոշ ժամանակ անց՝ 1913 թ. ապրիլին, Վանում անակնկալ խուզարկվեցին բոլոր հայ զինագործների կրպակները և բռնագրավվեցին նույնիսկ չարգելված զենքերը՝ պատճառաբանելով, որ նրանք զենք վաճառելու արտոնագրեր չէն ստացել: Սակայն նման մոտեցում չցուցաբերվեց թուրք զինագործների նկատմամբ, որոնք նույնպես արտոնագրեր չունեին⁹:

⁴ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, փետրվարի 7, թիվ 29:

⁵ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, մարտի 10, թիվ 54:

⁶ Տե՛ս «Ազդակ», Կ.Պոլիս, 1913, հունվարի 12/25, թիվ 2:

⁷ «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 18, թիվ 81:

⁸ Տե՛ս «The Times», London, 1913, 6th of February.

⁹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 9, թիվ 99:

Թուրք զինվորականները սադրանքներ կազմակերպելու և զենք ու զինամթերք հայտնաբերելու պատրվակով խուզարկություններ էին կազմակերպում բոլոր հայ անցորդների նկատմամբ և նույնիսկ օրենքով թույլատրված զենքն էլ բռնագրավում էին, մինչդեռ նման մեղադրանք չէր ներկայացվում քրդերին, որոնք «հրացաններն ուներին նոյնիսկ կառավարութեան դռան առջևից անց ու դարձ են անում»¹⁰:

Ինչպես «Մշակ»-ի Վանի թղթակիցն է նշում. «Հայկական հարցի յարուցմանը շատ վատ աչքով են նայում թիւրքերը ու մեզ հայերիս համարում են խայիններ (անհաւատարիմ), որ թիւրք կառավարութեան մի ծանր մօմենտից օգտվել ենք ուզում, յարուցելով հայկական հարցը, երբ ժամանակը գայ, նրանք անշուշտ չեն մոռանա հայերի այս յանդգնութիւնը և կը պատժեն այն կերպով, ինչպէս պատժում էր Համիդը»¹¹:

Իսկ Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան ֆոն Վանհենհայմը ռեյսկանցլեր ֆոն Բեթման-Հոլվեգին ուղղված իր՝ 1913 թ. մարտի 13-ի հեռագրում, հիմք ընդունելով բարձրաստիճան մի քուրդ պաշտոնյայի նամակը, շտապում էր տեղեկացնել, որ Հայկական հարցի շուրջ պայմանագրի ստորագրումից հետո Վանի նահանգում, որտեղ նահանգապետը քուրդ Իզզեթ բեյն էր, հավանաբար պետք է սպասել հայերի կոտորած¹²:

Կոտորածների սպառնալիքի մասին են վկայում մամուլում պահպանված այն տեղեկությունները, որ միայն վեց ամսվա ընթացքում (1913 թ. հունվար-հունիս) Վանի նահանգում սպանվեց 106, վիրավորվեց 88 մարդ, առևանգվեց 59 կին, իրականացվեց 484 զինված հարձակում հայկական գյուղերի վրա, հափշտակվեցին բազմաթիվ անասուններ¹³:

Ելնելով նահանգում ստեղծված իրավիճակից՝ Վասպուրականի Դաշնակցության մարմինը ՀՅԴ-ի, հնչակյանների և ռամկավարների անունից հանդես է գալիս մի շրջաբերականով, որի մեջ մասնավորապես նշվում էր. «Մեր հայրենիքին այս պատուհասած պատմական մեծ տագնապին հրամայական պարտականություն կոչնե գործող կուսակցությունների վրա, մնալով հանդերձ յուրաքանչյուրը իր ծրագրի ու տեսակետի սահմանների մեջ, համաձայնության գալ համազգային բնույթ ունեցող խնդիրների շուրջ»¹⁴:

1913 թ. գարնանը նոր տագնապալի իրավիճակ հաստատվեց Վասպուրականում: Թուրքական Քրդստանի բազմաթիվ շրջաններում վիճակը բավականին լարվեց: Բանն այն էր, որ քրդերը 1913-1914 թթ. ապստամբություն էին բարձրացրել Բիթլիսում, որն էլ անհանգստացրել էր երիտթուրքերին: Քրդերն ուրախությամբ էին

¹⁰ «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 20, թիվ 133:

¹¹ «Մշակ», Թիֆլիս, 1913, փետրվարի 19, թիվ 38:

¹² Տե՛ս Արմյանկի վոթոս և ցեոցիդ արմյան Ե Տուրցիա (1913-1919), Մատերիալս քոլիտիցեոսկո արխիվա մինիստերստվա անօտրաննիկ քեզերօվսկոյ Գերմանիա, Տեոբնիկ, Տոստալիտել, օտլետստեննիյ ռեդաքտոր, ավտոր թրեդիսօվա, ավեդենա և թրեմեչանիյ դոքտոր իստորիցեսկիս նաք, թրոֆեսսոր Յարդես Միկաելյան, Երեան, 1995, էջ 38:

¹³ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, սեպտեմբերի 3, թիվ 193:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 1456, ց.1, գ.1, թ.1:

արձագանքել նաև Թուրքիայի դեմ Իտալիայի պատերազմին: Արդուրեզակի և շեյխ Թահայի գործակալները շրջում էին երկրով մեկ և քարոզչություն ծավալում՝ թուրքական իշխանության դեմ համազգային ապստամբություն սկսելու համար: Նրանք հավաստիացնում էին հայերին, որ քրդական ազատագրական շարժումը ոչ մի վնաս չի պատճառի նրանց հետաքրքրություններին¹⁵: Թուրքական իշխանությունները վախենում էին, որ քրդական ապստամբությունն առաջ կբերեր հայ ժողովրդի հակակառավարական ելույթներ, քանի որ հայ գյուղացին ինչպես մի շարք վայրերում, այնպես էլ Վանում ուժեղացրել էր պայքարը՝ քյաֆիրային իրավունքի վերացման և հողի վարձակալական հարաբերություններ հաստատելու համար: Վանի նոր վալի Թահսին փաշան գնացել էր մասնակի զիջումների և ընդունել որոշ սահմանափակ որոշումներ քրդերի քմահաճույքների դեմ, որն էլ առաջ էր բերել քրդերի ու թուրքերի հարաբերությունների վատթարացում¹⁶:

Ռայխսկանցլեր ֆոն Բեթման-Հովվեգին ուղղված Տրապիզոնի հյուպատոս Բերգֆելդի՝ 1913 թ. հունիսի 25-ի հեռագրից իմանում ենք, որ կառավարությունը դիմեց վճռական քայլերի, և Վանից, Բիթլիսից և Մուշից նրանց դեմ դուրս բերվեցին ոստիկանական խոշոր միավորներ, որի պատճառով Մուշում և Բիթլիսում բախումներ տեղի ունեցան թուրքերի և քրդերի միջև¹⁷: Սակայն վալի Թահսինը, որն իր 1000 զինվորներով և թնդանոթներով 1913 թ. հունիսին Շատախ և Նորդուզ էր գնացել՝ Միր-Մեհի և Շաքիրի դեմ պատժիչ գործողություններ իրականացնելու համար և հրաման էր տվել ողջ կամ մեռած ձերբակալել ավագակին, կամ նրա ընկերներին, առանց որևէ էական արդյունքի վերադարձավ: Իր նախորդների նման Թահսինը հետևում էր նաև սիրաշահելու քաղաքականությանը՝ Միր-Մեհին խոստանալով ներում, իսկ Շաքիրին և նրա որդիներին կառավարական պաշտոններ: Սակայն նրանք մերժում են՝ չհավատալով վալիի խոսքի անկեղծությանը: Հաշտեցման նպատակով Թահսինը Շատախում ճաշկերույթ է կազմակերպում քուրդ էշրաֆների և 25 հայ երևելիների պատվին¹⁸:

Քաղաքական այս բարդ իրադրության պայմաններում ՀՅԴ Հայաստանի մարմինները ջանքեր գործադրեցին համագործակցության լեզու գտնելու Քրդստանի ազդեցիկ ղեկավարների հետ և հանուն երկու հայրենիքների ազատագրության՝ մեկ ճակատ կազմելու թուրքերի դեմ: Դաշնակցությունը համոզված էր, որ միայն քուրդ ժողովրդի բարյացակամությամբ էր հնարավոր իրողություն դարձնել ծրագրված և ընդունված բարենորոգումները: Դրանից բացի, հայ-քրդական համերաշխությունը պիտի դառնար մեծագույն երաշխիքը հավանական ջարդերի և հարստահարությունների դեմ:

Բալկանյան պատերազմի վերջում, երբ հայությունը հայտնվել էր քաղաքական նոր շրջափուլի մեջ, 1912 թ. դաշնակցական Ռափայելի սպանության կազմակեր-

¹⁵ Տե՛ս Լազարև Մ.Ս., *Курдский вопрос (1891-1917)*, Москва, 1972, էջ 209:

¹⁶ Տե՛ս Լազարև Մ.Ս., *Курдистан и курдская проблема (90-е годы XIX века - 1917 г.)*, Москва, 1964, էջ 199, 218:

¹⁷ Տե՛ս *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)...*, էջ 64:

¹⁸ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 26, թիվ 138:

պիչներից մեկը՝ Խիզանի հարստահարիչ շեյխ Սայիդ Ալին, որը վախից դադարել էր դեպի Վան և Ոստան երթևեկելուց, մի քանի անգամ բաղձանք հայտնեց՝ բանակցություն սկսելու Դաշնակցության հետ: Իսկ որոշ քուրդ գործիչներ էլ նույնիսկ կապեր հաստատեցին հայերի հետ թուրքական տիրապետության դեմ պայքարելու պլատֆորմով¹⁹: Դրանից առաջ Վասպուրականի և Տարոնի դաշնակցական ղեկավարները հասկացրել էին շեյխին, որ հայ-քրդական համերաշխությունը հրամայական անհրաժեշտություն էր երկու ազգերի անհետաձգելի շահերի տեսակետից:

Սայիդ Ալին, ելնելով մի շարք նկատառումներից, ժամանակը նպաստավոր համարեց վճռական բանակցություն ձեռնարկելու: Սայիդ Ալին և աչքի ընկած մի քանի քուրդ ղեկավարներ քաղաքական որոշ թելադրանքներ ունեին ռուսական և անգլիական շրջանակներում՝ քրդական ապստամբական շարժում ձեռնարկելու նկատառումներով՝ անշուշտ կարևոր խոստումներով: Այսպիսի շարժումը մեծապես պիտի անդրադառնար հայկական բարենորոգումների խնդրի վրա և կարող էր հայերի թշնամությանը հանդիպել: Սակայն Սայիդ Ալին գիտակցում էր նաև, թե ինչ մեծ նշանակություն կարող էին ունենալ բարենորոգումները Հայաստանի և Քրդստանի ապագայի համար:

1913 թ. մայիսի 12-ին Կեցան գավառի Քարուակ գյուղում, որը շեյխի և Դաշնակցության ազդեցության սահմանագծում էր, տեղի ունեցավ հանդիպում մի կողմից՝ Սայիդ Ալիի, իսկ մյուս կողմից՝ Ա. Վռամյանի, Կայծակ Առաքելի և Դաշնակցության կենտրոնական կոմիտեի մեկ այլ անդամի միջև: Ա. Վռամյանի հետ 1,5 ժամ տևած առանձնազրույցի ժամանակ Սայիդ Ալին առաջարկում է համերաշխություն ստեղծել հայերի և քրդերի միջև և համատեղ ուժերով պաշտպանել երկու ժողովուրդների ընդհանուր շահերը: Նա, ինչպես Ա. Վռամյանն է հիշում, «վստահութիւն չունէր Արդիւ Ռեզաքին, որ Ռուսիո գործիք էր, վստահութիւն չունէր Ճեզիրէի Բերթխաններուն, որոնք ո՛չ ընդունակութիւն, ո՛չ էլ հմայք ունէին անկախ Քիւրտիստան մը ստեղծելու, մանաւանդ որ անոնց այդ ձգտումը պիտի հանդիպէր հայոց ընդդիմութեան, որոնք բնականաբար չէին կրնար ընդունիլ այդպիսի տիրապետութիւն մը Հայաստանի վրայ»²⁰:

Սայիդ Ալին ցանկանում էր միայն աստիճանաբար, բարենորոգումների միջոցով հարթել հայ-քրդական հարաբերությունները: Նա մեծ հավատ ուներ Դաշնակցության նկատմամբ և Ա. Վռամյանի հավաստմամբ նույնիսկ փափագում էր մտնել Դաշնակցության շարքերն իբրև անդամ:

Ա. Վռամյանը Սայիդ Ալիի առջև է դնում երկու պայման՝ ա) վերջ դնել իր ազդեցության տակ գտնվող ավազակային խմբի գործունեությանը և բ) օգնել լուծելու հողային վեճերը, առանց որի Դաշնակցությունը չէր կարող հանձնառության տակ մտնել:

¹⁹ Տե՛ս *Курдское движение в новое и новейшее время*, Москва, 1987, էջ 77:

²⁰ Նիլթեր Հ.Յ. *Դաշնակցութեան պայմանութեան համար*, ԺԱ հատոր, Պէյրոյթ, Յունուար, 2015, էջ 288:

Շեյխը հավատարիմ մնաց իր խոստմանը: Մեկ ամիս անց նա դադարեցրեց Մահմեդի խմբի կողմից հայերի շահատակությունները և մի քանի հողային վեճեր լուծեց հոգուտ հայերի: Հայերի հետ բարեկամությունն էլ ավելի ամրապնդվեց Կարճկանի Մուսա բեկի սպանությունից հետո, որը Սայիդ Ալիի անձնական թշնամին էր: Արդյունքում Ապարանի գավառում և երկու կազաներում հաստատվեց անդորր:

Այնքան մեծ է եղել երկու կողմերի պայմանավորվածության նշանակությունը, որ իշխանությունները քննիչ ուղարկեցին Խիզան՝ տեսակցության հանգամանքները մանրամասնելու և ստուգելու համար:

Միաժամանակ հարաբերություններ հաստատելու փորձեր իրականացվեցին նաև «Քյոո» Հյուսեին փաշայի և Պարսկաստանի սահմանագլխի բոլոր ցեղապետների հետ:

Երիտթուրքերը չէին բացառում, որ հայկական բարենորոգումների իրականացման հետևանքով կարող էր հող նախապատրաստվել հայ-քրդական ամուր դաշինքի համար: Ուստի թուրքական կառավարությունն առաջ քաշեց նաև այն թեզը, որ հայերի պահանջներն ուղղակի սպառնալիք են քրդերի շահերին: Իշխանությունների դրդմամբ քրդերն ուժեղացրին խժողությունները հայերի նկատմամբ և բողոքի ցույցեր կազմակերպեցին հայկական բարենորոգումների դեմ:

Հայկական բարենորոգումները ձախողելու նպատակով երիտթուրքական կառավարության դրդմամբ Աբդուլ Գատերը ներկայացրեց «Ինքնավար Քրդստանի» մի նախագիծ²¹: Իրենց հերթին բազմաթիվ հայ գործիչներ աշխատում էին համոզել քրդերին, որ հայկական բարենորոգումները բարիք կհանդիսանան նաև քուրդ ժողովրդի համար: Պետք է նշել, որ այս հարցում քրդերը միասնական չէին և ընդհանուր տեսակետ չունեին, սակայն նրանց մեծ մասը (Աբդուլ Գադեր, Աբդուլ Ռեզակ, Ամին Սալի Բեդրիսան, Իսմայիլ աղա Սմկո, Մուլան Զադե Բիֆաթ) այն կարծիքին էր, որ հայկական բարենորոգումների իրագործումը սպառնալիք կարող էր հանդիսանալ «քրդական դատի համար»²²:

Այսպիսով, կառավարության թելադրանքով առաջ է գալիս քրդական ինքնօրենության մի հարց, որով թուրքական կառավարողներն ուզում էին չեզոքացնել Հայկական հարցը: Վ. Բայբուրդյանը դիտարկում է, որ իթթիհայթական կառավարությունն աշխատում էր խեղդել քրդական խմորվող շարժումը, բայց մի այնպիսի

²¹ Աբդուլ Գատերը պատերազմի նախօրյակին Վանի պետական քննիչն էր: Նա հայերի հետ սիրալիք հարաբերություններ մշակելը համարում էր ոչ միայն անօգուտ, այլև վնասակար: Նա պայքարում էր՝ հայ-քրդական հողային վեճերը հոգուտ քրդերի լուծելու: Ա. Գատերը ցանկանում էր, որ քրդերը քաջալերվեին այնքան, որ ձուլվեին և միասնային թուրքերին, որպեսզի գործիք չդառնային ռուսների ձեռքին: Նրա մասին Մ. Էյվիդաթյանը նշում է, որ «չափազանց անհանդարտ բնատրություն տեղ, մոլեռանդ ազգասեր, ուր որ եղած էր միշտ օրոպայ իշխանատրին դեմ դիրք բռնած էր»: Նա ընդդիմացել է Էսվերին, իսկ հետագայում Քեմալին, երբ Անկարայի կուսակալն էր: Բուլղարիայի սահմանին ձերբակալվել և Անկարայում կախաղան է բարձրացվել (տե՛ս Էյվիդաթյան Մ.Մ., *Կեսնք մը ազգիս կեսնքին մեջ. սկանսարեսի եւ մասնակցողի վկայություններ 1903-1923*, Անթիլիաս, 1987, էջ 89-90):

²² Հարությունյան Ա., *Ակնարկներ քրդական խնդրի պատմության*, Երևան, 2011, էջ 24:

ձևով, որ քրդությունը չբաժանվեր իրենից: Եվ նա ընտրում է հայերի և քրդերի շարժումները մեկը մյուսով խեղդելու ձևը²³:

Թուրքական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի հայերի առաջիկա կոտորածների ժամանակ իրենք հենվեն հատկապես քուրդ ավագակախմբերի վրա, որի համար էլ նա խրախուսում էր այդ ավագակախմբերի հարձակումները հայերի վրա, իսկ ավագակները, որպես կանոն, չէին պատժվում:

Հակառակ կառավարության նախապես մշակած բարենորոգչական ծրագրերին՝ Վասի գավառներում ոչինչ չփոխվեց: Վասպուրականի եղկելի վիճակն օրեցօր վատթարանում էր և դառնում կատարյալ դժոխք: Շուտով ողջ նահանգում վերականգնվեցին ալան-թալանը, անապահովությունը, ավագակային հորդանների արշավանքները, սպանությունները և արտագաղթը: Ամեն օր Վասպուրականի տարբեր տեղերից գույժ էր հասնում, որոնց բոլորին հնարավոր չէր արձագանքել մամուլի էջերում: Գավառներից լուրեր էին հասնում, որ քրդերը բոլոր տեղերում էլ հոխորտում էին հայերի վրա և սպառնում էին նրանց²⁴:

Այսպես, Խրոբոտենցի դեպքերից և դաշնակցական Ռափայելի սպանությունն իրականացրած հաջի Յադկուրի ահաբեկումից հետո Կարկառի վիճակն ավելի վատացավ: Թեև կառավարությանը հայտնի էր, որ հաջի Յադկուրի սպանողները Խրոբոտենցի գյուղացիները չեն, սակայն «թիրք կառավարողներին հայը պատժել պետք է»²⁵: Վերին Կարկառի 40 հայերի նկատմամբ առաջադրվում է մեղադրանք, որի արդյունքում հինգ հոգի ձերբակալվում են, իսկ մնացածը, խույս տալով կառավարության հալածանքներից, փախուստի են դիմում:

Նորդուզից գրում էին, որ ժողովրդի ապահովության կամ հարկահավաքության համար նույն գավառը ուղարկված ժանդարմները գրգռում էին քրդերին, թե «ի՛նչ բանի, որ օրվան էք սպասում: Ինչո՞ւ չէք կոտորում այս քեսաֆիրներին, որոնք Ռումելիում մեր պետության հիմքերը քանդեցին»²⁶: Կառավարությանն ուղղված հուսահատ ժողովրդի դիմումները մնում էին անհետևանք: Բաշկալեի մյութեսարիֆ Ջևդեթը բավարարվում է միայն ասելով, որ «ի՛նչ անեմ, իմ ձեռքում բառական զինտրական ոյժ չունեմ զսպելու համար անհանդարտ տարրերին իւրաքանչիւր գիւղում»²⁷:

1913 թ. ապրիլի վերջին և մայիսի սկզբներին քուրդ ավագակապետ Միր Մենն (Կուրդ բեյը) կազմակերպում է Շատախի Խումար գյուղի 1100 և Կաճետ գյուղի 1000-ից ավելի ոչխարների գողությունը և երկու հովիվների սպանությունը²⁸: Մոտակա քրդական գյուղերի բնակիչները, երկյուղ կրելով հանցագործության բացահայտու-

²³ Տե՛ս Բայբուրդյան Վ., Հայկական բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում և հայ-քրդական հարաբերությունները, «ԲՀԱ», 1986, թիվ 1(74), էջ 58:

²⁴ Պողոսյան Ս.Կ., *Քրդերը և հայկական հարցը*, Երևան, 1991, էջ 211:

²⁵ «Մշակ», Թիֆլիս, 1913, փետրվարի 19, թիվ 38:

²⁶ «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 26, թիվ 88:

²⁷ «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 30, թիվ 116:

²⁸ Տե՛ս «Կոհակ», Կ.Պոլիս, 1913, մայիսի 26, թիվ 23, էջ 245, նաև «Մշակ», Թիֆլիս, 1913 թ., մայիսի 30, թիվ 116:

մից, Խումար գյուղի ոչխարներից 87-ը հետ են քշում հայկական գյուղի սահմանների մոտ, իսկ 900-ը կառավարությունը ձեռք է բերում Ջուլամերիկ գավառում²⁹: Ի դեպ, 1913 թ. հունիսի 17-ին Խումարից գողացվում է ևս 400 ոչխար, այն դեպքում, երբ հայերի անվտանգությունը նախապես ստանձնել էր գյուղի պահպանության համար ուղարկված թուրքական մի զորախումբ³⁰:

Մայիսի սկզբներին Վանի հարավային կողմում լեռնային քրդաբնակ Բարվար գավառի Բանիջան հայկական (25-30 տուն) գյուղը ենթարկվում է քրդական հարձակման, որի արդյունքում քշվում են անասունները, իսկ գյուղը թալանվում է՝ «հանել տալով շինականների շապիկներն անգամ»³¹:

Մայիսի 15-ին կազմակերպվում է Գարիգոմ և Քրմենց հայկական գյուղերի 200 գլուխ անասունների հափշտակությունը³²:

Իսկ նույն ժամանակ տինիսցի քրդերը հաջի Թամարի որդի Իսա աղայի գլխավորությամբ և շեյխ Սայիդ Ալիի դրդմամբ, որը նախապես իրար հետ հաշտեցրել էր Տենիս և Բարվար գավառների քրդերին (վերջինները պաշտպանում էին ուզեցիներին տենիսցիների դեմ) պաշարում են Ուզիմ հայկական գյուղը և հափշտակելով 1100 ոչխար՝ հայ բնակչությանը զրկում են իրենց ապրուստի հիմնական միջոցից: Մեկշաբաթյա ինքնապաշտպանությունից հետո Մոկսի մյուղիր Մրթյուլահ բեյը, որ տենիսցիների բարեկամն էր, զորք է ուղարկում և պաշարումը վերացնում³³: Իսկ ՀԲԸՄ-ն էլ Վանի հանգուցյալ քաղաքապետ Պետրոս Գափամաճյանի որդու՝ Սեթ Գափամաճյանի միջոցով 100 օսմանյան ոսկի է տրամադրում ուզեցիներին՝ նոր անասուններ գնելու համար³⁴:

«Հորիզոն»-ը շտապում էր արձագանքել. «Վանը և իր շրջականները լուրջ կասկածանքի տակ են. ոչ մեկ ապահովություն կայ. հիմակուրնե, իսկ քիւրտերը Վանի ճամբաներուն վրայ խումբ խումբ դարանամուտ կը սպասեն, սպանելու և թալլելու համար երթնեկող թշուառ գիւղացիութիւնը: Տեղական կառավարութիւնը ոչ մեկ ձեռնարկ կընէ խափանելու համար քրտական այս շարժումները և ընդհակառակը ան ո՛չ թէ կը հալածէ քրտական այդ խումբերը, այլև զանոնք կը զինէ, ինչու՛...»³⁵:

Իսկ «Մշակ»-ի հողավաճագիրներից մեկը՝ Վահան Մինախոյրյանը (Մտրակ)³⁶, դեռևս 1913 թ. կանխագգում էր «աւելի վատ հետևանքներ մօտիկ ապագայում», որ «բոլոր նշանները ցոյց են տալիս, որ ապրում ենք աւելի մեծ տագնապների և

²⁹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 4, թիվ 120:

³⁰ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 21, թիվ 134:

³¹ «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 26, թիվ 113:

³² Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 4, թիվ 120:

³³ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 26, թիվ 113, նաև մայիսի 30, թիվ 116:

³⁴ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 19, թիվ 108:

³⁵ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հունիսի 5, թիվ 122:

³⁶ Տե՛ս Հովակիմյան Բ.Մ., *Հայոց ծածկանունների բառարան*, Երևան, 2005, էջ 302:

չարիքների նախօրեակում»³⁷, «գուցէ նույնիսկ նախնիների Թիրքահայաստանում»³⁸:

Այդուհանդերձ, երիտթուրքերը կախաղան բարձրացրին և գնդակահարեցին քուրդ աղաներից ու բեյերից մի քանիսին, որոնք խիստ հետադիմական դիրք էին բռնել 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման հանդեպ և ձգտում էին վերականգնել սուլթանիզմը: 1913 թ. հունիսի 8-ին կառավարական գորքերի կողմից գնդակահարվեց և սպանվեց արյունաբերու ավագակ 70-ամյա Մահմեդ, որը 30-40 տարիների ընթացքում սպանել էր մի քանի հարյուր հայերի: Միայն 1912 թ. նրա անգթության գոհն էին դարձել 20 հայեր³⁹:

Բացի դրանից, կառավարությունը Դաշնակցության պահանջով հետապնդումներ սկսեց Շաքիրի և Միր Մեհի նկատմամբ՝ «փրկելով» նրանց Դաշնակցության ահաբեկումից⁴⁰:

Այդ նպատակով, ինչպես նաև ժանդարմների վերակազմության խնդիրը լուծելու համար 1913 թ. հունիսին Կ.Պոլսից Վան է ժամանում կառավարության կողմից կազմված հերթական հանձնախումբը՝ Օսման Սենայի-բեյի նախագահությամբ և Անվեուի-բեյի, Հրաչ Աբրահամյանի և հազարապետ Թահիր բեյի անդամակցությամբ⁴¹:

1913 թ. սեպտեմբերի 12-ին թուրքական ժանդարմական գորքերը՝ գնդապետ Խալիլ բեյի (Էնվերի հորեղբայրը և 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ թուրքական գորքերի հրամանատարը, -Ա.Հ.) և Բաշկալեի մյութեսարիֆ Ջնդեթ բեյի հրամանատարությամբ Միր-Մեհի մուտքը Պարսկաստանից Թուրքիա արգելելու համար ժամանում է Նորդուգ՝ նախապես իմանալով, որ Միր-Մեհն այնտեղով անցել էր: Ապա նա անցնում է Պեշար՝ այրում Միր-Մեհին պատկանող վրաններից մեկը, իսկ այնտեղից՝ Փիրպետելեն (Շաքիրի գյուղը): Շաքիրը մտածելով, որ գորքն իրեն է հետապնդում, իր 8 ձիավորներով և 15 հետևակայիններով ապաստանում է Պելեռաշ սարում: Խալիլը ենթադրելով, որ գտել են Միր-Մեհին, հրամայում է գրոհել: Մեկ ժամյա կռիվից հետո գոհվում են Շաքիրը և նրա հորեղբոր որդին: Կառավարական ուժերը ձերբակալում են Շաքիրի վիրավորված երկու որդիներին, բռնագրավում են 8 ձի, 4 ատրճանակ, 8 հրացան, 280 ոսկի, որը Խալիլը բաժանում է իր զինվորներին, իսկ 30 ոսկի էլ տրամադրում է Շաքիրի վիրավոր որդիներին⁴²:

1913 թ. սեպտեմբերին իշխանությունները Կարճկանում սպանեցին Մուսա բեյին և «արեան հոտով արբած» գրավցի Շաքիր աղային, որը շուրջ 25 տարի Նորդուգի, Շատալսի, մասամբ նաև Հայոց Ձորի հայ ժողովրդի ահ ու սարսափն էր⁴³:

³⁷ «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 19, թիվ 108:

³⁸ «Մշակ», Թիֆլիս, 1913, մայիսի 9, թիվ 99:

³⁹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 23, թիվ 136:

⁴⁰ Նիսթեր Հ.Յ. Դաշնակցության պայքարների համար, ԺԱ հատոր, էջ 288:

⁴¹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 20, թիվ 133:

⁴² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 4, թիվ 222:

⁴³ 90-ական կոտորածների ժամանակ նա դատապարտվել էր «Իտամի»՝ 101 տարվա բանտարկության, բայց արդարացվել էր: 1896 թ.Վանի դեպքերի ժամանակ նա մեծագույն նախնի

Ի դեպ, կառավարությունը Մուսա բեյի սպանությունը վերագրում է «մի խումբ զինւած հայերին» այն անվանելով կազմակերպւած ահաբեկչություն Դաշնակցության կողմից: Արդյունքում բեյի կատաղած ծառաները հարձակվում են Գոնա, Եղեգիս և Օղվանց հայկական գյուղերի վրա: Մոտ երեք ժամից հետո «խաղաղութեան ու անմեղ ժողովրդի պաշտպանութեան» համար վրա հասած գորքերը, միանալով քրդերին, կանոնավոր հրացանաձգություն են սկսում ժողովրդի դեմ, որի հետևանքով սպանվում են երկու կին, երկու տղամարդ և մեկ երեխա⁴⁴:

1913 թ. սեպտեմբերի սկզբներին Մոկսի, Սպարկերտի, Մամոտանքի և Բարվարի 50-60 քուրդ ցեղապետներ և աշիրաթապետներ Մոկսի «հայասեր» մյուդիի Մուրթուլահ բեկի նախագահությամբ Մոկսի Հըլվըլ քրդաբնակ գյուղում երկօրյա ժողով են գումարում և որոշում՝ ա) Մուսա բեկի վրեժը լուծել հայերից և բ) նկատի ունենալով, որ Խիզանի շեյխ Սայիդ Ալին իրենց համախոհը չէր, այլ ընդհակառակը հայերի բարեկամը, որոշվում է նրա փոխարեն ճանաչել Մուրթուլահ բեկի գերիշխանությունը⁴⁵:

Քրդերը մի կողմից՝ նախապատրաստում են հայաջինջ ծրագիր, մյուս կողմից՝ տենիսցի քրդերի կողմից նոր գործողություններ են սկսում հայաբնակ Ոգիմ գյուղի հայերի նկատմամբ: Արյունաբքու տենիսցիք քանդում են Ոգիմի ջրի առուն և դարան մտնում, որպեսզի առուն վերանորոգող ոգիմցիներին հանկարծակիի բերեն և սպանեն: Սակայն ոգիմցիները, կոսահելով քրդերի ցինիկ մտադրությունը, գերի են վերցնում դարան մտած երկու քրդերի, որոնց պատրաստվում են հանձնել Բիթլիսի կուսակալությանը, որովհետև իրենց հանցագործությունների համար նրանք հետախուզվում էին կառավարության կողմից: Մուրթուլահ բեկի սպանալիքներից հետո ոգիմցիները գերիներին բաց են թողնում, սակայն մեկ շաբաթ անց ջրի առուն նորից քանդվում է⁴⁶:

Այդ նույն ժամանակ էր, որ Կարճկանի Աղոստոս գյուղի Օսման աղայի տանը մորթոտվում է Մրորս գյուղի հյուսն Կիրակոս Սահակյանը, որը Օսմանի հրավերով աշխատում էր նրա տանը: Երբ հայերը ոստիկաններին տեղեկացնում են կատարվածի մասին, վերջիններս փոխանակ հանցագործին գտնելու, գիշերում են սպա-

էր գործել Հայոց Ձորի Ծվստան գյուղում՝ սպանելով հարյուրավոր հայերի և ավերելով ու կողոպտելով հայկական վանքերն ու եկեղեցիները, մասնավորապես Հոգվոց վանքի ամբողջ հարստությունը (խաչեր, սկիհներ, շուրջառներ, ոչխարներ, արջառներ և այլն) և Վարագա վանքը: Շաքիրը սպանվեց իր մի ծառայի հետ, իսկ նրա եղբայր Դելի-Ահմադը և երկու վիրավոր որդիները 4-5 ծառաների հետ միասին ձերբակալվեցին և բանտարկվեցին Վանի բանտում: Կառավարությունը միշտ էլ բարյացակամ վերաբերմունք է ունեցել Շաքիրի նկատմամբ: Վալիները հաճախ էին նրան հանձնում շրջիկ պահնորդի պաշտոնը: Ամեն գյուղում նա գետեղել էր իր խոլամներին (ծառա), որոնք կազմակերպում էին տուրքերի, տուգանքների հավաքումը: Նա կուտակել էր մեծ հարստություն և ուներ 5000-ից ավելի ոչխար (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 9, թիվ 223, նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 9, թիվ 226, նաև՝ «Մշխարհաբար», Իգմիր, 1913, հոկտեմբերի 9/22, թիվ 31, նաև՝ «Բիզանդիոն», Կ. Պոլիս, 1913, սեպտեմբերի 26/ հոկտեմբերի 9, թիվ 5,156):

⁴⁴ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, սեպտեմբերի 6, թիվ 199:

⁴⁵ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 8, թիվ 225:

⁴⁶ Նույն տեղում:

նողի տանը և խնջույք կազմակերպելուց հետո միայն վերադառնում են՝ միաժամանակ հայտարարելով, որ Կիրակոսը Մուսա բեկի սպանողներից մեկն էր և փախել էր Կարճկանից⁴⁷: Ահա թե ուր էր հասնում կառավարության խեղկատակությունը:

1913 թ. հոկտեմբերի 1-ին Նորդուզի և Շատախի կառավարիչ Ջևդեթ բեյի կողմից Շատախի Տաքու լեռան մոտ մի քանի քրդերի հետ սպանվեցին խորարմատ հարստահարիչ Միր-Մհեն ու իր որդին, որոնք հայտնի էին իրենց բազմաթիվ չարագործություններով՝ ինչպես հայերի, այնպես էլ իշխանական մարմինների դեմ: Միր-Մհենի դիակը տեղափոխվեց Վան և կախաղան բարձրացվեց քաղաքի հրապարակում: Այնքան մեծ էր ատելությունը Միր-Մհեն նկատմամբ, որ հազարավոր հայեր ու թուրքեր, մոտենալով դիակին, թքում էին նրա երեսին: Ամբողջ տասը տարի Միր-Մհեն ահ ու սարսափի մեջ էր պահում Նորդուզի և Շատախի շրջանները՝ սպանելով հարյուրավոր հայերի և տասնյակ ոստիկանների⁴⁸:

1914 թ. ամռանը իշխանությունները որոշեցին սպանել նաև Սմկոյին, որի մահվան դատավճռի իրագործումը հանձնարարվեց հին արմենական և բազմափորձ հեղափոխական Ա. Եկարյանին, որը 1896 թ. դեպքերի հետ կապված անձնական վրեժ ուներ ավազակապետի նկատմամբ: Սակայն Բաշկալեի ուղղությամբ ծավալված գործողությունների պատճառով այն ձախողվեց⁴⁹: Վանի նահանգապետ Թահսինի կողմից իրականացված գործողության արդյունքում ձերբակալվեցին երկու աշիրեթապետներ և քուրդ 58 ելուզակներ: Բռնագրավվեց և գյուղացիներին վերադարձվեց հափշտակված 20 հազար անասուն⁵⁰:

Թահսին բեյի կողմից իրականացված միջոցառումները հետապնդում էին երկու նպատակ: Հաշվեհարդար իրականացնելով քրդերի նկատմամբ՝ նա մի կողմից ապահովում էր Վանի նահանգի անդորրը և կասեցնում քրդերի բարենորոգումների անցկացման հնարավորությունը, իսկ մյուս կողմից՝ մեծացնում ոստիկան-զինվորների թվաքանակը և դրանց ներկայությունը Վանում՝ բացառելով քրդերի անջատողական որևէ հնարավորություն:

Միաժամանակ իշխանությունները վարում էին քուրդ աղաներին սիրաշահելու քաղաքականություն: Այսպես, 1913 թ. նոյեմբերին բանտից ազատ արձակվեցին սպանված ավազակ Շաքիրի որդի Լեզկին և Արճեշի մեծ ավազակ ու ոճրագործ Ֆահրոն: Վան հրավիրվեց թակուոցի աշիրեթապետ Հյուսեին բեյը, որը սիրալիի ընդունելություն գտավ և պատվանշան ստացավ չգիտես թե որ ծառայության համար: Նույն մտայնությամբ կառավարությունը զենք ու զինամթերք բաժանեց Շաքիրի հորեղբայր Կուրդ-բեյին, շամսեկցի Սատուն-բեյին և վերջինիս եղբորը՝ Հասանին, որ գրավել էր Վարազա վանքի Սալախասն գյուղը⁵¹:

«Իր ապագային մասին մտածող թուրքը, - գրում է Մ. Էլալիդաթյանը, - կ'ուզել միշտ շահագործել քիւրտ տարրը հայուն դէմ: Այս պատճառով էր, երբ կուսա-

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Տե՛ս «Մշխարհաբն», Իզմիր, 1913 թ. հոկտեմբերի 30/նոյեմբերի 12, թիվ 37:

⁴⁹ Տե՛ս Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրե, 1947, էջ 175-178:

⁵⁰ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, օգոստոսի 22, թիվ 184:

⁵¹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, դեկտեմբերի 3, թիվ 269:

կալ Թահսին սաստիկ կը հետապնդէր Սըմնկօն եւ քիւրտ յայտնի աազակները, որպէսզի երկրին ապահովութիւնը չխանգարուէր, միւս կողմէն սակայն կը քաջալերէր այն քիւրտերը, որոնց միակ փափագն էր իրենց շուրջը գտնուող անպաշտպան հայերը խոշտանգել եւ անոնք ճնշումի տակ պահելով, անոնց ինչքէն եւ աշխատանքէն օգտուիլ: Այս ձեւով թուրք կառավարութիւնը ուրիշ շահ մըն ալ կ'ապահովէր, այն է՝ հայ եւ քիւրտ տարբերուն միջեւ որեւէ համաձայնութեան եւ համերաշխութեան անկարելիութիւնը»⁵²:

Այսպիսով, Վանի շրջանում տիրող կոտորածների սպառնալիքը, շահատակությունները և անապահովության մթնոլորտը շարունակվեցին իթիլաֆականներին փոխարինած իթթիհաթականների օրոք: Չնայած հայ քաղաքական շրջանակներում մշակվեցին քրդերի հետ համագործակցության ծրագրեր, սակայն վերջիններս իշխանությունների դրդմամբ ուժեղացրին հայերի նկատմամբ նոր խժոժությունները: Կառավարության երկակի քաղաքականությունն ըստ էության ոչինչ չփոխեց նահանգում:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԵՎ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1913-1914 ԹԹ.
ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ալեքիս Հարությունյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Արևմտահայության նկատմամբ գործադրված բռնությունները, սպանությունները և անապահովության մղձավանջը շարունակվեց և նոր դրսևորում ձեռք բերեց այն բանից հետո, երբ 1913թ. հունվարի 10-ին իթիլաֆականներին կրկին փոխարինեցին իթթիհաթականները:

Հայկական հարցի վերաբացումն իր անմիջական անդրադարձն ունեցավ Վանի նահանգի ազգամիջյան հարաբերություններում:

Քաղաքական բարդ իրադրության պայմաններում ՀՅԴ մարմինները ջանք գործադրեցին քրդերի հետ համագործակցության լեզու գտնելու և հանուն երկու ժողովուրդների ազատագրության մեկ ընդհանուր ճակատ կազմելու գործում: Քրդական մի շարք գործիչներ ցանկություն հայտնեցին բանակցություններ սկսել Դաշնակցության հետ:

Երիտթուրքերը չէին բացառում, որ հայկական բարենորոգումների իրականացումը կարող էր հող նախապատրաստել հայ-քրդական ամուր դաշինքի ստեղծման համար: Ուստի, այն ձախողելու նպատակով իշխանությունների դրդմամբ քրդերն ուժեղացրին խժոժությունները հայերի նկատմամբ:

Բանալի բառեր՝ Վան, անապահովություն, բարենորոգումներ, կոտորածներ, հայ-քրդական հարաբերություններ:

⁵² Էփլիղաթեան Մ.Մ., *նշվ. աշխ.*, էջ 77-78:

THE NEW MANIFESTATIONS OF INSECURITY IN THE PROVINCE OF VAN DURING 1913-1914 IN THE CONTEXT OF ARMENIAN-KURDISH RELATIONSHIPS

Avetis Harutunyan

SUMMARY

The nightmare of violence, murders and insecurity continued and got new manifestations after Ittilafists left power to Ittihadists on 10 January, 1913. The reopening of the Armenian question had its direct reflection on the interethnic relations in Van province. In the difficult political conditions, the Dashnaktsutyun political party leaders made an effort to cooperate with the Kurds and create a united front for the liberation of the two peoples. Some Kurdish chieftains expressed desire to negotiate with Dashnaktsutyun party.

The Young Turks did not rule out that the implementation of the Armenian reforms could pave the way for a lasting Armenian-Kurdish alliance. Therefore, they continued the policy of inciting the Kurds to carry out persecutions against Armenians.

Keywords: Van, insecurity, reforms, massacres, Armenian-Kurdish relations.

УГРОЗА ПОГРОМОВ И НОВЫЕ ПРОЯВЛЕНИЯ БЕЗЗАЩИТНОСТИ В ВАНСКОЙ ОБЛАСТИ В 1913-1914 ГГ. В КОНТЕКСТЕ АРМЯНО-КУРДСКИХ ОТНОШЕНИЙ

Аветис Арутюнян

РЕЗЮМЕ

Насилия и убийства в отношении западных армян продолжились и проявились вновь после того, как 10 января 1913 г. в результате переворота к власти в Османской империи пришла младотурецкая партия «Единение и прогресс».

Возобновление Армянского вопроса непосредственно отразилось на межнациональных отношениях в Ванской провинции. В обстановке сложных политических условий органы партии Дашнакцутюн приложили усилия, чтобы найти общий язык взаимодействия с курдами и создать единый фронт во имя освобождения двух народов. Ряд курдских деятелей выразил желание начать переговоры с дашнакской партией.

Младотурки не исключали, что осуществление армянских реформ может подготовить почву для прочного армяно-курдского союза. С целью предотвратить армяно-курдское сближение, турецкие власти продолжили политику подстрекательства курдов к осуществлению преследований в отношении армян.

Ключевые слова: Ван, отсутствие безопасности, реформы, массовые убийства, армяно-курдские отношения.

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԻՐԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ (ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ) ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1914-1916ԹԹ.

Դերենիկ Մելիքեան

Ա աշխարհամարտի նախօրեակին գերմանական եւ թուրքական հրամանատարությունների մշակած ծրագրում ռազմական գործողություններ էին նախատեսել նաև Իրանում, որի տարածքը Գերմանիան եւ Թուրքիան մտադիր էին օգտագործել որպես միջանցք՝ դէպի Բաքուի նախային շրջանները ու այնուհետև՝ Միջին Ասիան գրավելու համար: Ուստի Հիւսիսային Իրանը եւս վերածեց հակամարտող երկու ճամբարների ռազմական գործողությունների թատերաբեմի¹:

Միւս կողմից, երբ Թուրքիան նոյնիսկ դեռեւս չէր մտել պատերազմի մէջ, այդուհանդերձ թուրքական հրամանատարությունն իր զօրքերը տեղակայեց Վանի, Սարայի, Բաշկալէի եւ Շամդինանի տարածքներում: Ի պատասխան դրան, ռուսական հրամանատարությունն էլ 1914 թ. նոյ. 20-ին գեներալ Ֆ. Չերնոզուբովի գլխավորությամբ զօրքեր մտցրեց Իրան: Ռազմական յաջող գործողությունների արդիւնքում ռուսական բանակը շուտով գրաւեց Խոյը, Ուրմիան եւ Թաւրիզը: Իրանական կառավարությունը Մոսթոֆի-օլ-Մամալեքի գլխավորությամբ, որն իշխանութեան գլուխ էր եկել 1914 թ. օգոստոսին, իր դժգոհությունն յայտնեց ռուսական զօրքերի Իրան ներթափանցելու կապակցությամբ: Յատկանշելի է, որ դեռ նախքան ռուսական զօրքերի Իրանի տարածք մտնելը, 1914 թ. նոյ. 14-ին, Ուրմիայում Ռուսաստանի փոխհիւպատոս Վեդենսկին հետագրեց, որ թուրքերը նպատակ ունեն գրաւել Ուրմիայի շրջանը՝ այստեղից երկու ուղղություններով՝ Խոյ-Ջուլֆա եւ Սոլդուզ-Սաուջրուլազ, հետագայում Թաւրիզի շրջան դուրս գալու համար: Այս պայմաններում ռուսական հրամանատարությունը դիմեց այնպիսի մի հակաթուրքական ուժի աջակցութեանը, որպիսին Ուրմիայում եւ նրա շրջակայքում ապրող 70.000 ասորիներն էին:

Ռուսական զօրքերին օգնում էին ասորիները, որոնց վիճակն անգամ մինչևէ պատերազմը, իրօք անտանելի էր: Դա էր պատճառը, որ նեստորական ասորիների մեծ մասն ընդունել էր ուղղափառ կրօն՝ յոյսով, որ Ռուսաստանն օգնութեան ձեռք կը մեկնի: Յանուն դրա՝ ասորիները խոստացել էին ռուսական հրամանատարութեան տրամադրութեան տակ դնել 40.000 զինեալ:

Հայ-ասորական բարեկամությունը շարունակում է ու անլի սերտանում նաև 1914-ի Ա. Աշխարհամարտի սկզբներում, երբ Տաճկահայաստանից Սալմաստ ապաստանեցին մեծ թով վասպուրականցի հայեր եւ Ջուլամերիկի բոլոր ասորիները՝ իրենց կաթողիկոս՝ Մար Շիմոնի եւ Աղա Պետրոսի գլխավորությամբ²:

¹ Անահիտ Խոսրոեա, Ասորիների ջարդերը թուրքաբնակ վայրերում Ա. Աշխարհամարտի տարիներին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», № 9, Երևան, 2004, էջ 88:

² Ասորի հեղինակաւոր առաջնորդ Մար Շիմոնը յայտնի էր իր ռուսամէտ կողմնորոշումներով, որոնք պայմանաւորած էին՝ ռուսների օժանդակութեամբ ասորիների ինքնավարութեան ձեռք:

Ասորիների ռուսական կողմնորոշմանը Թեհրանը պատասխանեց թշնամական գործողություններով՝ համագործակցելով թուրքերի և քրդերի հետ: Վերջինները 1914 թ. սեպտեմբերին Ուրմիայի շրջանում հրդեհեցին անլի քան 30 հայկական և ասորական գիւղեր³: Այսպես, իրեն չէզոք երկիր յայտարարած Իրանի տարածքում 1914 թ. նոյեմբերի 2-ին ասորիների ջարդեր իրականացվեցին:

Ասորիների կոտորածների մասին գոյություն ունի փաստ, որ 1914 թ. ասարտին թուրքական զորքերը Ուրմիայի շրջանում աներեցին և հրդեհեցին ասորական 98 գիւղ, որոնց արդիւնքում սպանվեցին 500, իսկ 800 կին և աղջիկ առեւանգվեցին: 700 մարդ գլխատեց ասորական Հայթան գիւղում, 5000 ասորի քշեց թուրքական հարեւները, - թարկում է Ա. Խոսրոբեան «Ասորիների ջարդերն Իրանի թուրքաբնակ վայրերում առաջին աշխարհամարտի փարիսերին» ուշագրաւ յօդածում⁴:

«... Բնասական զորքերի Սալմասար հասնելուց մի քանի օր առաջ քրդերն ու թուրքերը, - գրում է «Նիւ Եօրթ Թայմզը» իր 1915 թ.- ի ապրիլի 29- ի համարում, - հասարեցին հայ և ասորի փղամարդկանց՝ 400-ին ուղարկեցին Խոսրոբու, իսկ միւս 400-ին՝ Հայթան: Նրանցից ոչ մէկը ողջ չմնաց»⁵:

Նոյն «Նիւ Եօրթ Թայմզը» ի համաձայն, «20- 30000 – ի չափ նեւորոսական ասորիներ և հայեր զանգաճաքաբ հեռացան Իրանական Ադրբեջանից: Անլի քան 1500 հոգի կորուրեց, 2000 –ի չափ մահացան հիւանդություններից »⁶:

Յատկանշելի է «Մշակ»-ում մէջբերուած «Նիւ Եօրթ Թայմզը»-ի հետեւեալ վկայութիւնը ևս, ըստ որի՝ «Միայն հայերը չեն, որ անբախար են, ասորիներին նոյնպէս ոչնչացրեցին և իրաքանչիւր փասնեորդին հնձեցին»⁷: Իսկ «Atlantic Monthly»-ն նկատել է, - «Վեց ամսայ ընթացքում երիւրթուրքերն արեցին այնքան, որքան չէին կարողացել անել հին թուրքերը վեց դարում: Հազարաւոր ասորիներ անհետացան»⁸:

բերմամբ: Ինչպէս այդ մասին անդրադառնում է Անահիտ Խոսրոբեան իր «Ասորիների ջարդերն Իրանի թուրքաբնակ վայրերում...» աշխատութիւնում. -«... Մար Շիմոնի ռուսական կողմնորոշումը դուր չէր գալիս անգլիացիներին, որոնք ջանում էին ասորիներին գրկել իրենց հեղինակաւոր առաջնորդից: Անգլիացիների այդ վերաբերմունքը ասորիների նկատմամբ լրիվ համընկնում էր քրդերի առաջնորդ Իսմայիլ աղա Մեմկոյի (որոշ աղբիւրներում նաև Սիմկօ կամ Սմկօ) շահերին: 1918 թ. սկզբներին դրամական միջոցների խիստ կարիք ունենալով՝ աղա Մեմկօս որոշում է ձեռք բերել ասորական բնակավայրերը և յատկապէս պատրիարքարանը՝ թալանելու միջոցով: Իր ծրագիրն իրագործելու համար նա մի քանի անգամ պատուիրակություն է ուղարկում Սալմաստում գտնուող Մար Շիմոնի մօտ: Հոգեւոր առաջնորդին բազմիցս խորհուրդներ են տալիս՝ չհամագործակցել քրդերի առաջնորդի հետ, սակայն, անգլիացի կապիտան Գրեյսիի առաջարկութեամբ 1918 թ. մարտին որոշում է քրդերի հետ ընդհանուր յայտարարի գալ՝ համատեղ գործելու համար: Աղա Մեմկօս մարտի 3-ին իր Քեռհնա-Շահրի (Հին քաղաք) ամրոց է հրաւիրում 100-150 հոգանոց ասորական պատուիրակութեանը՝ Մար Շիմոնի գլխաւորութեամբ և նրանց գցում ծուղակը: Աղա Մեմկոյի ճոխ ընդունելութեան ասարտից յետոյ Մար Շիմոնն ու նրա եղբայրը՝ Դաիթը 75 հոգու հետ սպանում են»:

³ Պողոսեան Ստ., *Հայոց Ցեղասպանութեան պատմութիւն*, 2-րդ հատոր, Երևան, 2009, էջ 443:

⁴ Նոյն տեղում, էջ 444:

⁵ Նոյն տեղում:

⁶ Նոյն տեղում:

⁷ Նոյն տեղում:

⁸ Նոյն տեղում:

Նման պայմաններում էր, եւ նոյնիսկ մինչեւ այդ, որ Մոսթֆի-օլ-Մամալեքը բողոքի նոտա էր յղում Ռուսաստանի դեսպանութեանը, որտեղ յայտնում էր, թէ Իրանի կառավարութիւնն մտադիր է պահպանել իր չէզոք դիրքը՝ հեռու մնալով պատերազմում ներքաշելուց. ուստի Իրանի կառավարութիւնն Ռուսաստանին խնդրում է, որպէսզի վերջինս իր զօրքերը յետ կանչի իրանական տարածքներից, որով էլ ապացուցած կը լինի իր յարգանքը՝ Իրանի չէզոքութեան նկատմամբ: Մոսթֆի-օլ-Մամալեքը շեշտադրում էր այն հանգամանքը նաեւ, որ Ռուսաստանի դրական պատասխանը պատճառ է հանդիսանալու, որ օսմանական բանակը եւս իրեն հեռու պահի երկրի տարածքներից ու նոյնպէս՝ հաշի նստի Իրանի չէզոքութեան հետ, որի մասին իբր խոստացել է օսմանցի առագ դեսպանը⁹: «Թեհրանից հեռագրում են,- գրում է «Այգ»-ը,- որ սեպտ. 21-ին պարսկական կառավարութիւնը դիմել է Ռուսաց Միասիային մի յայտագրով, որի մէջ ասում է, թէ Պարսկաստանը ուզում է խոսափել համաշխարհային պատերազմին մասնակցելու կործանարար հետեանքներից՝ չէզոքութիւն յայտարարելով: Նա խնդրում է, որ Ռուսաստանը օգնի իրեն այս գործում, իր զօրքերը յետ կանչելով Արրպայարականից, որպիսի դէպքում Թուրքաց դեսպանն իբր թէ երաշխատրում է, որ Թուրքիան կը յարգի Պարսկաստանի չէզոքութիւնը»¹⁰: Մինչդեռ նոյն համարում «Այգ»-ը վկայակոչելով Պետրոգրադի հաղորդմանը նշում է, որ .-«Մինիստրական խորհուրդը Սազանովի նախագահութեամբ վճռել է մերժել Պարսկաստանի առաջարկը՝ ռուսական զօրքերը յետ տանելու: Այդ մասին յայտնել է Պարսից կառավարութեանը, հասկացնելով, որ ռուս զօրքի ներկայութիւնն անհրաժեշտ է պաշտպանելու համար օրարտակայարակների շահերը եւ հասարակելու ներքին կարգը»¹¹:

Իրանի չէզոքութեան դիրքորոշման նկատմամբ հակամարտ ուժերի կողմից դրսեւորող արհամարհանքի մասին բազմիցս են անդրադարձել ժամանակի թերթերը: Ընդդիմադիր «Նորահար»-ը, յատկապէս «Ի վերջոյ ուր է գնում Իրանը» խորագրի ներքոյ գրում էր .- «... Թուրքիայի գործողութիւններն Արրպայարականում, Քերմանշահում եւ Արարպանում¹² եւ սպա՝ ռուսական պետութեան ասնձարձակութիւններն՝ Արրպայարականում, Ղազվիում, Համադանում ու Թեհրանում, առերեսոյթ արհնայի մրցասպարէզ է հանդիսացել չէզոք Իրանում, բայց խորքում սպացուցում է, որ մինչեւ Իրանը ի զօրու չլինի ինքնահաստատման ու գործնապէս երաշխատրելու չէզոքութեան պահպանումը, անհնարին է լինելու իր ինքնուրոյն քաղաքականութեան գործադրումը»¹³: Չէզոքութեան դիրքորոշման վերաբերեալ Իրանի կառավարութեան ջանքերը, գերմանա-թուրքական ուժերի կողմից դրական կեցածքի չէին արժանանում եւ մնում էին ապարդիւն, քանզի նոյնինքն մայրաքաղաք Թեհրանում աշխատող թուրքական, գերմանական եւ նոյնպէս Աւստրիական դեսպանատներն իրենց քմահաճ քայլերն ու քարոզչութիւնն էին առաջ մղում: Զորքի-

⁹ «Ռասար» օրաթերթ, 15 հոկտ 1914 թ., համար 10, էջ 2:

¹⁰ «Այգ» շաբաթաթերթ, 5 հոկտ., 1914 թ., Գ. տարի, հ.21, էջ 5:

¹¹ Նոյն տեղում:

¹² Իրանի Խուզիստան նահանգ:

¹³ «Նորահար» օրաթերթ, 13 յուլիս, 1914 թ., համար 57 էջ 1:

նակ՝ «...Տաճկական դեսպանի սրահած «Մրբազան պարերազմ» գրգռող 30.000 կեղծ «Ֆեթա»-ների ցրումը Թեհրանում, կառավարության կողմից արգելեց: Ինչպէս հաղորդում են՝ այդ թողուցիկները կողարկուն գաւառներ: Գաղտնի հասարակները շարունակում են անելի յաճախ բազմամարդ: Կառավարութիւնը ... գաղտնի հսկողութիւն է նշանակել տաճկի և գերման դեսպանատնների մօտ, որպէսզի զէնքի ցրումն արգելի: ... Այժմ էլ ասորիական դեսպանատնն է սկսել զէնքերի ցրումը ... Վերոյիշեալ երեք դեսպանատնները ամէն միջոց գործ են դնում խլրտումներ առաջացնելու և այդ նպատակով կաշառում են կառավարական պաշտօնեաներին: Նոյնիսկ մինիստրներից 3-ը, որոնք նոյնպէս կաշառած են, աշխարհում են գործել նրանց ծրագրով և ամէն հարցում թեքում են նրանց կողմը...»¹⁴:

Այս կապակցութեամբ պարսկալեզու «Նորահար» թերթը իր 1915 թի մայիսի 4-ի համարում այսպէս է բնութագրել Գերմանիայի հիւպատոսի միջամտութիւնները. - « ... Գերմանիայի նոր հիւպատոսը, որը Թուրքիայից Սպահան է գործողել, ճանապարհին ամենուր հակաքարոզչութիւն է ծառայել Ռուսաստանի և Անգլիայի դէմ և ազգաբնակչութեանը իրազեկում է, թէ իբր լոռերը, քրդերը և միւս ցեղեր հասարակականօրէն հովանաւորում են օսմանցիներին...»¹⁵:

Միւս կողմից Հիւսիսային Իրան ռուսական զօրքերի մուտքը, հակառակ իրանական կառավարութեան, խանդավառութեամբ է ընդունում տեղի ասորի և հայ բնակչութեան շրջանում: Նրանք դիմում են ռուսական զօրքերի հրամանատար Իդենիչին, առաջարկելով կամաւորական ջոկատներ ստեղծել, խնդրելով ապահովել այդ ջոկատները զէնքով ու զինամթերքով: Ռուսական զօրքերին աջակցելուց զատ նման քայլը տուեալ դէպքում տեղի հայ բնակչութեան կողմից ինքնապաշտպանական բնոյթ էր կրում, քանի որ թուրքական զօրքերի ներխուժումը նշանակում էր Հայոց Ցեղասպանութեան շարունակութիւն Իրանի տարածքում: Ընդհանուր առմամբ 1914-1918-ի թուրքական բանակների քանիցս ներխուժումների հետեւանքով Պարսկահայքի տարածքում զոհուել են հազարաւոր հայեր, իսկ մեծագոյն մասը հարկադրած գաղթել է Արեւելեան Հայաստանի կամ Պարսկաստանի տարբեր վայրեր: Հրապարակուող փաստաթղթերը լուսաբանում են 1914 թ. դեկտեմբեր և 1915 թ. յունար ամիսներին Պարսկաստան ներխուժած թուրքական զօրքերի գազանութիւնները հայ և ասորի բնակչութեան նկատմամբ:

Յայտնի է, որ Ա.Աշխարհամարտին (1914-1918թթ.) Օսմանեան բանակները երկու անգամ մուտք գործեցին չէզոք Պարսկաստան¹⁶, կատարեցին գրգռութիւններ, խժոժութիւններ, կապուտ-կողոպուտ և ջարդեր Ատրպատականի շրջաններում՝ Ուրմիայի, Մալմաստի, Խոյի, Մակուի, Ղարաղաղի (Դզմար) շրջանում, Ս.Թաղէի վանքում, ապա՝ մուտք գործելով նաեւ Թարիզ, պատանդներ վերցրին հայ բնակչութիւնից, որին պիտի հետեւէր Թարիզի հայութեան և քրիստոնեաների

¹⁴ «Այգ» շաբաթաթերթ, 1914 թ., դեկտ.7, հ. 30, էջ 4:

¹⁵ «Նորահար» օրաթերթ, 4 մայիս 1915 թ. համար 38, էջ 2:

¹⁶ Օսմանական բանակները 1905 թ-ից զատ Պարսկաստան են ներխուժել նաեւ 1908 թականին, խախտելով թուրք-պարսկական սահմանը:

կոտորածը...¹⁷: Յատկանշելի է, որ օսմանական բանակի ոտնձգությունների մասին Իրանի ԱԳՆ փաստաթղթերի տարբեր արխիվներում մատնանշում է նաև 1909 թականի ներխուժումները՝ Ատրպատականի սահմանակից քաղաքներ¹⁸:

Թուրքական զորքերի Հիսիսային Պարսկաստան ներխուժելու և տեղի քրիստոնեայ բնակչության ոչնչացման մասին վկայում է նաև Էրզրումում գերմանացի հիսպատոս Շոեքներ-Ռիխտերը, որը Գերմանիայի ռեյխսկանցլեր Բետման-Հոլվեգին 1916թ. դեկտեմբերի 4-ին գրած նամակում նշում է. «Հիսիսային Իրան Խալիբեյի արշաանքի նկարագրի էր հաշվարդար տեսնել հայկական և ասորական գնդերի նկարագրի և Հիսիսային Պարսկաստանից հայկական, ասորական և պարսկական բնակչության արտաքսումը: Խալիբեյի արշաանքը թուրքերի նկարագրի խորն արելությունն առաջացման պարճառ հանդիսացաւ»¹⁹:

Հիսիսային Պարսկաստանում հայկական բնակչության դեմ թուրքական զորքերի կողմից գործադրած բնաջինջ քաղաքականությունը վերլուծելիս հայ պատմաբան Ս. Պողոսեանը վկայաբերելով անգլիական մամուլը, նոյնիսկ նշում է, թե «Մեծ Եղեռնը սկսեց ոչ թե արեւմտահայերի, այլ արեւելահայերի և պարսկահայերի ջարդերով: Դրա վկայություններից մէկն է, որ, ի տարբերություն Արդուլ Համիդի, Երիտթուրքերը ծրագրել էին իրականացնել ոչ միայն արեւմտահայերի (թուրքահայերի), այլև արեւելահայերի (ռուսահայերի ու պարսկահայերի) ոչնչացում, այսինքն՝ խօսքը ողջ հայության ամբողջական բնաջնջման մասին էր՝ անկախ հայատարակությանից: 1914թ. վերջերին եաթաղանի զոհ են դառնում Պարսկահայքի, Արտպատականի, Բասենի, Արդինի, Արդահանի և մի քանի ուրիշ գաւառների հայերը»²⁰:

«1914-ի վերջին,- շարունակում է Սր. Պողոսեանը,-գործողության մէջ դրեց Ուրմիայի նեպոտական ասորիների բնաջնջման ծրագիրը: Խնդիր էր դրած վերացնել այն բոլոր ոչ-թուրք տարրերին, որոնք անջատում էին թուրքերին Բաբի և Իրանական Արդրեջանի թուրք-թաթարական բնակչությունից»²¹:

«Յեղասպանության ժամանակակիցների և ուսումնասիրողների տեսադաշտում եղել է հիմնականում Արեւմտահայոց Գողգոթայի և Արեւմտեան Հայաստանի հայագրկման փաստը: Երիտթուրքական վարչակարգը դրել էր ընդհանրապէս հայ ժողովրդի ոչնչացման հարցը: Յեղասպանությունն ընդգրկել էր և՛ Արեւմտեան Հայաստանը, և՛ Պարսկաստանի հայաբնակ վայրերը, և՛ Արեւելեան Հայաստանը: Կորո-

¹⁷ Ամուրեան Ա., *Արտպատականի հայության վիճակը թուրքական բանակների ներխուժման օրերին*, Թեհրան, 1979, էջ 5:

¹⁸ Իրանի ԱԳՆ փաստաթղթերի և դիւանագիտության պատմության կենտրոն, արկղ 42, գործ 16, թղթածրար 2:

¹⁹ Позиция немецкого консула в Эрзеруме Шойбнера-Рихтера в Армянском вопросе, см.: «Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии», сб. Ереван 1995, с. 421.

²⁰ Պողոսեան Ստեփան, *Հայոց Յեղասպանության պատմություն*, հ. 3, հրատ. Երեւան, 2011, էջ 7-8: Տե՛ս նաև «The Round Table», London, June, 1917:

²¹ Նոյն տեղում:

րածների առաջին զոհերը 1914 թ. վերջերից դառնում են Արարչարարականի հայերը՝ կապած վերոյիշեալ շրջաններ թուրքական զորքերի ներխուժման հետ»²²:

Այսպիսով՝ հայերի ցեղասպանութեան պրակտիկ գործադրումը սկսել էր Երիտթուրքական կլիկի 1915 թականի ապրիլի 15-ի տխրահռչակ հայասպան հրաման գրից ամիսներ առաջ եւ նրա առաջին զոհերը դարձան Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող հայերը²³:

Այդ իրողութիւնը չեն ժխտում նաեւ իրենք՝ թուրքերը:

Պանթուրքիզմի գաղափարախօսներից Թեքին Ալիի կարծիքով՝ Իրանի բնակչութեան 1/3 –ը թուրքական արին ուներ եւ պէտք է վերադառնար իր ցեղակիցների գիրկը: Իսկ դրա համար պարտադիր պայման էր այդ տարածքներից նաեւ հայերի անհետացումը: Թուրքերը մեծ թով հայերի, արաբների, անգամ պարսիկների արին հեղեցին²⁴ պարսկական տարածքներում: «Եւ սեփական աչքերով տեսայ, գրում է ռուսական առաջին բանակի փոխհրամանատար Կ. Մարիկեանը,- հարիրաւոր ծածկած դիակներ ընկած փոսերում, գարշահորութիւն, որ վարակել էր օղը, տեսայ գրուիւր հարած դիակներ, քարերի վրայ կացինով կրրած ձեռներ, սրունքներ, պոկած մտարներ, դուրս քաշած գանգեր, դիակներնփայրակների եւ տասննեակ զոհածներ՝ ցանկապատրերի տակ...Սպանութիւններ կատարել են հայկական շար գիղերում»²⁵:

1915 թ. յունարին, երբ Կովկասեան ճակատում թուրքական բանակը յարձակողական գործողութիւններ էր ծաւալել, նրան միացած՝ Համիդիէն եւ Չեթէները, կենտրոնացան Ալաշկերտի դաշտում եւ սկսեցին հայերին կոտորել: Այս կոտորածները տարածելով հասան Վանի նահանգ եւ Ուրմիա լճի շրջանները: «Էնէրի փեանն՝ արինարբու Ճեպրեթ եւ ազգայնական Խալիլը թրքական բանակի գլուխն անցած ասպարակեցին հիւսիսային Պարսկաստան եւ հայկական ու ասորական գիղերը իրենց յարձակումներուն թիրախ հանդիսացան: Գիշարիչներէ, հալածական թոչուններու նման հայերը փախուստ կուտային ամէն ուղղութեամբ՝ասպաստան գլուխու համար...»²⁶:

Այս իրադարձութիւնների մասին Սիմոն Վրացեանը 1915 թականի յունարի 1/14 –ին Թիֆլիսից ՀՅԴ Ամերիկայի կենտրոնական կոմիտէին յղած նամակում գրում է. « ... Այդ պանիկայի միջոցին հրաման է տրտում Պարսկաստանի եւ Ալաշկերտի զօրամասերին յետ քաշել, սկսում է յետ գալ եւ Արարչարարականի ռուս զօրքը, որի հետ գաղթում են Աղբակի

²² Հայոց պարմութիւն. Հիմնահարցեր հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը, խմբ. պրոֆ. Հր. Ռ. Սիմոնեան, Երեւան 2000, էջ 249:

²³ Նոյն տեղում, էջ 250:

²⁴ Այս իրողութեան մասին պարսկերէն «Ռաադ» թերթը իր 1915 թ. յունարի 20-ի համարում (3-րդ էջ) գրում է, որ « ... Արարչարարական ներխուժելուց յետոյ թուրքերը մի քանի հայերի եւ ռուսահայարակների հետ միասին գնդակահարել են Սոուջբուլաղի եւ Մարաղայի քաղաքների կառավարիչներին»:

²⁵ Պօղոսեան Ստեփան, նշւ. աշխ., 3 –րդ հ, էջ 7: Տե՛ս նաեւ ՀԱԱ, ֆ. 4712 , ց.2, գ. 2, թ. 1:

²⁶ Նոյն տեղում: Տե՛ս նաև Շիրակեան Ա., Կրակն էր նահարակներուն, Բէյրութ, 1992, էջ 42:

և Սալմասարի հայերը: Կարիք կայ՝ ասելու թե՛ ինչ տեղի կացության մէջ ընկել է այդ ժողովուրդը այս ցրտին: Գաղթում են և Թարիզից, որը անցել է թուրքերի ձեռքը»²⁷:

Այս մասին կրկին խոսարովանել են նոյնինքն ջարդարար թուրքերը.- «... Պարսկաստան ներխուժող թրքական բանակի հրամանատար Խալիլ Բէյը 1914- ի վերջերին և 1915 թ.- ի սկզբին, երբ պարտություն կրեց հայ կամաւորական գնդերից (Անդրանիկի գլխատրոյութեամբ, Դ.Մ.) և ռուս բանակից, անցաւ Վան և այնտեղ Ջեղերթին (Վանի կուսակալ) յայրնեց, որ «մաքրել» է Ուրմիայի և Սալմասարի քրիստոնէաներին, Ջեղերթն էլ պարտասարել էր «մաքրելու» Վանի և Վասպուրականի հայերին»²⁸: «Մաքրման» այսպիսի բազմաթիւ գործողութիւնների են դիմել թե՛ քրդերը և թե՛ թուրքերը, երբ յատկապէս հայ կամաւորականներից պարտություն կրելով, դրա վրէժը լուծում էին հայ ազգաբնակչութիւնից, որոնք էլ ստիպած գաղթում էին իրանական տարածք, որն անելի ապահով էր համարում²⁹: Այդ մասին վկայել են իրանական պաշտօնական աղբիւրները ևս, փաստելով, որ «1914-1915թթ. հազարատր հայ գաղթականներ «մուսիօ քեռիի» գլխատրոյութեամբ Արեւմտահայաստանից Սալմասար են գաղթել»³⁰:

Խալիլ Բէյի մատնանշած պարտութիւնը վերաբերում է Դիվանի հոչակաւոր ճակատամարտին, ուր «... իրեն փայլուն կերպով դրսևորեց Անդրանիկը 1915 թ.-ի սարիլին, որտեղ նրա ջոկատը ջախջախեց Խալիլ Բէյի կրպակը և կանխեց Իրանական Ադրբեյջանից գերմանա-թուրքական զօրքերի Անդրկովկաս ներխուժելու վրանգը»³¹:

Անդրէ Ամուրեանը (Տէր Օհանեան) իր փաստարկները հիմնաւորել է տրամադրութեան տակ ունեցած մի քանի փաստագրութիւն – արխիւով, ուր օրը օրին արձանագրւած են թուրքական ներխուժող բանակի այն բոլոր անիրաւութիւնները, սպանութիւններն ու գրգռութիւնները, որոնք կատարել են պարսկական Ատրպատականում: Այդ փաստագրութեան հեղինակը Թարիզի ֆրանսիական միսիոնարութեան պետ՝ Հայր Պ. Ֆրանսէնն է, որը պատերազմի ժամանակ նշանակւած է եղել իբրև հիւպատոս Սպանիայի և Հոլանդիայի, հովանաւորելու համար Ատրպատականի քրիստոնէայ տարրերին:

Ուրմիայի ֆրանսիական միսիոնարութեան կոյսերը օրը օրին օրագիր են կազմել և տեղեկագրել Թարիզ՝ Հայր Պ. Ֆրանսէնին, և նա դիմումներ է կատարել ու միջոցներ ձեռք առել փրկելու անմեղ տարրերին, որոնք գոհն էին թուրքական վայրագութիւնների: Այսպէս, օրինակ, թուրքերը ներխուժում են Ուրմիայի ֆրանսիական միսիոնարների շէնքը և սպանում նրա պետ՝ հայր Սոնտագին, եկեղեցու

²⁷ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, տպ. «Ալիք», էջ 587:

²⁸ Ամուրեան Ա., նշլ. աշխ., էջ 6:

²⁹ Իրանի Ազգային արխիւի կազմակերպութիւն, GH1332-K66-p 38-47:

³⁰ Իրանի ԱԳՆ փաստաթղթերի և դիւանագիտութեան պատմութեան կենտրոն, արկղ 66, գործ 71, թղթ. 43:

³¹ Աղայեան Ծ.Պ., Զօրավար Անդրանիկի գործունէութեան մասին, «Պատմա-բանասիրական հանդէս», 1968, № 2, էջ 43:

բակում: Նրա արեան հետքը պահում է տարիներ շարունակ, ապա յուշարձան է կանգնեցում անմեղ նահատակի արեան հետքի վրայ³²:

Հայր Պ. Ֆրանսէ'նի վկայութիւնները խիստ արժէքատու են նրանով, որ վկաները օտարազգի են՝ ֆրանսիացի, հոլանդացի, սպանացի, եւ օրը օրին արձանագրել են ամէն անցուդարձ³³: Սա ինքնին վերստին ապացուցում է Մեծ Եղեռնի ոչ թէ արեւմտահայերի այլեւ արեւելահայերի եւ ի մասնաւորի պարսկահայերի ջարդերի սկսմամբ:

Այստեղ կը ցանկանայինք կարճ ակնարկով անդրադառնալ Ուրմիայի, Խոյի, Սալմաստի եւ շրջանի կոտորածներից հրաշքով ազատածների վկայութիւններին, քանի որ նրանք ժամանակին ականատես են եղել թուրքական գազանութիւններին: Այսպէս, Խոյ գաւառի Թաղեր գիւղից Շուշանիկ Բէյութեանցը գրում է, որ «1914-ի դեկտեմբերեան նահանջին, երբ ռուսները Բաշկալաէն (Ադրակ) եւ Արրայաւրականէն կը քաշին, ռուսները տեղական հայերը իրենց հետ կը տեղափոխեն Կովկաս եւ Սալմաստի, Ուրմի շրջաններու նման Խոյն ալ գաղթի կը դիմէ: Դեկտեմբերի վերջերը ռուսները յայտարարեցին, որ իրենք յետ կը դառնան եւ հայերն ալ պէտք է իրենց հետ նահանջեն (ուրիշ պատմողներ կը պատմեն, թէ կամաւորները կը պարտաւորեցնեն նահանջել՝ չկորուրելու համար): 200 րունէ բաղկացած հայ թաղամասը բռնեց գաղթի ճամբան: Գիւղին մէջ մնացին միայն մի քանի ծերեր, որոնցմէ 3 –ը սպանած են, միւսները կան»³⁴:

Իսկ Յակոբ Խորոզեանցը, Սալմաստ գաւառի Հալթան գիւղից, 1916 թ. վկայել է հետեւեալը. «1914թ. դեկտեմբերի սկզբները, Սունայի շրջանի քիւրդերը Ամիրխանի ցեղապետ Զհանգիր Աղայի առաջնորդութեամբ յարձակեցան Մահլամ եւ Սառնա զուր հայաբնակ գիւղերուն վրայ եւ հրդեհեցին Խոյի դէգերը եւ յառաջեցան դէպի այդ գիւղերը, սակայն գիւղացիներու եւ ռուսներու բռնու ընդդիմութեան հանդիպելով՝ կը փախան: Դեկտեմբերի 18-ին, երբ ռուսները տաճարական սահմաններէն յետ նահանջեցին, ժողովուրդը իրենց հետ արտագաղթել փոխ դէպի Կովկաս: Տուները մեծ մասամբ այրած են կամ փայտերը վառելու համար քանդած: Վառած է Շէթան-Ասայի դպրոցը, դպրերու տրահը, Ս. Ասրաւածածին եկեղեցին (ուխարարելի): Այրողները տեղական թուրքեր են: Ամբողջ Սալմաստի շրջանին եկեղեցիները սաւրի են րւած, զանգակարոնները ջարդած կամ գնդակներով ծակուրած են:

Հալթան՝ 650 րուն, Խոսրովի մաստրաբնակ, որի մէջ կայ 20 րուն հայ բնակչութիւն, Մարա՝ 180 րուն հայ բնակչիւն, Հին քաղաք՝ 125 րուն հայ, Սառնա՝ 180 զուր հայաբնակ, Մահլամ՝ 270 րուն զուր հայաբնակ, Շէթանասա՝ 15 րուն հայ, Դրիշլի՝ 35 րուն հայ, Քօչամիշ՝ 25 րուն հայ, Քալաշան՝ 20 րուն, Փայաջուկ՝ 400 զուր հայաբնակ, Դալասար՝ 200 րուն զուր հայաբնակ, Ախարախանասա՝ 80 րուն հայ, Դըլջանա՝ 60 րուն, Սարամերիկ՝ 85 րուն, Հարդան՝ 12 րուն, Ուլա՝ 6 րուն, Գիլիզան՝ 4 րուն, Փաթատը՝ 3 րուն, բոլոր վերոյիշեալ գիւղերը գաղթի ճամբան բռնեցին դեկտեմբերի 20-24-ի

³² Ամուրեան Ա., նշու. աշխ., էջ 5:

³³ Նոյն տեղում, էջ 6 :

³⁴ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 21 շրջ., բնագիր, ձեռագիր:

ընթացքին: Այդ արեւները Աղբակի շրջանի հայերն ալ ռուսներու հետ նահանջեցին եւ Սարմասր եկան, որոնք սարմասրցիներու հետ Կովկաս անցան, մի մասը տեղացիներու հետ միասին Սարմասրի շրջանը մնացին: Արոնց մէջ 700 հոգի, գլխաւորաբար տղամարդիկ, ջարդուցան չարաչար տանջանքներով, ոմանց վիզը դրան շէմքին վրայ դրած՝ նաջարով (կացին) կրրած են, ոմանց՝ գնդակահարած, ոմանց՝ անդամահարած եւ տանջանքներով սպաննած, ուրիշներուն ողջ-ողջ այգիներու պարերու տակ են թաղած: Զարդը տեղի ունեցած է թուրք հրամանաւորար Խալիլ Բէյի հրամանով: Զօրքերուն մասնակցեցան Սոմայի Թիմուր աղայի եւ Ջահանգիր աղայի քուրդերը եւ հայերու ունեցած ամբողջ սրացածքը թալանեցին:

Տեղացի թուրքերը կին ու երեխաներ պահած են (պարմողը պահողներուն անունները չի յիշեր), մի տան մէջ հասարած, կողոպտած, հազար ու մի անարգանքի ենթարկած են եւ սպա, ռուս զօրքի վերադարձին, վերադին, ազարած՝ Կովկաս են անցած»³⁵:

Վերոգրեալ վկայութեան դիպուկ փաստարկ է նաեւ հետեւեալ մէջբերումը «Կակկազ» թերթից . - «Խոստովան մի մեծ գիւղ էր, ուներ 500 ընտանիք, այժմ լրիւ անայացել է »³⁶:

1915 թ. փետրարի 14 –ի գիշերը Խոստովա եւ Մահլամ գիւղերում սպանեց 707 հայ: Այդ մասին կրկին Կ. Մատիկեանը գրում է Կովկասեան բանակի հրամանատարութեանը. «Մինչեւ ամսի 14 –ը հայերը շնորհիւ պարսիկների մնացել էին անվնաս: Բայց թուրքական կառավարութիւնը ... սպառնաց պարժել բոլոր այն պարսիկներին, ովքեր կը թաքցնէին քրիստոնէաներին ... Կայմակամ Ռուսթամ Բէյը հրամայեց քրդերին ու զինուորներին պարսիկների փնտրից հանել քրիստոնէաներին եւ սպանել նրանց թաքցնողներին: Հրամանը կատարուեց անմիջապէս... հայերին տարան Հարիւսան եւ Խոստովա գիւղերը, որտեղ էլ ... տանջանքներով սպանեցին...»³⁷:

Յաջորդ վկայութիւնը Մկրտիչ քին. Տէր Պետրոսեանինն է՝ Ուրմիա գաւառի Մահմադքեար, Նաղադէ եւ Գեարդաբադ գիւղերի կոտորածների մասին.-

«1. Մահմադքեար եւ Նաղադէ գիւղերուն մասին- Պաշտօնավարութեանս վայրը՝ Սուրուզ գաւառամասը, 1914թ. դեկտեմբերի 7-ին Մուսուլի կողմի Դիզէի ըսած քիւրդ աշիրէթներու եւ թուրք բաշիրոզով զօրքերու կողմանէ յարձակումի ենթարկուեցաւ: Սուրուզի եւ Ուրմիայի շրջանի մէջ եղած ռուս զօրքերը, որոնք թոռցիկ խումբեր կազմած այդ կողմերն էին, ընդառաջեցին: Հերեւանքը այն եղաւ, որ ռուսները նահանջեցին դէպի Ուրմիա, իսկ քիւրդ խումբանք թալանի տաս Մահմադքեար հայ եւ ասորի գիւղը (մօտ 80 ծով ունեցող, կէտը հայ են, կէտը ասորի), քշեցին տարին տասար, ոչխար եւ փայտի կահ – կարասիներ: Հերեւեալ օրը յարձակեցան Նաղադէ գիւղին վրայ, չթալանեցին, միայն ձիաւորներով տեղատուցան հայ հարուստներուն տուները: Վերջիններս զգուշանալով, որ յարձակում գործողները կարող են սպանութիւններ, առեւանգումներ եւ բռնաբարութիւններ գործել, կապաւորանին իրենց հարեան քիւրդերուն

³⁵ ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ.424, թ.17-ի շրջ. եւ 18, բնագիր, ձեռագիր:

³⁶ ՏԵՍ «Կակկազ», 04.01.1915 թ.:

³⁷ ՀՀ ՊԿՊԱ ՀՔԿ փաստաթղթեր, ֆ. 4712, թղթ. 2, գ. 2:

տոնները: Ձիատորները մօտ 5 օր կուրեն, կը փչացնեն հայ հարուստներուն ունեցած – չունեցածը եւ կը տանին բոլոր պղնձեղէնները, սամաւարները, կանաչի զարդերը եւ այլն: Մենք այդ մասին բողոքեցինք Սոուշ-Բուլաղի մէջ եղած թուրքերու հրամանատարին, այն հրամայած էր վանեցի Ճեմալ Էֆենտիին, որ թալանած իրեղէնները յետ տրին եւ հայերու հետ խաղաղ ապրին: Ճեմալ Էֆենտիին իրեն եղած հրամանի հիման վրայ կանչեց ինձ եւ հայ ակաակալներուն (ծերերուն) եւ խօսքը ինձի ուղղելով ըսաւ. «Փախազ Էֆենտի, ժողովուրդիդ կը յայտարարես, որ իրենց գործին կենան, երկրագործը իր գործին երթայ, առեւտրականը՝ իր առեւտրին, եւ եղած անկարգութիւններուն վերջ կուտամ: Ըսէ՛ք, որ միամիտ մնան տեղի հայերը, եթէ անոնք կը կասկածին կոտորածէն, միթէ՞ մեր երկիրը քրիստոնէայ չկար կոտորէինք, որ գայինք այստեղ քրիստոնէաներ կոտորելու»: Այդ խօսքերուն վրայ, մենք հանգստացած դուրս եկանք:

Այնուհետեւ քիւրտ աշիրէթներուն եռուզեռը աւելի սաստկացաւ: Նոյն Ճեմալ Էֆենտիին հրամանով ոստիկանները ամէն օր կուգային եւ կը պահանջէին հաց, իւղ, գառ, ոչխար, բրինձ, տեղաշորեր, հեշտաւեռ պղնձէ կաթասներ: Ամէն ինչ, որ կը տանէին վերադարձնել չկար: Նորէն դիմումներ եղան նոյն Ճեմալ Էֆենտիին, բայց ապարդիւն, որով վերադարձայ Ուրմիիմ ծննդավայրը, դեկտեմբերի 13-ին:

2. Ուրմիի Գեարդաբադ գիւղին մասին. 1914թ. դեկտեմբեր 13-ին ներկայացայ Ուրմիայի Առաջնորդական փոխանորդ Խորէն վարդապետ Լազարեանին եւ պատմեցի եղած անցուդարձի մասին: Դեկտեմբերի 19 –ին եւ մեր գիւղն էի, երբ Առաջնորդին նամակը ստացայ, որով գրած էր՝ նամակս առնելուդ պէս աշխատեցէք քոպէ առաջ ձեր հոգին ազատել, որովհետեւ ռուսական զօրքը կը նահանջէ: Ամէն ինչ թողեցինք, դուրս եկանք: Մենք Դիւմանի, Խոյի վրայով 14 օրայ ընթացքին հազիւ հասանք Զուլֆա՛շնորհի տակալի ցեխին: Յղի կանայք վիժեցին երեխաները, քանի՛-քանի՛ երեխաներ տեսայ, որ ձիւնի վրայ էին ձգուած:

Գաղթողներս 7-8000 հոգի էինք: Մեր գիւղը 150 տուն ունէր, բոլորը մեզ հետ գաղթեցին, միայն 46 հոգի գիւղը մնացին, մնացածներէն 14 հոգի սպանուած են, որոնցմէ 4 –ընդամաւով, 3-ը՝ կին, 2-ը՝ պարսկի, 2-ը՝ աղջիկ:

Սպաննուածներէն դրազ մը: Մայր մը իր երկու աղջիկները իրենց մեծ մօրը (տատը) մօտ կը թողու, կը փախչի: Մեծ մայրը երկու երեխաներն առած, գիւղի հարուստներէն մէկուն թոնիրին մէջը կը պահուրդի: Թալանչիները կը նկատեն, որ թոնիրին մէջ մարդիկ կան, կը քարկոծեն եւ այնքան քարերով կը հարուածեն, մինչեւ 3 –ն ալ շունչը կը փչեն:

Ուրմիայի հարսապի կողմը եղած հայ եւ ասորի ժողովուրդը չէր կարողացած գաղթել: Անոնք կը հաւաքին Ուրմիայի ամերիկեան միսիոներներու հովանաւորութեան ներքոյ: Անոնք բոլորն ալ կազարտին կոտորածէն: Միսիոներներու մօտ սպասարանած էին 16 000 հայ, ասորի, որոնք գլխաւորապէս միսիոներներու հաշիւին կապրէին: Տուներու մէջ այնքան էին հաւաքուած, իրար վրայ դիզուած, որ վարակիչ հիւանդութիւնները ծայր առին, այնպէս, որ մեռնողներուն թիւը օրական 10-16 հոգիի հասաւ»³⁸:

³⁸ ՀԱՍ, ֆ. 227, ց. 1, գ. 424, թ. 14, շրջ-15 շրջ., բնագիր, ձեռագիր:

Տեալ իրադարձությունների մասին ամերիկեան գործակալ թ.Ալէնը տեղեկագիր է ներկայացրել, որն բացի ասորիներից ուղղակիորեն առնչում է պարսկահայերի ջարդերին: Մինչև աշխարհամարտի սկիզբը ռուսական զորքերը գրավել էին Ատրպատականի հիւսիսը: Գրեթէ նոյն ժամանակ Համիդիէն յարձակեց Մարգաւարի եւ Թարգաւարի պարսկական գիւղերի վրայ: Ռուսական զորքերի հետ այդ գիւղերի բնակիչները գաղթեցին Ուրմիա: Հոկտեմբերին թուրքերը յարձակեցին Ուրմիա քաղաքի վրայ: Սակայն Բլրի ճակատամարտում թուրքերն ու քրդերը պարտուեցին եւ նահանջեցին: Բայց թուրքերին յաջողեց առաջանալ: Դեկտեմբերի 31-ին զորքերն ընդհանուր նահանջի հրաման ստացան : Ասորիները նոյնպէս հեռացան. Նրանց զգալի մասը ճանապարհին մեռաւ: Սօտ 800 ասորի ոչնչացեց տեղում: Յարձակման ենթարկուեցին նաեւ հայերը: Թուրքերը գրաւեցին քաղաքն ու Ուրմիայի հարթավայրը: 1915 թ. յունւարի 1-ից մայիսի 24-ը « *Բոլոր քրիստոնէական գիւղերն ու մուսուլմանական գիւղերում բնակող քրիստոնէաները թալանեցին, տղամարդիկ սպանեցին, կանայք անարգուեցին , մօտ 200 աղջիկ գերելալուեց: Շարերին ստիպեցին մահմեդականանալ, հազարատրները մահացան հիանդություններից*»: 1915թ.-ի մայիսի 24-ին ռուսները վերադարձան. նրանց հետ՝ նաեւ ասորիները: Օգոստոսին նորից ռուսները նահանջեցին: Թուրքիայում բնակող ասորիները հայերի հետ միացած փախսան Վանում եւ Մարմարայում գտնուող ռուսական բանակի գրաւած շրջանները: Հետագային, ռուսական բանակի հետ նահանջելով, հայ գաղթականները հաստատուում են Խոյ, Սալմաստ եւ Ուրմիա գաւառներում³⁹:

Ուրմիայի հայերին եւ ասորիներին օժանդակող կոմիտէի նախագահ, քահանայ Ու. Շէյքը վկայում է, որ Պարսկաստանի հիւսիս – արեւմտեան շրջաններում կատարուած ջարդերի ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է թուրքերի վրայ, նրանք էին կոտորած ու թալան իրականացնողները⁴⁰:

Սալմաստի Սարա գիւղից Սիմոն Ղազարեանի վկայութիւնը , 1916 թ.-ին.-

« *Դեկտր.-ին ռուսներու նահանջին արեւն, ինչպէս Սալմաստի միւս գիւղերը, մեր գիւղն ալ նահանջեց: 400 տուն բնակչութիւնը վայրկէսապէս գաղթի ճամբան բռնեց, 200- է աւելի անկարող ճամբորդելու , ծերեր եւ մի քանի ընտանիքներ ամբողջովին գիւղը մնացին, ամբողջ կանայք հասարած են մի փոս մէջթալանած, բռնաբարած, մեծ մասին կոտորած են, իսկ միաները՝ փախուստի դիմած: Սարայէն Ջուլֆա, մինչև ծունկերնիս ձիւնի, ցեխի մէջ թաթախած կը ճամբորդէինք: Շարերը մեռան, մեր տղան ցրտահար եղաւ, թաղեցինք ձեան մէջ, ճամբաներս շարունակեցինք: Ողջ մնացողները մեծ մասամբ Երկիր են վերադարձեր »⁴¹:*

1915 -ին ռուսական բանակը, որ առաջացել էր մինչև Սուլդուզ, Սոուջպուլաղ, թերեւս առ ի զգուշութիւն, կրկին յետ է նահանջում մինչև Ուրմիա: Տեղի հայ եւ ասորի ժողովուրդը կասկածելով, որ նրանք այդ շրջանից եւս կարող են նահանջել դէպի Սալմաստ, մտավախ, մեծագոյն մասը լքելով տունուտեղ, հապճեպ գաղթում

³⁹ U.S. State Department Record Group 59, 867. 4016/39/: Տե՛ս նաև Պօղոսեան Ստ., *նշլ. աշխ.*, հ. 2, էջ 445 :

⁴⁰ Նոյն տեղում, 59, 867.4016/270/: Տե՛ս նաև Պօղոսեան Ստ., *նշլ. աշխ.*, էջ 446 :

⁴¹ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 404 , թ 11 շրջ., բնագիր, ձեռագիր:

են դեպի Սալմաստ, Ջուլֆա, Թարիզ եւ այլուր... Ու դեռեւս 1914 –ի աշնանից առգոյ էին ոռուսական նահանջի նախանշանները, որի մասին եւս «Այգ»-ը իր 1914 –ի հոկտեմբերեան համարում ահագանգ է հնչեցրել *«Դրույթինը Ուրմիայում»* խորագրի ներքոյ, ընդգծելով, որ «... Իրօք, եթէ ոռուսական զօրքը այստեղից շարժի, Ուրմիան կորած է. այդ դէպքում մանասանդ քրիստոնեայ ազգարնակչութեան սպազան կը դառնայ ահար »⁴²:

Վերոգրեալի ապացոյց է նաեւ ստորեւ մէջբերող՝ Սալմաստի Ղալասար գիւղի բնակիչ Թագուհի Օհաննէսի Վարդանեանի վկայութիւնը.-

« 1915 թ. յունարի 5-ին ոռուսները Բաշկալէի կողմերէն նահանջելու ստիպուած կամուրներու հետ միասին մեզ տեղահան ըրին, որպէսզի ետեւէն եկող թիրաքները կորորած չսարքէին: Մենք մինչեւ անգամ ճանապարհի հասց վերջնել չկարողացանք: Ամէն ինչ գիւղը մնաց, որը մեր գաղթելէն յետոյ թալանած են: Գիւղը մնացին ամէն տունէն մի, երկու կամ անելի անձինք, 18 հար գեղեցիկ կին ու աղջիկ առեւանգած են, անպատուրուած, 9-է անելի կին, երեխայ եւ մարդ անհետ կորած են: Անցեալ 1915-ի գարնան, երբ մեր մարդիկ Ղալասար գացին, այստեղ տեսած են ջրհորի եզերքին ձգուած արհմտոր տղոց մը. ջրհորը նայած գրած են 7-ը դիակ, որոնցմէ 4-ը կողմարդու, 3-ը՝ կնոջ: Մոլոցով կորուած գլուխներէն 6 –ը դիակներու մօտ ձգուած էին, միայն մէկին գլուխը չեն գրած...»⁴³:

1915 թականի սկզբների Ատրպատականի հայութեան կոտորածների վառ վկայութիւն է ներկայացրել անգլիացի հռչակաւոր պատմաբան Անտոյ Ջ. Թոյնքին, հայոց ջարդերին նիւրած իր հանրածանօթ *«Մի ազգի սպանութիւնը»* գրքում: Գրքի տուեալ հատածը, որն ներկայացում է ստորեւ, անգլերէնից թարգմանաբար մէջբերել է Անդրէ Ամուրեանը.-

«Հաֆթանում եւ Սալմաստում առանց գլուխների 850 դիակներ գրնւեցին՝ միայն հորերից եւ ջրամբարներից հանած: Ինչո՞ւ: ՈՐՈՎՇԵՏԵԻ ՀՐԱՄԱՅՈՂ ՊԱՇՏՕՆԵԱՆ ՄԻ ԳԻՆ ԷՐ ԴԻԵԼ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՄԵՆ ՄԻ ԳԼԽԻ ՀԱՄԱՐ: Միայն Հաֆթանից 500 –ից անելի կանայք եւ աղջիկներ են ուղարկուած Սուջուլաղի քիւրդերին: Եթէ կարող էք, երեսակայեցէք այս դժբախտ արարածների բախար: Դիմանի քրիստոնեաներից մի մեծ խումբ բանար ներսեց եւ պարտադրուեցին, որ իսլամանան: Տղամարդկանց թիւստեցին: Ուրմիոյ շրջակայքի ամենահարուստ գիւղը՝ Գիլիարջան, հիմնայաբակ կործանեց, տղամարդիկ սպանուեցին, գեղեցկադէմ կանայք եւ աղջիկները առնուեցին, նոյնը պարտաւեց Բաքտոտիին: Հարիւրաւոր կանայք խորունկ գետը նետուեցին, երբ տեսան, որ իրենց քոյրերից շարերը ասագակախմբերի կողմից բռնաբարում էին օրը ցերեկով, ճամբի մէջտեղը: Նոյնը եղաւ նաեւ Սոլդուզի շրջանի Միանդուարում:

Այս խժոժութիւնները տեղի են թում օտարներին, բայց թուրքերի համար բոլորովին թեթեւ էին նկատում, ինչ որ մօտերս կատարում էին իրենց հողամասի վրայ...»⁴⁴:

⁴² «Այգ» շաբաթաթերթ, 1914, հոկտ. 19, Գ. տարի, հ. 23, էջ 1:

⁴³ ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ.424, թ. 7-ի, շրջ., բնագիր, ձեռագիր:

⁴⁴ Ամուրեան Ա., նշւ. աշխ., էջ 21-22:

Այսպիսով, հիսիսային Պարսկաստան թուրքական զորքի ներխուժմանը հետևեցին հայ և ասորի բնակչության կոտորածները, հայկական և ասորական գիղերի ավերումը: Այս պայմաններում հայկական և ասորական բնակչությունը դիմում է ռուսական զորքերի հրամանատարությանը, առաջարկելով կամավորական զնդեր կազմել և համատեղ պայքարել թուրքական զորքերի դեմ: Պարսկական ճակատում ռուսական զորքերի 1916թ. առաջխաղացումը օգնեց կանխել Ասորպատականի հայության կատարեալ բնաջնջումը:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԲՆԱԿԶՈՒԹԵԱՆ (ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ) ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1914-1916ԹԹ.

Դերենիկ Մելիքեան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հիւսիսային Պարսկաստան թուրքական զորքի ներխուժմանը հետևեցին հայ և ասորի բնակչության կոտորածները, հայկական և ասորական գիղերի ավերումը: Այս պայմաններում հայկական և ասորական բնակչությունը դիմում է ռուսական զորքերի հրամանատարութեանը, առաջարկելով կամաւորական գնդեր կազմել և համատեղ պայքարել թուրքական զորքերի դէմ: Պարսկական ճակատում ռուսական զորքերի 1916թ. առաջխաղումը օգնեց կանխել Ատրպատականի հայութեան կատարեալ բնաջնջումը: **Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, ասորիների ցեղասպանություն, Առաջին աշխարհամարտ, Հյուսիսային Իրան, Ատրպատական:

THE MASSACRES OF THE CHRISTIAN POPULATION (ARMENIANS AND ASSYRIANS) IN NORTHERN IRAN IN 1914-1916

Derenik Melikyan

SUMMARY

The invasion of Turkish troops and military operations in the north of Iran in 1914-16 were accompanied by the mass extermination of the Christian (Armenian and Assyrian) population, who, for their salvation, turned to the command of the Russian army with the proposal of creating and arming volunteer brigades. Numerous eyewitness accounts show a picture of Turkish atrocities. The advance of Russian troops on the Persian front in 1916 helped prevent the complete elimination of the Armenians of Atrpatakan.

Keywords: Armenian genocide, genocide of Assyrians, First world war, Northern Iran, Atrpatakan.

РЕЗНЯ ХРИСТИАНСКОГО НАСЕЛЕНИЯ (АРМЯН И АССИРИЙЦЕВ) В СЕВЕРНОМ ИРАНЕ В 1914-1916 ГГ.

Дереник Меликян

РЕЗЮМЕ

Вторжение турецких войск и военные действия на севере Ирана в 1914-16 гг. сопровождалось массовым уничтожением христианского (армянского и ассирийского) населения, которое для своего спасения обратилось к командованию русской армии с предложением создания и вооружения добровольческих бригад. Многочисленные свидетельства очевидцев показывают картину турецких зверств в Северном Иране. Продвижение русских войск на Персидском фронте в 1916 г. помогло предотвратить полное уничтожение армян Атрпатакана.

Ключевые слова: геноцид армян, геноцид ассирийцев, Первая мировая война, Северный Иран, Атрпатакан.

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1920-1924 ԹԹ.)

Նարինե Մարգարյան

Երիտթուրքական կառավարության կողմից իրագործված Հայոց ցեղասպանության կարևոր բաղադրիչ էր արևմտահայ բնակչության տարագրումը Սիրիական անապատներ: Վերջիններիս զանգվածային ներկայությունը Սիրիայում նորանոր խնդիրներ էր առաջացնում: Հայ տարագիրները սկզբից նեթ պետք է ինտեգրվեին երկրի սոցիալական կյանքում, քանի որ բարեգործական ընկերությունների, միսիոներական կազմակերպությունների կողմից տրամադրվող օգնությամբ նրանք երկար չէին կարող գոյատևել:

Հոդվածում վերլուծվում է հայ տարագիրների ինտեգրումը Սիրիայի սոցիալական կյանքում ընդհուպ մինչև 1924թ.: Ներկայացվում են տարագիրների առջև ծառայած սոցիալական խնդիրների աստիճանական լուծումները, հայ-արաբական փոխադարձ աղապտացումը, ինտեգրման ճանապարհին հանդիպող խոչընդոտները, արաբ ժողովրդի ու կառավարության ձեռնարկած միջոցառումները և հարակից մի շարք այլ խնդիրներ:

Ցեղասպանությունից հետո աստիճանաբար հայ տարագիրները վերածվում են համայնքի՝ սեփական կառավարման և ինքնակառավարման համայնքային կառույցներով: Համայնքը դառնում է մի կառույց, որն ուներ իր նպատակը, խնդիրները, և որոնց լուծմանը մասնակցում են տվյալ էթնիկ խմբին պատկանող անհատները¹: Փաստորեն, Հայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում ապաստանած հայերը 1920-ական թվականների կեսերին վերաձևավորում են տեղի հայ համայնքը:

Սփյուռքին նվիրված աշխատություններում համայնքին տրվում է հետևյալ ընդհանրական սահմանումը: Համայնքներ են համարվում «արտագաղթի հետևանքով այլ պետություններում բնակվող և գործունեություն ծավալող խմբերը, որոնք պահում են հոգևոր և նյութական կապն իրենց հայրենիքի հետ»²: Համայնքն այս պարագայում «միայն մարդկանց կոնգլոմերատ չէ, այլ սոցիալական օրգանիզմ, որն ունի մի ընդհանուր էթնիկ հենք»³: Ազգագրագետ Լ. Աբրահամյանի կարծիքով Սփյուռքի առաջացման պատճառների հիմքում, որպես կանոն, ընկած են պատմական ողբերգությունները, դրա ապացույցն է նաև Հայոց ցեղասպանությունից հետո հայկական սփյուռքի ձևավորումը⁴:

¹ Տի'ու Гриншилдс Х. Т., *Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915-1939гг.*, Ереван, 1982/2, էջ 13:

² Dufoix St., *Diasporas*, London, Berkeley and Los Angeles, 2008, p. 21.

³ Дятлов В., Мелконян Э., *Очерки социокультурной типологии. Армянская диаспора*, Ереван, Институт Кавказа, 2003, с. 12.

⁴ Տի'ու Абрамян Л., *Армения и армянская диаспора: Расхождение и Встреча*, “21-й Век”, номер 2, 2005. էջ 143:

Համայնքը չի կարող չինտեգրվել բնակության երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական համակարգերում, դա բնականոն գործընթաց է, ինչպես նաև համայնքը բնորոշող առանձնահատկություն: Մինևույն ժամանակ համայնքի բնորոշ հատկանիշներից մեկն այն իրողությունն է, որ վերջինիս անդամները վստահ են, որ չեն դարձել և հնարավոր է, որ չդառնան իրենց ընդունող հասարակության լիիրավ անդամ, ուստի իրենց մի փոքր մեկուսացած ու օտար են զգում⁵:

Անդրադառնալով Միրիայի հայ տարագիրներին՝ հարկ է նշել, որ նրանք ընդունող երկրում անցնում են ինտեգրվելու մի քանի փուլեր: Հատկանշական է, որ եթե սկզբնական շրջանում տարագիրներին առնչվող հարցերն ու խնդիրները հիմնականում քննարկվում են արաբների կողմից հայ տարագիրներին ցուցաբերվող օգնության, ապա 1920-ական թթ. սկզբից՝ հայ-արաբական համագործակցության և փոխօգնության համատեքստում, զուգահեռ ներկայացվում են նաև ֆրանսիական մանդատային իշխանությունների ունեցած դերակատարությունն ու միջամտությունը Միրիայում հայ տարագիրների ինտեգրման և հայ-արաբական փոխհարաբերությունների գործընթացում:

Անդրադառնալով հայ տարագիրների վիճակին՝ առաջին հերթին պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ ևս, որ ցանկացած ազգային փոքրամասնության գոյավիճակ պայմանավորված է ընդունող երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով և մշակութային մի շարք առանձնահատկություններով: Առաջին հերթին պետք է հաշվի առնել, որ հայերը Միրիայում հայտնվում են մի ժամանակաշրջանում, երբ դեռ Առաջին համաշխարհային պատերազմը չէր վերջացել, սով էր, ու Միրիան դեռ համարվում էր Օսմանյան կայսրության մաս: Բացի դրանից, հայ տարագիրները ցեղասպանությունը վերապրելուց հետո առավել զգուշավոր էին դարձել ու անվտանգության հարցին լուրջ էին վերաբերվում: Հայտնվելով Միրիայում՝ նրանք հայտնվել էին նոր միջավայրում, որտեղ կային մի շարք էթնիկական տարբերակիչներ, որոնցից էին ոչ միայն կրոնը, այլ նաև լեզվական, մշակութային և այլ գործոններ: Տարբերակիչ հատկությունների այս համադրությունը, որը ստեղծում էր մուսուլմանական միջավայրը, սահմանազատիչ կարևոր նշանակություն է ունենում հայ տարագիրների համար՝ նպաստելով սեփական էթնոմշակութային անհատականության պահպանմանը:

Նոր հասարակության մեջ տարագիրների ներգրավումը ժամանակավոր ու անցողիկ գործընթաց է, սակայն նոր ստեղծվող հասարակության մեջ շատ կարևոր է, որ լինի երկուստեք, փոխադարձ ադապտացում: Տեղի բնակչությունը նույնպես չէր կարող իրեն լիովին անվտանգ զգալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարագիրները սկզբնական շրջանում նրանց համար անձանոթ տարր էին:

Նոր հասարակության մեջ տարագիրներին հարկավոր էր կարգավիճակ՝ քաղաքացիություն, կեցության իրավունք, գրանցում, աշխատանքի թույլտվություն, անվտանգություն, ինչը պետական խնդիր էր: Նման խնդիրները չէին կարող լուծվել անհատի մակարդակով: Պատահական չէ, որ տարագիրների շրջանում աստիճա-

⁵ Տե՛ս Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 16:

նաբար ձևավորվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հասարակական կազմակերպություններ, որոնք, բացի իրենց առջև դրված խնդիրներից, օգնում են մարդկանց ներգրավվել երկրի հասարակության մեջ, որը համայնքը տանում է դեպի ակտուալացում⁶:

Քաղաքացիություն չունենալը բազմաթիվ քաղաքական և սոցիալ-տնտեսական դժվարություններ էր առաջ բերում: Հայ տարագիրները, գրկվելով Թուրքիայի քաղաքացիությունից ու ձեռք չբերելով այն երկրների քաղաքացիությունը, որտեղ հայտնվել էին, ականայից դարձել էին առանց քաղաքացիության անձինք: Նրանք չէին կարող լիարժեք օգտվել քաղաքացիության իրավունքից, այդ թվում՝ այնպիսի կենսական բնագավառներում, ինչպիսիք են աշխատանքի և ապրուստի միջոցներ հայթայթելը, ուսումը, տեղաշարժվելը, սեփականություն ունենալու իրավունքը և այլն: Այսինքն՝ նրանք գտնվում էին ավելի նվազ նպաստավոր դրության մեջ, քան տվյալ երկրի քաղաքացիները⁷:

Ամերիկացի սոցիոլոգ Ս. Դադը Սիրիայում ապաստանած հայ տարագիրների վերաբերյալ գրում է. «Երբ որ ժողովուրդը հսկայ զանգուած մը կը ձգէ իր պապենական բնագաւառը և կը տեղափոխուի նոր երկրի մէջ՝ յոյժ խնդրական կը դառնայ կռահել, թէ ինչպիսի նոր տնտեսական, ընկերային եւ քաղաքական հարցեր կրնան ստեղծուիլ երկրին մէջ, որ իրենց նոր բնակավայրը պիտի ըլլայ»⁸: Նման դեպքում, ինչպես նշում է հեղինակը, արդյունքը կարող է դրական կամ բացասական լինել՝ կապված մի կողմից ներգաղթողների օգտակարության՝ տվյալ երկրին ծառայելու գործոնի հետ, մյուս կողմից էլ նրանց ընդունող երկրի՝ վերջիններիս օգտակարությունը գիտակցելու և իր երկրի շահերին ծառայեցնելու կարողության հետ: «Ինչ էլ որ ըլլայ արդիւնքը՝ պետք է որ զանոնք նոր միջավայրին պատշաճեցնելու որոշ քաղաքականութիւն մը ընդգրկուի: Կամ այն է, որ ներգաղթողներու հոգատարութիւնը պետք է ստանձնուի եւ կամ թէ ժամանակի ընթացքին անոնք կը մարսուին եւ կիրացուին բնիկ տարրէն»⁹:

Ս. Դադի նշած բոլոր նկատառումներն այս ժամանակահատվածի հայ-արաբական փոխհարաբերություններում առկա են՝ սկսած հայերի կարողությունների օգտագործումից մինչև կառավարական միջոցառումների ձեռնարկումը՝ հայ տարագիրների վիճակը բարելավելու համար: Այստեղ հայերի համար գրեթե բացառվել է տեղի բնակչությանը ձուլվելու հանգամանքը:

Կարևոր է նաև տվյալ ժամանակահատվածի ղեկավարների դիրքորոշումը, որոնք առավելագույնս պետք է շահագրգռված լինեին տարագիրների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու խնդրով: Այս պարագայում Սիրիայում հայտնված հայերի և երկրի ղեկավարների հարաբերություններն ունեին որոշակի

⁶ Տե՛ս Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 29:

⁷ Տե՛ս Հակոբյան Հ. Վ., *Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը*, Երևան, «Աստղիկ», 2002, էջ 390:

⁸ Վարժապետեան Ս. Յ., *Հայերը Լիբանանի մէջ, Լիբանանահայ նորոգ գաղութին կազմավորումը*, Պէյրոյթ, «Սեւան», 1981, հ. Բ, էջ 30:

⁹ Նույն տեղում:

առանձնահատկություններ, քանի որ սկզբնական շրջանում դեռ երիտթուրքական իշխանություններն էին, Ֆեյսալի կառավարման տարիներին (1918-1920 թթ.) արդեն ձևավորվել էր ազգային փոքրամասնություններին ցուցաբերվող պետական աջակցության միտում: Ֆրանսիական մանդատի տարիներին (1920-1924 թթ.) նկատում ենք, որ հայերի հանդեպ քաղաքականությունը մի քանի անգամ փոփոխության է ենթարկվում, մինչև հայ տարագիրներն իրենք արդեն աստիճանաբար կարողանում են վերագտնել իրենց ու կայանալ:

Հայ տարագիրները, հայտնվելով Սիրիայում, հավելյալ ճնշում էին գործադրում աշխատավարձերի չափերի վրա՝ անուղակիորեն նպաստելով արաբների շրջանում գործազրկության աճին: Անապատի համակենտրոնացման ճամբարներից խուսափելու համար հայ տարագիրները պատրաստ էին ցանկացած աշխատանքի: Նրանք, աստիճանաբար աշխատանքի նոր ասպարեզներում իրենց դրսևորելով, դժգոհությունների տեղիք են տալիս տեղի արաբների շրջանում: Եվ չնայած ստեղծված իրավիճակին՝ Ս. Վարժապետյանը նշում է. «...գաղթականներուն հոս ըլլալը կրնայ դժուարին մը նկատուիլ Սուրիոյ համար, սակայն ինչ որ պ ըլլայ պարագան, գնահատելի է, որ Սուրիայ կը գիտակցի այս հարցին լրջութիւնը, կ'ընդունի զայն որպէս պարտականութիւն»¹⁰:

Դեռևս Հայոց ցեղասպանության տարիներին Ջեմալ փաշան Թուրքիայի տարագիր հայ արհեստավորներին Դամասկոս էր ուղարկում՝ տեղում արհեստները զարգացնելու, շինարարությանը զարկ տալու համար: Օսմանյան բանակի համար կենսական նշանակություն ունեցող երկաթուղային փոխադրությունը, երկաթուղաշինական աշխատանքների ճնշող մեծամասնությունը նույնպես հայերն էին կատարում:

Արաբների տեսանկյունից միանգամայն հիմնավոր է թվում այն մտահոգությունը, որ աղքատության եզրին կանգնած հայերը տեղի արաբ աշխատավորների աշխատավարձն «անազնիվ» մրցակցության պայմաններում էլ ավելի էին նվազեցնում: Տարագիր հայերն անցանկալի էին համարվում՝ «ծովը թափուելիք» ապրանք: Տեղական մամուլը երբեմն հայերին որակում էր «վնասակար մրցակիցներ» և «անհաատարիմ հիւրեր»¹¹, կար նաև այն կարծիքը, որ «Հայերը եկած են եւ իրենց երկրին պէրէքեթը փախցուցած են»¹²:

Հայ տարագիրների կեցության և բնակության հարցերի մասին խոսելիս մի փաստ պետք է նկատել, որ Սիրիայում հայերը համախմբվելու միտում ունեին: 1920-ական թվականներին տարագիրները կենտրոնացած էին հիմնականում Հալեպ, Դամասկոս, Ալեքսանդրետ քաղաքներում՝ ի վնաս գյուղական բնակավայրերի:

Հայ տարագիրների կենտրոնացված ապրելն ուներ իր հիմնավոր պատճառները, որը հիմնականում կապված էր անվտանգության հարցի հետ: Այդ պատճառով նրանք հակառակվում են ֆրանսիացիների՝ իրենց գյուղական վայրեր տեղա-

¹⁰ Վարժապետեան Ս. Յ., *նշվ. աշխ.*, էջ 33:

¹¹ Վարժապետեան Ս. Յ., *նշվ. աշխ.*, էջ 68:

¹² Տառեան Վ., *Դէպի անսպասք (փրկուած էջեր օրագրէս)*, Նիւ Եորք, «Կոչնակ», 1945, էջ 165:

փոխելու սկզբնական փորձերին: Նրանք առաջարկում են իրենց բնակեցնել ավելի անվտանգ վայրերում՝ Ալեքսանդրոսի սանջակում, սակայն հայերը մերժում են ոչ միայն Եփրատի ու Հարավային Հատուրանի շրջանում վերաբնակվելը, այլև անգամ Հալեպի հարակից շրջաններ տեղափոխվելը¹³:

Հայերը, 1915թ. հայտնվելով Սիրիայում, ձգտում էին հասնել տնտեսական և սոցիալական փոքր-ինչ կայունության՝ առաջնորդվելով ներհամայնքային համերաշխության մեխանիզմներով: Եվ պատահական չէ, որ շատ արագ ձևավորվում են արդյունավետ գործող, բազմաթիվ ենթակառուցվածքներով արհեստակցական միությունները, կրոնական, բարեգործական, մշակութային, սպորտային կազմակերպությունները, դպրոցները, առևտրական պալատները: Հայերի շրջանում նկատվում է ազգային ինքնությունը պահպանելու մեծ ձգտում, երկրորդ անգամ ծնունդ են առնում կուսակցությունները: Փոխօգնությունն այս համակարգի բաղկացուցիչ մասն է, անգամ գործիքը ներքին սոցիալական վերահսկողության, կառավարման և կարգավորման համար¹⁴:

Ֆեյսալի իշխանության տարիներին հայ տարագիրները փորձում էին սոցիալապես կայանալ, որին մեծապես նպաստում են վերջինիս ընդունած մի քանի որոշումները պարտքերի հետաձգման, բյուջեից որոշ գումարներ հայերին տրամադրելու վերաբերյալ: Բացի այդ, ինչ-որ չափով մեղմացել էր ցեղասպանությունը վերապրելու ցնցումը, նրանք սկսել էին հարմարվել ու յուրացնել կենցաղը, տիրապետել լեզվին: Վրանաքաղաքները վերածվել էին նրանց համար մշտական բնակության վայրի, ու քչերն էին մտածում այդտեղից տեղափոխվելու մասին: Դա պայմանավորված էր մի քանի պատճառով: Նախ՝ առանձին տեղափոխվելը նրանց համար ընդունելի տարբերակ չէր, երկրորդ՝ տնտեսական այդ ճգնաժամի պայմաններում հայերը դեռ ի վիճակի չէին վճարելու տեղափոխման ծախսերը և գյուղում բնակվելու, որտեղ միայն կապիտալ ունենալու դեպքում նոր հեռանկարներ կարող էին ունենալ: Եվ ամենակարևորը, ոչ ոք նրանց չէր ստիպում տեղափոխվել, այսինքն՝ չկար կառավարական որևէ որոշում, որը կստիպեր նրանց տեղափոխվել: Ընդհանուր առմամբ Ֆեյսալի իշխանության տարիներին հայ տարագիրներից շատերը չէին կարող լուրջ հաջողությունների հասնել տնտեսության մեջ, նոր գործարաններ, արտադրություններ հիմնել: Այս շրջանում նրանք սահմանափակվում էին առօրյա ապրուստի խնդիրները հոգալով. հիմնականում օրավարձով էին աշխատում կամ մանր առևտրով էին զբաղվում:

Հալեպի «Աթ-Թակադդում» թերթը բավականին խոր անդրադարձ ու վերլուծություն է կատարել նաև հայերի՝ Սիրիայում ունեցած ներդրմանն ու ընդգծել նրանց կատարած գործը: «Տարագիրների ազդեցությունը» հոդվածում կարդում ենք. «Ճշմարտությունից շեղված չենք լինի, եթե հայտնենք մեր երկրի որոշ բնակիչներին, որոնք դժգոհ են Անատոլիայի տարագիրների մեզ մոտ գալուց, որի արդյունքում աշխատող ձեռքի աճ ունենք: Վերջինիս պակասը կար մեր երկրում

¹³ Տե՛ս Гриншилдс Х. Т., *նշվ. աշխ.*, էջ 10:

¹⁴ Տե՛ս Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 33:

... Տարագիրներից շատերն արդյունաբերական աշխատանքներում փորձ ունեն, աշխուժացնում են աշխատաշուկան: Եթե չլինեին հայ տարագիրները, որոնք ցանում են, հնձում, ապա շատ հողեր անմշակ կմնային»¹⁵:

Բացի դրանից, արաբները դժվար էին համակերպվում այն փաստի հետ, որ հայերը կարող էին հաջողությունների հասնել առևտրի բնագավառում՝ համարելով դա իրենց մենաշնորհը: 1924 թ. «Սուրիահայ տարեցոյցում» նշվում է. «Սուրիահայ յայժմ իր մէջ կը պահէ 150 հազարի մօտ տարագիր և տեղացի հայութիւն, որուն թէ տեղացին և թէ ֆրանսական կառավարութիւնը հիւրասէր ընթացք մը կը ցուցնեն և հայերն ալ լաւագոյն յարաբերութիւններու մէջ են անոնց հետ, մանաւանդ եթէ երկրագործութեամբ պարապելով Սուրիոյ հողը օգտագործէին և առևտրական գործը տեղացիին թողուին»¹⁶:

Հայ տարագիրների՝ սոցիալական ոլորտում արձանագրված հաջողությունների փաստին են անդրադարձել ժամանակակից արաբ պատմաբանները՝ քննելով դրա պատճառները: Վերջիններս հայ տարագիրների էթնիկ վարքագծի մեջ նկատում են իրենց արագ վերագտնելու, համակերպվելու և դրան զուգահեռ ազգային ինքնությունը պահելու միտում: Սոցիալական ոլորտում բավականին կարճ ժամանակամիջոցում նրանք զգալի հաջողությունների են հասնում, ինչը նաև սիրիացի ժողովրդի դրական վերաբերմունքի արդյունքն էր: Չնայած հայերը ստիպված էին աշխատել օրվա ապրուստի համար, բայց դրան զուգահեռ հիմնում էին դպրոցներ, մշակութային հաստատություններ և այլն: Հայ տարագիրները գործում էին տարբեր բնագավառներում՝ զուգահեռաբար ու արդյունավետ: Իրենց պահում էին առողջ բանականություն ունեցող մարդու նման, մի երկրում, որն իրենց հոգատարություն էր ցուցաբերել:

Մուսա Պրենսը հայ տարագիրների համար նշում է երկու կարևոր հատկանիշ, առանց որոնց դժվար կլիներ հաղթահարել ցեղասպանության բարդությունը: Հայկական էթնոհոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ նա եզրակացնում է, որ հայի տեսակն ունի ցեղային երկու բացառիկ հատկություն. «առաջինը՝ ընտելացումի հատկությունն է, երկրորդը՝ կենսունակութեան»¹⁷: Այս երկու հատկություններն են պայմանավորում հայկական լինելիությունը:

Ապաստան տվող երկրներում, որտեղ հետազայում կազմավորվում, իսկ որոշ տեղերում էլ վերակազմավորվում է հայկական սփյուռքը, Մ. Պրենսի կարծիքով «պետք չկայ ընտելացումի ապացոյցներ տալու»¹⁸: Հեղինակն անժխտելի է համարում նաև հայ ազգի կենսունակությունը, որը նա դրսևորում է կյանքի գործունեության բոլոր իրավիճակներում:

¹⁵ صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ، ص 185.

Հայկազի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին Օսմանյան պերությունի մեջ ու Սիրիայում, Ա. Քեշիշյանի խմբագրությամբ, Դամասկոս, էջ 185:

¹⁶ «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 295:

¹⁷ Պրենս Մ., Հայկական լինելիությունը, տե՛ս «Ազդակ», 19 օգոստոս, 1967 թ.:

¹⁸ Նույն տեղում:

Արաբական երկրների էթնոմշակութային հարցերով զբաղվող Ն. Միգլիորինոն հայ տարագիրների համար նույնպես նշում է մի քանի բնորոշիչ հատկություններ՝ առաջին հերթին ընդգծելով նրանց վճռականությունն ու ձգտումը Սիրիայում իրենց Հայաստանը կամ հայկականը վերականգնելու ուղղությամբ: Հայտնվելով էականորեն տարբերվող, մասամբ նաև թշնամական միջավայրում՝ տարագիրները փոխօգնության էին ձգտում՝ դժվարությունները և ճգնաժամերը հաղթահարելու համար: Հայ տարագիրների մեջ «...վերականգնելու վճռականությունը բխում էր առկա համայնքի ուժեղ համախմբվածությունից ու այն փաստի գիտակցումից, որ ցեղասպանությունն, իրոք, կարող է ոչնչացնել հայկական մշակույթը»¹⁹:

Հայ տարագիրների սոցիալական իրավիճակի բարելավման համար հարկ է մեջբերել Օսման Աթ-Թուրքի դիտարկումը. «Երբ նրանք ուղք դրեցին մեր հողի վրա, սեփական ձեռքերից բացի ոչինչ չունեին: Նրանք իրենց կատարած ծանր աշխատանքով վաստակեցին իրենց ապրուստը: Եվ այդ դժվարությունների հետ մեկտեղ նրանք հասարակության մեջ իրենց հարգալի տեղը զբաղեցրին, մասնակցեցին երկրում արտադրության զարգացմանը, տնտեսության մակարդակի աճին»²⁰:

Բացառությամբ Կիլիկիայի մի քանի շրջաններից եկած հայերի, մյուսները հիմնականում թշվառ վիճակում էին հասել Սիրիա: «Հայերն այստեղ հաստատվում են դատարկության և ունայնության մեջ»²¹: Միայն սեփական աշխատանքն է նրանց օրվա ապրուստն ապահովում: Հայերը կարողանում են դուրս գալ տարագրի, ցեղասպանության գոհի կարգավիճակից ու աստիճանաբար ինտեգրվել սոցիալական կյանքում՝ դառնալով Սիրիայի տնտեսական կյանքի կարևոր օղակներից մեկը: Հետագոտողների մեծ մասը հայ տարագիրների վերոնշյալ հատկանիշներն են համարում նրանց վերապրելու և տարածաշրջանի ամենակենսունակ ու ծաղկող համայնքներից մեկը դառնալու նախապայմանը²²: Ուսումնասիրողներից շատերը փաստում են, որ հայ տարագիրների ինտեգրումը Սիրիայում, ի տարբերություն Լիբանանի, ավելի սերտաճած էր ու ավելի արագ տեմպերով էր իրականանում²³:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հայ տարագիրների համար միշտ առկա է եղել վրանաքաղաքներից տեղափոխվելու խնդիրը, որոնց առկայությունը տարագիրների համար ուներ իր դրական և բացասական կողմերը: Տարագիրներն այդտեղ մնում էին երբեմն կամավոր, երբեմն էլ՝ ստիպողաբար, բայց պարզ է, որ

¹⁹ Migliorino N., *(Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis*, Studies in Forced Migration, Oxford, 2008, vol 21, p. 47.

²⁰ عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، حلب، 1960، ص 284.

Օսման Աթ-Թուրք, *Էջեր հայ ժողովրդի պատմությունից*, Հալեպ, 1960, էջ 284:

²¹ تيارى كوشو يت، بحثاً عن مكان، اندماخ الارمن الاقتصادي في لبنان، أرم 1939-1917، ص 245.

Թիլարի Քուշվեյթ, *Հայերի տնտեսական ինտեգրումը Լիբանանում*, տե՛ս «Հայերը 1917-1937», խմբ.՝ Ռ. Գևորգյան, Բեյրութ, «Համազգային», 2010, էջ 245:

²² Ст'у Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 109:

²³ فاهي طاشجيان، من مخيمات لاجئين الى احياء حضرية، أرم 1939-1917، ص 125، 23.

Տե՛ս նաև Թաշճյան Վ., *Գաղթականական վրանաքաղաքից դեպի հայրուկ թաղամասեր*, տե՛ս «Հայերը 1917-1939», էջ 125:

խոսքը չքավորների մասին էր: Գաղթականների գրասենյակի սիրիական ներկայացուցիչ Ջորջ Բուտնին վկայում է, որ արդեն 1926 թ. վրանաքաղաքների բնակիչները կարող էին փոխադրվել քաղաք, բայց դեռ նախընտրում էին մնալ այդտեղ՝ փող խնայելու համար: Պետք է հաշվի առնել, որ այդ շրջանում գաղթականներն ապրում էին ավելի բարվոք վրանաքաղաքներում: 1925 թ. դրությամբ 100-ից 33.9 տոկոսը զբաղվում էր ասեղնագործությամբ, 25.9 տոկոսը առևտրով ու բանվորությամբ²⁴: Չնայած հայ տարագիրները չէին խուսափում աշխատանքից, սակայն ծանր տնտեսական վիճակը լուրջ խոչընդոտներ էր ստեղծում նաև նրանց համար: Իսկ վրանաքաղաքներում ապրելով՝ հայ տարագիրներն, իսկապես, կարող էին գումար խնայել, սակայն այդ իրավիճակը երկար չի տևում:

Սկզբնական ժամանակահատվածում իշխանություններն արտոնել էին հայ տարագիրներին հող հատկացնել, որտեղ և ստեղծվել էին վրանաքաղաքները, բայց այդ հողերը պատկանում էին հալեպցի հողատերերին: Վերջիններս ժամանակի ընթացքում սկսում են իրենց հողերը հետ պահանջել: «...հայերը կ'ապրէին հոն առանց վարձք վճարելու եւ հողատէրը նախապես վարձք պահանջած էր, բայց ֆրանսիական կառավարութիւնը արգելք եղած էր»²⁵: Հողատերերի պահանջների արդյունքում հայ տարագիրները պետք է նրանց հողի վարձ ու ջրի տուրք վճարէին, բայց նրանց «արտոնված չէր այդ հողերի վրա տուն կառուցել»²⁶: Ամենայն հավանականությամբ, հայ տարագիրներն այդ վճարումները հողատերերին չեն արել՝ ֆրանսիական իշխանության պաշտպանությունն ունենալով, երբեմն էլ սոցիալական ծանր վիճակի պատճառով: Այս ընթացքում վրանաքաղաքներն աստիճանաբար վերածվել էին հյուղակների, և տարագիրները, անկախ սոցիալական կարգավիճակից, չէին փորձում այդտեղից դուրս գալ: Բնական է, կառավարությունը երկար չէր կարող ստիպել հողատերերին հայ տարագիրներին իրենց հողերի վրա պահել, քանի որ դա կարող էր հանգեցնել հայերի և տեղի արաբ բնակչության հարաբերությունների վատթարացմանը: Վրանաքաղաքները նաև լուրջ առողջապահական խնդիրներ էին ստեղծում: Ֆրանսիական կառավարությունը փորձում էր հայ տարագիրներին հասկացնել, որ այս իրավիճակը երկար չի կարող շարունակվել, իսկ հայերն էլ փորձում էին որքան հնարավոր է ժամանակ շահել:

Հարկ է նշել, որ հայ տարագիրները միշտ նախընտրում էին կենտրոնացված ապրել՝ պայմանավորված էթնիկ և տնտեսական գործոնների փոխկապակցվածությամբ: Էթնիկ գործոնն ուներ երկու մակարդակ. առաջին մակարդակում այն տարածվում էր համայնքի վրա ամբողջությամբ, երկրորդ մակարդակում գործում էր համերկրության սկզբունքը: Հայ տարագիրների ապրելակերպն ու վարքագիծը, որն ուղղված էր կենտրոնացվածությանը, պայմանավորված էր նաև տնտեսական գործոնով:

²⁴ Տե՛ս Կրիշչիլոս թ., *Հայ Գաղթականներու տեղափորումը Հայէպի մէջ 1920-1939*, տե՛ս «Գեղար», Սուրիական Տարեգիրք, 1976-1978 միացեալ թիւ, Բ գիրք, Հայեպ, «Շարք», էջ 262:

²⁵ Նույն տեղում, էջ 262-263:

²⁶ Վարժապետեան Ս. Յ., *նշվ. աշխ.*, էջ 40:

Ֆրանսիական կառավարությունը մտավախություն ուներ հայ տարագիրների՝ մեծ քաղաքների, թեկուզ և ծայրամասերում համախմբված բնակություն հաստատելու փաստից²⁷: Նախ, չափազանց կենտրոնացումը երբեմն ավելի էր խորացնում սոցիալական դժվարությունները: Բացի դրանից, հայերը կարող էին համագործակցել արաբների հետ ընդդեմ ֆրանսիացիների:

Իրավիճակն ավելի է բարդանում, երբ 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրով Ֆրանսիան պարտավորվում էր երկու ամսվա ընթացքում հեռանալ Կիլիկիայից: Պայմանագրի 6-րդ հոդվածը, որով Թուրքիան խոստանում էր հարգել «փոքրամասնությունների իրավունքները», արդեն չէր կարող վստահություն ներշնչել Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչությանը, հատկապես հայերին և հույներին: Փաստորեն Կիլիկիա մեկնած հայերը կրկին անցնում են տարագրության ճանապարհը դեպի Սիրիա: Ֆրանսիական կողմը միջոցներ էր ձեռնարկում՝ արտագաղթը կասեցնելու համար: Նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսար, Արևելյան բանակի ընդհանուր ղեկավար գեներալ Գուրոն համոզում էր Կիլիկիայի ազգաբնակչությանը վստահել պայմանագրով իրենց տրված իրավունքներին ու մնալ տեղերում, բայց գործընթացը դուրս էր եկել վերահսկողությունից ու տարերայնորեն շարունակվում էր:

Սկզբնական շրջանում ֆրանսիական իշխանությունները մերժում են Սիրիայում ընդունել Կիլիկիայից արտագաղթողներին, անգամ հրաժարվում էին նավեր տրամադրել հայերին, որպեսզի նրանց դուրս բերեն այդտեղից: Միայն միջազգային հասարակական ճնշման տակ համաձայնում են վերջիններիս ընդունել Սիրիայում: Շուտով ֆրանսիական իշխանությունները գաղթականների տեղավորման միջոցներ էին ձեռնարկում, որպեսզի Հալեպն ու այլ հայաշատ քաղաքներ չխճողվեն նորեկներով: Սկզբում Բարձրագույն կոմիսարությունը ցանկանում էր հայ գաղթականներին կենտրոնացնել թուրք-սիրիական սահմանագծից հեռու շրջաններում՝ թուրքական կողմին սիրաշահելու համար: Ռոբեր դը Քենը՝ Բարձր կոմիսարության պաշտոնակատարը, հրաման էր տվել ֆրանսիացի սպաներին տարագիրներին տեղավորելիս առաջնահերթությունը տալ հարավային շրջաններին: Մինչդեռ հայտնի է, որ հայ տարագիրները նախապատվությունը տալիս էին քաղաքային բնակավայրերին: 1922թ. հունվարին Դամասկոսում արդեն հաստատվել էին 6000 հայեր: Հալեպը և Համան նույնպես հարմար էին այդ տեսակետից: Դյորթ-Յուլի մոտ 14 հազար տարագիրների մի մասն ապաստանել էր Ալեքսանդրետի ծայրամասի «արևմտյան գաղթակայանում»՝ Հալեպ-Բեյլան ճանապարհի երկու կողմերում՝ չորսից-հինգ հազար հայերով, իսկ մյուս մասն էլ՝ «արևելյան գաղթակայանում»՝ 7-8 հազար գաղթականներով: Նրանք բնակվում էին իշխանությունների օգնությամբ կառուցված տնակներում, որտեղ տիրող վատ տնտեսական պայմանների պատճառով Ալեքսանդրետի շրջանից 2500 մարդ փոխադրվում է Լաթաքիայի շրջան և տեղավորվում Տարտուսում, Բանիասում և այլ բնակավայ-

²⁷ Ֆրանսիական կառավարությունը նաև մտավախություն ուներ, որ հայերի՝ ճամբարներում կենտրոնացած բնակվելը կարող է նպաստել նաև կոմունիստական տրամադրությունների աշխուժացմանը:

րերում: Լաթաքիայի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Ներսես Վարդ. Տոլապճյանի՝ Սահակ կաթողիկոսին հասցեագրված 1922 թ. հունվարի 3-ի ձեռագիր նամակում կարդում ենք. «Տարաբաղո փախստականների հարազատների մի մասը՝ 2500-ի մօտ Լաիողիկէի օտար ավուները հասած էին... կառավարութիւնը զինորներույ օգնութեամբ ցամաք հանեցինք և քաղաքի քանի տեղեր տիրաւորած ենք. թէ կառավարութիւնը, թէ տեղացիք կը վստահեցնին, որ այս երկրի մէջ ժողովուրդը աւելի հանգիստ պիտի ապրի, քան ուրիշ երկրներ»²⁸:

Հալեպի «Աթ-Թակադդում» թերթն իր 1922 թ. «Հայ տարագիրները Հալեպում» խորագրի տակ գրում է. «Շարունակվում է հայերի ու հույների գաղթն Անատոլիայից դեպի Սիրիա արդեն հայտնի դեպքերի պատճառով»: Թերթը տեղեկացնում է, որ ֆրանսիական կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում հայ տարագիրներին ապաստան տալու և նրանց բուժման համար միջոցառումներ կազմակերպելու գործին: Վերջիններիս ժամանակավոր կեցության համար հատկացվել են Խան Ալ-Թաթին և Խան Ալ-Քուլի վայրերը: Թերթը հավելում է. «Բարձրագույն կոմիսարի պահանջով գումարներ են տրամադրվել հայ տարագիրներին տներ վարձելու, ինչպես նաև նրանց համար սնունդ հայթայթելու համար»²⁹:

Թերթն իր էջերում պարբերաբար անդրադառնում էր հայ տարագիրների խնդիրներին ու տեղեկացնում տեղական ու ֆրանսիական իշխանությունների կողմից վերջիններիս ցուցաբերվող օգնության մասին: «Տարագիրների զբաղմունքը» հոդվածում նշվում է. «Տեղական կառավարությունը և ֆրանսիական պատվիրակությունը, տեղի բնակչությունը մարդասիրական վերաբերմունք են ցուցաբերում այդ թշվառների նկատմամբ»³⁰, ինչպես նաև 1923 թ. կրկին նշվում է. «Կառավարությունը, բարեգործական ընկերությունները, անհատները ջանքեր են գործադրում՝ թեթևացնելու հայ տարագիրների վիճակը»³¹:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագիրը բացառեց կիլիկիահայերի վերադառնալու հավանականությունը: Այնպես որ Սիրիայում ապաստանած հայերը պետք է տեղում փորձեին հաստատվել ու առաջ գնալ: Ստեղծված նոր իրավիճակում փոխվում է հայ տարագիրների Սիրիայում մնալու ձևաչափը: Նրանք սկսում են մշտական բնակության մասին մտածել, որը խթանում է նրանց ներգրավվածությունը Սիրիայի սոցիալ-տնտեսական և արդյունաբերական կյանքում: Այս իրողությունը ևս մեկ փաստ էր, որը լարում էր մտցնում հայ-արաբական փոխհարաբերություններում:

Հարկ է նշել, որ Առաջին աշխարհամարտից հետո Հալեպի մեքենաշինական, մետաղագործական, կաշվի ու կոշիկի, ակնեղենի, հյուրանոցային, ժամագործական և այլ ձեռնարկությունների 20-50 տոկոսի սեփականատերերը հայեր

²⁸ ՀԱԱ, ֆ. 421, ց. 9, գ. 4, թ. 1:

²⁹ صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية، ص 177-178. Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը..., էջ 177-178:

³⁰ Նույն տեղում, էջ 179:

³¹ Նույն տեղում, էջ 186-187:

էին: Ավելի նշանակալից էր հայերի դերն առողջապահության ոլորտում³²: Հայերի ձեռքում էին կենտրոնացած նաև ճարտարապետությունը, լուսանկարչությունը, գեղարվեստական բացիկների արտադրությունը, երաժշտական գործիքների, նվագարանների և ձայնապնակների առևտուրը³³:

Հայ արհեստավորները զգալիորեն զարգացնում են արհեստագործությունը, հատկապես գորգագործությունը, որը գրեթե նորություն էր Սիրիայում: Մինչ այդ Սիրիայում կային մի քանի գորգագործական արհեստանոցներ, որոնք հիմնականում արտադրում էին քիլիմ կամ այսպես կոչված քրդական գորգեր: Իսկ հայերը կարճ ժամանակահատվածում կարողանում են գորգագործությունը բարձր մակարդակի հասցնել:

Բրիտանացի Յ. Բարթն իր զեկուցագրում տալիս է Հալեպում հայ տարագիրների աշխատանքային ներգրավվածությունն ըստ մասնագիտությունների՝ նշելով. «Հալեպում 8 հազարը զբաղվում էին ասեղնագործությամբ ու գորգագործությամբ, 6 հազարը բանվորներ ու ծառայողներ էին, 5377-ը՝ առևտրականներ և 623-ը՝ բժիշկներ, ատամնաբույժներ, դեղագործներ և ուսուցիչներ: Շուրջ 5 հազար երեխաներ դպրոց էին հաճախում»³⁴:

Հայ տարագիրները կարևոր դեր են կատարում ալաջա³⁵ գործվածքի արտադրության մեջ: Հայերը Հալեպում մեծ թափով առաջ են տանում այդ արտադրությունը, որի հիմնական մասն արտահանվում էր Թուրքիա: Հայ կանայք մեծ հաջողությունների էին հասել նաև ասեղնագործության բնագավառում, ինչը նրանց մենաշնորհն էր: Կ. Եփփեի ջանքերով հիմնվել էին ասեղնագործական տներ, և հայ կանանց ասեղնագործություններն արտահանվում էին: Հարկ է նշել, որ իշխանությունները մաքսատուրքից ազատել էին ասեղնագործության համար անհրաժեշտ նյութերի ներմուծումը, իսկ արտահանվող ապրանքներից գանձվում էր ինքնարժեքի մեկ հարյուրերորդականը, ինչը նպաստում էր ասեղնագործության հետագա զարգացմանը³⁶: Այսպիսով, հայ տարագիրների՝ արհեստներին գերազանցապես տիրապետելու փաստը դառնում է նրանց ֆինանսական հիմնական աղբյուրը³⁷:

Ս. Դադի վերոնշյալ տեղեկագիրը մանրամասն ներկայացնում է այն առավելությունները, որոնք բերել են եկվոր հայերը Սիրիային. նրանք մեծ թափ են հաղորդում շինարարությանը, քաղաքների դիմագիծը սկսում է փոխվել: Նա նշում է, որ

³² Նաջարյան Ե., *Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում /1918 հոկտեմբեր-1919 հունիս/*, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», Երևան, 1974, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն», հ. 6, էջ 136:

³³ Նույն տեղում:

³⁴ Burt J., F. R. G. S., *The people of Ararat*, London, The Hogarth Press, 1926, p. 109.

³⁵ Ալաջան հատուկ գործվածք է, որն օգտագործվել է՝ արևելյան հասարակ զգեստներ կարելու համար:

³⁶ Թովուզյան Հ., *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն /1841-1946/*, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն», 1986, էջ 186:

³⁷ ديران بایبکیان، مسيرة الارمني من كيليكيا لجا الى لبنان ، أرمن 1917-1939 ، ص 244

Պապիկյան Դ., *Մի հայի գաղթի ճանապարհը Կիլիկիայից Լիբանան*, տե՛ս «Հայերը 1917-1939», էջ 224:

հայ տարագիրները խթանում են երկրի տնտեսական կյանքը. «Անուրանալի իրականություն է, թե աժան ձեռային աշխատանքը մեծ շահ կ'ապահովէ երկրին: Սուր մրցակցությունը նմանապէս հրապարակէն քշեց անկարող արհեստաւորները եւ որակը բարձրացուց: Այս կացութենէն ի վերջոյ շահողը դուրս եղաւ երկիրը»³⁸:

Միրիայի տնտեսական կյանքում սկսեց աշխույժ գործունեություն ծավալել «Նշարթովա» հյուսվածքեղենի ընկերությունը, որը հիմնվել է տիգրանակերտցիներ՝ Նշան Փալանջյանի, Հարություն Որբերյանի և Վահան Աճեմյանի ջանքերով, Հալեայի Սուլեյմանիե թաղամասում: Ընկերության հիմնադրման թվի մասին ստույգ տեղեկություններ չկան: Սակայն, ամենայն հավանականությամբ, այն բացվել է մինչև 1925թ.: Գործարանը համարվել է առաջնակարգ արդյունաբերական ձեռնարկություն՝ վայելելով բացառիկ վարկ իր որակյալ արտադրանքով:

Հայ տարագիրներն առաջատարներ են եղել ավտոմեքենաների սպասարկման և նորոգման բնագավառներում: Հայ վարպետները մեկնակետը դարձան բազմաթիվ նոր վարպետների ինքնահայտնության³⁹: Ոլորտի առաջին վարպետներից է եղել Լևոն Յավերյանը, ով 1912թ. գերմանացիների նախաձեռնությամբ Միրիա-Ի-րաք երկաթգծի շինարարության վրա է հմտացել, անգամ նրան է հանձնվել Եփրատ գետի վրա կառուցված շոգեկառքի փորձարկումը: Սեդրակ և Միսակ Նալբանդյան եղբայրները նույնպես մեծ ներդրում են ունեցել այս բնագավառում՝ 1924թ. հիմնելով սեփական արհեստանոցը: Տ. Թոքմաջյանը Հալեայում հիմնել է մարտկոցների վերալիցքավորման առաջին արհեստանոցը:

Հայերը Միրիայում բազմաթիվ նորամուծություններ են մտցրել, որոնք վերջիններիս մենաշնորհն են եղել այդ ժամանակահատվածում: Հաստոցագործության, եվրոպական ոճի հագուստի դերձակության ոլորտում հայերը նույնպես նախաձեռնողներ են եղել: 1919-1930 թթ. հայ կազմարարներից է եղել Գարեգին Տարագճյանը, ով 1919 թ. Սալիբե թաղամասում իր բնակարանն արհեստանոց է դարձրել: Գեղազարդելու արվեստի մեջ վարպետացել է նաև Հովհաննես Բասմաճյանը⁴⁰: Հալեայում հաց թխելը հայերի և հատկապես սասունցիների մենաշնորհն է եղել: Քաղաքի բոլոր փոռապանների տեղացիներն անվանում էին սուսանիներ: Հովհաննես Դաբբաղի (Դաբբաղյան) 1906 թ. Հալեայում հիմնած կաշեգործարանը մինչև 1921 թ. միակն էր Միրիայում և Լիբանանում: Նրա արտադրանքը բազմիցս արժանացել է միջազգային տարբեր ցուցահանդեսների մրցանակների: Նշենք նաև, որ Հալեայի Մազումյան եղբայրներին պատկանող «Օթել Պարոնը» և Ալթունյան հիվանդանոցը միակ շենքերն էին, որոնք 1920-21 թթ. էլեկտրականություն են ունեցել:

Միրիայի արաբները գնահատել են հայ արհեստավորների վարպետությունը, վստահելիությունն ու ձեռներեցությունը: Հայ տարագիրների վարպետությանն ու Միրիայի տնտեսական կյանքում նրանց ներդրմանն է անդրադարձել արաբ գրող,

³⁸ Վարժապետեան Ս. Յ., *նշվ. աշխ.*, էջ 44:

³⁹ Տե՛ս Ջառիկեան Յո., *Մեքենագործությունը Հալեայի մեջ եւ Առաջին հայ վարպետները*, տե՛ս «Գեղարդ», 1976-1978 միացեալ թիւ, Հալեայ, 1978, գիրք Բ, էջ 299:

⁴⁰ Նոտեան Շ., *Կազմարարութեան արուեստը եւ Հալեայի հայ կազմարարները*, տե՛ս «Գեղարդ», գիրք Բ, էջ 336:

հասարակական գործիչ Ուալիդ Իխլասը. «Կարևոր է, որ հայ ժողովուրդը կարողացավ հաջողությամբ համագործակցել հյուրընկալ սիրիացի ժողովրդի հետ: Դրա հետ մեկտեղ նա իր ինքնությունը փաստեց ու իր ծառայությունները մատուցեց մեր երկրին՝ ստեղծագործելով ու կառուցելով: Նա զարմացրեց սիրիացի ժողովրդին իր վարպետությամբ, ձեռքի շնորհքով: Նրանք այնպիսի արհեստների և արդյունաբերական ճյուղերի էին տիրապետում, որոնք անձանոթ էին մեր երկրի գավակներին»⁴¹:

«Հալեպի տնտեսական վիճակը եւ Հիսիսային երկիրներէ եկող գաղթականները» հոդվածում Ս. Չեմբերթը նշում է, որ երկրում արտահանումը նվազել է, գները բարձրացել են, աշխատուժն ավելի էժան է դարձել: «Հիսիսի զանազան երկրներէ եկող գաղթականները, ինչպէս կը կարծեն, այս քաղաքի տնտեսական կեանքին մէջ, հոգ, նեղութիւն և դժուարութիւններ ստեղծած չեն: Ընդհակառակը շատ լայն չափով գործակցած են ձեռարուեստի գիներուն նուազման մէջ»⁴²:

Հայ տարագիրների սոցիալական ծանր վիճակից դուրս գալուն և փոքր-ինչ կայանալուն պակաս չի նպաստել հայրենակցական միությունների գործունեությունը: Եթե նախքան Առաջին աշխարհամարտը հայկական գաղթօջախներում գոյություն ունեցած հայրենակցական միությունների հիմնական նպատակն իրենց գյուղի, քաղաքի կամ գավառի կրթամշակութային գործին օգնելն էր, ապա 1915թ. և հատկապես Կիլիկիայի դեպքերից հետո հայրենակցական միությունների նպատակը հնարավոր բոլոր միջոցներով հայ որբերի ու կանանց համար ապրուստ հայթայթելու և հայապահպան գործին նպաստելն էր: Համայնքի ձևավորման տարիներին՝ քսանական թվականների առաջին կեսերին, պատահական երևույթներ չէին հայրենակցական միությունների նախաձեռնությամբ և համայնքային հիմունքներով կազմակերպված կրթօջախների և հայկական տպարանների վերաբացումն ու հիմնումը:

Հայրենակցական միությունները հրատարակում էին իրենց հայրենի գավառների, քաղաքների ու գյուղերի պատմությունը: Նրանց կատարած դրական աշխատանքների թվում են դասվում նաև տարիներ շարունակ պահպանվող տպագիր պարբերականները: Ինչպես հայրենակցական միությունները, այնպես էլ մշակութային միությունները և ակումբները շնորհակալ աշխատանք են կատարել՝ սփյուռքահայությանը ձուլման վտանգից փրկելու համար:

Հասարակական կյանքում իրենց յուրահատուկ տեղն ունենին մարզական միությունները, որոնց նպատակը ոչ միայն պատանիների ու երիտասարդների կոփումն էր, այլև տարբեր խավերի համախմբումը: Մինչև 1915թ. Հալեպում գործել է «Աղբյուր մարմնամարզական միությունը»՝ իր ֆուտբոլի, ատլետիկայի խմբերով: Հարկ է նշել մի հետաքրքիր դրվագ. Հալեպի նահանգապետը, ներկա լինելով հայկական դպրոցներում մարզական խաղերին, տեղեկություններ հավաքելով նրանց գործու-

⁴¹ أريسيان نورا، غوائل الارمن في الفكر السوري، دمشق، الفرات، 2002، ص 166-167

Արիսյան Ն., *Հայկական սարսափները սիրիական մերթում*, Դամասկոս, «Ալ-Ֆուաթ», 2002, էջ 166-167:

⁴² «Սուրիահայ տարեցոյց», Հալեպ, «Արաքս, Բ. Թօփալեան», 1925, էջ 79:

նեության մասին, 1919թ. Ազգային քաղաքային ժողովի ատենապետից խնդրում է արաբական վարժարաններին նույնպես տրամադրել մարմնամարզության ուսուցիչ: Այսպիսով, Հայկազյան վարժարանի մարմնակրթարանի ուսուցիչ Լևոն Արզարյանը դարձել է մարմնակրթության առաջին ուսուցիչը Հալեպի Սուլթանիե (այժմ՝ Մամուն) վարժարանում⁴³: Սիրիայում մարզական կազմակերպություններից ավելի ուշ իրենց գործունեությամբ և կազմակերպվածությամբ առանձնանում էին երկուսը՝ Հայ մարմնակրթական միությունը (ստեղծվել է 1921 թ. Հալեպում) և Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը (ստեղծվել է 1925 թ.)⁴⁴:

Հայ տարագիրների սոցիալապես կայանալուն, տնտեսության ոլորտում մենաշնորհներ ձեռք բերելուն զուգահեռ հայ տարագիրների նկատմամբ նշված ժամանակահատվածում որոշակի դժգոհություններ են առաջ գալիս Սիրիայի քաղաքային բնակչության շրջանում, այն պատճառաբանությամբ, թե նրանք բեռ են դարձել իրենց երկրի համար: Չնայած սիրիական մամուլում տպագրվել են նաև հակառակ կարծիքներ: Հալեպի «Աթ-Թակադդում» թերթն այդ կապակցությամբ գրում է. «Եթե մի քիչ խիղճ ունեք, կօգնեք դժբախտ տարագիրներին, հնարավորին չափով կթերթևացնեք նրանց դժբախտությունը: Հայերին տարբեր տեղերից (հայրենակիցներ, ընկերներ, բարեգործական ընկերություններ) ֆինանսական օգնություն են ուղարկում, որը մեր երկրում է ծախսվում, թերթևացնում ֆինանսական սղոթյունը ... քաղաքի ժամանակակից կառույցների մեծամասնությունը հայ տարագիրների շնորհքն է ... Այնպես որ, դժգոհության որևէ գիտակից պատճառ չենք տեսնում, անգամ եթե մեր շահերը հաշվի առնենք, ապա թույլ կտանք նրանց մեզ մոտ մնալ»⁴⁵:

Այս հոդվածում հատուկ անդրադարձ է արվում հայերի ներկայությունից դժգոհ խավին. «... դժգոհ մարդկանց հետ ուզում ենք խոսել զուտ ֆինանսական տեսակետից՝ առանց զգացմունքների և փաստում ենք, որ տարագիրները բեռ չեն մեր երկրի համար, անգամ նրանց ներկայությունն օգտակար է»⁴⁶:

Նման դժգոհություններն իրենց արձագանքն են գտել նաև Սիրիայի Դաշնային խորհրդի⁴⁷ 1924թ. հունվարի նիստում, որտեղ քննարկման էր դրվել հայ տարագիրների հարցը, և առաջարկվել էր Հալեպի, Դամասկոսի և մյուս քաղաքների ճամբարների տարագիրներին վերաբնակեցնել Ալեքսանդրետի ներքին շրջաններում: Նիստում հնչել են դրական և բացասական կարծիքներ: Համայն պատգամավոր

⁴³ Սապունճեան Զ., ՀՄԸՄ-ն Հալեպի մեջ, տե՛ս «Գեղարդ», գիրք Բ, էջ 421:

⁴⁴ 1922 թ. Դամասկոսում Կարապետ Գավաֆյանի նախաձեռնությամբ ստեղծվել են «Վահագն», «Շանթ» պատանեկան միությունները, ավելի ուշ՝ «Արծիվ», «Մասիս», «Դրո», «Կայծակ» խմբերը, որոնք միավորվելով ստեղծել են Դամասկոսի մասնաճյուղը:

⁴⁵ .187 صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية... ص 187: Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը..., էջ 187:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ 1922 թ. հունիսի 28-ին ֆրանսիական գլխավոր կոմիսար Գուրոն հատուկ ղեկընտով ստեղծում է «Սիրիական ֆեդերացիա», որի մեջ մտնում են Դամասկոսի, Հալեպի և Ալավիների պետությունները: Նախագահ է ընտրվում Սուրբի Բարաքաթը: 1924 թ. ղեկտեմբերին Գլխավոր կոմիսար Վեյգանը լուծարել է Դաշնային ֆեդերացիան:

Ռաշիդ Բարազին առաջարկել է արգելել հայ տարագիրների մուտքն այն պատճառաբանությամբ, թե հայերի թիվը Սիրիայում հասել է 130 հազարի, այն դեպքում, երբ սիրիացի տարագիրների թիվն օտար երկրներում կազմում է 120 հազար: Սակայն այն հարցին, թե արդյո՞ք հայ տարագիրների մուտքն է ստիպել սիրիացիներին մեկնել իրենց երկրից, պատգամավորը ժխտական պատասխան է տվել: Այս իրադարձությունների ընթացքին անդրադարձել է «Աթ-Թակադդում»-ը՝ գրելով. «Իրավունքը, հատուցումը, ազգայնականությունը պահանջում են ուժեղ համախոհներ, որպեսզի մտածեն, թե ինչպես Սիրիայից գնացող հայրենակիցներին պահեն իրենց երկրում և ոչ թե առանց մտածելու արգելեն օտարների մուտքը երկիր ... տարագիրները չեն փոխում երկրի ժողովրդագրական պատկերը»⁴⁸: Դամասկոսի պատգամավոր Հաբիբ Քահալին նույնպես իր ելույթում դժգոհություն է հայտնել հայերի ներկայության հետ կապված, մինչդեռ Հալեպի պատգամավոր Սելիմ Չեմբերթը, Դաշնային խորհրդի նախագահ Սուրիի Բարաքաթը փորձել են հիմնավորել, որ նշված փաստարկները չեն համապատասխանում իրականությանը և երկրի շահերին: Նրանք փաստում են, որ Սիրիան շատ հարցերում օգտվել է, հայերը նպաստել են տնտեսության վերակենդանացմանը և զարգացմանը:

Հողվածի վերջում հեղինակը հորդորում է պթափ մոտենալ խնդրին, կոչ է անում աջակցություն ցույց տալ հայ տարագիրներին: «Մեր ժողովուրդը հայտնի է իր մեծահոգությամբ, բարձր բարոյականությամբ, և դա վիճելի չէ: Եվ ասենք, որ հայ տարագիրները երկրին օգտակար են եղել և ոչ թե վնասակար»⁴⁹: Այնուամենայնիվ, Դաշնային խորհուրդը մերժում է հայ երկրագործներին վերաբնակեցնելու ծրագիրը և միաժամանակ արգելում նոր գաղթականների մուտքը Սիրիա: Անգամ Սիրիայից Հիջազ մեկնած պատվիրակությունն անհրաժեշտ է համարել Հուսեյն թագավորին տեղեկացնել Սիրիայի Դաշնային խորհրդի՝ հայ գաղթականներ չընդունելու որոշման մասին:

Հարկ է նշել, որ նույն ժամանակահատվածում հայ տարագիրների շրջանում Խորհրդային Հայաստան ներգաղթի միտումներ էին նկատվում⁵⁰: Ընդ որում մինչև 1924թ. Սիրիայում հայ տարագիրներն արդեն մեծ թիվ էին կազմում, ու Սիրիա ներգաղթողների հոսքը գրեթե դադարել էր:

⁴⁸ صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ، ص185-186.

Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը..., էջ 188-186:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Խորհրդային Հայաստան ներգաղթողների վերաբերյալ հատուկ օրենք է սահմանվում 1925 թ. հունվարի 19-ին Նախարարների խորհրդի նիստի 8-րդ հրամանագրի 16-րդ հոդվածով: Ըստ սահմանված օրենքի՝ ներգաղթողները պետք է զրկվեին սեփականության և շահագործման բոլոր իրավունքներից սիրիական հողի վրա: Ներքին նախարարության պաշտոնական հայտարարությամբ հանձնարարվում է վերացնել գաղթողների անվանացուցակները դիվանտումարից: Այս որոշմանն ու վերջինիս արձագանքներին է անդրադառնում «Աթ-Թակադդում» թերթը: Սիրիայի կառավարությունը համաձայն էր հայերի հայրենադարձությանը, սակայն մեկնումի ժամանակ և հետագայում բարդություններից խուսափելու համար որոշվում է իրավական և նյութական բոլոր կապերը խզել մեկնող հայերի և Սիրիայի միջև: Մանրամասն տե՛ս

صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ، ص301

Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը..., էջ 301:

Հայ տարագիրները նույնպես գիտակցում էին արաբների դժգոհությունների պատճառներն ու փորձում էին ավելորդ լարվածություն չնսցնել հայ-արաբական հարաբերություններում: «Սուրիահայ տարեցոյց»-ում սիրիահայ տարագրյալներն այսպես են բնորոշում իրենց կյանքը. «Այս տնտեսական տագնապի շրջանին ամենէն աւելի արգահատելի և մտահոգիչ տարրը Սուրիահայն է ... Մենք՝ որպէս հիւր ուրիշին տան մէջ, որքան ալ վերապահութեամբ շարժվինք, վերջապէս ծանրութիւն մ'ըլլալէ չենք դադրիր, մանաւանդ, երբ կը տեսնենք թէ տանտէրն իսկ համաշխարհային քայքայուած տնտեսական տիրող դրութենէն նեղուած, անգործութեամբ կը տառապի: Այլևս այս կացութեան մէջ բարեկեցիկ կեանք մը յուսալ անխոհեմութիւն է պարզապէս»⁵¹:

Բայց այդ ամենով հանդերձ, հարկ է փաստել, որ հայ տարագիրների բերած դրական տեղաշարժերը երկրի տնտեսությունում և նրանց հաջող փորձերը՝ ներգրավվելու Սիրիայի սոցիալ-տնտեսական կյանքում, հանգեցնում են վերջիններիս վիճակի բարելավմանը: 1924 թ. հայ տարագիրների սոցիալական, տնտեսական, իրավական վիճակի փոփոխություններն ակնհայտ էին: Դա է վկայում «Աթ-Թակադդում» թերթի հոդվածը. «Տեղական և ֆրանսիական կառավարությունը, բարեսիրտ տեղացիները պարտավորվեցին իրենց վրա վերցնել հայ տարագիրների կեցության հարցի լուծումը ... որքան մեծ է տարբերությունը հայ տարագիրների այժմյան և պատերազմի ժամանակաշրջանի վիճակի միջև»⁵²:

Կիլիկիայի դեպքերից հետո առավել ևս հայ տարագիրները փաստում են. «... ամեն բանէ աւելի գերադաս համարել ապահովութեան եւ խաղաղ աշխատանքին խնդիրը, որուն առաջ Սուրիոյ Արաբ կառավարութեան և մանաւանդ ֆրանսական մանդատի հոգատար իշխանութեան ցոյց տուած հիւրընկալ եւ մարդասեր ասպնջականութիւնը զինքը թողուած են յավետ երախտապարտ, որը կարելի է փոխարինել միայն լուրջ ու շրջահայեաց ոգիով մը, խաղաղ ու կարգապահ կեանքով մը»⁵³:

Այսպիսով, Սիրիայում 1915 թ. հայ տարագիրների հայտնվելը նոր փոփոխություններ է մտցնում Սիրիայի սոցիալ-տնտեսական կյանքում, առաջընթաց է գրանցվում տնտեսության մի շարք ոլորտներում: Բացի դրանից, մինչ այդ գոյություն ունեցող հայ համայնքը վերափոխման է ենթարկվում: Աստիճանաբար 1920-ական թվականներին ձևավորվում են երեք հիմնական սոցիալական շերտեր: Առաջին խավն այն հայ տարագիրներն էին, որոնց միակ ունեցվածքն իրենց աշխատանքն էր. տղամարդիկ՝ շինարարական ոլորտում, կանայք՝ տնտեսության մեջ: Երկրորդ խումբը տարագիրների այն հատվածն էր, որը կարողացել էր խուսափել ճամբարային կյանքից և բնակվում էր քաղաքում՝ վարձակալած բնակարաններում: Նրանք կարող էին սեփական փոքր գործն ունենալ: Համեմատաբար բարվոք վիճակում էին այն հայերը, որոնք օտարերկրյա կազմակերպություններում կամ պետական

⁵¹ «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 191:

⁵² صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ص 184. Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը..., էջ 184:

⁵³ Գապպաճեան Գ. Սուրիա, քաղաքական, կրօնա-պատմական, կրթական եւ տնտեսական տեսակետով տե՛ս «Տարեցոյց», տարեցոյց, կրօնա-բանասիրական-գրական, Բ տարի, 1926, էջ 277:

ապարատում էին աշխատում: Երրորդ խավը կազմված էր բացառապես բնիկ հայերից՝ «արման կադին» (հին հայեր), որոնք հիմնականում սոցիալապես ապահովված էին:

Համայնքի առջև ծառայած հիմնախնդիրներից առավել կարևոր էր ազգային ինքնագիտակցության, մշակույթի և լեզվի պահպանման խնդիրը, որն իր վրա էր վերցրել եկեղեցին: Ցեղասպանությունը վերապրելու փաստը նոր պահանջներ էր դնում՝ ոչ միայն պահպանել նախորդ շրջանի մշակույթային և հոգևոր արժեքները, այլ նաև ստեղծել նորը և ժառանգել սերունդներին: Այս փաստը համայնքը սահմանող և բնութագրող կարևոր որակումներից է⁵⁴:

Միրիայում հայ տարագիրների սոցիալական կայացման համար կարևոր նշանակություն ուներ նրանց իրավական կարգավիճակի հարցը: Վերջիններս Միրիայում ամրագրվում են օրենքով, որ ավելի էր հստակեցնում նրանց իրավունքները⁵⁵:

Այսպիսով, հայ տարագիրների սոցիալական վիճակի դրական փոփոխությունները կարելի է բացատրել մի քանի հանգամանքով. նախ՝ հայերը Միրիայում հայտնվելու առաջին տարիներին ամենևին էլ ցանկություն չունեին ինտեգրվելու Միրիայի կյանքում: Սկզբնական շրջանում Միրիայում իրավագուրկ դիրքերում էին, օտար և ժամանակավոր էին իրենց զգում, ու դրան համապատասխան էր վերջիններիս գործելակերպը: Երկրորդ՝ նրանց համար առաջին հերթին կարևոր էր լուծել վերապրելու խնդիրը: Երկրորդ տիրող քաղաքական դեպքերին տարագիրների հիմնական զանգվածը ներգրավվածություն չուներ: Նրանք համակենտրոնացման ճամբարներում պայքարում էին իրենց առօրյա խնդիրների լուծման համար: Երրորդ, որ ցեղասպանությունը վերապրելու փաստը նրանց դեռ որոշ ժամանակ հոգեբանական կաշկանդված վիճակում էր պահում: Այս իրավիճակը, ինչպես նշեցինք, վերաբերում էր հիմնականում 1915-1918թթ., որից հետո հայ տարագիրների մոտ ոգևորվածություն է նկատվում՝ Ֆեյսալի իշխանության գալուց հետո, իսկ ֆրանսիական մանդատի շրջանում Կիլիկիայի դեպքերից հետո հայ տարագիրների այն զանգվածը, որը վերադառնում է Միրիա, արդեն այստեղ հաստատվելու ծրագրեր ուներ: Վերջիններս նշված ժամանակահատվածում կարողանում են սոցիալապես կայանալ և աստիճանաբար իրենց Միրիայի լիիրավ քաղաքացիներ համարել:

⁵⁴ Տե՛ս Աбраамյան Լ., *Արմենիա և արмянская диаспора: Расхождение и Встреча*, 21-й Век, номер 2, 2005. էջ 137:

⁵⁵ Տե՛ս Մարգարյան Ն., *Հայոց ցեղասպանության հետևանքով Միրիայում հաստատված հայ տարագիրների կարգավիճակը և հայ-արարական փոխհարաբերությունները (1915-1924 թթ.)*, Երևան, ՀՅԹԻ, 2013, էջ 133-137:

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1920-1924 ԹԹ.)

Նարինե Մարգարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում է հայ տարագիրների ինտեգրումը Սիրիայի սոցիալական կյանքում ընդհուպ մինչև 1924թ.: Ներկայացվում են տարագիրների առջև ծառայած սոցիալական խնդիրների աստիճանական լուծումները, հայ-արաբական փոխադարձ ադապտացումը, ինտեգրման ճանապարհին հանդիպող խոչընդոտները, արաբ ժողովրդի ու ֆրանսիական մանդատային իշխանությունների կառավարության ձեռնարկած միջոցառումները և հարակից մի շարք այլ խնդիրներ:

Ներկայացվում են հայ տարագիրների սոցիալական իրավիճակի դրական փոփոխությունները, դրանք պայմանավորող գործոնները: Ներկայացվում է երկրում տիրող քաղաքական իրավիճակը, որը որոշ չափով նպաստել է հայ տարագիրների նկատմամբ արաբական կողմի դժգոհությանը: Ներկայացված գործընթացների համատեքստում հայ տարագիրները կարողանում են սոցիալապես կայանալ, վերաձևավորել տեղի հայ համայնքը և աստիճանաբար իրենց Սիրիայի լիիրավ քաղաքացիներ համարել:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, տարագիրներ, սոցիալ-տնտեսական կյանք, ինտեգրում, կարգավիճակ, արաբներ, փոխհարաբերություններ, ֆրանսիական մանդատային իշխանություն:

ИНТЕГРАЦИЯ АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ СИРИИ (1920-1924)

Нарине Маргарян

РЕЗЮМЕ

В статье анализируется интеграция армянских беженцев в социальную жизнь Сирии до 1924 года. Освещены социальные проблемы, с которыми сталкивались депортированные армяне, армяно-арабская взаимная адаптация, препятствия, стоявшие на пути интеграции армян, действия арабского народа и французского мандатного правительства, а также некоторые другие вопросы.

Изложены факторы содействовавшие улучшению социального статуса армянских беженцев. Также представлена политическая ситуация в стране, которая в определенной степени способствовала недовольству арабов в отношении армянских беженцев. В контексте представленных процессов армянские беженцы смогли постепенно социально утвердиться в Сирии, реконструировать общину и стать полноправными гражданами страны.

Ключевые слова: Геноцид армян, беженцы, социально-экономическая жизни, интеграция, статус, арабы, взаимоотношения, французское мандатное правительство

THE INTEGRATION OF THE ARMENIAN REFUGEES INTO THE SURIA'S SOCIAL-
ECONOMIC LIFE (1920-1924)

Narine Margaryan

SUMMARY

The paper analyzes the integration of Armenian refugees into Syria's social life till 1924. The process of gradual solution of social problems faced by refugees, the mutual Armenian-Arab adaptation, the obstacles on the path towards integration, the steps implemented by French mandate Authorities and Arab people are being analyzed. The improvements in refugees' social life as well as factors fostering those developments are being presented. The paper analyzes the political situation in the country which partially substantiated the resentment of Arab side. In the perplexed context of above mentioned factors Armenian refugees were able to re-shape the local Armenian community, improve their social-economic situation and gradually perceive themselves as full-fledged citizens of Syria.

Keywords: Armenian Genocide, refugees, social-economic life, integration, status, Arabs, relationship, French Mandate Authorities

Կրոնագիտություն • Religious Studies • Религиоведение**ԿՐՈՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ***Շուշան Խաչատրյան*

XXI դարի պոստմոդերն աշխարհայացքը հաճախ լուսանցքում է թողնում կրոնի դերակատարությունը մարդու կենսագործունեության տարատեսակ բնագավառներում: Նույնը տեղի է ունենում պոզիտիվիզմի փիլիսոփայությամբ առաջնորդվող ժամանակակից գիտական աշխարհում. եթե տվյալ երևույթի մեջ առկա է լինում քաղաքական կամ տնտեսական գործոն, դրանք ուռճացվում են, դիտվում երևույթների, համընդհանուր ճգնաժամերի հիմք, իսկ կրոնականը բավականին հաճախ անտեսվում է կամ բավականաչափ ուշադրության չի արժանանում, այդ թվում՝ ցեղասպանագիտական ուսումնասիրություններում: Այս իմաստով գերմանացի ցեղասպանագետ Քրիստիան Գեռլախը տեղին դիտողություն է անում՝ անդրադառնալով ցեղասպանությունների ուսումնասիրության մեջ որոշ համատեքստային հարցերի ու սխալների: Այդ սխալների թվում նա նշում է, որ ցեղասպանությունների մեջ տարածված խնդիր է այն, որ տարբեր ժամանակներում և տարբեր գաղափարական դրդապատճառների հիման վրա իրականացված ցեղասպանությունները դիտարկվում են միայն կամ գլխավորապես քաղաքական հիմքի վրա իրականացված. «Զանգվածային բռնությունները ծագում են հասարակության մեջ կամ հասարակության կողմից գեներացված և խորը արմատացած համալիր գործընթացներից. դրանք լուր պետական քաղաքականության և ավագակային վարչակարգերի վրա չեն հիմնվում»¹: Կրոնի տարատեսակ հիմնահարցերն անտեսվում են անգամ պատմական հետազոտություն ունեցող իրադարձությունների մեջ, անգամ այն դեպքում, երբ աշխարհիկացման մշակույթը նորամուտ է եղել տվյալ ժամանակում, և կրոնն ունեցել է հզոր դերակատարություն անձի և հանրության կենսագործունեության և հոգեբանության մեջ: Ռետրոսպեկտիվ՝ հետահայաց

¹ Gerlach Chr., “Extremely violent societies: an alternative to the concept of genocide” in *Journal of Genocide Research* 2006, 8(4), December, p. 458): Միանգամայն համաձայն ենք նրա այն պնդման հետ ևս, որ պետք չէ առանձնացնել իրարից ու դասակարգել քաղաքական, գաղափարախոսական, պատժիչ կամ տնտեսական ցեղասպանություններ, քանի որ «... իրականում բռնության ուժը բխում էր ճիշտ այն բանից, որ այն ամբողջի խառնուրդ էր» (նույն տեղում, էջ 460): Ք. Գեռլախը մեթոդական սխալներ է առանձնացնում նաև ցեղասպանագիտության հիմնական միտումների մեջ, օրինակ՝ կենտրոնացումը պետության վրա և ոչ հասարակության, կամ անգլերեն intent՝ վաղուց շահարկված, իրավական նշանակություն ունեցող եզրույթի, այսինքն՝ ծրագրման ու կենտրոնացման շուրջ՝ փոխանակ դիտարկելու պրոցեսիվ վիճակն ու ինքնավար խմբերի մասնակցությունը (նույն տեղում, էջ 466):

մեթոդաբանությունը թերի է կիրառվում, և արդյունքում տուժում է գիտականությունը:

Պարադոքսալ կերպով ժամանակակից պոստմոդեռնիստական աշխարհիկ մշակույթի հիմքերը նաև դրվել են XX դ. հոգևոր ճգնաժամի² արդյունք հանդիսացող ամենաաղետալի ֆենոմեններից մեկի՝ ցեղասպանության միջոցով, որը փոխել է և՛ աշխարհայացք, և՛ աշխարհագրություն, և՛ ժողովրդագրություն, և՛ քաղաքական ու տնտեսական իրադրություն, առնչվել մարդու կենսագործունեության բոլոր կետերին:

Կրոնի դերը վերհանելը ցեղասպանությունների իրագործման մեջ միշտ դիտարկվել է որպես ամենախոցելի և ուսումնասիրողից առավելագույն ուշադրություն պահանջող հարց: Կրոն-ցեղասպանություն առնչություններն ուսումնասիրողների համար կարող են դառնալ փորձաքար այն իմաստով, որ խնդրին պատշաճ ուշադրություն առ այսօր չի հատկացվել: Խնդրի մեջ տեղավորվող հարցերից են հետևյալները. ի՞նչն ընտրել մեթոդաբանական մեկնակետ, տարբեր կրոնների բախումներն արդյո՞ք հանգեցնում են ցեղասպանությունների, կրոնական պատկանելությունն ունի՞ վճռորոշ դեր ցեղասպանական գործողությունների համար, կա՞ն արդյոք առավել կամ պակաս ազդեցիկ կրոնական համակարգեր, որոնք ունեն ցեղասպանություն իրագործելու ներուժ և եթե այո, ապա որո՞նք են այդ պոտենցիալները, արդյո՞ք կրոնների բարոյագիտական, մարդաբանական առանձնահատկություններն են պատճառը ցեղասպանություն ծրագրելու և իրագործելու համար, թե՞ կրոնի ընդհանուր ճգնաժամն է պատճառը, արդյո՞ք կրոնական տարբերությունը գործոն է, թե՞ գործիք՝ ցեղասպանություն ծրագրելու և իրականացնելու համար և շատ այլ հարցեր ու դրանցից բխող բազմաթիվ ենթահարցեր: Մրանք թեմաներ են, որոնցից յուրաքանչյուրն առանձին լայնածավալ ուսումնասիրությունների կյուբ կարող է դառնալ:

Չնայած Հայոց ցեղասպանության ընթացքում կրոնի դերակատարությունը պատշաճ հետազոտման չի ենթարկվել, կրոնի դերակատարության այս կամ այն հիմնահարցին անդրադարձել են մի շարք ցեղասպանագետներ՝ տարբեր գիտական ուղղությունների ներկայացուցիչներ: Այդ բաց դաշտը կարող է կրոնագետ-ցեղասպանագետների ուսումնասիրմանը, որպեսզի խնդրին ցուցաբերվի կոնտեքստուալ՝ համատեքստային, մոտեցում: Կրոնագետների կողմից առանձին ուշադրության առարկա է եղել կրոն-բռնություն ընդհանուր հիմնախնդիրը, որտեղ դիտարկվել են կրոնները և դրանց այն գծերն ու բնորոշիչները, որոնք հիմք են դիտվել տարատեսակ բռնությունների տարբեր ժամանակաշրջաններում, և առաջարկվել են տարատեսակ տեսություններ ու մեկնաբանություններ³:

² XX-XXI դարերի հոգևոր ճգնաժամի մասին խոսել ու խոսում են հումանկիտար և սոցիալական գրեթե բոլոր գիտությունների, մասվածանդ փիլիսոփայության (հատկապես պատմության փիլիսոփայության), հոգեբանության, կրոնագիտության, աստվածաբանության ներկայացուցիչները:

³ Տե՛ս օրինակ հետևյալ ուսումնասիրությունները. Kimball Ch., *When Religion Becomes Evil*, HarperCollins Publishers, 2002 գիրքը, որը թվարկում է 5 քայլերը, երբ կրոնը կրոնից վերածվում է

Ստորև մեջբերված հեղինակների ուսումնասիրություններն ու մոտեցումներն ընտրվել են հետևյալ սկզբունքով. քանի որ կրոնի հիմնահարցն առհասարակ չուսումնասիրված դաշտ է Հայոց ցեղասպանության պարագայում⁴, ապա մենք առանձնացրել ենք այն հեղինակներին՝ առանց գիտակարգային տարանջատման, ովքեր առհասարակ իրենց աշխատություններում կամ հոդվածներում որևէ կերպ անդրադարձել են այդ հարցին՝ լինի դա հոդված, մենագրության գլուխ կամ համառոտ անդրադարձ: Կրոնի դերակատարումը մերժող ու հիմնավորումներ բերող հեղինակներին ևս կցանկանայինք անդրադառնալ, սակայն ներկա ուսումնասիրության ընթացքում բառացիորեն մերժող ու դրան գիտական գրավոր հիմնավորում տված որևէ ցեղասպանագետի՝ ցանկացած գիտակարգի ներկայացուցչի, չհայտնաբերեցինք, քանի որ իրենք իրենց գործերում կենտրոնանում են Հայոց ցեղասպանության որոշակի որևէ կողմի վրա ու կրոնի հիմնահարցին պարզապես չեն անդրադառնում: Մեր սեփական դիտարկմամբ տարբեր ցեղասպանագետների հետ բանավոր շփումից միայն հնարավոր եղավ եզրակացնել, որ ոլորտն իրենց համար մութ է և նոր, երբեմն՝ զարմացնող ու ավելի հաճախ՝ անհասկանալի: Առաջարկներ են հնչել այն ուսումնասիրել ու շրջանառել, հակադիր վերաբերմունք ևս եղել է, երբ հնչել են պարզապես դիմադարձող կարծիքներ կրոնների բախումը, կրոնական տարբերությունը որպես գործոն և/կամ գործիք դիտարկելու շուրջ: Սակայն ցեղասպանագետների ճնշող մեծամասնությունը պատմագետներ ու քաղաքագետներ են, ավելի քիչ թիվ են կազմում մարդաբանները, փիլիսոփաները, ընկերաբաններն ու հոգեբանները, իսկ կրոնագետները չունեն հետևողական կոնցեպտուալ ներդրում Հայոց ցեղասպանության կրոնագիտական ուսումնասիրության և դիտարկումների մեջ:

Ցեղասպանությունների կանխարգելման համատեքստում կրոնի դերակատարությունն ուսումնասիրելու խնդրին անդրադարձել է ցեղասպանագետ Ստիվեն Լ. Ջեքոբսը՝ մտահոգություն հայտնելով, որ կրոնի գործոնի մասին խոսող, այն դիտարկող և այդ ուղղությամբ կանխարգելման մեթոդներ առաջարկող բուն կրոնագետ-մասնագետների բացակայություն կա. մեկը քաղաքագետ է, մյուսը՝ պետա-

չարիքի, նաև հանրահայտ կաթոլիկ աստվածաբան և միջկրոնական հարցերի մասնագետ Հանս Քյունգի հետևյալ հոդվածը. Küng H., “Religion, violence and “holy wars””, *International Review of the Red Cross*, Volume 87, No. 858, June 2005, էջ 253-268, միջգիտակարգային հայտնի տեսաբան Ռենե Ժիրարի հետևյալ գիրքը. Girard R., *Violence and the Sacred*, New York, Continuum, 2005, կրոնի փիլիսոփայության լուսի ներքո գրված Roth J. K., “Easy to remember?: genocide and the philosophy of religion” in *International Journal for Philosophy of Religion*, Vol. 68, No. 1/3, December 2010, էջ 31-42 հոդվածը և կրոնաէթիկական հարցեր քննարկող հետևյալ ժողովածուն՝ *The Religious Responses to Mass Atrocity: Interdisciplinary Perspectives*, Edited by Thomas Brudholm and Thomas Cushman, Cambridge University Press, 2009:

⁴ Այս իմաստով պատկերն այլ է Հոլոքոստի պարագայում, բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել՝ հիմնականում հրեա ուսումնասիրողների կողմից՝ հակասեմականություն-քրիստոնեություն-Հոլոքոստ կապերը դիտարկելով, որոշ ուսումնասիրողներ կրոնական տարբերության գործոնը կարևոր են համարում, օրինակ՝ Բոսնիայի կոտորածների, Կամբոջայի ցեղասպանության ժամանակ: Այս հոդվածում կենտրոնացումը կկատարվի միայն Հայոց ցեղասպանության թեմայի վրա:

կան աշխատող, մեկը՝ անվտանգության հարցերով զբաղվող վերլուծաբան, որոնք պրոֆեսիոնալ մոտեցում չեն կարող ցուցաբերել, և հետևաբար՝ կրոնի գործոնը լուսանցքում է մնում, որովհետև այլ մասնագետներն անուշադրության են մատնում ցեղասպանական վարքի այդ կողմը⁵:

Ուստի հարկ համարեցինք ներկայացնել և մեկնաբանել այն ցեղասպանագետների մտքերը, որոնք կան հակիրճ վերլուծություններ են նվիրել նշված թեմային, կան արտահայտել են իրենց ընդհանուր դիրքորոշումը կրոն-ցեղասպանություն խնդրի վերաբերյալ⁶:

⁵ St' u Jacobs S. L., "Genocidal Religion" in *Journal of Hate Studies*, Vol. 9:22, Gonzaga University Institute for Hate Studies, 2011, էջ 229-30:

⁶ Կրոնական տարբերությունն Օսմանյան կայսրության ներսում որպես կարևոր հարց է ընկալում «Մեծ ռճիրը» գրքի հեղինակ Արամ Անտոնյանը: Նրա շեշտադրումներից մեկն այն է, որ Եղեռնի ռճիրը ծանրացած է ոչ միայն թուրք պաշտոնյաների վրա, ովքեր ծրագրեցին այն, այլև թուրք ժողովրդի վրա (տե՛ս Անտոնյան Ա., *Մեծ ռճիրը*, Ե., 1990, էջ 241), ավելին, ըստ նրա, «Օսմանյան կայսրություն կոչուած գեհե՛նին մէջ ապրող բոլոր իսլամ ժողովուրդները» ոչ միայն «հաւասարապէս յանցատր են» (նույն տեղում, էջ 243), այլ նաև «նոյնիսկ տեղ տեղ՝ ժողովուրդը սրբագրեց ու լրացուց կառավարութեան գործը» (նույն տեղում, էջ 243): Անտոնյանն իր դիրքորոշումը որպէս ակնաւատես և վերապրող ձևակերպում է հետևյալ կերպ. «Այս անգամ՝ իթիստականներն էին. անոնցմէ առաջ՝ Համիտն էր. անկէ առաջ՝ Մահմուտ Բ-ը, եւ անկէ առաջ ալ միւս բոլոր Սուլթանները, գրեթէ ամէնքն ալ: Եւ մեքենան՝ թուրք ժողովուրդը՝ այս բոլոր մեքենավարներուն ձեռքին տակ միշտ նոյնը մնաց, անոնց ամենուն ալ հնազանդեցաւ հաւասար հյութեամբ: Եւ քանի՛ օսմանեան կայսրութիւն մը գոյութիւն պիտի ունենայ քրիստոնէայ հպատակներով, այդ մեքենավարները միշտ պիտի ստիպուին նոյն հրամանը տալու, եւ այն մեքենան ալ միշտ պիտի գործէ, միշտ պիտի ջարդէ ճակատագրականապէս: Որովհետև թուրք տարրը՝ քրիստոնէայ տարրերուն վրայ իր տիրապետութիւնը պահելու համար ուրիշ ճար չունի: Քրիստոնէաները ամէն տեսակէտով գերագանց են իրմէ, ամէն ասպարէզի մէջ միշտ իրմէ առաջ կ'անցնին: Կամ պիտի ստիպուին տէրերը փոխել,–տիրապետութիւնը տալ Քրիստոնէաներուն, ինչ որ անկարելի է,–եւ կամ ջարդել, զանոնք ետ ձգելու, անոնց տնտեսական յառաջադիմութիւնը կասեցնելու, անոնց աշխատութեան պտուղը խլելու, եւ այս կերպով՝ տեսակ մը հաւասարութիւն ստեղծելու համար» (նույն տեղում, էջ 241, 242): Մեկ այլ կարևոր աղբյուրի հեղինակ Հենրի Մորգենթաունը շեշտում է, որ բոլոր պաքներն ուղղված էին հենց քրիստոնյաների դէմ. «Բոլոր քրիստոնյաները պաշտոնապես ենթարկվում էին բոյկոտի և ոչ միայն Փոքր Ասիայում, այլև Կոստանդնուպոլսում» (*Դեսպան Հենրի Մորգենթաունի պարմությունը*, Երևան, 2012, էջ 44), նա Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների մեջ տեսնում է կրոնի դերակատարությունը միայն իսլամադավանների զանգվածային մասնակցության մակարդակով. «Եթե ավելի վաղ անցյալում կատարված բոլոր ջարդերը համեմատենք թուրքերի արածի հետ, ապա կնկատենք՝ դրանց հատուկ է մի հատկանիշ, որը կարելի է հիշատակել որպես գրեթե արդարացում. դրանք կրոնական ֆանատիզմի հետևանք էին, և այն հրահրող կանանց ու տղամարդկանց մեծ մասն անկեղծորեն հավատում էր, որ իրենք այդպես ծառայում են Արարչին: Անկասկած, կրոնական մոլեռանդությունը նաև թուրք ու քուրդ խուժանի հիմնական մղիչ ուժն էր. նրանք հայերին գլխատում էին որպես ալլահին մատուցվող ծառայություն, սակայն նրանք, ովքեր մտահղացել էին հայերի կոտորածը, նման շարժառիթ չունեին» (նույն տեղում, էջ 241): Խորհրդահայ պատմագիտությունը մեր քննարկած հարցի առնչությամբ կոնցետայտուալ հարցեր չի առաջադրում այն պարզ պատճառով, որ խորհրդային ազգերի եղբայրության դիրքերից չէր հանդուրժում միջկրոնական ինչպես նաև՝ խորհրդային ազգերի եղբայրության դիրքերից չէր հանդուրժում միջկրոնական հարաբերությունների քննարկում: Խորհրդահայ պատմագետների գործերն այս իմաստով խիստ կարևոր են՝ փաստագրական տեղեկատվություն տրամադրելու տեսանկյունից, սակայն ոչ կոնցետայտուալ մոտեցման մակարդակով:

Նրանց շարքում առաջինը հենց «գենցիդ» եզրույթի հեղինակն է՝ հրեա փիլիսոփա, իրավագետ **Ռաֆայել Լեմկինը**: Նա Հայոց ցեղասպանության մանրամասները քննելիս **ցեղասպանական մտադրության (անգլ. intent) պահից իսկ տեսնում է կրոնական տարբերությունը՝ առավել ստույգ ասած՝ հայերի քրիստոնյա լինելը՝ որպես դրդապատճառ**: Սկսելով հայերի դարձից քրիստոնեությանը՝ երկար պատմական էքսկուրսով նա հասնում է մինչև Հայոց ցեղասպանության շրջանին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հայերի՝ մահմեդական լծից կրած հալածանքներին. «Մահմեդականության պատմությունը քրիստոնեության դեմ ուղղված անհողողող պատերազմի պատմություն է, և հայերը կոտորվել ու հալածվել են սկսած այն պահից, երբ ընդունեցին քրիստոնեություն: 1890-ականների կոտորածները բնույթով կրոնական էին...»⁷: Հայոց ցեղասպանության ծրագրի վերաբերյալ վերնագիրը նա սկսում է հետևյալ մեկնակետից. «Հայերի՝ մահմեդական կրոնի սրտում գոյակցող հզոր քրիստոնեական տարրի հալածանքն անխուսափելի էր, քանի որ Ղուրանի հիմնարար սկզբունքները Քրիստոսի ուսմունքի ուղիղ հակադրությունն էին»⁸: Նա նույնիսկ առանձնացնում է «անհավատների» վերաբերյալ մի շարք հրահանգներ, այդ թվում՝ ոչնչացնելու կամ պատժելու ուղիղ հրաման պարունակող մի շարք *այթթներ* Ղուրանի հետևյալ *սուրահներից*⁹՝ 8.57 («Ահա՛ գազաններից չար են Աստուծոյ առաջին նրանք, որ անհաւատներ են եւ չեն հաւատում»), 9.29 («Պատերազմեցէ՛ք նրանց հետ, որ չեն հաւատում Աստուծուն եւ ոչ էլ վերջին օրան եւ պիղծ չեն համարում Աստուծոյ եւ նրա մարգարէի պիղծ հրատարակածը ...»), 9.74 («Ո՛վ մարգարէ, կոհի՛ արա անհաւատների եւ կեղծատրների դէմ եւ խի՛ստ եղիր նրանց դէմ. եւ նրանց բնակարանը դժոխքն է»), 9.124 («Ո՛վ հաւատացեալներ, պատերազմեցէ՛ք այն անհաւատների հետ, որոնք ձեզ դրացի են. թող ձեր խստութիւնը տեսնեն, որ հասկանան թէ Աստուած երկիւղածների հետ է»), 47.4 («Ուրեմն երբ դուք հանդիպէք անհաւատներին, կտրեցէ՛ք նրանց վիզերը մինչեւ նրանց ջարդէք, գերեւալների կապերը պնդացրէ՛ք»)՝

Բերելով ականատեսների մի շարք վկայություններ՝ Լեմկինը համոզված հաստատում է, որ քրիստոնեական հավատի անձինք տեղ չունեին Օսմանյան կայսրությունում¹⁰: Սակայն Ռաֆայել Լեմկինը ցեղասպանական գործողությունների միակ պատասխանատվությունը չի վերագրում քաղաքական վերնախավին և նշելով, որ չնայած Հայոց ցեղասպանությունը քաղաքական դրդապատճառներից սնված որոշում էր՝ ստեղծելու երկար փայփայված միացյալ թուրքական պետություն, այդուհանդերձ, «...մարդկանց գրգռում էին կատարելու ոճրագործություններ՝

⁷ Raphael Lemkin's Dossier on the Armenian Genocide: Turkish Massacres of Armenians (Manuscript from Raphael Lemkin's Collection, American Jewish Historical Society), with a foreword by prof. Michael J. Bazylar, Glendale, Center for Armenian Remembrance (CAR), p. 75.

⁸ Նույն տեղում, էջ 73:

⁹ Գրքի անգլերեն տեքստում սուրահների այթթները երբեմն տարբերվում են Ղուրանի հայերեն թարգմանություններից: Մենք այդ համարները դուրս ենք գրել՝ համաձայն Ղուրանի հետևյալ հայերեն տպագրության. *Ղուրան*, թարգմ. արաբ. հայ.՝ Աբր. Ամիրխանյանց, Վառնա, 1909:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 77:

«սրբազան պատերազմի» «ջիհադի», մղմամբ»¹¹: Լեւկինն այս միտքն արտահայտում է իբրև որոշակի անհամաձայնություն Ջեյմս Բրայսի այն դիրքորոշմանը, որ Հայոց ցեղասպանությունը կրոնական ֆանատիզմի հետևանք չէր: Պարզ է դառնում, որ հարցը համապարփակ, պատասխանատվության և խոր ուսումնասիրության պահանջ է ունեցել, ուստի նա բավարարվել է այդքանով՝ դրանով հատուկ զբաղվելու խնդիր չդնելով իր առջև:

Ցեղասպանագիտության դասական հեղինակներից **Լեո Կուպերը** ցեղասպանությունները դասակարգում է տարբեր չափումներով: Իր կողմից տարբերակված խմբերում ռասայական, էթնիկական, գաղութացման և ապագաղութացման, հավաքչությամբ զբաղվող, նախաինդուստրիալ և բյուրոկրատական մեխանիզմով կատարված ցեղասպանությունների շարքում որպես առաջին գործոն թվարկվածների մեջ նշում է կրոնականը¹²: Կրոնական տարբերությունը նա համարում է ցեղասպանական ծրագրի շարժիչ ուժ. օրինակ՝ կրոնական հեղինակություն վայելող անձը կարող է հրահրել ցեղասպանություն՝ անգամ այն դեպքում, երբ ցեղասպանությունը հակասում է նրանց աստվածաբանությանը. մոլիչ ուժը կրոնական եռանդը կամ ջանքն է, որը շրջանառության մեջ է դրվում՝ ցեղասպանություն իրագործելու լիազորության համար¹³: Նա կարծում է, որ գաղափարական ու կրոնական պատերազմները բնորոշ են ժամանակակից աշխարհին¹⁴, և չնայած կրոնական պատերազմը լայնորեն տարածված երևույթ չէ, **կրոնական տարբերությունը XX դարի մի շարք ցեղասպանությունների հիմքն է, որոնց մեջ դասում է Հայոց**

¹¹ Նույն տեղում, էջ 78:

¹² St' u Kuper L., *Genocide: It's Political Use in the Twentieth Century*, Yale University Press, 1981, էջ 9: Լեո Կուպերը տեսական քննության է ենթարկել սրբազան տեքստերի պոտենցիալը ցեղասպանությունների իրագործման ուղղությամբ (տե՛ս Kuper L., “Theological Warrants for Genocide: Judaism, Islam and Christianity” in *Terrorism and Political Violence 1990*, 2:3, էջ 351-379): Այս հոդվածում նա գրում է, որ մոնոթեիստական կրոնները՝ այն կրոնները, որ ունեն հավատքային համակարգ միակ Աստծու հանդեպ և հայտնութենական են, ունեն ցեղասպանական պոտենցիալ: Այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ հայտնության ընկալումը, որից բխում է սեփական կրոնական համակարգը միակ ճշմարիտը համարելը, պարունակում է հնարավոր բռնություն՝ մյուսների ճշմարտացիության ընկալման հանդեպ, հետևաբար՝ ողջ կրոնական համակարգի հանդեպ: Սակայն երեք միաստվածային կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության և իսլամի սրբազան տեքստերը, ըստ Կուպերի, անպայման չէ, որ աստվածաբանական հիմք են տալիս ցեղասպանության համար: Կուպերը, օրինակ՝ քրիստոնեության մեջ իսպառ բացակա է դիտում այլոց կոտորելու սուրբգրային օրինականացումը (նույն տեղում, էջ 372): Իսլամական սրբազան տեքստերում, ըստ նրա, կա այդ տարրի առկայությունը՝ աստվածաբանական մի քանի կովաններով միասին վերցրած՝ իսլամը՝ որպես բացարձակ, վերջնական և կատարյալ հայտնություն դիտելով, իսլամադավանի կողմից իսլամ տարածելու առաքելությամբ և բոլոր գործոններից վեր՝ ջիհադով՝ որպես այդ նպատակին առաջնորդող միջոց (նույն տեղում, էջ 372): Նրա համոզմամբ հուդայականությունը ևս զերծ չէ այդ պոտենցիալից. հուդայականությունն ունի խորհրդապաշտական ընկալում, օրինակ՝ ամադելկացիներին կոտորելու հարցում, և այն փնտրել է ու գտել կրոնի և Աստծո թշնամիներ՝ հավաքական անվամբ՝ «ամադելկացիներ», տարբեր վայրերում և ժամանակաշրջաններում (նույն տեղում, էջ 373), որոնց կոտորելու պատվիրանն արձանագրված է հենց Թանախում, որը նույն Հին Կտակարանն է:

¹³ St' u Kuper L., *Genocide: It's Political Use...*, էջ 12:

¹⁴ St' u նույն տեղում, էջ 14:

ցեղասպանությունը, Ուկրաինայում և Հնդկաստանում տեղի ունեցած կրոնական բախումները՝ ցեղասպանության ելքով, ինչպես նաև հրեաների ցեղասպանությունը նացիստական Գերմանիայում¹⁵:

Խոսելով կրոնական տարբերության հիմքի վրա առաջացած հակադրություններից՝ Կուպերն ասում է, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամները կրոնական մոլեռանդներ չէին, բայց, այդուհանդերձ, նրանց այն հայտարարությունը, որ իսլամադավանները պետք է ներգրավվեին սրբազան պատերազմի մեջ՝ ի պաշտպանություն իսլամի, հաշվարկված էր՝ նպաստելու կրոնական կրքերի բորբոքմանը, ինչը և տեղի ունեցավ: Եվ թուրքերի մասնակցությունը հայերի տեղահանություններին, բռնություններին ու սպանություններին, եկեղեցիների պղծմանը, քրիստոնյա հոգևոր սպասավորների հանդեպ գործված բռնությունները, բռնի կրոնափոխությունները՝ այդ բոլորը միասին, մատնացույց են անում հնուց եկած կրոնական ատելության առկայությունը: Համաշխարհային պատերազմին միանալու երիտթուրքերի որոշումը թելադրված էր սեփական կայսրության սահմանները պահպանելու, կայսրությունը փլուզումից փրկելու հրամայականով, և հայերին հայտարարելով իսլամական օրենքը դրժած, օրենքից դուրս հանրույթ՝ օրինական կովան տվեցին դեռևս կրոնական օրենքով շարժվողներին ցեղասպանություն իրականացնելու հայերի հանդեպ¹⁶:

Կրոնի գործոնի ահռելի դերակատարումը Հայոց ցեղասպանության ընթացքում ընդունում և վերլուծում է անվանի ցեղասպանագետ **Վահագն Դադրյանը**: Նա համարում է, որ Օսմանյան կայսրության տարածքում ազգամիջյան հակամարտությունների բնույթը պարզելու անհրաժեշտ պայման է նախ՝ իսլամի դերակատարության ուսումնասիրությունը: Ըստ նրա՝ իսլամը հանդես էր գալիս ոչ միայն որպես անվերջանալի ազգամիջյան հակամարտությունների աղբյուր և՛ Բալկաններում, և՛ Թուրքահայաստանում, այլև այն Արևելյան հարցն ու Հայկական հարցը միմյանց առնչող ու կապող օղակն էր, որի շնորհիվ ազգամիջյան հակամարտություններն էին ծագում¹⁷:

Դադրյանը կոնֆլիկտների հետ իսլամի առնչությունը պայմանավորում է նրանով, որ այն իր դրույթները տարածում է ազգի սոցիալական և քաղաքական ոլորտների վրա ևս. իսլամի ինքնընկալումը որպես գերակա և բացառիկ կրոն էական է՝ բացատրելու համար Օսմանյան Թուրքիայի մուսուլմանական համակարգը և դրա գերիշխանության հարցերն այլ կրոնների ներկայացուցիչների հանդեպ: Դադրյանն ասում է, որ Օսմանյան կրոնապետությամբ պայմանավորված պետական համակարգը նաև Օսմանյան օրենսդրական համակարգի հիմքն էր, և ամեն փոխհարաբերություն պետք է կարգավորվեր կամ պայմանավորվեր այդ օրենսդրական յուրահատկություններին համապատասխան. էական գործոն է Օսմանյան կայսրության բնակչության՝ իսլամադավանի և ոչ իսլամադավանի բաժանումը՝

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 118:

¹⁷ Տե՛ս Dadrian V. N., *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence, Oxford, Barghahn Books, 1995, էջ 3.

վերջինիս համար ապահովելով կախյալ վիճակ, սոցիալական և քաղաքական կարողությունների սահմանափակումներ: Դադրյանը ներածական մասից հետո անդրադառնում է այն փաստին, որ ոչ իսլամադավանի իրավական վիճակը պետության հանդեպ և սոցիալական դիրքը չփոխվեցին երիտթուրքերի կառավարության ժամանակ. նրանք վերահաստատելով պահեցին ոչ իսլամադավանների հանդեպ իրենց «իշխող ազգ»՝ *millet-i hakime*, դրույթը՝ խոստանալով ազատություն, արդարություն և հավասարություն, բայց փաստացի գերակայության ու ստորակարգության դիստոտմիան՝ երկվությունը, ոչ միայն պահպանվեց, այլև հատուկ գաղափարախոսական լծակներով ընդգծվեց երիտթուրքական հրապարակախոսական օրգաններում, որոնք հայտարարում էին, որ թուրք ազգը է՛ և կմնա՛ Թուրքիայի իշխող ազգը¹⁸:

Վ. Դադրյանը համամիտ է ժամանակի աղբյուրների, ինչպես նաև ուսումնասիրողների այն գերակայող կարծիքի հետ, որ երիտթուրքերն անկրոն մարդիկ էին կամ աթեիստ, սակայն նրանք ընդունում էին իսլամի համոզիչ, ազդու դերակատարությունը երկրում և վճռում են նրա դրույթները ենթարկել իրենց նպատակներին՝ լուծելու ներպետական ազգամիջյան կոնֆլիկտները: Եվ որպեսզի կողմնակիցների սովոր բանակ ունենային, ստիպված իթթիհաթականության մեջ ներդրեցին իսլամականություն, քանի որ Օսմանյան կայսրությունում կրոնը պետական համակարգից չէր կարող անկախ ընկալվել: Այդ պատճառով մինչև Օսմանյան կայսրության վերջին օրերը պետական գործերն իրականացվեցին իսլամի կանոնական իրավունքի ոգուն համահունչ¹⁹:

Վ. Դադրյանը եզրահանգում է, որ **Հայոց ցեղասպանությունը պետք է դիտարկել թուրք-հայկական կոնֆլիկտի համատեքստում, որի հիմքում ընկած և հետագա բորբոքմանը նպաստող կրոնական տարբերությունը որոշիչ էր**²⁰: Արհամարհանքը, որ մուսուլման թուրքերը տաժում էին *նայա-գյալուր* հայերի նկատմամբ, ըստ նրա՝ բավական էր, որպեսզի դուրս պտոթկար ատելության ու թշնամության տեսքով, երբ ի հայտ եկավ Հայկական հարցը, որն ազգերի հավասարության, այդ թվում՝ իրավահավասարության դիրքերից էր խոսում: Դադրյանն ասում է, որ ոչ իսլամի կրոնապետական կանոնները, ոչ էլ կրոնավորության շահերը չէին կարող թույլ տալ այդպիսի հավասարություն. սուր կողմերը հետզհետե էլ ավելի սրվեցին, և թուրք-հայկական կոնֆլիկտը զարգացում ապրեց՝ չթողնելով հետագա լուծման հնարավորություններ²¹: Անդրադառնալով իսլամի սուրբ գրքին՝ նշում է, որ իսլամի դոգմատիկան ու ընկալումները՝ Ղուրանի պատվիրանները²², որոնք հաճախ իրարամերժ էին, մեկը մյուսին անհամապատասխան, հնարավոր

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 5, 6:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 377:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 378:

²² Այն այաթները, որոնք անհավաստների դեմ պատերազմելու կոչեր էին անում, Դադրյանը ևս առանձնացրել է. տե՛ս Dadrian V. N., *Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict*, Transaction Publishers, New Brunswick, New Jersey, 1999, էջ 6-7, 10-11:

րություն էին ստեղծում ցանկացած աշխարհիկ կամ հոգևոր առաջնորդի ընտրելու, անջատելու կամ ուռճացնելու իսլամի կանոնական իրավունքի դրույթները և հատկապես կենտրոնանալու այն տեղիների վրա, որոնք ուղղված էին ոչ մուսուլմանների դեմ: Արդյունքում իսլամի կանխամտածված ու բացասական մանիպուլյացիան, շահարկումը թուրք-հայկական կոնֆլիկտը դարձրեց պայթյունավտանգ ու ի վերջո մահաբեր եղավ հայերի համար²³:

Մշակութային մարդաբան **Լեոնարդ Գլիկի**՝ Հայոց ցեղասպանության ընթացքում կրոնի գործոնին սվիրված անդրադարձը հակիրճ է, սակայն ուշագրավ: Լ. Գլիկը ուղենշող ու կարևոր հարցադրում է կատարում, որի շուրջ համոզված ենք, որ օգտակար կլինի կառուցել հետագա ուսումնասիրությունների մեթոդաբանական մեկնակետերը: Նրա այդ հարցադրումը հետևյալն է. արդյո՞ք Հայոց ցեղասպանության իրագործումը պետք է առաջնայնորեն վերագրել կրոնական հողի հիմքի վրա ստեղծված թշնամանքին, թե՞ ավելի ճշգրիտ կլինի ասել, որ գոհերի քրիստոնեական ինքնությունը լրացուցիչ գործոն էր՝ ցեղասպանությունն իրագործելու համար²⁴:

Ըստ նրա՝ չնայած Հայոց ցեղասպանությունը ծրագրվել էր ոչ թե կրոնական մոլեռանդների, այլ հասարակության տարբեր շերտերի պատկերացմամբ առաջադեմ գաղափարների տեր քաղաքական վերնախավի կողմից²⁵, ոճրագործությունը ծրագրողների համար իսլամն իրենց կոլեկտիվ ինքնության անբաժանելի տարրերից էր: Նույնկերպ էլ քրիստոնեությունը նրանց գոհերի ինքնության որոշիչ տարրերից էր: Եվ այդպիսով, ըստ նրա՝ **Հայոց ցեղասպանությունն իրողություն է, որի նպատակն էր ոչնչացնել այն ժողովրդին, որի «հանցանքը» էթնիկ և կրոնական տարբերությունն էր**²⁶:

Հոլոքոստի աստվածաբանությամբ զբաղվող պրոֆեսոր **Ռիչարդ Լ. Ռուբենշտայնն** առանձին հոդվածով անդրադարձել է Հայոց ցեղասպանության մեջ կրոնական գործոնի ամենատարբեր կետերի: Նա ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ շատ քիչ է գրվել իսլամի ցեղասպանական պոտենցիալի մասին՝ չնայած այն բանին, որ XX դարի ամենավաղ իրագործված ցեղասպանությունը և Հոլոքոստի նախակարապետ Հայոց ցեղասպանությունն իրագործվեց մուսուլմանական պետության կողմից իր քրիստոնյա հայ բնակչության հանդեպ²⁷: Օսմանյան *դիվանի* համակարգի պատմության ու նշանակության մեջ պատմական էքսկուրս կատարելով, անդրադառնալով *ջիհադի* տարրերին, հայերի հանդեպ

²³ Տե՛ս նույն տեղում:

²⁴ Տե՛ս Glick L., “Religion and Genocide” in *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*, edited by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, էջ 106, նույն հոդվածը տե՛ս նաև հետևյալ գրքում. *The Widening Circle of Genocide, Vol. 3*, edited by Israel W. Charny, Transaction Publishers, 1994, էջ 53-54:

²⁵ Տե՛ս Glick L., “Religion and Genocide” in *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam...*, էջ 105:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 106:

²⁷ Տե՛ս Rubenstein R. L., “Jihad and Genocide: The Case of the Armenians” in *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*, edited by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, էջ 122:

մինչև Մեծ եղեռնն իրականացված զանգվածային հալածանքներին ու կոտորածներին՝ Ռուբենշտայնն իր հողվածում կարևոր ընդգծում է անում. «Երբ ես առաջին անգամ գրեցի Հայոց ցեղասպանության մասին, շեշտը դրեցի ձեռնարկի արդիական լինելու վրա՝ իր տնտեսական, քաղաքական և գինվորական դրդապատճառներով: Ես հաշվի չառա, որ ոճրագործների մոտիվների մեջ կարող էր լինել կարևոր կրոնական բաղադրիչ: Արդիականացվող երիտթուրք վերնախավը մեծամասամբ դավաճանել էր սեփական կրոնական ժառանգությանը: Այսօր ես կհաստատեի, որ կրոնն անհրաժեշտ, սակայն վերջնական պատճառ չէր ցեղասպանություն իրագործելու համար: Ես կհաստատեի նաև, որ հայերի դեմ գործված ոճիրը թուրքերի կողմից դիտվում էր որպես օրինական պաշտպանական մեթոդ՝ ընդդեմ *դիհիմնիների*, որոնք խախտել են *դիհիմնայի* դրույթները և հետևաբար՝ օրենքից դուրս էին, և որոնցից ամեն ինչ՝ կյանքը, սեփականությունը, ստրկությունից ազատ լինելը և ընտանիքը, բռնագրավված պետք է լինեի»²⁸: Ռուբենշտայնը հենց այս վերջին հանգամանքի հետ է կապում Եղեռնի՝ մինչ օրս շարունակվող թուրքական ժխտողականությունը, քանի որ գտնում է, որ թուրքերի պատկերացմամբ իրենք ոչ մի սխալ բան չեն արել հայերին կոտորելիս, համոզմունք, որն ամբողջովին հիմնված էր *ջիհադի* և *դիհիմնի* համակարգի ավանդական պատկերացումների վրա²⁹:

Կրոնական գործոնի դիտարկման մեջ նա հատուկ ուշադրություն է դարձնում բռնի կրոնափոխության երևույթին³⁰ և որպես եզրափակիչ խոսք՝ ընդգծում, որ Հայոց ցեղասպանությունը, կրոնափոխության ծրագիրը, հույների կոտորածները՝ բոլորը միտված էին մեկ ընդհանուր խնդրի իրագործմանը՝ **վերացնել քրիստոնեական դեմոգրաֆիկ ներկայությունը Թուրքիայից**³¹: Հավելենք, որ դեմոգ-

²⁸ Նույն տեղում, էջ 132, 133:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 133:

³⁰ Տե՛ս նույն տեղում:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 135: Լուսանջելեյան «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի խմբագիր Հարութ Սասունյանը 2016թ. սեպտեմբերին քննադատական հողվածով (անգլերեն բնագիրը՝ <http://www.thecaliforniacourier.com/pan-turanism-not-islam-motivated-the-armenian-genocide/> արևելահայերեն թարգմանությունը տե՛ս <https://www.azatutyun.am/a/27981596.html>, դիտված 28.07.2017 թ.) անդրադարձել է Ռիչարդ Լ. Ռուբենշտայնի կողմից կատարված «Հայոց ցեղասպանությունը որպես ջիհադ» վերլուծությանը, որը տպագրվել է *Remembering for the Future: Armenia, Auschwitz, and Beyond*, edited by Michael Berenbaum, Richard Libowitz, and Marcia Sachs Littell, St. Paul, Paragon House, 2016 գրքում: Հ. Սասունյանը հրաժարվում է նկատել կրոնական գործոնի որևէ առնչություն Մեծ եղեռնի հետ՝ մեղադրելով հայերին այն բանում, որ սեփական քրիստոնեական ինքնությունից ելնելով՝ հայերը բանահյուսություն են ստեղծել և հայտարարում են, որ իրենք նահատակվել են իրենց հավատքի համար: Եվ չնայած հողվածը գիտական չէր, այլ սիրողական, անձնական կարծիքի մակարդակում գրված խոսք, հարկ համարեցինք մի քանի դիտարկումներով անդրադարձ կատարել դրան, քանի որ այն լայն տարածում ունեցավ համացանցում, քննարկվեց և թարգմանվեց:

1. Հայերը մարտիրոսվել են **նաև** իրենց հավատքի համար, ցեղասպանության ընթացքում կոտորածների ենթարկվածների ինքնության մեջ որոշիչ դերը կրոնական և էթնիկ պատկանելությունն էր, իսկ կրոնական պատկանելությանը որևէ տեղ չտալը հակագիտական թեզ է:

2. Նա ասում է. «դժվար է հավատալ, որ բարեպաշտ մուսուլմանը կարող էր սպանել որևէ մարդ արարածի՝ չխոսելով արդեն միլիոնավոր մարդկանց մասին»: Նախ՝ մեր նախնիին ու ներկա հողվածներով ցեղասպանության տարատեսակ հարցերով զբաղվող ցեղասպանագետներին

րաֆիկ ներկայությունից զատ, ցեղասպանական ծրագրի մեջ քրիստոնեական հոգևոր-մշակութային ոչնչացում ևս իրականացվեց, այսինքն՝ **այն միաված էր վերացնելու** քրիստոնեական ամբողջական ներկայությունը՝ դեմոգրաֆիկ, հոգևոր ու մշակութային բաղադրիչներով:

Հրեա ուսուցիչ, պատմաբան և կրոնագետ **Սթիվեն Լ. Ջեքոբս** իր կրոնագիտական վերլուծության շրջանակներում ընդհանուր գծերով քննության է ենթարկել ցեղասպանությունների իրագործման մեջ կրոնի դերն ու նշանակությունը: Հատկապես ընդգծելով ցեղասպանությունն իրագործողի՝ «մենք»-ի և ցեղասպանության ենթարկվող խմբի՝ «նրանք»-ի ուսմունքը՝ որպես կարմիր թել բոլոր ցեղասպանությունների իրականացման մեջ, նա ձևակերպում է. «...կրոնը ոչ թե **անհրաժեշտ կամ բավարար պայման է ցեղասպանությունների իրագործման համար, այլ շատ գորավոր և ունակ գործոն է, որին կարող է հղում կատարել ոճիրը կատարող կողմը՝ իր նպատակն իրականացնելու համար**»³² (ընդգծումը մերն է-Շ. Խ.): Ինչպես Լեո Կուպերը, Ջեքոբսը ևս քննարկում է երեք միաստվածային կրոնները ցեղասպանական պոտենցիալ պարունակելու համատեքստում, առանձնացնում է չորս գործոններ, որոնք պարունակում են ցեղասպանական պոտենցիալ.

1. ցեղայնություն,
2. կրոնական էքսկլուզիվիզմ՝ բացառիկություն,
3. սեփական առանձնաշնորհվածության հանդեպ հավատք՝ աստվածայինին մոտ լինելու հարցում,
4. սրբազան գրվածքների առանձնահատուկ նեղ ընկալում:

ներկայացված մտքերն ի մի բերելով՝ ցույց ենք տվել, որ ցեղասպանության իրագործման մեջ զանգվածային մասնակցությունն ապահովող օղակը կրոնն էր՝ իսլամը, և մեծամասամբ նույն կրոնական բարեպաշտությունից ելնելով էին զանգվածները սպանություն գործում՝ դա ընկալելով որպես կրոնական պարտականություն կամ ծառայություն Ալլահին: Պետք է հաշվի առնել, որ «մարդ» հասկացության տակ իսլամադավանը հասկանում էր/է միայն իսլամադավանին, և անհավատ-գյավուրներին կոտորելը կարող էր/է օրինականացվել Ղուրանի տեքստերի մեկնաբանությամբ (սպատակային շեշտադրումներով) և իսլամադավան կրոնավորների հրահանգներով (տե՛ս Խաչատրյան Շ., Բռնությունների և սպանությունների ծիսականացումը Մեծ եղեռնի ընթացքում, *Ցեղասպանագիտական հանդես* 4(2), ՀՅԹԻ, Երևան, 2016, էջ 100-117): 3. Երիտթուրքերին կոչելով աթեիստներ և ազնուտիկներ՝ նա բացառում է ցեղասպանության ծրագրի մեջ կրոնի գործոնի առկայությունը, այնինչ եթե անգամ նրանք աթեիստներ և ազնուտիկներ էին (ինչը դեռ ապացուցման կարիք ունի, քանի որ մինչ այժմ որևէ հետազոտություն չի կատարվել երիտթուրքերի կրոնական աշխարհայացքի վերաբերյալ), չի նշանակում, որ նրանք չէին թիրախավորի քրիստոնյաներին կրոնի հիմքի վրա, այսինքն՝ քրիստոնյա լինելու պատճառով: Մեր ուսումնասիրություններից մեկում ցույց ենք տվել երիտթուրքերի գաղափարախոսության՝ ընդգծված հակաքրիստոնեական ուղղվածությունը (տե՛ս Խաչատրյան Շ., Երիտթուրքերի գաղափարախոսական ուղենիշները: Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ, *Ցեղասպանագիտական հանդես* 4(1), Երևան, ՀՅԹԻ, 2016, էջ 121-139): 4. Մեզ համար անհասկանալի է, թե ինչպես կարելի է առանձնացնել մեկ գործոն, այն է՝ պանթուրքականությունը՝ որպես Հայոց ցեղասպանության պատճառ, եթե անգամ ցեղասպանագետ գիտնականները ճանաչում են տարբեր գաղափարական գործոնների միասնական ազդեցությունը:

³² Steven Jacobs L., “Genocidal Religion” in *Journal of Hate Studies*, Vol. 9:22, Gonzaga University Institute for Hate Studies, 2011, p. 225.

Ըստ նրա՝ այս գործոնների դերակատարության մասին դեռևս աննշան պատկերացում կա, չնայած այն փաստին, որ այդ գործոնների ներկայությանը մենք ակա՛նատես եմք կրոնական համայնքներում և հետևաբար՝ կրոնի գործոնը վերացնելու, այսինքն՝ ցեղասպանությունները կանխելու ուղղությամբ մեծ քայլ անելու համար պետք է ներառել կրոնական անձանց ու համայնքներին, քանի որ նրանք են և՛ խնդրի ծագման բաղադրիչներից մեկը և՛ հետևաբար՝ լուծման մասնակիցներից մեկը: Սակայն ինչպես արդեն մեջբերեցինք, նա նշում է, որ կրոնի գործոնի մասին խոսող, այն դիտարկող և այդ ուղղությամբ կանխարգելման մեթոդներ առաջարկող բուն կրոնագետ-մասնագետների պակաս կա, և այդ բացը պետք է լրացվի³³:

Ամերիկահայ պատմագետ **Ռոնալդ Գ. Սյունին** նշում է, որ ինչպես **Հայոց ցեղասպանությանը նախորդած, այնպես էլ ցեղասպանության ընթացքում տեղի ունեցած կոտորածների ժամանակ զոհերն ու զոհարկյունները (անգլ. victimizer) տարբեր կրոնների ներկայացուցիչներ էին, սակայն, ըստ նրա, զանգվածային սպանություններն առաջնային կերպով չէին բխում կրոնական տարբերությունից կամ կրոնական համոզմունքներից**³⁴: Միլլեթների մեջ դասվելը, ըստ իր համոզման, տարբերակող կարևոր ցուցիչներից էր, և կրոնն էլ ազգային պատկանելությանը սերտ կապված բաղադրիչ էր, սակայն **սպանության դրդապատճառը կրոնից չէր բխում, այլ տարատեսակ ազդակների համախումբ էր, որի ընդհանուր անվանումը «նրանք»-ի՝ ուրիշի, այլի կամ որ նույնն է՝ թշնամու կերպարն էր**³⁵: Նա հավելում է, որ **կրոնական տարբերությունն անկասկած դերակատարում ունեցավ, և կրոնն էր տարբերակման գլխավոր ցուցիչը հայերի կոտորածների ընթացքում, որն աստիճանաբար փոխարինվեց ազգային տարբերակմամբ** (ընդգծումը մերն է-Շ. Խ.): Կարևոր է նրա օգտագործած կրոնաազգային ինքնություն արտահայտությունը, որը նա համարում է ցեղասպանության պատճառ, սակայն մեր կարծիքով նրա արտահայտած հաջորդող միտքը չի ապացուցում այդ կամ թույլ հիմնավորված է և լրացուցիչ հիմնավորման պահանջ է առաջացնում ընթերցողի մեջ: Այդու՝ նա կարծում է, որ հայերի ինքնությունը օսմանյան ոճրագործների կողմից այնպես կոտ չէր ընկալվում, ինչպես որ նացիստական Գերմանիայում ընկալվում էր հրեաների ինքնությունը: Ըստ նրա՝ հայերը հավաքական կարծրատիպով ընկալվում էին որպես ազահ, ընչաքաղց, վնասակար, անհնազանդ ազգ՝ օտար, որոնց կարելի էր ոչնչացնել³⁶:

Ժամանակակից թուրք պատմաբան **Թաներ Աքչամն** ասում է «...առանց հայացք նետելու մուսուլման ոչ մուսուլման փոխհարաբերությունների առանձին հանգամանքների վրա՝ չենք կարող հասկանալ այն պրոցեսը, որը հանգեցրեց Հայկական

³³ Նույն տեղում, էջ 230, 231:

³⁴ Տե՛ս Suny R. G., Religion, “Ethnicity, and Nationalism: Armenians, Turks, and the End of the Ottoman Empire”, in *In God’s Name. Genocide and Religion in the Twentieth Century*, edited by Omer Bartov and Phyllis Mack, Barghahn Books, 2001, էջ 24:

³⁵ Նույն տեղում, էջ 24, 53:

³⁶ Նույն տեղում, էջ 54:

հարցի վերջնական լուծման որոշումը կայացնելուն»³⁷: Արջամը պատմական զարգացումներով է բացատրում օսմանյան *դիմննի* (*գիմննի*) համակարգը՝ *միլլետթ* խմբերով՝ որպես Օսմանյան կայսրությունում դուրանյան հիմք ունեցող սոցիալական երևույթ³⁸: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի վերաբերմունքը կայսրության քրիստոնյա համայնքների հանդեպ նա չի պայմանավորում զուտ գաղափարախոսական նախընտրություններով, այլ քաղաքական առաջնահերթություններով, այն պետական փիլիսոփայությամբ, որ նրանք ժառանգել էին 600 տարվա ժամանակամիջոցում, որը խոր կնիք էր թողել: Ըստ թ. Արջամի՝ օսմանյան առաջնորդները կարող էին հագուստի նման փոխել գաղափարախոսությունները, եթե իրադրությունը դա պահանջեր. երիտթուրքերին չէին հետաքրքրում փիլիսոփայական գաղափարները³⁹: Եվ արդյունքում. «...**երիտթուրքերի թշնամությունն ու անվստահությունը քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ և նրանց մեջ գերակայող բռնությունների քաղաքական մշակույթը դրդեցին խմբին իրագործել Հայոց ցեղասպանությունը**»⁴⁰ (ընդգծումը մերն է-Շ. Խ.): Մյուս կողմից ուսումնասիրողը պնդում է, որ երիտթուրքերի փիլիսոփայության մեջ կենտրոնական դերը կատարում էր գիտության հանդեպ հավատը, իսկ իրենք իրենց ընկալում էին որպես հասարակության բժիշկներ՝ օսմանյան հասարակությունը բուժելու տեսլականով, աստվածատուր, մեսիական առաքելությամբ օժտված մարդիկ, և հետևաբար՝ իրենց դիմադարձելն իրենց իսկ աչքին հավասարագոր էր աստվածային կամքին ու նախախնամությանը դիմադարձելուն⁴¹:

Թաներ Արջամն առանձին աշխատությամբ անդրադարձ է կատարում Հայոց ցեղասպանության ընթացքում կատարված կրոնափոխության լայն տարածում ստացած երևույթին՝ դիտելով այն որպես համակարգված իրականացվող երևույթ Հայոց ցեղասպանության սկզբում⁴²:

Ոչ այնքան ուղղակիորեն կրոնի դերը Հայոց ցեղասպանության ժամանակ, այլ հայերի հանդեպ կատարվող բոլոր վայրագությունների ակունքում թուրքական իսլամի մի առանձնահատկություն է առանձնացնում **Ջեյնա Ջ. Ռեյդը**: Նա վերլուծում է քրիստոնյաների կարգավիճակն Օսմանյան կայսրությունում և հանգում այն մտքին, որ ոչ իսլամադավանների ծանր վիճակը գալիս էր օսմանյան սոցիալական կառուցվածքից: Չարի և բարու պայքարի աստվածաբանության կոսմոլոգիական մոդելը, ըստ այդ պատկերացումների, հետևյալն է. երբ բարին չարին հաղթում է, ոչ մուսուլմաններն ընկնում են մուսուլմանների տիրապետության տակ: Եվ քանի դեռ ոչ մուսուլման «անհավատները» ընդունում ու հնազանդվում են իսլամական օրենքին, արգելվում է նրանց սպանելը: Սակայն քանի որ իսլամադավանների

³⁷ Akçam T., *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, New York, 2006, p. 20.

³⁸ Նույն տեղում, էջ 23, 24:

³⁹ Նույն տեղում, էջ 53:

⁴⁰ Նույն տեղում, էջ 56:

⁴¹ Նույն տեղում, էջ 57:

⁴² Տե՛ս Արջամ թ., *Հայերի բռնի իսլամացումը. լրություն, ժխտում և ուժացում*, Երևան, 2016:

կառավարական հովանու ներքո ապրող ոչ իսլամադավաններն այդ նույն միջնադարից եկած մտայնության համաձայն ընկալվում էին որպես Իբլիսի՝ սատանայի խաբեություններին հեշտությամբ ենթարկվող խմբեր, նրանց հանդեպ կատարված բռնությունները համապատասխանաբար համարվում էին պայքար Իբլիսի դեմ: Ոչ մուսուլմանների հետ խիստ ու դաժան վարվելը բարեպաշտության, Իբլիսի դեմ պայքարելու և Ալլահի կամքն իրագործելու նշան էր համարվում⁴³: Այսինքն, եթե հայերը հայտարարվեին օրենքից դուրս, նրանց կոտորելը որևէ դժվարություն չէր առաջացնի, ընդհակառակը՝ կրոնական սխրանք կլիներ: Այս մոդելը բավականին մոտ է Հայոց ցեղասպանության ընթացքում կատարված կրոնական բռնություններին, դրանց հրահրմանը՝ քրիստոնյաներին կոտորելու հետևանքով հետմահու դրախտային երանության արժանանալու կրոնական կոչերով հանդերձ:

Ժամանակակից ամերիկացի ցեղասպանագետ **Բեն Կիերնան**ն ասում է. «**Չնայած բոլոր երեք ռեժիմները** (երիտթուրքականը, նացիստականն ու կիմերը –Շ. Խ.) **աթեիստական էին, յուրաքանչյուրն էլ հատկապես թիրախավորեցին կրոնական փոքրամասնություններին (քրիստոնյաներին, հրեաներին և մուսուլմաններին)**»⁴⁴ (ընդգծումը մերն է–Շ. Խ.): Սակայն կրոնը՝ որպես բանալի տարր դիտելուց զատ նա նաև որոշիչ է համարում ռասիզմը⁴⁵: Ցեղասպանությունների ծրագրման և իրագործման մեջ գաղափարական տարրերից ռասան, կրոնը, էքսպանսիան և հողամշակույթը պայթուցավտանգ խառնուրդ համարելով՝ Բ. Կիերնանն ասում է, որ Հայոց ցեղասպանությունը կարելի է մասամբ ներկայացնել որպես քրիստոնյա ոչ թուրքերին ոչնչացնելու փորձ՝ նոր տարորոշված թուրք մուսուլման ազգի կողքից նրանց վերացնելուն միտված, բայց միաժամանակ ռասայական գերակայության՝ թուրքերի պատկերացումները դիտարկելով որպես նշանակալի դեր կատարող⁴⁶: Մեր համոզմամբ, սակայն, ռասայական այն բաղադրիչը, որ տեղ ուներ Հոլոքոստի ընթացքում, տեղ չունի Հայոց ցեղասպանության ընթացքում՝ զանգվածային մակարդակով: Ճիշտ հակառակը՝ պետական քաղաքականության մաս էր հայերի գենետիկ սելեկցիան՝ իսլամացմամբ և թրքացմամբ: Հայերի հանդեպ իրարամերժ վերաբերմունքն ավելի ընդգծված էր, մի կողմից՝ նրանք «մակարոյծ» էին հայտարարվել, մյուս կողմից՝ իսլամադավանների մտայնության մեջ հայերի հետ գենետիկորեն խառնվելուց խորշելու որևէ միտում չկար, ճիշտ հակառակը:

Եզրափակենք հետևյալ ընդհանրացումներով. կրոնի գործոնը և կրոնը որպես գործիք օգտագործվելու պետական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ընթացքում գիտական վերլուծության կարիք ունեն հատկապես կրոնագետ-

⁴³ St' u Reid J. J., "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918" in *Studies in Comparative Genocide*, edited by Levon Chorbajian and George Shirinian, New York, 1999, էջ 62-65:

⁴⁴ Kiernan B., "Twentieth-Century Genocides: Underlying Ideological Themes from Armenia to East Timor", in *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective*, ed. by Robert Gellately & Ben Kiernan, Cambridge University Press, 2003, p. 29.

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Նույն տեղում, էջ 30:

պատմագետների կողմից: Կրոնագիտական քննարկումները պետք է անդրադառնան մասնավոր խնդիրների դիտելով Օսմանյան կայսրության միջկրոնական կառույցը, թուրքական իսլամ-քրիստոնեություն փոխհարաբերությունները, ներհակություններն ու հակամարտությունները, այդ ամենի դերակատարությունը ոճրագործությունը ծրագրողների և իրականացնող զանգվածների կրոնահոգեբանության ու գործողությունների մեջ: Այս իմաստով վերոնշյալ հեղինակների անդրադարձները դրական հող են նախապատրաստում այդ կրոնագիտական վերլուծություններն իրականացնելու ուղղությամբ:

ԿՐՈՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Շուշան Խաչատրյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածն անդրադարձ է Մեծ եղեռնի կրոնագիտական ուսումնասիրության հիմնահարցերին: Կրոնի գործոնը և կրոնը որպես գործիք օգտագործվելու պետական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ընթացքում դեռևս գիտական վերլուծությունների կարիք ունեն, հատկապես կրոնագետ-պատմագետների կողմից: Հոդվածում ներկայացված են Հայոց ցեղասպանությունն այս տեսանկյունից ուսումնասիրելու հրամայականը, ինչպես նաև խնդրո առարկայի շուրջ մի շարք ուսումնասիրողների (Ռաֆայել Լեմկին, Լեո Կուպեր, Վահագն Դադրյան, Լեոնարդ Գլիկ, Ռիչարդ Լ. Ռուբենշտայն, Սթիվեն Լ. Ջեքոբս, Ռոնալդ Գ. Սյունի, Թաներ Աքչամ, Ջեյմս Ջ. Ռեյդ և Բեն Կիերնան) անդրադարձներն ու ընդհանուր մոտեցումները:

Բանալի բառեր՝ կրոնի գործոն, կրոնը՝ որպես գործիք, ջիհադ, կրոնական փոքրամասնություններ, կրոնական տարբերություն, քրիստոնյա, մուսուլման, երիտթուրքեր:

THE RELIGIOUS ISSUE IN THE ARMENIAN GENOCIDE STUDIES

Shushan Khachatryan

SUMMARY

The article presents the studies of religious issues of the Armenian Genocide. The religious factor and religion used as a tool for state politics during the Armenian Genocide still requires scholarly analysis, especially to be carried out by the historian-scholars of Religious Studies. The article examines the must for study of the mentioned aspects of the Armenian Genocide, as well as presents the reflections and general approaches of a number of scholars (Raphael Lemkin, Leo Kuper, Vahagn Dadrian, Leonard Glick, Richard L. Rubenstein, Steven L. Jacobs, Ronald G. Suny, Taner Akcam, James J. Reid and Ben Kiernan).

Keywords: religious factor, religion as a tool, jihad, religious minorities, religious difference, Christians, Muslims, Young Turks.

РЕЛИГИОЗНЫЙ ВОПРОС В ИССЛЕДОВАНИЯХ ГЕНОЦИДА АРМЯН

Шушан Хачатрян

РЕЗЮМЕ

Данная статья посвящена изучению Геноцида армян с точки зрения религиоведения. Аспекты религиозного фактора и религии, используемые в качестве инструмента государственной политики во время Геноцида армян, все еще нуждаются в научном анализе, особенно со стороны историков-религиоведов. В статье рас-

смачивается императивность изучения данных аспектов Геноцида армян, а также представлены общие подходы ряда исследователей относительно данного вопроса (Рафаэль Лемкин, Лео Купер, Ваагн Дадрян, Леонард Глик, Ричард Л. Рубенштайн, Стивен Л. Джекобс, Рональд Г. Сюни, Танер Акчам, Джеймс Дж. Рейд и Бен Киернан).

Ключевые слова: религиозный фактор, религия как инструмент, джихад, религиозные меньшинства, религиозные различия, христиане, мусульмане, младотурки.

**ՄԵԿ ՔԱՅԼ ԴԵՊԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ.
«ՄԵՆՔ» ԵՎ «ՆՐԱՆՔ» ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ 1911-1913 ԹԹ.**

Ռեզինա Գալուստյան

Թուրքական ազգային ինքնության ձևավորման ծրագրում «մենք» և «նրանք»¹ կաղապարների կառուցումն առաջնային նշանակություն ուներ: Օսմանյան կայսրությունում դա իրականացվում էր պետական մակարդակով՝ ընդհանուր ազգաստեղծման ծրագրի շրջանակներում: 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրք գործիչների քաղաքական հայացքներն արդեն հենված էին թուրքական ազգայնականության վրա, սակայն շատ ավելի ճկուն էին: Նրանք, լինելով ազգակերտման հիմնական գործիչները, արտաքին և ներքին քաղաքական փոփոխված իրավիճակին համապատասխան, ազգային գաղափարախոսության մեջ օգտագործում էին տարբեր ուղղություններ՝ օսմանիզմ, պան-իսլամիզմ, պանթուրքիզմ²:

Պատմությունը հսկայական նշանակություն ունի ժողովրդին ազգային կամ էթնիկ խմբի վերածելու գործընթացում: Համատեղ ջանքերը՝ հաջողությունը կամ ձախողումը, անհատներին հոգևոր կապերով շատ ավելի ամուր են կապում իրար, քան երբեմն լեզվի ընդհանրությունը, որը նույնպես ազգի տարբերակիչներից է: Պարտությունը կարող է հաղթանակից շատ ավելի հզոր ազդակ լինել ազգային ինքնագիտակցությունը խթանելու համար³: Թուրքերի դեպքում նույնպես պարտությունները գործնական նշանակություն ունեցան: Պատահական չէ, որ Կոստանդնուպոլսի համալսարանի դասախոս, լրագրող Ահմեդ Էմինը նշում է, որ թուրքերի ազգային ինքնագիտակցությունը ձեռք է բերվել պարտության, օտար-

¹ Էթնոսի «մենք» կոնցեպցիան կամ էթնոսի ինքնագիտակցությունը էթնոսի անդամների մեծ մասի պատկերացումն է իր ծագման, մշակույթի, հոգեկան կերտվածքի և վարքի յուրահատկությունների մասին (տե՛ս Նալչաջյան Ա., *Էթնիկական հոգեբանություն*, Եր., 2001, էջ 55): Երբ որևէ սոցիալական (տվյալ դեպքում՝ էթնիկ) խումբ առանձնանում է մյուսներից, ապա նրա անդամների մեջ առաջանում է «մենք»-ի զգացում, և նրանք սկսում են տարբերակել «յուրայիններին» (*սույն տեղում*, էջ 51): Սա կարևորվում է հատկապես նախացեղասպանության փուլում, երբ սահմանվում են և՛ արտաքին, և՛ ներքին խմբերը: Թուրքը, գերմանացին, հույուն, աշխատավորների դասը դիտվում են որպես դրական էություն ունեցող խմբեր, ինչը նրանց դարձնում է մարդկանց գերակա խումբ, հարգանքի արժանի ընտրյալ ժողովուրդ (տե՛ս Chiro D., McCauley C., *Why Not Kill Them All? The Logic and Prevention of Mass Political Murder*, Princeton University Press, 2006, էջ 85):

² Տե՛ս Jacob M. Landau, *Pan-Turkism: from Irredentism to Cooperation*, sec. ed., Indiana University Press, 1995, էջ 47:

³ Տե՛ս *International Relations*, rev. edition by Raymond Leslie Buel, New York, Henry Holt and Company, 1930, էջ 16:

ների թուրքատյաց քաղաքականության ու ստորացման արդյունքում⁴: Պարտությունները և պայքարը քրիստոնյա երկրների և հպատակների դեմ հանգեցրին նրան, որ 1912 թվականից կայսրությունում խմբերի տարբերակման մեջ կարևորվեց կրոնը. «օսմանցու» սահմանումից քրիստոնյաները դուրս մնացին⁵: Իր հերթին մուսուլման արքանացիների (ևսև արաբների) ապստամբությունը հարված հասցրեց պանիսլամիզմին⁶: Դա էր պատճառը, որ թուրքական մտավորականության համար հստակեցվեցին թուրքիզմի սահմանները, և դյուրին դարձավ դրա քարոզը⁷: Բալկանյան ժողովուրդների՝ կայսրությունից օտարվելու պայմաններում թուրք գաղափարախոսները կանգնեցին «ո՛վ են նրանք» հարցադրման առաջ, որն էլ հանգեցրեց «իսկ ո՛վ ենք մենք» հարցին: Այս երկու հարցերին պատասխանելով են միայն խմբի անդամները որոշում, թե ովքեր են իրենք, և թե ինչպես է պետք վարվել «նրանց» հետ⁸:

Մենք՝ մուսուլմաններս, և նրանք՝ քրիստոնյաները

1911-1913 թթ. Լիբիական և Բալկանյան պատերազմները, դրանց արդյունքում կրած պարտություններն ու տարածքային կորուստները թուրք ազգայնականների համար համապատասխան մթնոլորտ ստեղծեցին՝ թուրքական ազգայնականության սահմանները գծելու և քարոզելու համար: Ինչպես երիտթուրք գաղափարախոսներից Մունիա Թեքինալին (Մոնիա Կոհեն) է նշում, ազգային ինքնագիտակցությունը թուրքերի մեջ արթնացել է Բալկանյան պատերազմներից հետո⁹: Ստեղծված միջավայրը բարենպաստ էր վերնախավի համար՝ թուրքերի մեջ «մենք» և «նրանք» կաղապարները կառուցելու համար, որը սկզբնական շրջանում ընթացավ քրիստոնյա և մուսուլման տարբերակմամբ: Թեքինալինը տալիս է նաև դրա հիմնավոր բացատրությունը: Ըստ նրա՝ գիտակցելով, որ դեռևս վերացական ազգայնականության իդեալների շուրջ հնարավոր չէր համախմբել անկիրթ մարդկանց, ազգայնական գաղափարախոսները նպատակահարմար են գտել այդ համախմբվածությանը հասնել կրոնի միջոցով, քանի որ կրոնը համընդհանուր կոչ ուներ, այն դեպքում, երբ ազգայնականությունն ավելի նուրբ գործիք էր և լավ

⁴ St' u Ahmed Emin, *The Development of Modern Turkey as Measured by its Press*, New York, 1914, էջ 107, 108:

⁵ St' u Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ер., 2013, էջ 33:

⁶ St' u Halide Edib, *Memoirs of Halide Edib*, The Century Co., New York, London, 1926, էջ 320, տե՛ս նաև՝ Jacob M. Landau., *նշվ. աշխ.*, էջ 47:

⁷ St' u Uriel Heyd, *Foundations of Turkish nationalism: the life and teachings of Ziya Gökalp*, London, 1950, էջ 34: Թուրքիզմի և պանթուրքիզմի մեջ նույնպես երիտթուրքերը մեծ տարբերություն չէին դնում: Երկու գաղափարախոսություններում էլ թուրքի գերիշխող դերը հիմնական գիծն էր: Նույնիսկ Ջելալ Նուրին (1877-1939), որը հայտնի թուրք լրագրող և մտավորական էր, 1918 թ. անկեղծանում է, որ շատ քիչ տարբերություն է տեսնում թուրքիզմի և պանթուրքիզմի միջև (*նույն տեղում*):

⁸ St' u Moshman David, “Us and them: Identity and Genocide”, *Identity: an International Journal of Theory and Research*, 7(2), 2007, էջ 120:

⁹ St' u Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, Liberty Press, London-England, էջ 57:

պատրաստվածություն էր պահանջում¹⁰: Երիտթուրքերի մամուլի էջերում մեծ տեղ էր զբաղեցնում իսլամի քարոզը: Բայց եթե «նոր օսմանները» դիմում էին իսլամին՝ սահմանադրական բարենորոգումները հիմնավորելու նպատակով, ապա երիտթուրքերն այն օգտագործում էին որպես Օսմանյան կայսրության բոլոր մուսուլման ժողովուրդներին թուրք սուլթանի գերիշխանության ներքո համախմբելու զենք:

Ահմեդ Էմինը շեշտում է, որ երիտթուրքերը, որոնք «ինքնագոհողության պատրաստ հայրենասերներ էին», սահմանադրությունից հետո դեռևս օգտագործում էին «օսմանիզմ» և «Թուրքիայի բնակչության բոլոր տարրերի առանց դավանանքի և կրոնի խտրության միություն» արտահայտությունները, սակայն ոչ որպես համահավասար իրավունքներ հաստատելու հարթակ, այլ ոչ թուրք տարրերի ձուլման, հարկ եղած դեպքում նույնիսկ հարկադիր ձուլման կարգախոսներ. «Նման քաղաքականությունը խորացրեց և հստակեցրեց այն սահմանները, որոնք գոյություն ունեին թուրքերի և կայսրության ոչ թուրք բնակչության միջև»¹¹: Օսմանիզմից հրաժարվելն արդարացնելու նպատակով թուրք ազգայնականության գաղափարախոս Ջիյա Գյոքալփը 1913 թ. հայտնում է, որ թանգիմաթի բարենորոգիչները և «նոր օսմանները» ազնիվ չէին տարբեր համայնքների ազգային իրավունքները ճանաչելու հարցում, այլ օգտագործում էին օսմանիզմը՝ որպես կայսրությունը թուրքացնելու միջոց¹²: Երիտթուրք պարագլուխներից Ջեմալ փաշան իր հուշերում շեշտում է, որ ինքն իհարկե առաջին հերթին օսմանցի է, սակայն չի մոռանում, որ թուրք է, և ոչինչ չի կարող սասանել իր համոզմունքն առ այն, որ թուրքական ուսան է Օսմանյան կայսրության հիմնաքարը, և որ այդ երկիրը թուրքերի ստեղծածն է¹³:

Կրոնով պայմանավորված դիխտոմիզացիան՝ հասարակության բաժանումը, ստեղծման պահից ի վեր հատուկ էր Օսմանյան կայսրությանը: Իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած՝ օսմանյան թուրքերն իրենց բնորոշել են որպես առաջամարտիկներ քրիստոնյաների դեմ պայքարում: Նրանց միջավայրում համապատասխան ավանդույթների միջոցով ստեղծվում էին հակաքրիստոնեական տրամադրություններ՝ ջիհադի քողի ներքո նվաճումներ կատարելու համար¹⁴: 1912 թ. թուրքական ազգայնական թերթերում ջիհադի կոչի աննախադեպ մասշտաբների մասին փաստում է «Armenia»-ի նույն թվականի հուլիսի համարում տպագրվող «Թուրքիա և թուրքեր» շարքը¹⁵: Կայսրության բնակչության կրոնական տարբերակումը, որը խոր արմատներ ուներ, հստակ երևում է ռուս արևելագետ Վասիլի Սմիռնովի վկայությունից: 1875 թ. նրա և Ստամբուլի համալսարանի ուսանողների միջև կայացած մի զրույցի ժամանակ ուսանողները պնդել են, որ

¹⁰ Տե՛ս Tekin Alp, *նշվ. աշխ.*, էջ 36:

¹¹ Ahmed Emin, *նշվ. աշխ.*, էջ 101:

¹² Տե՛ս Uriel Heyd, *նշվ. աշխ.*, էջ 73:

¹³ Տե՛ս Djemal Pasha, *Memoir of a Turkish Statesman, 1913-1916*, George H. Doran Company, New York, 1922, էջ 251, 252:

¹⁴ Տե՛ս Սաֆրաստյան Ռ., *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)*, Եր., «Լուսակն», 2009, էջ 104:

¹⁵ Տե՛ս “Armenia”, July, 1912, Vol. V, No. 12.

մուսուլմանին հարիր չէ ծառայել քրիստոնեական գործում, և ընդհակառակը, քանի որ հավատակիցների դեմ կովելու առիթ կարող է ծագել: Սմիռնոլի այն հակաճառությանը, որ պայքարել պետք է ոչ թե հանուն կրոնի, այլ հայրենիքի, համալսարանի ուսանողները կատարել են հետևյալ հարցադրումը, թե Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմ սկսվելու դեպքում իրեն ո՞վ ավելի հարազատ կլինի՝ «թուրքական քրիստոնյա՞ն», թե՞ «մուսկոլյան մուսուլմանը»: Սմիռնոլի պատասխանը, թե իր հետ «ընդհանուր հայրենիքը պաշտպանող» մուսուլմանը, պարզապես չի համոզել թուրք ուսանողներին¹⁶: «Թ-անիսի» խմբագիր Հյուսեյն Ջահիդը Ադրիանապոլսի հարցը, որը բուլղարական բանակի կողմից գրավվել էր առաջին Բալկանյան պատերազմի* ընթացքում ու բանակցությունների առարկա դարձել, թերթում համարում է իսլամի և քրիստոնեության հարց. «Նրանք ցանկանում են մեզնից վերցնել Ադրիանապոլիսը՝ մուսուլմանական աշխարհը վիրավորելու և ստորացնելու նպատակով»¹⁷:

Կրոնից բացի բաժանարար էր նաև սոցիալական «անարդարության» զգացումը: «Նախկին ծառաների» հասցրած ստորացումը հստակ երևում է և՛ երիտթուրք գաղափարախոսների գրվածքներում, և՛ թուրքերի գործելակերպում: 1912 թ. «The Orient»-ի 48-րդ համարում նկարագրվում է Բալկաններից մուսուլմանների գաղթը, որոնք բուլղարական գործերի առաջխաղացման պատճառով անցնում էին Փոքր Ասիա: Այս փախստականները հայտնել են, որ իրենց գաղթի պատճառը ոչ թե վախն է բուլղարացիներից, այլ ոչ մուսուլմանների իշխանության տակ ապրելու հակակրանքը. «հատկապես նրանց իշխանության, ովքեր մի ժամանակ նրանց ուսանողներն էին՝ հոտը և նախիրը»¹⁸: Երիտթուրք գաղափարախոսներից Յուսուֆ Աբչուրան 1912 թ. գրում է. «Բուլղարացիները՝ կաթնավաճառները, սերբերը՝ խոզարածները և նույնիսկ հույները՝ պանդոկապանները, պարտության են մատնել մեզ՝ օսմանցիներին, որ նրանց տերերն ենք եղել 500 տարի: Այս դաժան ճշմարտությունը, որը մենք նույնիսկ չէինք կարող պատկերացնել, կարող է ուժեղ ապտակ լինել մեր դեմքին, որը կբացի մեր աչքերը և կուղղորդի դեպի ռացիոնալ մտածողություն»¹⁹: Նմանատիպ դիրքորոշում ունի նաև գրող Հալիդե Էդիպը, որը սերբերին, բուլղարացիներին, հույներին անվանում է «մեր նախկին պարտիզայաններ»²⁰:

¹⁶ Տե՛ս Սաֆարյան Ալ., *Զիյա Գյոքալփը և «Թուրքականության հիմունքները»*, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 133:

* Առաջին Բալկանյան պատերազմը բռնկվել է 1912 թ. հոկտեմբերի 8-ին Բալկանյան դաշինքի (Բուլղարիա, Սերբիա, Հունաստան, Մոնտենեգրո) և Օսմանյան կայսրության միջև: Ավարտվել է դաշինքի հաղթանակով 1913 թ. մայիսի 30-ին:

¹⁷ “The Orient”, vol. IV, No. 34, August 20, 1913.

¹⁸ “The Orient”, vol. III, No. 48, November 27, 1912.

¹⁹ Ümit Kurt, Doğan Gürpınar, “The Balkan Wars and the Rise of the Reactionary Modernist Utopia in Young Turk Thought and the Journal *Türk Yurdu* (Turkish Homeland)”, *Nations and Nationalism* 21 (2), 2015, p. 352.

²⁰ Նույն տեղում, էջ 358:

Բալկանյան պատերազմները նաև բարենպաստ միջավայր ստեղծեցին՝ մուսուլմաններին կայսրությունում մնացած քրիստոնյաների դեմ հրահրելու համար²¹: Խնդրի լուծումը դյուրին էր դառնում նաև նրանով, որ այդ մուսուլմանների շարքերը համալրվել էին Բալկաններից ներգաղթած մուհաջիրներով: Երիտթուրք գաղափարախոսները նրանց սնուցում էին կայսրության նոր տարածքային կորուստների հանդեպ վախով և քրիստոնյա ազգային փոքրամասնություններին ներկայացնում այդ հավանական վտանգի ջատագովներ: Դրան նպաստում էին նաև առկա խտրականությունները, օրինակ՝ մուսուլմանների՝ զենք կրելու արտոնությունը: Թուրքական ազգայնական գաղափարախոսները ջանում էին ամրապնդել այդ հակաքրիստոնեական տրամադրությունները: Ահմեդ Էմինը գրում է, որ սահմանադրության հռչակումից հետո բարենորոգումները հաջողությամբ չէին կարող պսակվել այն «պարզ պատճառով», որ կայսրության բնակչության միայն թուրք տարրն էր շահագրգռված երկրի բարօրությամբ²²: Թեքինալփի բնորոշմամբ Բալկանյան պատերազմների ժամանակ կեղծ ընկերները պատռեցին իրենց դիմակները և ցույց տվեցին իրենց ողջ դաժանությամբ. «Ոչ թուրք փարրերի վաղեմի վերաբերմունքը և մուսուլման այրանացիների սպարաամբությունը մեկ անգամ և ընդմիջյաբացեց թուրքերի աչքերը, որոնք մինչ այժմ կուրացված էին սրով և խաբեությամբ, կոպիտ ու ցավոտ փասարով ցույց տալով, որ նրանք բացի իրենցից, ուրիշ ոչ մեկի աջակցությանը չեն կարող սպավիհնել, և որ նրանց գոյությունը միմիայն կախված է նրանց քաղաքական, սոցիալական, մտավոր, փնտրական հզորությունից ու միաբանությունից: Այն ժամանակ, երբ բուլղարացիները, սերբերը և հույները թուրքական զորքը ներքաշեցին կովի մեջ, ժողովրդի վար փարրերի սպարաամբություն սկսվեց նստիկն «ընկերների» սպարաամբությունը, որոնք այժմ մեկը մյուսի երկից աղքատ ամայի երկիրը և ազգը թողեցին բախարի քնսահաճոյքին»²³: Բալկանյան «դավաճան» քրիստոնյա ժողովուրդների կերպարը, որոնք «ստով և խաբեությամբ» պատել էին թուրքական ազգը, սկսեցին վերագրել կայսրության սահմաններում մնացած քրիստոնյաներին:

Ազգային տարբերակում՝ կրոնականի քողի ներքո

Քրիստոնյա-մուսուլման տարբերակումն անընդհատ թուրքական մամուլում երևան էր գալիս հայ-քրդական շահերի բախման դեպքում: Օսմանյան կայսրությունում Ռուսական կայսրության դեսպան Միխայիլ Գիբարը արտգործնախարարին 1913 թ. ապրիլի 7-ին զեկուցում է այն մասին, որ մարտի վերջերին Բիթլիսի նահան-

²¹ Տե՛ս “Armenia”, September, 1912, Vol. VI, No. 2, տե՛ս նաև՝ Chirot D., McCauley C., *նշվ. աշխ.*, էջ 206:

²² Տե՛ս Ahmed Emin, *նշվ. աշխ.*, էջ 90, 91: Քրիստոնյաների բարենորոգումներին չհավատալու և դրանցով շահագրգռված չլինելուն հակասում է «Armenia»-ի համարներից մեկում թուրք աղախնի սպանության մասին տպագրված նյութը: Նրան ծեծելով սպանել են այն պատճառով, որ ցանկացել է քրիստոնեություն ընդունել և անուանապ հույնի հետ: Հույնը նույնպես սպանվել է: Դա 1908 թ. հոկտեմբերն էր՝ սահմանադրության ընդունումից երեք ամիս անց, երբ հռչակվել էր կրոնի և դավանանքի ազատություն (տե՛ս “Armenia”, July, 1912, Vol. V, No. 12):

²³ Tekin Alp, *նշվ. աշխ.*, էջ 15:

գում խժդժություններ են սկսվել մի քրդի սպանությունից հետո, երբ քրդի ազգականները մեղադրել են հայերին: Դեսպանի՝ մեծ վեզիրի հետ ունեցած խոսակցության արդյունքում թուրքական թերթերում դեպքը ներկայացվել է որպես հայի կողմից հայի սպանություն՝ մուսուլմաններին քրիստոնյաների դեմ հրահրելուց խոսափելու նպատակով: Ապրիլի 5-ին կառավարությունը նոր հայտարարություն է արել այս անգամ Երզնկայում ռումբի պայթյունի և հայերի տներում հրավտանգ այլ նյութերի հայտնաբերման կապակցությամբ: Այս առումով «Թանինը» պարզաբանում է, որ պայթյունը հակակառավարական բնույթ չունի, սակայն կոչ է անում ուշադրություն դարձնել այն «խոցերին, որոնցով վարակված է արևելյան Անատոլիան»: Սրան էլ հետևում է Հանում հայ կանանց վրա թուրք ժանդարների հարձակումը, որոնք դրա համար պատասխանատվության են ենթարկվում²⁴: Ռուս դեսպանի զեկուցագրերից մեկում երևում է իրավիճակի սրումը հայերի և մուսուլմանների միջև հայկական տարբեր շրջաններում: Դեսպան Գիրսը արագորձնախարարին ուղարկած մեկ այլ զեկուցագրում վերաշարադրում է պատրիարք Արշարունու՝ 1913 թ. ապրիլի 29-ին մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշային հղած հուշագրի բովանդակությունը: Նախ, ըստ պատրիարքի, մուսուլմանների շրջանում ամրապնդվում է այն համոզումը, որ կայսրությանը պատահած բոլոր դժբախտությունների պատճառը քրիստոնյաներն են: Այնուհետև նա շեշտում է Ադանայի նահանգում հայերի ջարդերի կազմակերպիչներից ոմանց կրկին հայտնվելու փաստը, որոնք անընդհատ այցելում են վալիին, ինչպես նաև Ադանայի թերթերի հակաքրիստոնեական քարոզչությունը: Պատրիարքը վեր է հանում նաև անպատժելիության խնդիրը: Հուշագրում օրինակ է բերվում Վանը, որտեղ այդ պահի դրությամբ 150 հայ էր բանտարկվել մուսուլմանի սպանության մեղադրանքով, այն դեպքում, երբ հայ ուսուցչին և քահանային սպանող մուսուլմաններն ազատ էին արձակվել: Որոշ դեպքերում էլ հայի սպանության համար մուսուլմանը պարզապես պարզևատրվում էր²⁵:

Այս առումով հետաքրքրական է Սևերեկլի Փաշա Ջադե Մեհմեդ Ֆիկրի անունով մի մարդու՝ «Թասֆիրի էֆքյար» թերթին ուղարկած նամակը: Հեղինակը հայքրդական հարցը քննելիս ընթերցողին կոչ է անում չմոռանալ, որ քրդերը մուսուլման են, իսկ հայերը՝ քրիստոնյա: Ըստ նրա՝ մինչ այդ պահը քրդերի կրոնական առաջնորդներն այս երկու տարրերի միջև հարաբերությունները հրաշալի են պահպանել, այն դեպքում, երբ հայերի կրոնական առաջնորդները զբաղվել են քաղաքականությամբ և քուրդ ազգի արժանապատվությունը վիրավորելով: Նամակում ընդգծվում է մեկ այլ հարցը ևս, այն է՝ քրդերի համար «կենսական տարածքային խնդիրը»: Հեղինակը խորհուրդ է տալիս նաև հիշել, որ թեև պատրիարքը, քրդե-

²⁴ Տե՛ս *Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы в Арменіи. 26 ноября 1912 года – 10 мая 1914 года*, Министерство иностранныхъ дѣлъ, Петроградъ, Государственная Типографія, 1915, էջ 29-31:

²⁵ Նույն տեղում, էջ 32-35: Անպատասխան մնալու պատճառով 1913 թ. մայիսի 20-ին (հունիսի 2-ին) պատրիարքը նոր հուշագիր է հանձնում մեծ վեզիրին այն հիմնավորմամբ, որ վերջին հուշագրից հետո հայերի դրությունն ուղղակի վատթարացել է (նույն տեղում, էջ 38):

րին թալանչիներ անվանելով, կառավարությունից պաշտպանություն է պահանջում հայերի համար, այնուամենայնիվ քրդերը միշտ հավատարիմ են եղել պետությանը՝ օսմանյան հայրենիքին, մեծ թվով քուրդ սպաներ և զինվորներ իրենց կյանքն են զոհել երկրի համար²⁶:

Բալկանյան պատերազմներն ստեղծեցին այն բարենպաստ միջավայրը, որտեղ մուսուլմանի և քրիստոնյայի միջև սահմանագիծն ավելի խորացավ, իսկ տարբերակումը սկսեց նեղանալ՝ քրիստոնյայից անցնելով հայի, հույնի, մակեդոնացու, ասորու, միննույն ժամանակ պահպանելով կրոնականը՝ որպես պիտակավորում: Բալկանյան քրիստոնյաները մնացին հեռվում, «Անատոլիան» դարձավ կայսրության սիրտը, իսկ այնտեղ ապրող քրիստոնյաներին վերագրվեց ներքին թշնամու կերպարը: Նախկին կրոնական նախապաշարմունքները գործի դրվեցին, պատմությունը վերաձևվեց և հարմարեցվեց ներկային²⁷:

Քարոզ և պիտակավորում

Այս շրջանում մամուլում հանդիպում են հայերի դեմ բացահայտ քարոզի դեպքերի մասին հաղորդումներ. «Շատ քիչ բան է մնացել Թուրքիայի եվրոպական հատվածից, բացի Կոստանդնուպոլսից և հարակից ծովափնյա շրջանից... շուկաներ կտարածվեն շուկայում և սրճարաններում, պանդոկներում և ճամփեզրերին՝ «այդ քրիստոնյաներն էին»: ...Սիլվանի մուֆթին վերջին բայրամի տոնին քարոզել է քրիստոնյաների, հատկապես հայերի դեմ»²⁸: «Աշխատանքը» հայտնում է Ադանայի ոստիկանության կողմից հայ ազգը հրապարակավ հայիոյելու դեպքի մասին²⁹: Հակահայկական տրամադրությունների բորբոքման մասին է հայտնում նաև Էրզրումում Ռուսական կայսրության գլխավոր հյուպատոս Ադամովը 1913 թ. դեկտեմբերի 7-ին՝ դրա մեջ մեղադրելով տեղի իթթիհաթական ակումբին և դրա ղեկավար Ահմեդ Հիլմի բեյին³⁰: Արդեն դեկտեմբերի 29-ին գլխավոր հյուպատոսը հայտնում է, որ գաղտնի ժողովներում խոսում են հայերի կոտորածների մասին, իսկ տեղի մուլայի հրամանով բոլոր մուսուլմանները սկսել են սպիտակ չավա կրել: Շուկաների համաձայն՝ բոլորը սպասում են հրամանի Կոստանդնուպոլսից: Իթթիհաթականներն օտարերկրյա վերահսկողության դեմ ստորագրություններ են հավաքում և իրականացվելիք կոտորածների մեղքն արդեն սկսել են բարդել մեծ տերությունների վրա³¹: Ահմեդ Էմինն ինքն է նշում, որ դեռևս 1908 թ. Կրետեի կորստից հետո, երբ կղզին սուրբ հռչակվեց, հասարակական կարծիքը հնարավոր

²⁶ Տե՛ս «The Orient», vol. IV, No. 23, June 4, 1913.

²⁷ Ջարդերը մոտիվացնելու նպատակով կեղծարարությունների օգտագործմամբ անցյալի վերաձևավորման մասին մանրամասն տե՛ս Chirot D., McCauley C., *նշվ. աշխ.*, էջ 208:

²⁸ «Armenia», March, 1913, Vol. VI, No. 8.

²⁹ Տե՛ս «Աշխարհանք», Գ տարի, 10 օգոստոս, 1913, թիւ 59:

³⁰ Տե՛ս *Сборникъ дипломатическихъ документовъ...*, էջ 125:

³¹ Նույն տեղում, էջ 133:

բոլոր սոցիալական կառույցների միջոցով պարբերաբար բորբոքվում էր՝ ստեղծելով թուրքերի անպարտելիության մթնոլորտ³²:

Թուրքական մամուլում օգտագործվել են նաև պիտակավորումներ քրիստոնյաների, ինչպես նաև որոշակի էթնոսների դեմ: Թուրք գաղափարախոսներից Օմեր Մեյֆեդդինը, որն Աթիլային համարում էր թուրք ազգի հերոսներից, դեռևս 1911 թ. թուրք-խտակական պատերազմի ընթացքում տպագրված իր պատմվածքներից մեկում հայտնում է. «Աթիլյան ոտնատակ էր տվել եվրոպացիներին, ասես նրանք շներ լինեին»³³: Գրող Ֆեյզուլա Մաջիդը 1912 թ. գրված իր «Չորս բալկանցիներին»^{*} բանաստեղծության մեջ ոչ մուսուլմաններին, հատկապես անկախություն ձեռք բերած նախկին քրիստոնյա հպատակներին անվանում է մանրէներ. «Թուրքական մաշկը չի վնասվի չորս մանրէներից: Ավաղ, այդ մանրէները, որ լքում են մեր ռասայի մարմինը»³⁴: 1913 թ.՝ Յանինայի անկումից հետո, «Թասֆիրի էֆքիյարը» գրում է. «Ղեկավարի մէջ մեր կողմէ շունէն ալ ցած նկարտաս՝ Հէլլեններուն կողմէ օսմ. բերդաքաղաքի մը գրատունը այնքան անհասանական կը նկարէինք որ գիրտալով հանդերձ թէ Եանիա վերջին արեւներս դժուարին դիրքի մը մէջ ինկած էր ռազմանկիթի չգոյութեան պարճատա, դարձեալ հասանական չէինք նկարեր որ բերդաքաղաքը օր մը պիտի իյսար Հէլլեններուն ձեռքը: Ոստի Եանիայի գրեթէ անակնկալ անկումին լուրը մեզի համար իսկար ցաւայի դէպք մըն է. Մանասանդ երբ հետզհետէ տեղեկութիւն կը արանանք քաղաքին հետ Հէլլեններուն ձեռքը ինկած գերիներուն թիւին վրայ, անկարելի է որ մեր ցար չմոռնանք և վրէժ չաղաղակենք»³⁵: Ըստ Արամ Անտոնյանի՝ այս շրջանում ողջ իթթիհաթական մամուլի կոչն էր վրեժ լուծել՝ պարտության արատը մաքրելու նպատակով³⁶: «The Orient»-ի խմբագրությունը զգուշացնում է այն հավանական վտանգների մասին, որոնք կարող են առաջանալ թուրքական մամուլի կողմից հույների դեմ զգացմունքներ բորբոքելիս, և հույս հայտնում, որ օսմանյան կառավարությունը քայլեր կ'ձեռնարկի նման կարգի հողվածների տպագրությունն արգելելու ուղղությամբ³⁷:

Իրավիճակի պարզաբանման մեջ տեղ էր գտնում նաև հոգեբանական ռացիոնալացումը, ինչպես օրինակ հայտարարությունն առ այն, որ Բալկանների՝ Մակե-

³² Տե՛ս Ahmed Emin, *նշվ. աշխ.*, էջ 102:

³³ Umit Kurt, Dogan Gurpinar, “The Young Turk historical imagination in the pursuit of mythical Turkishness and its Lost Grandeur (1911-1914)”, *British Journal of Middle Eastern Studies*, 2016, p. 14.

^{*} Հավանաբար նկատի ունի Բալկանյան դաշինքի ազգերին՝ սերբերին, բուլղարացիներին, հույներին, չեռնոգորցիներին:

³⁴ Ümit Kurt, Doğan Gürpinar, *The Balkan Wars ...*, p. 361.

³⁵ Անտոնյան Ա., *Պարկերագարդ ընդարձակ պարմութիւն Պալքանեան պատերազմին*, Ա հատոր, Կ. Պոլիս, 1912, էջ 887, 888:

³⁶ Նույն տեղում, էջ 888:

³⁷ Տե՛ս “The Orient”, vol. IV, No. 41, October 8, 1913: Սակայն կրքերի բորբոքումը չէր կարող դադարեցվել, քանի որ 1911 թ. իթթիհաթն ընդունել էր Էգեյան ծովի ափին բնակվող քրիստոնյաների արտաքսման ծրագիրը, որը նպատակ ուներ ստեղծելու այնպիսի միջավայր, որը պետք է ստիպեր հույներին պարզապես թողնել իրենց տարածքները և հեռանալ (տե՛ս Авакян А., *նշվ. աշխ.*, էջ 62-63):

դոնիայի, Ալբանիայի կորուստն իրականում տարասեռ և խնդրահարույց հատվածների անջատումն էր կայսրությունից, որոնց պահելը դժվար էր, թանկ և խլում էր թուրքերի ներուժի մեծ մասը³⁸: Դրանց կորստով կայսրությունը դարձավ ավելի միատարր, հետևաբար՝ հեշտ կառավարելի, և հնարավոր դարձավ ուշադրությունը կենտրոնացնել հայ-քրդական ու արաբական խնդիրների վրա: Որոշ թուրք մտավորականներ անհաջողությունները կապում էին Աբդուլ Համիդին գահընկեց անելու, ոչ մուսուլման տարրերին հավասար իրավունքներ շնորհելու և նույնիսկ Կոստանդնուպոլսի շների հանդեպ անմարդկային վերաբերմունքի հետ*, սակայն կային նաև ուրիշները, որոնք բարենորոգումների բացակայությունն էին որպես պատճառ դիտարկում³⁹:

Որոշ թերթեր էլ համբերատարության կոչ էին անում, ինչպես օրինակ՝ «Մենինը»⁴⁰, շեշտելով այն, որ կգա ժամանակը, երբ թուրքերը կպահանջեն Բալկանյան խնդրի լուծում՝ իրենց ձեռնառու պայմաններով, սակայն «Այսօր հանուն մեր ազգի շահի, մենք պետք է համբերատար լինենք: Չպետք է կասկածենք, որ մեր համբերատարության սպառման և (աստված մի արասցե) նոր կոտորած սկսելու դեպքում մենք նորից դեմ առ դեմ կկանգնենք վերջնական արտաքին ներխուժման: Մեր թշնամիների ցանկությունը և ջանքերը հեռանկարում ունեն միայն այս նպատակը»⁴¹: «Իկդամը» նույնպես անդրադառնում է այս հարցին, որ դժվար կացությունից դուրս գալու միակ ձևը «չանելն է այն, ինչ մեզնից ունանք ցանկանում են անել», այն է՝ քրիստոնյաների հանդեպ մուսուլմանների ատելության բորբոքումը: Թերթը, իհարկե, իր պարտքն է համարում ընդգծել, որ Բալկանյան պատերազմում քրիստոնեությունն անարդար է վարվել մուսուլմանության հետ, սակայն «անարդար, հատկապես այժմ, բացթողում կլինի մեր քրիստոնյա հայրենակիցներին դրա համար պատասխանատվության ենթարկելը»⁴²: Հետաքրքրական է այն փաստը, որ և՛ իթթիհաթի օրգան «Մենինը» («Թանինը»), և՛ իթթիլյաֆի գաղափարները ներկայացնող «Իկդամը» նման հայտարարություն անելիս ևս մեկ անգամ ընդգ-

³⁸ Տե՛ս Ahmed Emin, *նշվ. աշխ.*, էջ 112:

³⁹ 1911 թ. հուլիսին Կոստանդնուպոլսից մոտ 80,000 թափառական շների հավաքելով՝ նավով տեղափոխել են Մարմարա ծովում գտնվող մի անմարդաբնակ կղզի: Նրանց մի մասը խեղդվել է՝ փորձելով հետ լողալ նավերի ուղղությամբ, մյուսներն աստիճանաբար սովամահ են եղել: Հստ ժամանակակիցների՝ քաղաքում երկար ժամանակ լսվել է նրանց ոռնոցը: Մարդիկ հավատում էին, որ այդ դժբանության համար աստված պատժելու է իրենց: Այդ իսկ պատճառով հետագա դժբախտությունները կապում էին շների հանդեպ այդ անմարդկային վերաբերմունքի հետ::

³⁹ Տե՛ս “The Orient”, vol. III, No. 52, December 25, 1912: «Իկդամը» նույնպես «Ինչպե՛ս կարող ենք կրկին բարձրանալ» հարցին պատասխանում է. «Մենք կարող ենք անել դա երկար և հիմնավոր մտավոր, սոցիալական և նույնիսկ ֆիզիկական կրթությամբ» (“The Orient”, vol. IV, No. 15, April 9, 1913):

⁴⁰ «Թանինը», որը երիտթուրքերի օրգանն էր, հանդես է եկել նաև «Մենին», «Ջենին», «Ռենին» և «Հաք» անվանումներով, երիտթուրքերի՝ ընդդիմություն կազմելու վեց ամիսների ընթացքում:

⁴¹ Տե՛ս “The Orient”, vol. III, No. 44, October 30, 1912:

⁴² “The Orient”, vol. IV, No. 31, July 30, 1913.

ծում են կապը Բալկանների և կայսրության քրիստոնյաների միջև, իսկ հանդուրժողականության այս կոչն անում են ընդդիմություն ներկայացնելու ժամանակ⁴³:

Արդյունքները

Բալկաններից հետո փոփոխությունը թուրք ազգայնականների գաղափարախոսություններում ակնհայտ դարձավ: Զիյա Գյոքալփը 1913 թ. իր գրվածքներում, մերժելով «օսմանյան ազգ» հասկացությունը, դեռևս դրական է հակված բազմէթնիկ կայսրության գոյության նկատմամբ: 1914 թ. նա արդեն գրում է, որ պետությունը կարող է գոյատևել միայն մեկ ազգի վրա հենվելով, քանի որ տարբեր ազգերի ներկայացուցիչները չեն կարող սիրել միևնույն հայրենիքը⁴⁴: Ոչնչանալու վախն ամենահիմնական վախերից է⁴⁵, և այն հանրության մեջ պարբերաբար սնուցվում էր թուրքական կառավարության կողմից: Հայկական բարենորոգումների հարցի բարձրացումը նոր գործոն դարձավ այդ պաշտոնական քաղաքականության մեջ: Փարիզյան «Temps»-ում տպագրվում է Պողոս Նուբար փաշայի հարցազրույցը հայկական բարենորոգումների մասին: «Թանինը» դրան պատասխանում է հետևյալ կերպ. «Օտարերկրացին կարող է առանձնացնել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը և դրա հիման վրա պահանջել բարենորոգումներ: Բայց օսմանցու համար դա անթույլատրելի է: Եթե Նուբար փաշան խոսում է հայերի հավատարմության, հայրենիքի հանդեպ նրանց սիրո և ինքնավարություն ընդունելու դժկամության մասին, ինչո՞ւ է նա որդեգրել իր հավաստիացումներին կոպտորեն հակասող նման տեսակետ: Թող ոչ ոք այլևս չխոսի Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի մասին»⁴⁶: Առանց խորանալու առաջարկվող բարենորոգումների բնույթի մեջ՝ Օսմանյան կայսրության ղեկավարները դա ընկալում էին որպես զիջում կրոնական և էթնիկ փոքրամասնություններին, հետևաբար՝ դեմ էին կանգնում ցանկացած նման առաջարկի, ինչպես օրինակ՝ մակեդոնական հարցի ժամանակ, երբ «Թանինը» գրում է, որ այնքան ժամանակ, քանի դեռ եվրոպական տերություն-

⁴³ «Ազատություն և համաձայնություն» (Հյուրիեթ վե իթթիլյաֆ) կուսակցությունը ստեղծվել է 1911 թ.: Դեմ էր իթթիհաթական վարչակարգին: 1912 թ. հուլիսին ընդդիմադիր այլ ուժերի հետ հեղաշրջման միջոցով տապալել են երիտթուրքերին: Օգոստոսին ցրվել է նաև խորհրդարանը, որում մեծամասնություն էին կազմում իթթիհաթականները: 1913 թ. հունվարի 23-ին՝ այն բանից հետո, երբ հունվարի 22-ին Ադրիանապոլիսը հանձնվեց Բուլղարիային, երիտթուրքերը, կրկին հեղաշրջում իրականացնելով, կազմեցին կառավարություն (տե՛ս Բայբուրդյան Վ., *Օսմանյան կայսրության պայմանություն*, Եր., ԵՊՀ, 2011, էջ 627, 631, Lewis Bernard, *The Emergence of Modern Turkey*, third ed., New York, Oxford, Oxford University Press, 2002, էջ 224-226):

⁴⁴ Տե՛ս Uriel Heyd, *նշվ. աշխ.*, էջ 72, 73: «Եթե նույնիսկ ոչ պետական մշակութային խումբը ցանկանում է լինել հավատարիմ պետությանը, որում բնակվում է, կասկածն առ այն, որ նա սպառնում է պետությանը, այդ խումբը դարձնում է խոցելի հետապնդման համար» (Chirot D., McCauley C., *նշվ. աշխ.*, էջ 49):

⁴⁵ Տե՛ս Karl Albrecht, *Practical Intelligence: the Art and Science of Common Sense*, San Francisco, John Wiley&Sons, Inc., 2007, էջ 306:

⁴⁶ “*The Orient*”, vol. IV, No. 51, December 17, 1913.

ները պահանջում են բարենորոգումներ Մակեդոնիայի համար, իրենք բարոյապես պարտավորված են ընդդիմանալու դրան⁴⁷:

Այսպիսով, 1911-1913 թթ. վերջնականապես տեղի ունեցավ անցումն օսմանիզմից թուրքիզմին: Այդ գործընթացի մեջ անհրաժեշտ քայլ էր «մենք» և «նրանք» կադապարների կառուցումը: Զննության համար այս թեման կարևոր է նրանով, որ յուրաքանչյուր ցեղասպանության հիմքում իրենց խումբ ընկալող անհատներն են, որոնք գործում են համատեղ՝ իրենց խմբի շահերից ելնելով ընդդեմ մի ուրիշ խմբի, ընդդեմ «նրանց»⁴⁸: Մինչ այդ հասարակության բաժանումն Օսմանյան կայսրությունում հիմնված էր կրոնի վրա, բայց 1911-1913 թթ. «նրանք»-ը կազմված էր ոչ թե ընդհանրապես քրիստոնյաներից, այլ որոշակի էթնոսներից՝ հայից, հույնից, ասորուց: Ազգային նման տարբերակումը հստակեցրեց թշնամու կերպարը և դյուրին դարձրեց նրա հետագա ոչնչացումը:

⁴⁷ Տե՛ս «*Armenia*», November, 1912, Vol. VI, No. 4:

⁴⁸ Տե՛ս Moshman David, *Us and them...*, էջ 116: Թուրքագետ Ա. Ավագյանը գտնում է, որ երիտթուրքերի որոշումներում «մենք» կամ «նրանք» կոնցեպցիան գերակայում էր արդեն 1910 թվականից սկսած (տե՛ս Авакян А., *նշվ. աշխ.*, էջ 41):

ՄԵԿ ՔԱՅԼ ԴԵՊԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ. «ՄԵՆՔ» ԵՎ «ՆՐԱՆՔ» ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 1911-1913 ԹԹ.

Ռեգինա Գալուստյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Յուրաքանչյուր ձևավորված էթնոսի կամ ազգի անդամ տարբերակում է «մենք»-ը և «նրանք»-ը: «Մենք» և «նրանք» կոնցեպցիաների ձևավորումը թուրքական ազգային ինքնության կառուցման ծրագրում առաջնային նշանակություն ունեն: 1911-1913 թթ. Լիբիական և Բալկանյան պատերազմները բարենպաստ միջավայր ստեղծեցին թուրք ազգայնական վերնախավի համար՝ այդ կաղապարները ձևավորելու, թուրքական ազգայնականության սահմանները գծելու և այն քարոզելու համար: Քննության համար այս թեման կարևոր է նրանով, որ յուրաքանչյուր ցեղասպանության հիմքում իրենց խումբ ընկալող անհատներն են, որոնք գործում են ընդդեմ «նրանց»: «Մենք»-ի և «նրանք»-ի տարբերակումը նախապայման է ոչ միայն ազգային ինքնության կերտման, այլ նաև ցեղասպանության իրականացման համար, քանի որ հստակեցվում է թշնամու կերպարը, և դյուրացվում նրա հետագա ոչնչացումը:

Բանալի բառեր՝ ազգային ինքնություն, «մենք» և «նրանք», քրիստոնյա, մուսուլման, երիտթուրքեր, քարոզչություն, ցեղասպանություն:

ONE STEP TOWARDS TURKISH IDENTITY BUILDING: THE FORMATION OF “US” AND “THEM” CONCEPTS IN 1911-1913

Regina Galustyan

SUMMARY

A member of the formed ethnicity or nationality distinguishes “us” and “them”. The formation of the conceptions “us” and “them” was of primary importance in the Turkish national identity building program. The Libyan and Balkan Wars of 1911-1913 created a favorable environment for the Turkish nationalist elite to form these shapes, to draw the borders of the Turkish nationalism, and to propagate it. This topic is important for discussion, as on the base of all the genocides are individuals, acting against “them”, who perceive themselves as a group. The differentiation between “us” and “them” is a prerequisite not only for the national identity formation, but also for the implementation of genocide, as the image of the enemy is clarified in this process and the subsequent destruction of it becomes easier.

Keywords: National identity, “us” and “them”, Christian, Muslim, Young Turks, propaganda, genocide.

ОДИН ШАГ К ПОСТРОЕНИЮ ТУРЕЦКОЙ ИДЕНТИЧНОСТИ:
ФОРМИРОВАНИЕ КОНЦЕПЦИЙ «МЫ» И «ОНИ» В 1911-1913 ГГ.

Регина Галустян

РЕЗЮМЕ

Представитель каждого сформированного этноса или нации делает различие между «мы» - членами своей национальной группы, и «они» - членами других национальных групп. Формирование концепций «мы» и «они» имело первостепенное значение в программе создания турецкой национальной идентичности. Ливийская и балканские войны 1911-1913 годов создали благоприятные условия для конструирования данных форм, определения границ турецкого национализма и его пропаганды. Важность данной темы для изучения обусловлена тем обстоятельством, что у истоков всех геноцидов стоят люди, воспринимающие себя как группу («мы»), действующую против других («них»). Дифференциация «мы» и «они» является предпосылкой не только для формирования национальной идентичности, но и для совершения геноцида, так как в результате данного процесса дифференциации проясняется образ врага и облегчается его последующее уничтожение.

Ключевые слова: национальная идентичность, «мы» и «они», христиане, мусульмане, младотурки, пропаганда, геноцид.

Աղբյուրագիտություն • Sources • Источниковедение

**ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ 1909Ի ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾԻՆ
ՄԱՍԻՆ
Ա.**

Միհրան Մինասեան

ՍՈՒՏՔ

1909-ի Կիլիկիոյ հայոց կոտորածը, որ պատմութեան անցած է «Կիլիկեան Կոտորած» կամ պարզապէս «Ատանայի Կոտորած» անուններով, չէր սահմանափակուած միայն Ատանա նահանգով, այլ տարածուած էր անոր սահմանակից Հալէպ նահանգի կարգ մը շրջանները եւս, ընդ որում՝ Անտիոքի գաւառակն ու անոր կեդրոն համանուն քաղաքը, որուն փոքրաթիւ հայութիւնը կիսած է յիշեալ զոյգ նահանգներու աղէտեալ հայութեան ճակատագիրը:

Կիլիկեան Կոտորածներու մասին առկայ է հայերէն թէ օտար լեզուներով բաւական հարուստ գրականութիւն, ուր սակայն Անտիոքի հայութեան կոտորածը գրեթէ մոռացութեան տրուած է եւ կամ լուագոյն պարագային՝ հագուադէպօրէն անդրադարձ կատարուած է անոր¹:

Հակառակ անոր որ աւելի քան դար մը անցած է այս կոտորածէն, տակաւին հայ եւ օտար դիւաններու մէջ առկայ են անոր մասին անտիպ եւ չուսումնասիրուած արխիւային հսկայածաւալ փաստաթուղթեր, որոնք լոյսին գալու եւ իրենց գաղտնիքները ընթերցողներուն առջեւ բանալու համար կը սպասեն գուրգուրոտ ձեռքերու:

Բերիոյ (Հալէպի) Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի դիւանատունը եւս հարուստ է սոյն կոտորածներուն վերաբերող փաստաթուղթերով, որովհետեւ աղէտեալ շրջաններէն շատերը թեմականօրէն կապուած էին Հալէպի եւ շրջաններու օրուայ ազգային-եկեղեցական գործիչները գրագրութիւն կը պահէին անոր

¹ 1909-ի Անտիոք քաղաքի կոտորածին մասին մեզի ծանօթ են քանի մը գիրքերու մէջ առանձին գլուխներ, ինչպէս՝

1- Յակոբ Յ. Թէրզեան, *Կիլիկիոյ Աղէտը*, Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Ասատուրեան եւ Որդիք, 1912, էջ 255-256, 785-789:

2- Պ. Մատուտեան, «1909-ի Աղէտը եւ Մուսա-Լեռը», տես՝ Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուտեան, *Յուշամարտեան Մուսա Լեռան*, հրատարակութիւն Ճեպլեկ Մուսայի Հայրենակցական Միութեան, Պէյրութ, տպարան Ատլաս, 1970, էջ 296-298:

3- Զորա Իսկէնտէրեան, *Յուշեր Պարմութեան Համար*, Պէյրութ, տպարան Սեւան, 1974, էջ 24-29:

4- Տ. Ներսէս Աւագ Քինյ. Թատուգճեան, *Տառապանքի Օրագիր*, խմբագրեց՝ Թորոս Թորանեան, Պէյրութ, տպագրութիւն՝ Հայ Տիպ Քոմփիլերաֆ, 1991, էջ 18-19:

5- Հրաչիկ Միմոնեան, *Հայերի Զանգուածային Կոտորածները Կիլիկիայում (1909թ. Ապրիլ)*, Երևան, Երևանի Պետական համալսարանի հրատարակչութիւն, 2009, էջ 168-170:

հետ եւ տեղւոյն դէպքերը լուսաբանող նամակներ կը յղէին Հալէպի իրենց մեծատրներուն:

Յիշեալ դիւանատան մէջ կան մեծարժէք փաստաթուղթեր, որոնք մեծամասնութեամբ գրուած են կոտորածներէն ետք Աստիոք ուղարկուած զանազան քահանայ հայրերու կողմէ, որովհետեւ տեղւոյն երկու եկեղեցականները՝ Տէր Արսէն շուշտակ վարդապետ Յարութիւնեանն ու Տէր Արմենակ Քինյ. Տօնաթոսեանը զոհուած էին ջարդերուն, եւ վերապրող աղէտեալները մնացած էին անհովիւ, հետեւաբար Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսին կողմէ պարբերաբար այնտեղ կ'ուղարկուէին շրջակայ քաղաքներու քահանայ հայրերը, որոնք իրենց կարգին թղթակցութիւն կը պահէին նահանգի կեդրոնական քաղաք՝ Հալէպի առաջնորդարանին հետ եւ տեղւոյն դէպքերուն եւ իրենց գործունէութեան մասին լուրեր կը հաղորդէին անոր, մանաւանդ որ Հալէպի առաջնորդարանը կարեւոր դերակատարութիւն ունեցած էր ջարդերէն ետք նահանգի աղէտեալներուն օգնութիւն փութացնելու եւ անոնց կարիքները հոգալու ուղղութեամբ:

Այս յօդուածով հրատարակութեան կու տանք Աստիոքի կոտորածին ու անոր հետեւանքներուն վերաբերող 11 անտիպ փաստաթուղթեր, որոնք առաջին անգամ կը դրոյին գիտական շրջանառութեան մէջ, նոր լոյս կը սփռեն դէպքերուն վրայ եւ կը հարստացնեն ո՛չ միայն Աստիոքի գաւառակի հայութեան պատմութիւնը, այլ կ'ամբողջացնեն Կիլիկեան Կոտորածներու մասին մեր պատկերացումները:

Հրատարակուող փաստաթուղթերէն առաջինը գրուած է Աստիոքի ազգային վարժարանի ուսուցիչներէն Աւետիս վարժապետ Ապագաեանի կողմէ, իսկ միւսները՝ Սահակ Բ. Կաթողիկոսին կողմէ Աստիոք գործողուած քահանայ հայրերուն՝ Սահակ Քինյ. Մոմճեանի, Մեսրոպ Քինյ. Աֆարեանի, Ներսէս Քինյ. Թաւուզճեանի, Վաղարշակ Քինյ. Ճէրրահեանի եւ Յարութիւն Քինյ. Թումայեանի կողմէ:

Յղուած նամակներուն կողքին կը հրատարակենք նաեւ Աստիոքի կոտորածին զոհուած հայրերու գրեթէ ամբողջական ցուցակը, ուր նշանակուած է անոնցմէ իւրաքանչիւրին անունը, տարիքը, սպաննութեան վայրն ու սպաննողին անունը:

Մեծ գոհունակութեամբ է որ հրատարակութեան կու տանք այդ ցուցակը, որովհետեւ որքան որ ծանօթ է մեզի, այլ վայրերու նահատակներու յատուկ նոյնանման ցուցակներ չկան, կամ առնուազն չեն հրատարակուած ցարդ, բացի Քեսապի եւ շրջակայքի 173 նահատակներու ցուցակէն, զոր կը յուսանք հրատարակութեան տալ մօտ ապագային:

Աստիոքի նահատակներու այս ցուցակը ամբողջական չի թուիր ըլլալ: Տպագիր աղբիւրներու մէջ հանդիպած ենք Աստիոքի ջարդին զոհուած երեք այլ նահատակներու անուններու եւս, որոնք տեղ չեն գտած հրատարակուող ցուցակին մէջ. բան մը որ ենթադրել կու տայ, որ այլ գոհեր ալ կրնան եղած ըլլալ, որոնք անծանօթ եղած են ցուցակը կազմողին²:

² Մեզի ծանօթ այդ երեք նահատակներն են հետեւեալները.

1.-Վանայ Կոտուց անապատի (ըստ Թաւուզճեանի՝ Լիմ անապատի) միաբանութենէն եւ այդ օրերուն հիւրաբար Աստիոք գտնուող ծերունագարդ Դանիէլ Վրդ. Յակոբեան, զոր սպաննած են

Հրատարակուող ցուցակը կարելուք սկզբնաղբիւր է Անտիոքի կոտորածը ուսումնասիրելու տեսակէտէն: Անկէ կը պարզուի օրինակ, որ ջարդարարներուն մէջ գտնուած են ոստիկաններ, զինուորականներ, ուսուցիչ մը եւ քանի մը ոճրագործներ, որոնց անունները կրկնուած են բազմաթիւ անգամներ: Ցուցակէն կը պարզուի նաեւ, որ կոտորածին զոհուած են երկու ամսական մանուկէն մինչեւ 80 տարեկան ծերունիներ, կիներ ու աղջիկներ. կը բացայայտուին նաեւ ոճրագործներուն անունները: Այսպիսով կարելի կ'ըլլայ գծել կոտորածի աշխարհագրական շրջագիծը եւ այլ կարելուք մանրամասնութիւններ:

Հրատարակուող փաստաթուղթերը ոչ միայն կը նկարագրեն տեղի ունեցած կոտորածներն ու ասարառութիւնները, այլ նաեւ կը շօշափեն կոտորածներէն ետք քաղաքին մէջ ստեղծուած իրավիճակը. կը խօսին տիրող ծայրայեղ թշուառութեան, որբերու եւ այրիներու ճակատագրի, որբանոցներու, օտար հաստատութիւններու կողմէ որբեր որդեգրելու, նպաստներու բաշխումի եւ յարակից այլ դժուարութիւններու մասին, նաեւ՝ պետական նպաստի դադարեցման, ժառանգական եւ կալուածական խնդիրներու, պատերազմական ատեաններու կողմնակալ ու անվճռակամ ընթացքի, ոճրագործներու ազատ արձակման եւ անոնցմէ շատերու ազատ-համարձակ շրջագայութեան մասին:

Մէկ քաղաքի վերաբերող այսքան մեծաթիւ փաստաթուղթերու միաժամանակ հրատարակութիւնը ընդհանուր գաղափար մը կու տայ ո՛չ միայն կոտորածներէն ետք տուեալ քաղաքի մէջ տիրող իրավիճակին, այլ աղէտեալ միւս շրջաններու կացութեան մասին եւս, որովհետեւ կոտորածէն ետք ստեղծուած կացութիւնը առաւել կամ նուազ չափով նոյնն էր Ատանա եւ Հալէպ նահանգներու աղէտեալ բոլոր շրջաններուն մէջ:

ԱՆՏԻՈՔԻ ԿՈՏՈՐԱԾԸ

1909-ի Անտիոքի հայոց կոտորածը եղած է կիլիկեան կոտորածներու ամէնէն՝ ահաւորներէն ու սարսափելիներէն մէկը, որուն զոհ գացած են քաղաքի գրեթէ բոլոր տղամարդիկը. ինչպէս որ հոս հրատարակուող առաջին նամակին մէջ արտայայ-

Առաջնորդարանի իր սենեակի մահճակալին վրայ (Թէրզեան, *նշ. աշխ.*, էջ 158, 255, Թաուրգճեան, *նշ. աշխ.*, էջ 18, 26):

2.-Տարսոնի Ամերիկեան Գոլէճի ուսանողներէն՝ «Անթաքիացի» (անտիոքացի) Առաքել Պերպէրեան, որ սպաննուած է Համիտիէի մօտերը, երբ խումբ մը թուրքեր նախ դաշունահարած, ապա՝ ատրճանակի հինգ փամփուշտներով սպաննած են զինք: Անոր մահէն ետք առնուած լուսանկարը տպուած է Յակոբ Թէրզեանի նշուած աշխատութեան մէջ (Թէրզեան, *նշ. աշխ.*, էջ 16): Նոյնին սպաննութիւնը յիշատակած է նաեւ Գրիգոր Գոտտուլեան եւ ըսած՝ թէ անոր սպաննութեան համար «կասկածները երիտասարդ սպայի մը շուրջ կը դառնային, եւ կառավարութիւնը շուտ մը կը զոցէ խնդիրը» (Գրիգոր Գ. Գոտտուլեան, *Հայ Լեռք. Կարմիր Դրուագներ Կիլիկիոյ Աղէտէն, Կ. Պոլիս*, տպագրութիւն Տ. Տօրամանեան, 1912, էջ 33-34):

3.-Մարտիրոս Մ. Արգարեան, որ կը յիշուի օտար ընկերութեան մը մօտ իր ունեցած կեանքի սպանովագրութեան առիթով, գոր իր մահէն ետք փորձած են գանձել իր հարազատները (Հայաստանի Ազգային արխիւ, ֆոնդ 1421, ցուցակ 1, գործ 2, թերթ 7):

Յակոբ Թէրզեան, Հալէպի առաջնորդական տեղապահ Շահէ Ծ. Վրդէն քաղելով տեղեկութիւնները, Անտիոքի նահատակներուն թիւը ցոյց տուած է որպէս 192 (Թէրզեան, *նշ. աշխ.*, էջ 267):

տուած է հեղինակը. «... հոս գրեթէ էրիկ մարդ [տղամարդ] չը մնաց, ազգը փճացաւ... Անտիոքի հայութիւնը բոլորովին փճացաւ...»:

Անտիոքի հայոց ջարդը սկսած է 6 Ապրիլ 1909-ին: Նոյն օրը տեղոյն հայերը Ատանայի կոտորածին լուրը առնելով, խանութները փակած՝ քաշուած են տունները, որմէ ետք տեղոյն գաւառապետը, քանի մը բարձրաստիճան պաշտօնեաներով գացած է Հայոց Առաջնորդարանը եւ քաղաքի երեւելի հայերը իր մօտ հրաւիրելով վստահեցուցած է անոնց, որ մտահոգուելու կարիք չկայ, որովհետեւ «կառավարութիւնը կ'երաշխատուի անոնց ապահովութիւնը»: Սակայն անոնց Առաջնորդարան գտնուած միջոցին, թուրք խուժանը պաշարած է շէնքը եւ պաշտօնեաներուն մեկնումէն անմիջապէս ետք ներս խուժելով՝ սպաննած է հոն գտնուող 3 եկեղեցականներն ու քանի մը երեւելիներ, ապա թալանած է եկեղեցին եւ նահատակ եկեղեցականներու դիակները քաշկոտելով պտտցուցած է փողոցները՝ ի ցոյց մարդկանց:

Այս դէպքէն ետք է որ սկսած է ընդհանուր կոտորածը³:

Քաղաքի թուրք ազդեցիկ աղաներն ու պետական քանի մը պաշտօնեաներ կոտորածի օրը ժողով մը գումարելով որոշած են ամբողջութեամբ բնաջնջել տեղոյն հայերը, մինչ խուժանը յաջողած է մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք ձեռք ձգել տեղոյն զօրանոցէն:

Ըստ դէպքերու քաջածանօթ վկայի մը, կոտորածէն առաջ թուրքեր պատրաստած են քաղաքի հայերու ամբողջական ցանկը, եւ կոտորածը սկսել է ետք, «5-6 օր շարունակ, մէկիկ մէկիկ փնտռած գտած ու սպաննած են նշանակուածները, խղճմտօրէն հոգ տանելով որ ցանկը պակաս չի մնայ»⁴: Ապրիլի 7-ի առաւօտուն սկսած են զննել դիակները եւ փնտռել այն հայերը, որոնց դիակները չեն բացայայտուած: Գտնել է ետք «անլուր չարչարանքներով» սպաննած են զանոնք: Անոնք կոտորածը դադարեցուցած են այն ատեն միայն, երբ համոզուած են որ հայ տղամարդ չէ մնացած քաղաքին մէջ⁵:

Անտիոքի ամբողջ թրքութիւնը մասնակցած է հայերու կոտորածին, եւ միայն երկու ընտանիք ջանացած է օգտակար ըլլալ հայերուն, որոնցմէ մէկը Պաղտատէն գաղթած քիւրտ ընտանիք մըն էր⁶:

Անտիոքի ու շրջականներու կոտորածին մեծ եղած է թիւը մանաւանդ Սուէտիոյ գիւղերէն Անտիոք արտագնայ աշխատանքի մեկնած քրիստոնեաներուն, որոնք, ինչպէս ամէն տարի, հոն կը մեկնէին շերամաբուծութեան: Անոնք գրեթէ ամբողջութեամբ փճացած են Անտիոքի ջարդին⁷:

³ Նոյն, էջ 255-256 եւ 786-789, Գուշագճեան-Մատուռեան, *նշ. աշխ.*, էջ 296-299, Թաւուզճեան, *նշ. աշխ.*, էջ 18, Իսկէստէրեան, *նշ. աշխ.*, էջ 25:

⁴ *Տեղեկագիր Այրիսիսիւսաւ Յանձնաժողովի 1910 Սեպտ. 11-1912 Սեպտ. 11. Յանդուած Տեղեկագիր Քննիչ-Պարուիրակ Պ. Ժազ Սայսայալեանի, Կ. Պոլիս, տպարան Շանթ, 1912*, Սայսայալեանի Տեղեկագիր, էջ 19:

⁵ Թաւուզճեան, *նշ. աշխ.*, էջ 18:

⁶ Իսկէստէրեան, *նշ. աշխ.*, էջ 32:

⁷ Թէրզեան, *նշ. աշխ.*, էջ 261:

ԿՈՏՈՐԱԾԵՆ ԵՏՔ

Կոտորածին ետք, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանն ու Հալէպի Ազգային Առաջնորդարանը միասնաբար ջանք չեն խնայած այրիներուն ու որբերուն հոգատարութեան, պատսպարման, կենսամթերքի ապահովման եւ նմանօրինակ այլ դժուարութիւններու հարթման ուղղութեամբ: Կ. Պոլսոյ մէջ հիմնուած Կիլիկիոյ Այրիախնամ Յանձնաժողովի ջանքերով կարելի եղած է Աստիոքի այրիներուն գործ հայթայթելու համար գուլպայի աշխատանոցներ եւ դերձակատուն մը հաստատել: Բացուած է նաեւ առանձին փոքրիկ խանութ մը, ուր վաճառուած են աղէտեալ այրիներու աշխատանքները⁸:

Աստիոքի կոտորածին փրկուած է ընդամէնը 6-10 հայ տղամարդ, որոնք աւելի ետք, 7 Օգոստոս 1915-ին, կառավարութեան կողմէ բանտ նետուած են որպէս աքսորի նախապատրաստութիւն⁹, աւելի ետք աքսորելու ու սպաննելու համար:

1909-ի Աստիոքի կոտորածին զոհուած են առնուազն 193 հայեր, որոնք իրենց ետին ձգած են 326 առաքելական եւ 14 անետարանական համայնքի որբեր¹⁰ եւ 68 այրիներ¹¹:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԸ

Հրատարակուող փաստաթուղթերը հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան: Մեր կողմէ կատարուած յանդիմանները առած ենք անկիւնաւոր փակագիծերու մէջ []:

Փաստաթուղթերուն կցած ենք նաեւ անհրաժեշտ ծանօթագրութիւններ, ուր սակայն առանձին-առանձին չենք յիշած 1915-ին հոս յիշատակուող բնակավայրերու հայութեան վերապահուած ճակատագիրը, որովհետեւ բոլորին ալ պարագային իրավիճակը նոյնն էր՝ աքսոր, կոտորած, զինադադրին տասանորդուած վերապրողներու վերադարձ հայրենի աւան, ապա Կիլիկիոյ հայաթափումով՝ կրկին կոտորած ու վերապրողներու փախուստ հայրենի բնակավայրէն:

Ծանօթագրութիւնները չխճողելու համար, բնագրին մէջ հանդիպող հայատառ թրքերէն բառերուն թարգմանութիւնները եւս տուած ենք բառերէն անմիջապէս ետք, նոյն փակագծերուն մէջ եւ ոչ թէ ծանօթագրութիւններու ձեւով:

ԱՆՏԻՈՔ ՔԱՂԱՔԸ

Պատմական քաղաք օսմանեան Հալէպ նահանգի Աստիոք գաւառակի կեդրոնը, Հալէպի հիւսիս-արեւմուտքը, անկէ մօտ 110 քմ. հեռաւորութեան վրայ, Որոնդէս գետի ափին: Կառուցուած է Մելեկիոս առաջին Նիքադոր Կայսրին կողմէ՝ Ն. Ք.

⁸ Տեղեկագիր Այրիախնամ..., էջ 41-42:

⁹ Հայերի Յեղասպանութիւնը 1915-1916. Գերմանիայի Արարքին Գործերի Նախարարութեան Քաղաքական Արխիւի Փաստաթղթերից, Վոլֆգանգ Գուստ (Հր.), զերմաներէնէ թարգմանեց եւ հրատարակութեան նախապատրաստեց՝ Ռուզան Բորիսի Յորդանեան, Երեւան, 2008, էջ 329:

¹⁰ Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողով, Տեղեկագիր 1909 Օգոստոս 7-1910 Դեկտեմբեր 31, Կ. Պոլիս, տպագրութիւն Օ. Արզուման, 1911, էջ 89, 94:

¹¹ Սայապալեան, *սջ. աշխ.*, էջ 19:

301 թուականին: Ան կարճ ժամանակով մաս կազմած է Տիգրան Մեծի հայկական կայսրության:

Անտիոքի մէջ է որ Յիսուսի հետետորդները առաջին անգամ ստացած են «Քրիստոնէայ» անունումը:

Քաղաքը եղած է հելլենիստական մշակոյթի մեծագոյն կեդրոններէն մէկը, իսկ աւելի ետք՝ քրիստոնէութեան գլխաւոր օրրաններէն եւ 4-րդ դարուն հռովմէական կայսրութեան 4 պատրիարքութիւններէն մէկուն նստավայրը:

Տեղոյն հայերը ունեցած են Սբ. Աստուածածին եկեղեցին: Հայ աւետարանական համայնքը եւս ունեցած է իր եկեղեցին: Հայ առաքելական ու աւետարանական համայնքները ունեցած են նաեւ իրենց առանձին վարժարանները:

Տեղոյն հայութեան թուաքանակին մասին աղբիւրներու տուած թիւերը խիստ տարբեր են եւ երբեմն՝ հակասական:

Հստ Հ. Սուքիաս Էփրիկեանի, 1905-ին քաղաքը ունեցած է 23 հազար բնակիչ, որուն մօտ 5 հազարը՝ հայեր, 4 հազարը՝ յոյներ, 300-ը հրեաներ, իսկ մնացեալները՝ թուրքեր, արաբներ ու ասորիներ¹², իսկ ըստ այլ աղբիւրի, 1909-ի կոտորածներու նախօրեակին, քաղաքը ունեցած է 800 հայ բնակիչ¹³, իսկ ըստ ուրիշի մը՝ 100 տուն հայ¹⁴:

Կտորածներէն ետք, 1911-ին, հոն կային ընդամէնը 41 տուն՝ 206 հայեր¹⁵:

Անտիոքի գաւառակը 1939-ին, ֆրանսէրքական համաձայնագրով, Ալեքսանտրէթի ամբողջ գաւառին հետ, Սուրիայէն խլուելով բռնակցուած է Թուրքիոյ:

* * *

1 –

Անտիոքի Ազգային Վարժարանի ուսուցիչ Աւետիս վարժապետ Ապագաեանի նամակը Սահակ Քինյ. Մոմճեանին՝ Անտիոքի կոտորածին եւ վերապրող այրիներու եւ որբերու դրութեան մասին

1909 Մայիս 5, Անտիոք

Արժանապատիւ

Տէր Սահակ քինյ. Մոմճեան¹⁶

¹² Հ. Ս. Էփրիկեան, *Պարկերազարդ Բնաշխարհիկ Բառարան*, Ա. հատոր, Բ. տիպ, Վենետիկ-Սբ. Ղազար, 1903, էջ 220:

¹³ Թէրզեան, *նշ. աշխ.*, էջ 256:

¹⁴ Իսկէնտէրեան, *նշ. աշխ.*, էջ 24:

¹⁵ Գուշագճեան-Մատուտեան, *նշ. աշխ.*, էջ 850, Մովսէս Վրդ. Ոսկերիչեանի պատրաստած վիճակագրութիւնը:

¹⁶ Ծնած է Այնթապ 1867-ին: 1888-ին ասորուած է տեղոյն Վարդանեան վարժարանը, որմէ ետք շրջան մը պաշտօնավարած է նոյն վարժարանին մէջ, ապա ստանձնած Քիլիսի «Արուսեակ» վարժարանի տնօրէնութիւնը: Եղած է Այնթապի առաջին հնչակեան բջիջի անդամ: Քահանայ ձեռնադրուած է 1900-ին: Կարճ ժամանակ քահանայագործած է Այնթապ, տարի մը Ալեքսանտրէթ, ապա երկար տարիներ՝ Քիլիս:

1909-ի Կիլիկեան կոտորածներէն ետք, Սահակ Բ. կաթողիկոսի կողմէ ամժամաբար դրկուած է Անտիոք եւ Սուէտիոյ աղէտեալ հայ գիւղերը, ուր մնացած է քանի մը ամիս: Յեղասպանութեան

Անշուշտ մեր գլխուն եկած աղետները եւ Տ. Արսէնին¹⁷, Տ. Արմենակին¹⁸ ցաւալի մահերն ալ լսեցիք, մեռնողները մեռան գացին, սակայն հիմա աւելի կարեւոր եւ աւելի [մտահոգութիւն] պատճառող գործը սա է որ այսչափ որբերը եւ այրիները ի՛նչ պիտի ըլլան, ինչպէ՛ս պիտի ապրին, եւ առանց էրիկի այս թուրքերով շրջապատուած հայոց թաղին մէջ ինչպէ՛ս պիտի նստին: Ըսենք թէ որբերը որբանոցները կրնան տեղաւորուիլ, սակայն մայրե՛րը, արդեօք կարելի չէ՞ որ տեղդ մի քանի այս տեղացի ընտանիքներէն հաստատուին եւ հոս ապրին¹⁹: Ուրիշ հարցում մը, տեղդ կը գտնուի 30 կամ 40 մարդ որ այս որբերէն որդեգիր ընեն իրենց: Կառապան քիլիսցի Արթին Չափրասեանին հետ խօսեցանք, ինք յոյս յայտնեց թէ այսչափ ընտանիքներ կը գտնուին որ այս որբերը տեղաւորուին, հոս գրեթէ էրիկ մարդ չը մնաց, ազգը փճացաւ, մեր յոյսը մեռնողներուն զաւակներուն, այդ անմեղ մանուկներուն վրայ էր եւ կ'ըսէինք թէ ասոնք իրենց հօրը տեղը կը բռնեն, եւ մեր եկեղեցիին, ժողովուրդին թիւը ապագային կը լրացնեն, սակայն ցաւալի է որ մեր այս ցաւին մէջ, ուրիշ վիշտ մ'ալ աւելցաւ, ամէն կողմանէ մարդորսորդներ շրջապա-

տարիներուն, Հալէպ հասնելով, հիմնած է որբանոց-այրիանոց մը, բայց շատ չանցած վախճանած է Հալէպի մէջ, 22 Սեպտեմբեր 1915-ին (Գրիգոր Պողարեան, *Այնթապականք*», Բ. հատոր, *Մահարձան*, Պէյրութ, տպարան Ատլաս, 1974 (տիտղոսաթերթին վրայ՝ 1975), էջ 135-138, Գեորգ Ա. Սարաֆեան (աշխատասիրեց ու խմբագրեց), *Պարմութիւն Այթէպի Հայոց*, հրատարակութիւն Ամերիկաբնակ Այնթապցիներու Միութեան, Ա. հատոր, Լոս Անճելըս, Գալիֆորնիա, 1953, էջ 466-467):

¹⁷ Նկատի ունի Մեծի Տանն Կիլիկիոյ միաբաններէն Տէր Արսէն շուշտակ վարդապետ Յարութիւնեանը:

Ծնած է Այնթապ, 1864-ին: Աշխարհական անունով՝ Գրիգոր: Հետեւած է ծննդավայրի Ամերիկեան գոլէճի դասընթացքներուն, իսկ բարձրագոյն ուսումը ստացած է Մարաշի Աստուածաբանական ճեմարանէն: Ուսուցչական պաշտօն վարած է Այնթապի Վարդանեան եւ Աղենական կրթարաններուն մէջ: 1896-ին, Ուրֆայի մէջ քահանայ ձեռնադրուելով, մօտ 4 տարի ծառայած է Այնթապ, Էհնէշ, Ճիպլի ու Հալէպ:

1903-1904 եղած է Հալէպի առաջնորդական փոխանորդ, միաժամանակ դասաւանդած է տեղոյն Ազգային Ներսէսեան վարժարանէն ներս:

Երեցկեանց մահէն ետք, 20 Յունուար 1909-ին, Սոյ Մայրավանքին մէջ, Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսէն օծուած է շուշտակ վարդապետ ու նշանակուած՝ Անտիոքի առաջնորդական տեղապահ: Նոր պաշտօնատեղին հասնելէ շատ կարճ ժամանակ անց՝ 6/19 Ապրիլ 1909-ին, սպաննուած է եկեղեցիին մէջ, կիլիկեան կոտորածներու ընթացքին: Թուրք խուժանը, իր ու իր հետ նահատակուած երկու եկեղեցականներուն դիակները քաշկոտելով՝ պտտցուցած է Անտիոքի փողոցներուն ու շուկաներուն մէջ, հրաւիրելով ժողովուրդը որ մասնակցի կոտորածին (Թէրզեան, նշ. աշխ., էջ 255, Յուսիկ Ա. Քինյ. Սեդրակեան, Վարք Քահանայից Բերիոյ Թեմի 1824-2011, Բ. հատոր, Հալէպ, տպագրատուն Արմէն Գասպարեան, 2012, էջ 74-77):

¹⁸ Նկատի ունի Տէր Արմենակ Քինյ. Տօնաթոսեանը: Ծնած է Ալնայ Մաշկերտ գիւղը 1860-ին: Որպէս ուսուցիչ, շրջան մը պաշտօնավարած է ծննդավայրին մէջ, ապա անցած է Հալէպ: 1893-ին, Միսի մէջ քահանայ ձեռնադրուելով՝ հաստատուած է Անտիոք, ուր վարած է տեղոյն առաջնորդական փոխանորդի պաշտօնը եւ երկար տարիներ պաշտօնավարած է Ազգային վարժարանին մէջ: Եղած է Անտիոքի հնչակեան մասնաճիւղի գլխաւոր անդամներէն:

Սրբախոյզի խոստովանութեամբ քանոնապետ եղած է Տիգրանի հետ, Անտիոքի Սր. Աստուածածին եկեղեցոյ մէջ: Խուժանը այրելէ ետք անոր մօրուքը, խոշտանգած ու չարչարած է գինք եւ ապա միայն սպաննած (Միհրան Մինասեան, Պատմական Անտիպ Տեղեկագիր Սը Բերիոյ (Հալէպի) Թեմի Հայութեան Մասին, տեւ. «Բանբեր Հայաստանի Արխիւների», Երեւան, 2007, թիւ 1-2 (109-110), էջ 30, Թաւուզեան, նշ. աշխ., էջ 18):

¹⁹ Հաւանաբար նկատի ունի Քիլիս քաղաքը, ուր կը պաշտօնավարէր Մոմենան քահանայ:

տած են մեզ, գայլերու պէս, յափշտակելու եւ որսալու այդ մեր սրտի հատորիկները, սնուցանելու համար զանոնք օտար կրթութեամբ, օտար լեզուով եւ օտար ոգով, այդ որսորդները լատինք եւ բողոքականք են, կարծես թէ իրենց յարմար առիթ ըլլայ այս ժամանակը որսալու համար, ի՛նչ ընենք եւ ինչ ընենք, հայ մայրերը տգէտ են, այսչափ բանը չեն կրնար հաշիւ ընել, ուզող ըլլալուն պէս իրենց զաւակը մէկէնիմէկ կը նետեն որո ուր գիրկը ըլլայ, ահա այս շաբաթ 40 ի չափ հայ աղջիկներ տարին մեր քովէն բողոքականները Պէյրութի որբանոցը, ատանկ տեղ մը, քաղաք մը որ, ոչ հայ լեզու կը լսէ եւ կը սորվի ոչ ազգային կրթութիւն մը կ'առնէ, ոչ հայ եկեղեցիին երեսը կը տեսնէ, արաբական կեդրոն մը է, վաղը այդ որբանոցէն ելլողը, ոգով, լեզուով, սրտով պաղ արաբ բողոքական մը ըլլալով դուրս կ'ելլէ: Գոնէ Այնթապու, Ուրֆայի պէս տեղ մը ըլլար նէ գոնէ հոն հայ լեզուն կը սորվէր եւ ազգութիւնն ալ կը ճանչնար, հիմա ալ լատինները ոգի ի ձեռին կ'աշխատին մանուկներ եւ աղջիկներ ժողովելու, գրեթէ զօրով կը ստիպեն կ'առնեն ալ տալ չուզող մայրերէն, գալ շաբաթ բողոքական միսիոնարք մանչերն ալ պիտի ժողովեն տանեն, վերջապէս հոս տղայ աղջիկ չը պիտի մնայ, մինչեւ երկու շաբաթ ամէնն ալ այս երկու յարանուանութեանց որբանոցները պիտի տեղաւորուին, այս բոլոր բաները Տ. Ներսէս²⁰ եւ Տ. Վահան²¹ հայրերուն քթին տակը եղան եւ կ'ըլլան ալ,

²⁰ Նկատի ունի Տէր Ներսէս Քհնյ. Թաւուզճեանը: Ծնած է Այնթապ, 1870-ին: Ուսումը ստացած է տեղոյն Ներսէսեան, ապա՝ ֆրանչիսկեաններու վարժարաններէն: Շրջան մը հետեւած է Կեդրոնական Թուրքիոյ գոլէճի դասընթացքներուն, իսկ 1901-ին մտած է Արմաշի Դպրեվանք: 1904-ին ձեռնադրուած է քահանայ եւ երկար տարիներ պաշտօնավարած է իր ծննդավայրին մէջ: Կիլիկեան կոտորածներու ժամանակ, Սահակ Բ. Կաթողիկոսին կողմէ գործուողուած է աղէտեալ շրջանները՝ Անտիոք եւ Սուլտիա, նպաստ բաժնելու: Տարի մը ետք, կրկին մեկնած է Լոյս վայրերը որպէս առաջնորդական փոխանորդ, ուր մնացած է չորս ամիս՝ մեծ ծառայութիւններ մատուցելով տեղոյն բնակչութեան:

Տեղասպանութեան տարիները անցուցած է Սուրիոյ մէջ, առաւելաբար Սալամիէ, ապա աքսորուած է Պուսէրբա: Ջինադադարին վերադարձած է ծննդավայր ու նշանակուած տեղոյն կաթողիկոսական փոխանորդ: Յիշատակելի մասնակցութիւն ունեցած է տեղոյն հերոսամարտին:

Այնթապի հայաթափումէն ետք, ապաստանած է Հալէպ, ուր քահանայագործած է մինչեւ իր եղեռական մահը՝ 5 Յուլիս 1934, երբ զոհ գացած է եղբայրասպան գնդակի (Սարաֆեան, նշ. աշխ., էջ 469-472, Պողարեան, նշ. աշխ., էջ 563-570):

Թաւուզճեան քահանայ պատահական աշխատակցութիւն ունեցած է հայ մամուլին: 1991-ին լոյս տեսած է իր օրագրութիւններու մեծարժէք հատորը՝ Տառապանքի Օրագիր խորագրով (խմբագրեց՝ Թորոս Թորանեան, Պէյրութ, 408 էջ), որ կ'ընդգրկէ անոր 1909-1933 տարիներու գրառումները, ուր արժէքատր տուեալներ կան կիլիկեան կոտորածներուն մասին:

²¹ Նկատի ունի Այնթապի քահանաներէն՝ Վահան Քհնյ. Կիլիսպէտեանը: Ծնած է Այնթապ, 1877-ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրի Ներսէսեան եւ Աղէնական վարժարաններէն, զորս աւարտելէ ետք 1895-ին, ուսումը շարունակած է Կեդրոնական Թուրքիոյ գոլէճին մէջ ու աւարտած՝ 1899-ին: 1901-1903 հետեւած է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի դասընթացներուն, ապա վերադարձած է Այնթապ եւ 1904-ին ձեռնադրուած է քահանայ:

Կիլիկեան կոտորածներէն ետք, մեկնած է Անտիոք եւ Քեսապ՝ ջարդերէն վերապրած աղէտեալները միաթարելու եւ նպաստ բաշխելու առաքելութեամբ: Առաւելաբար իր ջանքերով է որ կառուցուած են Քեսապի մանչերու Սահակեան, եւ աղջկանց Պօղոսեան վարժարանները:

1915-ին Այնթապէն աքսորուած է Դամասկոս եւ Երուսաղէմ ու վերադարձած զինադադարին: Կիլիկիոյ հայաթափումով անցած է Գահիրէ եւ հուսկ՝ Միացեալ Նահանգներ, ուր եւ վախճանած է 5 Մարտ 1945-ին (Սարաֆեան, նշ. աշխ., էջ 477-479, Պողարեան, նշ. աշխ., էջ 676-680):

իրենք ասոր առջեւը չեն առնել²², ահա բուն կորուստը այս է մեզ համար, ըսել է Անտիոքի հայությունը բոլորովին փճացաւ, ապագայի յոյսերնիս ալ պարապը ելաւ, ասիկա Ձեր լուրջ նկատողութեան կը յանձնեմ, աջդ համբուրելով մնամ յարգանօք Աւետիս վարժապետ Ապագան²³

Յ. Գ. Եթէ զիս հարցնէք, դէպքի օրը ես Աստուծոյ նախախնամութեամբը ազատուեցայ, որովհետեւ ես դէպքէն 1 ժամ առաջ եկեղեցիէն դուրս ելած եւ ուրիշ տեղ գացած էի, եկեղեցիին մէջ գտնուող բոլոր մարդիկ սպաննուեցան, ես դուրսը գտնուելուս համար ազատուեցայ, հիմա պարապ կը պտտիմ 2 ամիսէ ի վեր: Նոյն

* * *

2 –

Վահան Քինյ. Կիլտալեանի կազմած Անտիոքի նահատակներու ընդհանուր ցուցակը՝ սպաննութեան վայրի եւ սպաննողի անուններու յիշատակութեամբ

Անտիոք եւ շրջակայից մէջ մեռնողներուն²⁴

Թիւր	անունները	Մահի տարի	սպաննուած վայրը	սպաննողին անունը
1	Աբրահամ Գ. Աւոյեան	19	Ան Չահլէթ	Ճանփօլատ օղլը ²⁵ Րճեպ [Ճանփօլատի որդին՝ Րճեպ]
2	Խանըմ, Գ. Աւոյեանի կինը	40		
3	Մարտիրոս Մ. Սերխօշեան	22	Տօրթ Այազ թաղ ²⁶ , մոմճը [մոմագործ] Ներսեսին տան մէջ	թարիզ նապրըրընը պիրատերի Ֆատըր Թիյսիւլ Օսման [Ճանապարհներու հսկիչին եղբայրը՝ Ֆատըր Թիյսիւլ Օսման]

Կիլիկեան կոտորածներէն իր յուշերը գրի առած է առանձին յօդուածով՝ Կիլիկիոյ Աղէտէն Վերջ (Վերյիշումներ) խորագրով («Տաթեւ» տարեցոյց, Դ. տարի, Հալէպ, 1928, էջ 232-240):

²² Յիշեալ զոյգ քահանայ հայրերը, Սահակ Բ. Կաթողիկոսի կարգադրութեամբ եւ այնթապցի Գեորգ Ճէպէճեանի ընկերակցութեամբ, 12 Մայիս 1909-ին Այնթապէն ճամբայ ելած են դէպի Հալէպ՝ «Անտիոքի, Քէսապ եւ շրջակայից համար նիւթական նպաստ բաշխելու եւ արկածեալ ժողովուրդը միախօսելու պաշտօնով», եւ բաւական երկար ժամանակ մնացած են այդ վայրերուն մէջ (Թատուզճեան, *նշ. աշխ.*, էջ 13):

²³ Անտիոքի Ազգային Վարժարանի ուսուցիչ: Հմուտ էր եկեղեցական երգեցողութեան:

²⁴ Ցուցակը անստորագիր է: Պատրաստուած է Յունիս 1909-ին եւ գրուած է Վահան Քինյ. Կիլտալեանի ձեռագրով: Պատրաստուած է Հալէպի Ազգային Առաջնորդարանի խնդրանքով, Սահակ Բ. Կաթողիկոսի 15 Մայիս 1909 թուակիր եւ 2435/169 թուահամար Ատանայէն գրած նամակին որպէս արդիւնք:

²⁵ Օղլը, օղլու, օղլի, թրքերէն՝ որդի:

²⁶ Այսպէս կը կոչուէր Անտիոքի հայոց թաղը: Հալէպ նահանգի տարեկան *Սալնամէ*ներու (سنة و لايت حلب - Հալէպ Նահանգի Տարեգիրք) Անտիոքի թաղերուն յատկացուած գլուխին մէջ այս թաղը յիշուած է որպէս «Տէօրթ Այազ Արմանի» («Հայկական Տէօրթ Այազ») թաղ: Հոն յիշուած են նաեւ նոյնանուն երկու այլ թաղեր՝ «Տէօրթ Այազ Մեճ» եւ «Տէօրթ Այազ Փոքր» անուններով:

4	Կարապետ Պերպերեան	54	Սօֆուլու թաղ ²⁷	Շահին օղլը Չամիտ [Շահինի որդին Չամիտ]
5	Մկրտիչ Կ. Պերպերեան	28	Եկեղեցույ մեջ	Շապան Գեմիլ օղլը Քետր [Շապան Գեմիլի որդին Քետր]
6	Մանուկ Կ. Պերպերեան	25	Սօֆուլու թաղ	Շահին օղլը Չամիտ [Շահինի որդին Չամիտ]
7	Աննա Կ. Պերպերեան	80	Սօֆուլու թաղ	Շահին օղլը Չամիտ [Շահինի որդին Չամիտ]
8	Կարապետ Քիչիկեան	40	գոյումճը Մարգարըն էվինտ [ոսկերիչ Մարգարին տան մեջ]	
9	Մարտիրոս Կիրակոսեան ²⁸	60	Տօրթ Այազ թաղ	Ալիկօ
10	Նապարթ Մ. Աբրահամեան	38	Էօմեր աղա մահալլեխինտ Ապտիլորահման էվինտ [Էօմեր աղա թաղամասը, Ապտիլորահմանի տան մեջ]	Քիլիսլի ֆելլահ ²⁹ խօճաը Ապտիլ Քատիր [քիլիսլի ֆելլահներու [արաբ գիտացիներու] ուսուցիչը՝ Ապտիլ Քատիր]
11	Մահտեյի Գերգ Մ. Աբրահամեան	64	Էօմեր աղա մահալլեխինտ [Էօմեր աղա թաղամասը]	Քիլիսլի ֆելլահ խօճաը Ապտիլ Քատիր [քիլիսլի ֆելլահներու [արաբ գիտացիներու] ուսուցիչը՝ Ապտիլ Քատիր]

²⁷ Որպէս Աստիոքի թաղերէն մէկը, յիշուած է Հալէպ նահանգի *Սալխաւի*ներուն մէջ՝ «Սօֆիլար Իսլամ» ձեռով:

²⁸ Աստիոքի ծանօթ ազգայիններէն, որ երկար տարիներ անդամակցած է տեղւոյն «Մէճիլար իտարե»ին՝ Վարչական ժողովին:

6 Ապրիլ 1909-ին, Ատանայի հայոց կոտորածին լուրերը Աստիոք հասնելէ ետք Կիրակոսեան դիմած է կառավարչատուն եւ խնդրած է որ հաւանական կոտորածին առաջըը առնուի, բայց գաւառակապետի տուած ապահովութեան խոստումներուն վրայ, եւ անոր իսկ առաջարկով, գացած է հայոց թաղը՝ Տօրթ Այազ, որպէսզի ապահովցնէ տեղւոյն ժողովուրդը, բայց հոն յարձակումի ենթարկուելով՝ սպաննուած է թուրք խուժանին կողմէ: Աստիոքի գաւառակապետը եւս գացած էր տեղւոյն հայոց առաջնորդարան՝ հայերը հանդարտեցնելու. հոն գտնուած միջոցին, թուրք խուժանը պաշարած է շէնքը եւ անոր մեկնումէն ետք յարձակած է սպաննած է հոն գտնուող երեք եկեղեցականներն ու Մարտիրոս Կիրակոսեանը (Թէրգեան, *նշ. աշխ.*, էջ 255, Գուշագճեան-Մատուռեան, *նշ. աշխ.*, էջ 561):

Կոտորածի օրերուն Աստիոք գտնուած Զորա Իսկէնտերեան իր յուշերուն մէջ պատմած է, թէ ինչպէս դէպքերու սկզբնաւորութեան, իր հայրը նամակով դիմած է Մարտիրոս Կիրակոսեանին եւ այլոց, որ Աստիոքէն հեռանալով ապաստանին իր մօտ, Մուսա Լեռ, գէթ մինչեւ կացութեան յստականալը, եւ թէ ինչպէս անոնք մերժած են առաջարկը՝ «առարկելով որ 6000 տնուոր քաղաքի մը մէջ 100 տուն հաշուող հայերուն մարդ ծուռ աչքով չի նայիր. անոնք կ'ամչնան հայոց վնասելէ»: Իսկէնտերեան յիշած է նաեւ, որ Մարտիրոս Կիրակոսեան սպաննուած է «ժամանակին իր գարշապարը լիզող աւագակապետ Ալիգոյի կողմէ»: Ըստ անոր, Կիրակոսեան երբ քաղաքի կառավարիչին պահանջով տեղւոյն հայերը ապահովեցնելու համար հայկական թաղ կ'երթայ, թաղի մուտքին յարձակման կ'ենթարկուի ու կը սպաննուի (Իսկէնտերեան, *նշ. աշխ.*, էջ 24-26):

²⁹ Ալեի արաբ երկրագործ դասակարգին տրուած ընդհանուր անուանումը: Ատանայի մէջ անոնք բնակած են առաւելաբար քաղաքի շրջակայքն ու մօտակայ պարտէզները:

12	Միքայել Գ. Մ. Աբրահամեան	22	Տօրթ Այագ թաղ	Ֆահլ իսմինտ ֆելլահ [Ֆահլ անունով ֆելլահ-արաբ գիւղացի]
13	Յակոբ Գ. Մ. Աբրահամեան	13	Տօրթ Այագ թաղ	Ֆահլ իսմինտ ֆելլահ [Ֆահլ անունով ֆելլահ -արաբ գիւղացի]
14	Մահտեսի Կարապետ Գապանճեան			
15	Յովհաննես Կիրակոսեան	50	Նարլըճա ³⁰ քօյինտ [Նարլըճա գիւղին մէջ]	Գատիր աղա վէ [եւ] Ապտիլ ճելիլ
16	Նաում	55	Ատանատա [Ատանայի մէջ]	
17	Գեորգ Գապանճը Կարապետեան	35	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	Նաճար [ատաղձագործ] Ահմետ, Դալազլընըն օղլը Ալի [Դալազլի որդին՝ Ալի], Ալի չավուշըն օղլը Ֆայիլ [Ալի չավուշի (ենթասպայի) որդին՝ Ֆայիլ]
18	Մահտեսի Ներսես Ղապարեան	45	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	քիւրտ վապօթիյէ [քիւրտ սպայ]
19	Ղապար Ն. Ղապարեան	29	խարապա արասընտա [աւերակներուն միջեւ]	Դալազլընըն օղլը Քեապիմ ³¹ [Դալազլի որդին՝ Քեապիմ]
20	Վանըս Ասլըսեան	35	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	Տելի Սաիտ ³² [խենթ Սայիտ]
21	Գեորգ Ա. Աւոյեան	50	Ժամ գուրպիմտ [եկեղեցւոյ դարձուածքին]	
22	Ասատուր Գօճապաշեան	65	Ժամտա [եկեղեցւոյ մէջ]	
23	Յակոբ Գօճապաշեան	35	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	
24	Կարապետ Պերպեր [սահրիջ]	25	Տեմիր Գափուտա ³³ [Տեմիր Գափույի մէջ]	Գարիլի [գարիեցի] ³⁴ հաճի Ալի
25	Մովսէս Ա. Աւոյեան	36	խարապա արասընտա [աւերակներուն միջեւ]	
26	Ղալիթ Պետրոսեան	24	Տեմիր Գափուտա [Տեմիր Գափույի մէջ]	

³⁰ Աստիոքի Քուսէյր գաւառակի գիւղերէն, ըստ Հալէպ նահանգի Սալնասալներուն:

³¹ Թէրզեան եւս, Քեսապի ու Աստիոքի ջարդարարներու շարքին յիշած է Քեազիմ աղայի մը անունը (*նշ. աշխ.*, էջ 795):

³² Այլ տեղ յիշուած է «Տօրթ Աեագ մահալլեսինտէն ֆելլահ քիւնէֆէճի տելի Սաիտ [[Աստիոքի] Տօրթ Այագ թաղէն՝ քիւնէֆէ (անուշեղէնի տեսակ մը) պատրաստող՝ գիւղացի խենթ Սայիտ]» ձեւով: Ան մեղսակից է նաեւ բազմաթիւ այլ սպաննութիւններու: Աւելի վար, 25 Դեկտեմբեր 1910-ին Աստիոքէն յոյսած նամակին մէջ պիտի տեսնենք, որ յիշեալը ձերբակալուել է 101 տարուան բանտարկութեան դատապարտուելէ կարճ ժամանակ անց՝ ազատ արձակուած է բանտէն:

³³ Տեմիր Գափու՝ լեռնանցք Կիլիկիոյ մէջ, պատմականօրէն ծանօթ Ասորական դոռոց, որ կը գտնուի Ամանոսեան լեռնաշղթային վրայ, Աստիոքէն հիւսիս, Ալեքսանտրէթէն 12 քմ. հարաւարեւելք: Ունի մօտ 13 քմ. երկարութիւն:

³⁴ Գարիլէ՝ Աստիոքի Հարպիէ գաւառակի գիւղերէն, ըստ Հալէպ նահանգի Սալնասալներուն: Գտնուած է Որոնդէսի հովիտին վրայ, գետէն արեւելք, Աստիոքէն 8 քմ. հարաւ:

27	Սարգիս Ա. Առյեսան	26	Ժամտա [եկեղեցույ մեջ]	
28	Յակոբ Յ. Գույումճեան	30	սերայտա պօղովմը [կառավար չատան մեջ խեղդուած]	պօնճուզը վապթիլ ³⁵ [պօնճուզցի սպա], ֆելլահ Ալիպ
29	Քիրտ Չաքուր	55		
30	Սկրտիչ տօքմեճի [ճուլագործ] Խաչատուրեան	25	Ժամտա [եկեղեցույ մեջ]	
31	Յակոբ-Արթին տօքմեճի [ճուլագործ] Խաչատուրեան	23	Ժամտա [եկեղեցույ մեջ]	
32	Մովսէս Գըլըճճը Մանուկեան	50		
33	Եօղուն օլուզը Մանուկ [Եօղուն օլուզցի ³⁶ Մանուկ]	50	խարապա արաաընտա [աւերակներուն մեջ]	ֆելլահ
34	Այնթապը Յովհաննէս		Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Ալիկօ վէ հալէպի Գամտօնըն օլու [Ալիկօ եւ հալէպցի Գամտոյի որդին]
35	Ճիրճի Սեյրեկեան	38	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Կենճօնըն օլու Մաճար Իպպէ [Կենճոյի որդին՝ առաղձագործ Իպպէ], հալէպի Գամտօնըն օլու [հալէպցի Գամտոյի որդին], Եօղանճընըն օլու Գավրան ³⁷ [վերմակագործի որդին Գավրան]
36	Մանուկ Գապէշեան	52	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Թիյսիւլ Օսման, ճան Փուլատ Եահեա վէ [եւ] Ռէճեպ
37	Գրիգոր Գապէշեան	32	Սօֆալար թաղ	Մալթանտ Սալման, Մըսթաֆանըն օլը տէլի Խալիլ [Մըսթաֆայի որդին՝ խենթ Խալիլ]
38	Մինաս Պասմաճեան	20	Սօֆալար թաղ	Կենճօնըն օլու Իպպէ [Կենճոյի որդին՝ Իպպէ], Գաճի Եուսուֆըն օլու [Գաճի Եուսուֆի որդին]

³⁵ Թաւուզճեան քահանայ 9 Յունիս 1909-ի իր օրագրութեան մէջ յիշած է այս մարդը ու ըսած է, թէ այդ օր Պատերազմական Ատեանին տեղեկագիր մը յղած են՝ «Պօնճուզու Զապթիլէի եւ ուրիշ շատ մը տաճիկներուն քով թալանուած գոյքեր գտնուելուն լուր տալով եւ անոնց տէրերուն վերադարձուիլը պահանջելով» (Թաւուզճեան, նշ. աշխ., էջ 27):

³⁶ Եօղուն Օլուզ՝ Մուսա Լեթան գիւղերէն, անոր հարաւային լանջերուն, Սվէտիայէն 10 քլմ. հիսախ:

Հայ երեք յարանաւորութիւնները գիւղին մէջ ունեցած են իրենց եկեղեցիներն ու դպրոցները: 1909-ին Եօղուն Օլուզի մէջ ջարդ չէ պատահած, բայց շրջակայ գիւղերը աշխատանքի մեկնած 49 եօղունօլուզցիներ սպաննուած են եւ 2 ուրիշներ համարուած են կորած: Գիւղէն 31 ընտանիք թալանուած եւ 25 կիներ այրիացած են (Թաւուզճեան, նշ. աշխ., էջ 22):

Առաջին աշխարհամարտի նախօրեակին, գիւղը ունեցած է շուրջ 255 հայ տուն 1233 բնակիչով, որոնցմէ 1176 հոգի 1915-ի Մուսա Լեթան ինքնապաշտպանութեան ժամանակ բարձրացած են լեռ ու փրկուած կոտորածէ (Գուշազճեան-Մատուեան, նշ. աշխ., էջ 88):

Եօղուն Օլուզը եւս 1939-ին, Ալեքսանտրէթի շրջանի Թուրքիոյ բռնակցումով, Մուրիայէն խլուելով կցուած է Թուրքիոյ:

³⁷ Աւելի վար, 25 Դեկտեմբեր 1910 թուակիր նամակին մէջ պիտի տեսնենք, որ յիշեալը ձերբակալուելէ ետք փախած է հիւանդանոցէն եւ զինք «ոչ փնտռող կայ ոչ խնդող»:

39	Յովհաննես Տեր Աբրահամեան	35	Գրրրգ Խանտա [Գրրրգ Խանի մէջ]	
40	Կարապետ Տեր Աբրահամեան	32	Ժամնա [Եկեղեցւոյ մէջ]	Չէքի խոճա, Ալի չավուշ [Ենթասպայ], Յասան
41	Սարգիս Գ. Խանճեան	23	Մա՛շուգէտ ³⁸ [Մա՛շուգէի մէջ]	Թեննիմին ուշագլար [Թեննիմի պաւակները]
42	Եօղուն օլուզը Յովհաննես Մաթոսեան	35	Պէտէվիտ ³⁹ [Պէտէվիի մէջ]	Նուրի աղա
43	Եագուպիէլի ⁴⁰ [Եագուպիէցի] Աւետիս	20	Մա՛շուգէտ [Մա՛շուգէի մէջ]	
44	Յովհաննես Մ. Պասնաճեան	50		
45	Քեսապը Պօղոս	35	Պէտէվիտ [Պէտէվիի մէջ]	
46	Իսա Գունտազճեան	40	Տօթթ Այագտա [Տօթթ Այագի մէջ]	Պերպեր Խուրշիտին օղլու Պէհան [սափորիչ Խուրշիտի որդին՝ Պէհան], Ճան Փօլատըն իքի օղլու [Ճան Փօլատի երկու որդիները]
47	Ալեքսան Գունտազճեան	19	Տօթթ Այագտա [Տօթթ Այագի մէջ]	Պերպեր Խուրշիտին օղլու Պէհան [սափորիչ Խուրշիտի որդին՝ Պէհան], Ճան Փօլատըն իքի օղլու [Ճան Փօլատի երկու որդիները]
48	Դաւիթ Չըպըզճեան	37	Ժամ գուրպինտ [Եկեղեցւոյ դարձուածքին]	Գուսէյր Մուրետի, չըպըզճը տօմեր [ծխափող վաճառող տօմեր], Յաճի Ապսօ
49	Լեւոն Դաւիթեան	26	Տօթթ Այագտա [Տօթթ Այագի մէջ]	Համտտօշին օղլու [Համտտօշի որդին]
50	Լուսֆի Դաւիթեան	20	Տենիր Գափուտա [Տենիր Գափուի մէջ]	
51	Սարգիս Մոնճեան	39	Ժամ գուրպինտ [Եկեղեցւոյ դարձուածքին]	Ալի չավուշ [Ենթասպայ Ալի], Տէլի Սաիտ [Խենթ Սայիտ], Ֆաիլ
52	Պետրոս Պօղոսեան	39	քտփիի պաշընտա [Կամուրջի գլխուն]	թքքենին խըտմէքճիսի Խէլէֆ [աղօթատեղիի ծառան՝ Խէլէֆ], Չէլթիկին օղլու [Չէլթիկի որդին]
53	Աւետիս Քիչիկճիկեան	40	Ժամ գուրպինտ [Եկեղեցւոյ դարձուածքին]	հալէպի Հանտօնըն օղլու [հալէպցի Հանտոյի որդին], քենէքճի Ֆատըլ [թիթեղագործ Ֆատըլ]
54	Մահտեսի Փանօ Պարնագըրպեան	70	Տօթթ Այագտա [Տօթթ Այագի մէջ]	գասսապ Ալի չավուշ [մսավաճառ ենթասպայ Ալի]

³⁸ Մա՛շուգէ կամ Մա՛շուգլու՝ թրքարնակ գիւղ Որոնդէսի հովիտին մէջ, գետի ձախ ափին, Անտիոքէն 6 քլմ. հիւսիս:

³⁹ Պէտէվի՝ Անտիոքի Հարպիէ գաւառակի գիւղերէն, ըստ Հալէպ նահանգի *Մայրամա*ներուն:

⁴⁰ Եագուպիէ՝ հայարնակ գիւղ օսմանեան Սուրիոյ Հալէպ նահանգի Հալէպ գաւառի Ճըքըր Շուրուր գաւառակին մէջ, Ճըքըր Շուրուր արանէն 17 քլմ. հիւսիս:

Ունեցած է Սր. Թորոս շատ հին եկեղեցին եւ Սր. Աննա (Սր. Գեորգ) եկեղեցի-ովստատեղին:

Ըստ Մովսէս Վրդ. Ոսկերիչեանի կազմած մարդահամարին, գիւղը 1911-ին ունեցած է 152 տուն հայ՝ 778 անձ (Յակոբ Չոլաքեան, Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը, Անթիլիաս, 2006, էջ 104-105):

Գիւղի հայութեան մէկ կարեւոր մասը 19-րդ դարու երկրորդ կիսուն յարած է լատինականութեան: Զոյգ համայնքներն ալ ունեցած են իրենց դպրոցները: Ան որպէս հայարնակ գիւղ՝ ցարդ կը պահէ իր գոյութիւնը:

55	Մահտեսի Սարգիս Պարմագսրսյան	35	Տօթթ Այագտա [Տօթթ Այագի մեջ]	Տիպայտ խելեֆ
56	Կարապետ Քիւչիկճիկեան	35	Ժամ գուրպինտ [եկեղեցոյ դարձուածքին]	սալգինի [սալգինցի] ⁴¹ Մըսթաֆա, Շեհաս Սենկեր
57	Մուսա ճանսրսյան	50	Գըրըգ Խանտա [Գըրըգ Խանի մեջ]	
58	Ժամկոչ Խաճի Յակոբ Ունճը Մանուկեան	60	Ժամտա եագճըշար [եկեղեցոյ մեջ այրած են] ⁴²	
59	Ժամկոչ օղլու Նշան [Ժամկոչի որդին՝ Նշան]	35	Պետկիտ [Պետկիտի մեջ]	Ալի Պապանըն օղլը Նուրի [Ալի Պապայի որդին՝ Նուրի]
60	Յարութին Սըրըգեան	65	Չիվետ Փաշա մասմանասընտա [Չիվետ փաշայի օճառի գործարանին մեջ]	Հաճի Մապլունըն օղլու [Հաճի Մապլունի որդին]
61	Պօղոս Յ. Սըրըգեան	54	Չիվետ Փաշա մասմանասընտա [Չիվետ փաշայի օճառի գործարանին մեջ]	Ասֆուրըն օղլու Քելլեճի [Ասֆուրի որդին՝ Քելլեճի]
62	Եօղուն օլուզը [Եօղուն օլուզցի] Մուսա Սողոմոնեան	28	Չիվետ Փաշա մասմանասընտա [Չիվետ փաշայի օճառի գործարանին մեջ]	Ասֆուրըն օղլու Քելլեճի [Ասֆուրի որդին՝ Քելլեճի]
63	Մարթա Ղարիպ Կարապետեան		Չիվետ Փաշա պաղչեսինտ [Չիվետ փաշայի պարտեպին մեջ]	
64	Պետրոս Մաթոսեան	22	Պետկիտ [Պետկիտի մեջ]	Հաճի Նուրի
65	Յովհաննես Մաթոսեան	20	Պետկիտ [Պետկիտի մեջ]	Հաճի Նուրի
66	Պետրոս Դ. Մուսաեան	35	Պետկիտ [Պետկիտի մեջ]	Հաճի Նուրի
67	Սարգիս Դ. Մուսաեան	32	Թօրըլըտա ⁴³ [Թօրըլըի մեջ]	Հաճի Բաղըպըն օղլու [Հաճի Բաղըպի որդին]
68	Լեւոն Փայրաճեան	35	Տօթթ Այագ	

⁴¹ Սալգին՝ պատմական քաղաք Սուրիոյ հիւսիս-արեւմուտքը, Հարէն գաւառին մէջ, Հարէն քաղաքէն 11 եւ Հալէպէն 80 քլմ. հարաւ-արեւմուտք, Որոնդէս գետի ափին: Ծաղկուն եղած է հռովմէացիներու եւ բիզանդացիներու շրջանին: Շրջապատուած է ձիթենիի անհամար ծառերով (المعجم الجغرافي للقطر العربي السوري - Սուրիական Արաբական Հանրապետութեան Աշխարհագրական Բառարան, արաբերէն լեզուով, հրատարակութիւն Ջիստուրական Ուսումնասիրութիւններու կեդրոնի, Դամասկոս, Գ., 1992, էջ 645-646): 19-րդ դարավերջին ու 20-րդ դարասկզբին ունեցած է հայկական փոքրաթիւ գաղթօճախ:

⁴² Թաուզճեան Քինյ. ես կը հաստատէ, որ ժամկոչը սպաննել է ետք՝ այրած են անոր մարմինը (Թաուզճեան, *աշ. աշխ.*, էջ 26):

⁴³ Թօրոսը, Թօրոսիք կամ Թօրոսեանք՝ գիտ՝ Մարաշ անկախ գաւառի Ջէթուն գաւառակին մէջ, Արեգին գիւղին մօտակայքը (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բալշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տղանունների Բառարան*, Երեւանի Պետական Համալսարանի հրատարակչութիւն, Բ. հատոր, Երեւան, 1988, էջ 478):

69	Պօղոս Պասանճեան	57	Տօրթ Այագ	Քելթօնըն ուշագլարը [Քելթօնի պաւակները], Իլլէթ
70	Մահտեսի Պօղոս Մերմերեան	45	Տօրթ Այագ	Ալի չավուշ [Ենթասայայ Ալի]
71	Ժամկոչ օղլու Պետիր [Ժամկոչի որդին՝ Պետիր]	60	Տօրթ Այագ	
72	Սիբայէլ Սասունցի	28	Կիլլի պաղչետ [վարդերու պարտեպին մեջ]	Ֆելլահ [գիրդացի] Գասայ Ալի, Ապու Սըրտի
73	Մահտեսի Սարգիս Տօրթճեան	40	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Գաշըզընըն օղլու Տուրմուշ [դգալագործի որդին՝ Տուրմուշ], հալվաճը Սախտին օղլու Արապ Պետտան [իրուշավաճառ Սախտի որդին՝ Արապ Պետտան], միթելլի [կտակակատար-խնամակալ] Իսա էֆենտի
74	Մովսէս Ս. Տօրթճեան	15	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Գաշըզընըն օղլու Տուրմուշ [դգալագործի որդին՝ Տուրմուշ], հալվաճը Սախտին օղլու Արապ Պետտան [իրուշավաճառ Սախտի որդին՝ Արապ Պետտան], միթելլի Իսա էֆենտի
75	Պօղոս Խաչոյեան	40	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	
76	Խաչատուր Պ. Խաչոյեան	17	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	
77	Մարտիրոս Թիթիմճի Աւետիսեան	40	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Ալի չավուշ [Ենթասայայ Ալի], տէլի Սախտ [խենթ Սախտ], ճան Փօլատ Եահիտ, Քելլճիմնի օղլու [Քելլճիմնի որդին]
78	Մարիամ Թիթիմճի Աւետիսեան	3	թփիլէնրէք Եօլտի [ոտնահարուելով մեռալ]	
79	Սարգիս Յակոբ Քիչիկեան	23	Սօֆուլար մահալլէսիմ[տա] [Սօֆուլար թաղին մեջ]	Հաճի Ալի սիմսար օղլը Տրովիշ, Ահմետին օղլը Խօճա
80	Մահտեսի Մելքոն Յովհաննէս Չափարեան	45	Ժամտա [Եկեղեցոյ մեջ]	Քէօր [կոյր] Չէրիյիտ, Տիփանին օղլու Սելիմ վէ գայնը [Տիփանի որդին՝ Սելիմ եւ տագրը]
81	Մովսէս Մ. Եուսուֆեան	35	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Թօփրագընըն օղլը Էմին [հողագործի որդին Էմին], Ղեստի խօճանըն օղլու Չէքի վէ ճըմէլի Շապան [ղեստցի ուսուցիչի որդին՝ Չէքի եւ ճըմէլի Շապան]
82	Արմենակ Սասունը [Արմենակ սասունցի]	33	խարապա արասընտա [աւերակներուն միջեւ]	Հաճի Ավնի
83	Հաճի Չաքուր	40	Ժամ գուրպիմտ [Եկեղեցոյ դարձուածքին]	Չէքի Խոճա
84	Յովհաննէս Խանճեան	36	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Հաճի Հիւսէյն գօստուրաճը [կօշկակար]
85	Հաճի Արթին Պէլլէլի	70	Սուլթա	
86	Աստուր Գոյունճը Աբոյեան	50	Ժամ գուրպիմտ [Եկեղեցոյ դարձուածքին]	

87	Մովսես Պրպրե Գեռեան	28	Գուրիշտ ⁴⁴ [Գուրիշի մէջ]	Փարմագարզ Դաճի Մուհամետ
88	Ասատուր Գեռեան	19	Նարլըճա եօլընտա [Նարլըճայի ճանապարհին]	մա'շուգէլի ֆէլլահ Թեննինին ուշագլարը [մա'շուգէցի ֆէլլահ Թեննինին որդիները]
89	Եագուպ Դերկէ Օղլը [Դերկէի որդի' (Դերկէեան) Եագուպ- Յակոբ] ⁴⁵	50	Նարլըճա եօլընտա [Նարլըճայի ճանապարհին]	
90	Քիւչիկեան Գեորգ	55	Պետէլիտ [Պետէլիի մէջ]	Նուրի աղա
91	Յարութիւն Դաիթեան	40	Նարլըճա	Չուլաղըն օղլը Մուհամետ [Չուլաղի որդին' Մուհամետ]
92	Ճուհար Դայրապետին գըզը [Ճուհար դուստր' Դայրապետի]	20	Նարլըճա	Չուլաղըն օղլը Մուհամետ [Չուլաղի որդին' Մուհամետ]
93	Յովհաննէս	2 այլըզ [ամսա- կան]	Նարլըճա	Չուլաղըն օղլը Մուհամետ [Չուլաղի որդին' Մուհամետ]
94	Սիմա	65	Նարլըճա	Չուլաղըն օղլը Մուհամետ [Չուլաղի որդին' Մուհամետ]
95	Վանըս (չօլագ)	25	Նարլըճա	Չուլաղըն օղլը Մուհամետ [Չուլաղի որդին' Մուհամետ]
96	Յակոբ Դաշիշեան	55	Նարլըճա	Սէր օղլան օղլը Սէյօ
97	Քեսապը Պետիր	55	Նարլըճա	Նասիպին գարընտաղը [Նասիպին եղբօրորդին]
98	Շամօ (որդին)	25	Նարլըճա	Ատիլէնին օղլը [որդին] Խէլիլ
99	Քեսապը [քեսապցի] Ճիրճիեան Շամօ	20	Քիստճիկտ ⁴⁶ [Քիստճիկի մէջ]	Դաճի Ապտօ
100	Քեսապը Պաղտասար օղլը Սէրգօ [քեսապցի Պաղտասարի որդի' Սէրգօ]	50	Նարլըճա	Խալիտ աղա
101	Քեսապը Պետիրին օղլը Դանէս [քեսապցի Պետիրի որդի' Դանէս (Յովհաննէս)]	20	Նարլըճա	Խալիտ աղա վէ [եւ] Նասիֆ
102	Վանէս Կիրակոսեան	50	Նարլըճա	Գատիր աղա վէ գարընը [Գատիր աղան եւ կինը], Ապտի Ճիլի, շէյս

⁴⁴ Գուրիշ: Հաւանաբար վերեւ յիշատակուած Աստիոքի Հարպիէ գաւառակին Գարիէ գիւղն է:

Թաւուզճեան քահանայ, 24 Մայիս 1909 թուականի իր օրագրութեան մէջ նշած է, թէ այդ օր մինչեւ կէսօր գրուցած է այդ գիւղի բնակիչ ընտանիքի մը անդամներուն հետ, որոնք դէպքին կրօնապիտիւ եղած էին. ապա անեցուցած է, թէ «քաջալերելով ազատեցինք զիրենք» (նշ. աշխ., էջ 21):

⁴⁵ Թաւուզճեան քահանայ 6 Օգոստոս 1910 թուականի իր օրագրութեան մէջ յիշեալ անձի դստեր մասին ձգած է այսպիսի յիշատակութիւն. «...Նաեւ պասկէցի գէթունցի Տէր Մովսէսեան Եգեկիլը խըղըրպէկէն Հէրկէլ Եագուպի աղջկան՝ Գոհարի հետ, որուն հայրը Նարլըճայի մէջ ջարդուած եւ մայրն ալ բնական մահով մեռած ըլլալուն, իր այրի քրոջ հետ բոլորովին անօգնական մնացած էին: Ասոնց պիտի տամ եօթը ոսկի եւ այրի քոյրն ալ իրենց հետ միասին պիտի դրկեմ Ջէյթուն, 8 ոսկի դրամօժիտով» (Թաւուզճեան, նշ. աշխ., էջ 42):

⁴⁶ Քիստճիկ՝ Մուսա Լեւրան մօտակայ թրքաբնակ գիւղ, որուն փոքրաթիւ մուսալեոցի հայ բնակիչները գոհ գացին 1909-ի կոտորածներուն (Գուշագճեան-Մատուեան, նշ. աշխ., էջ 300):

103	Եօղուն օլուգլու Սարգիս [Եօղուն օլուգցի Սարգիս]	50	Տօրթ Այագ	
104	Կարապետ Գըլըճճեան	65	Տօրթ Այագ	Պերպեր Խալիտին եիկենը Պեհտան [սափրիչ Խալիտի քրոջ որդին՝ Պեհտան]
105	Մահտեսի Աբրահամ Գըլըճճեան	33	Ժամ գուրպինտ [եկեղեցւոյ դարձուածքին]	սիր վապթիւ [սպայ մը]
106	Յարութին Հապէշեան	48	Ժամ գուրպինտ [եկեղեցւոյ դարձուածքին]	նաճար Իպպէ, գոնտուրաճը Հաճի Հիսեն, պերպեր Հաճի Ալի [ատաղձագործ Իպպէ, կօշկակար Հաճի Հիսեն, սափրիչ Հաճի Ալի]
107	Պօղոս Գըլըճճեան	60	Ժամ գուրպինտ [եկեղեցւոյ դարձուածքին]	նաճար Իպպէ, գոնտուրաճը Հաճի Հիսեն, պերպեր Հաճի Ալի (հիւլեր) [ատաղձագործ Իպպէ, կօշկակար Հաճի Հիսեն, սափրիչ Հաճի Ալի (երեքով)]
108	Խաթուն Քէօր Սարգիսեան	40	Տօրթ Այագ	քէօր տուտունըն կիւլէկիսի Ահմետ վէ Հիսեն [կոյր հօրաքրոջ կիսան՝ Ահմետ եւ Հիսեն]
109	Գաբրիէ Աբիկեան	18	Ժամտա [եկեղեցւոյ մէջ]	Ալի չավուշըն օղլը Քամէ, տէլի Սահտ [Ալի չավուշի (ենթասպայի) որդին՝ Քամէ, խենթ Սայիտ]
110	Միսակ Թասլագեան	19	Ժամտա [եկեղեցւոյ մէջ]	Ալի չավուշըն օղլը Քամէ [Ալի չավուշի (ենթասպայի) որդին՝ Քամէ]
111	Աննա Հապէշեան	55	Օսմանիէ մահալլէսինտ ⁴⁷ [Օսմանիէ թաղին մէջ]	
112	Վիգթօր	13	Օսմանիէ մահալլէսինտ [Օսմանիէ թաղին մէջ]	
113	Մահտեսի Աբրահամ Գունտագճեան	48	Ժամտա [եկեղեցւոյ մէջ]	
114	Կարապետ Գունտագճեան	15	Ժամտա [եկեղեցւոյ մէջ]	
115	Սերոբ էֆ. Գըլըճճեան	40	Ժամ գուրպինտ [եկեղեցւոյ դարձուածքին]	
116	Գեորգ Գըլըճճեան	22	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	քէլ [ճաղատ] Եուսուֆ
117	Մահտեսի Սարգիս Աբգարեան	55	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	
118	Մահտեսի Ջաքար Պասմաճեան	48	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	նալպանտ Գարա Չէքի
119	Աւետիս Պասմաճեան	20	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	Հալէպի Հանտօնըն օղլու [հալէպցի Հանտոյի որդին]
120	Յարութին Յովհաննէս Գապանճեան	40	Ժամտա [եկեղեցւոյ մէջ]	Ալիքօ, Հավրան չավուշ [ենթասպայ Հավրան], Եօրղանճընըն օղլու [վերմակագործին տղան]
121	Աննա Յովհաննէս Գապանճեան	37	Ժամտա [եկեղեցւոյ մէջ]	

⁴⁷ Օսմանիէ՝ Անտիօքի թաղերէն: Յիշուած է Հալէպ Նահանգի տարեկան Սախաախներու Անտիօքի թաղերու ցուցակին մէջ:

122	Աւետիս Մ. Պետիր Պասնաճեան	27	Տօթօ Այագտա [Տօթօ Այագի մեջ]	
123	Գեորգ Անթիքեան	40	Կիլլի պաղչտ [վարդերու պարտեւին մեջ]	սարը քէ Գատիր [շէկ ճաղատ Գատիր]
124	Սարգիս Նալբանտեան	55	Ատանատա [Ատանայի մեջ]	
125	Աբգար Ս. Նալբանտեան	17	Մ'ա'շուգտ [Մա'շուգիի մեջ]	
126	Առաքել Տեր Ղապարեան		Ա'վլենտ ⁴⁸ [Ա'վլենի մեջ]	
127	Տիգրան Ա. Նալբանտեան	23	Ուլուն չարշուտա [Ուլուն (երկար) շուկային մեջ]	պերպեր [սափրիչ] Չեքի, Յաճի Սուհամնետ
128	Ենուք Տիբեւան	22	Տօթօ Այագ	Նալբանդ Սալմանըն օղլը Շաքիր [պայտագործ Սալմանի որդին Շաքիր]
129	Դաիթ Տըվանեան	35	Կիլլի պաղչտ [վարդերու պարտեւին մեջ]	ճեմիլի օղլը քեօր Իսմայիլ [ճեմիլի որդի՝ կոյր Իսմայիլ]
130	Քեսապլը [քեսապի] Խաչեր	38	Քետճիկտ [Քետճիկի մեջ]	Շըխտրին օղլը Ալի [Շըխտրի որդին՝ Ալի], պըչըրճը Յասան
131	Իլիաս ղընճեւի ⁴⁹ [ղնճեւիցի Իլիաս]	40	Պարպարընտա [Պարպարինի մեջ] ⁵⁰	պըչըրճը Յասան
132	Առաքել Սուրատեան	37	Ա'վլենտ [Ա'վլենի մեջ]	
133	Յակոբ Տեր Ղապարեան	70	Ա'վլենտ [Ա'վլենի մեջ]	
134	Յովհաննես Պերֆոյեան	37	Ա'վլենտ [Ա'վլենի մեջ]	
135	Սովսես Չեթինեան	40	Ա'վլենտ [Ա'վլենի մեջ]	

⁴⁸ Ա'վլենտ: Հալէպ նահանգի *Սալսամէներուն* մէջ, Անտիոքի Քարամուրթ գաւառակի գիւղերու շարքին յիշուած է «Ալլենտի» անունով գիւղ մը, որ հաւանաբար այս գիւղը եղած ըլլայ: Կը գտնուի հովիտի մը մէջ, Անտիոքէն 25 քմ. հարաւ (*Սուրիական Արաբական... Բ.*, 1992, էջ 125):

⁴⁹ Ղընճեւի՝ հայաբնակ գիւղակ Սուրիոյ Լաթաքիա նահանգին մէջ, Քեսապէն հարաւ-արեւելք, հայկական Արամօ գիւղին մօտակայքը, Քանսապա գիւղաքաղաքէն 15 քմ. հարաւ-արեւմուտք: 1911-ին ունեցած է 72 տուն՝ 392 հայ բնակիչ (Գրիգոր Տունկեան, *Նիսթեր Լաթաքիոյ եւ Շրջակայքի Հայ Ազգաբնակչութեան Պատմութեան*, Հալէպ, 1983, էջ 10), որոնցմէ շատեր զոհ գացած են 1915-ի Մեծ Եղեռնին:

Գիւղը ունի Սբ. Գեորգ հայկական փոքրիկ եկեղեցի մը:

Տեղոյն հայոց խօսակցական լեզուն եղած է արաբերէնը: Ղընճեւիէն որպէս հայաբնակ գիւղ ցարդ կը պահէ իր գոյութիւնը:

⁵⁰ Պարպարին կամ Պարպարուն՝ Անտիոքի Քարամուրթ գաւառակի գիւղերէն, որ ենթակայ էր Խըտըր Պէկ գիւղախումբին, Ռոնդէսի արուակներէն մէկուն ափին, Մուսա Լերէն արեւելք եւ Անտիոքէն հիւսիս-արեւմուտք, անկէ 10 քմ. հեռաւորութեան վրայ:

Կիլիկեան կոտորածներու ժամանակ այս գիւղին մէջ սպաննուած են քանի մը մուսալեոցի հալեր (Գուշագճեան-Մատոտեան, *նշ. աշխ.*, էջ 300):

136	Յակոբ Չաշէշեան	40	Ժամ գուրպիւնտ [Եկեղեցւոյ դարձուածքին]	Ֆելլահ Ալի չավուշ, տէլի Սախտ, գասապ Իսկէնտեր ⁵¹ [Ֆելլահ Ենթասայյ Ալի, Խենթ Սախտ, մսավաճառ Իսկէնտեր]
137	Յովհաննէս Չաշէշեան	12	Ժամ գուրպիւնտ [Եկեղեցւոյ դարձուածքին]	Պահրիմին օղլը Խելէֆ [Պահրիմի որդին Խելէֆ]
138	Աւետիս Չաշէշեան	9	Ժամ գուրպիւնտ [Եկեղեցւոյ դարձուածքին]	Պահրիմին օղլը Շէհուր [Պահրիմի որդին Շէհուր]
139	Մարտիրոս Չաշէշեան	30	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	Չասան վէ գասապ Իսկէնտեր [Չասան եւ մսավաճառ Իսկէնտեր]
140	Քէլ Գերգ	45	Խարապա արասընտա [աւերակներուն միջեւ]	Չաճի Ավնի
141	Մահտեսի Պետրոս Պասմաճեան	50	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	Չիվէտ փաշանըն օտապաշըր [Չիվէտ փաշայի [իջեանատան] սենեկապետը]
142	Աւետիս Պասմաճեան	28	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	Ճանփօլատըն օղլը Րճեայ [Ճանփօլատի որդին Րճեայ], Եահիէ
143	Մովսէս Պասմաճեան	40	Ճելէֆ փունարընտա [Ճելէֆ աղբիւրին մէջ]	
144	Յարութիւն գոյումճը [ոսկերիչ] Արոյեան	58	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	մըսըրըլը Ահմէտին օղլը Չաճի Ապտօ [Եգիպտացի Ահմէտի որդին Չաճի Ապտօ]
145	Սառա Մ. Արթինեան	57	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	
146	Չեթում Մ. Արթինեան	19	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մէջ]	
147	Լեւոն Մ. Արթինեան	25	Քիչիք Օսման խանընտա [Քիչիկ (Պլտիկ) Օսման իջեանատան մէջ]	մըսըրըլը Ահմէտին օղլը Չաճի Ապտօ [Եգիպտացի Ահմէտի որդի Չաճի Ապտօ]
148	Յակոբ Թիւքեանճըեան	50	Ժամտա [Եկեղեցւոյ մէջ]	թօփրագճընըն օղլը Եմին [հողագործի որդին Եմին]
149	Աբրահամ Թիւքեանճըեան	20	Ժամտա [Եկեղեցւոյ մէջ]	Չամագ, քէ Մուհամմետ (գահվեճի) [Ճաղատ Մուհամմետ (սրճեփ)]
150	Ըսեփ Թիւքեանճըեան	16	Ժամտա [Եկեղեցւոյ մէջ]	պիրատերինի Եօլտիւրեմլը [Եղբայրը սպաննողները]
151	Մարտիրոս Աւոյեան	40	Ժամտա [Եկեղեցւոյ մէջ]	Չամագ, քէ Եուսուֆըն օղլու [Ճաղատ Եուսուֆի որդին]
152	Մովսէս Քէօր Սարգիսեան	60	Նարլըճատա [Նարլըճայի մէջ]	Ֆելլահ Ֆաիլ ⁵²
153	Գերգ	27	Նարլըճատա [Նարլըճայի մէջ]	Ֆելլահ Ֆաիլ

⁵¹ Իր անունին կը հանդիպինք այս ցանկին մէջ քանի մը այլ սպաննութիւններու առիթով եւս: Աւելի վար 25 Դեկտեմբեր 1910-ին Անտիոքէն յղուած նամակի մը մէջ պիտի տեսնենք, որ յիշեալը համալստի ընկերոջ մը հետ, 13 բանտարկեալներու ազատ արձակման օրը (որոնցմէ մէկը ինք կը թուի ըլլալ), Անտիոքի մէջ քարկոծած է Պօղոս Գազանճեան անուն հայու մը տունը՝ ահ ու սարսափի մատնելով հոն գտնուող այրի հայուհիները:

⁵² Վերել թիւ 12-ի եւ 13-ի տակ յիշատակուած անձն է:

154	Սարգիս	35	Սօֆուլար թաղ	Հաճի Նիհատըն ⁵³ ուշադը ⁵⁴ [Հաճի Նիհատին պաակը]
155	Ճըրթըտեան Եուսուֆ	46	խարապա արարնտա [աւերակին մեջ]	Հաճի Նա'ի
156	Վանրս Խանայրսը	70	Տօթթ Սյազ	Նալբանտ Չեքիլ [պայտագործ Չեքիլ]
157	Ալեքսան Չափարեան	50	Ուկուն չարշըտա [Երկար շուկային մեջ]	Իսիազ կիլին օղը Էնիշթ [քեռայր]
158	Յովհաննես Ա. Չափարեան	20	Շէյս Ալի ճամիսի գուրպինտ [Շէյս Ալի մկկիթի դարձուածքին]	Գայսերիլի խոճանըն օղը Ահմետ Էֆ. [կեսարացի վարժապետի որդին՝ Ահմետ Էֆ.], Չիփէնին օղը հաճի Մըսթաֆա [Չիփէնի որդին՝ հաճի Մըսթաֆա]
159	Եօղուն օլուզը [Եօղուն օլուզցի] Մանիկ	40	Ճիսիր Հատիտ ⁵⁵	Մըսրինըն օղը Ալի [Եգիպտացիի որդին՝ Ալի]
160	Սարգիս Գ. Չուպայեան	25	Ճիսիր Հատիտ	Մըսրինին օղը Ալի [Եգիպտացիի որդին՝ Ալի]
161	Քեսապը Արիստակէս	35	Քիտճիկտ [Քիտճիկի մեջ]	Հաճի Ապտօ
162	Անտոն Խոտիկ օղը Խաչէր	28	Նարըճա	
163	Տիգրան Գունտագճեան	24	Տօթթ Սյազ	
164	Արան Գունտագճեան	20	Մաշուզ ⁵⁶	Պօշնաղըն օղը Իսմայիլ [Պօշնաղի որդին՝ Իսմայիլ]
165	Գառնիկ Գունտագճեան	16	Մաշուզ	Պօշնաղըն օղը Իսմայիլ [Պօշնաղի որդին՝ Իսմայիլ]
166	Յակոբ Գունտագճեան	18	Նարըճա	քոյին մըլիթար վէ աղալարը [գիւղի գիւղապետն ու աղաները]
167	Կարապետ Գունտագճեան	75	ժանտա [Եկեղեցույ մեջ]	

⁵³ Հաճի Նիհատ: Օսմանեան խորհրդարանի Աստիոքի ներկայացուցիչ Բիֆա'աթ Պարաք-աղ աղայի ազգականներէն, որ որպէս Աստիոքի կոտորածի կազմակերպիչներէն մէկը ձերբակալուած է ու բանտարկուած, բայց 11 Հոկտեմբեր 1909-ին ազատ արձակուած է (Թէոդիկ, *Ամէսուն Տարեցոյցը*, Կ. Պոլիս, Ե. հատոր, 1911, էջ 383):

⁵⁴ Հաճի Նիհատին զուակը: Հոս հրատարակելի 4/17 Ապրիլ 1913 թուակիր նամակին մէջ պիտի տեսնենք որ «անուանի ոճրագործ եւ խոռվարար» Հաճի Նիհատի զուակը, սուլթանի գահակալութեան տօնին առիթով կազմակերպուած հանդիսութեան, աղօթքի ժամանակ ճառ մը արտասանած է, որուն հետեանքով «հանրութիւնը, եւ աւելի լաւ է ըսել խոժանը քիչ մնաց որ պիտի խոժէր քրիստոնէից վրայ», բայց կառավարութիւնը գրեթէ ուշադրութիւն չէ դարձուցած պատահարին: Նամակագիրը յաւելած է թէ՛ «Այդ ճառախօսը որ բոլոր խաչակիրները պախարակեց, պատուաբեկեց եւ անուանարկ ըրաւ, հիմա ազատ է»:

⁵⁵ Ճիսր Ալ Հատիտ, բառացիօրէն՝ Երկաթէ Կամուրջ, գիւղ Ամրքի դաշտին հարաւակողմը, Որոնդէսի ձախ ափին, Քուսէր զաւառակին մէջ, Աստիոքէն հիւսիս-արեւելք, անկէ 20 քմ. հեռավորութեան վրայ: Այդպէս կը կոչուէր իր մօտակայքը գտնուող եօթանասուն մեղրանոց երկաթեայ կամուրջին համար (*Սուրիական Արարական...*, Բ., էջ 670):

⁵⁶ Մաշուզ, Մա'ըշուզիլէ կամ Մա'ըշուզլու՝ գիւղ Որոնդէսի հովիտին մէջ, գետի ձախ ափին, Ամրքի դաշտի հարաւակողմը, Աստիոքէն 6 քմ. հիւսիս (*Սուրիական Արարական...*, Ե., 1993, էջ 310-311):

168	Արմենակ Շերպեթճեան ⁵⁷		Քեպուստ ⁵⁸ (Քեպուսիի մեջ)	միլապիմ Իպրահիմ (յիսնապետ Իպրահիմ)
169	Միհրան Ա. Սերխոջեան	16		
170	Մանուկ Տերտերեան	35		
171	Տէյի Մուսա	60		
172	Ճենճեն Աւետիս	60	Իփիլկ պպարընտա [մետաքսի շուկային մեջ]	
173	Գեորգ Չըրալը Մուսայեան	3		
174	Խաչեր Աշըր Յակոբեան	24	Քիչիկ Օսման խանընտա [Քիչիկ Օսման խանին մեջ]	
175	Պետիր Խոտիկ օղլու	35	Նարընճա	Ղատիր աղա, պիթերնլի էմմանի [պիթերնցի էմմանի]
176	Մուսա Կարապետեան	35	Նարընճա	քեոյին շէյի պիթերնլի էմմանի [գիւղի շէյիլը պիթերնցի էմմանի], արապ Սաիտ, քերտիին Ալի
177	Ջայրապետ Թորոսեան	55	խարապ արասը [աւերակին մեջ]	
178	Թովմաս Փաթաճրեան	35	Նարընճա	արապ Սաիտ
179	Շարպըթ Պօղոս	60	խարապ արասը [աւերակին մեջ]	հաճի Ավնի
180	Շարպըթ Սարգիս	28	խարապ արասը [աւերակին մեջ]	հաճի Ավնի

⁵⁷ Աստիոքարնակ ծանօթ իրաւարան, բնիկ պիթիասցի (Մուսա Լեռ): Աստիոքի համընդհանուր կոտորածէն փրկուած է շնորհիւ այն բանին, որ իր բնակարանը գտնուած է Գերմանիոյ հիւպատոս Մարտիրոս Միսաքեանի տան հարեանույթեամբ: Կոտորածներէն ետք, ջարդերու մասին ընդարձակ տեղեկագիր մը յղած է Հալէպի առաջնորդարան եւ Կ. Պոլսոյ Պատրիարքարան եւ շնորհիւ այդ տեղեկագրին, ջարդին քանի մը գլխաւոր կազմակերպիչները դատուելու համար ձերբակալուելով տարուած են Ատանա, սակայն աւելի ետք, ազատ արձակուելով՝ վերադարձած են Աստիոք (Իսկէնտերեան, *նշ. աշխ.*, էջ 31-32, Գուշագճեան-Մատուտեան, *նշ. աշխ.*, էջ 300):

Կոտորածի օրերուն Աստիոք գտնուած Զորա Իսկէնտերեան իր յուշերուն մէջ կը պատմէ, թէ ինչպէս դէպքերու սկզբնատրութեան իր հայրը նամակով դիմած է Արմենակ Շերպեթճեանին եւ այլոց, որ Աստիոքէն հեռանալով ապաստանին իր մօտ, Մուսա Լեռ, գէթ մինչեւ կացութեան յստականալը, եւ թէ ինչպէս անոնք մերժած են առաջարկը (Իսկէնտերեան, *նշ. աշխ.*, էջ 24-26):

Իսկ Թաուզճեան քահանայ իր օրագրութեան մէջ որոշ տեղեկութիւններ կու տայ Շերպեթճեանի սպաննութեան մասին ու կը կրկնէ հոս տրուած կարգ մը մանրամասնութիւններ: Ըստ անոր, Շերպեթճեան սպաննուած է 28 Մայիս 1909-ին, «Միլապիմ Իպրահիմ»ի կողմէ (Թաուզճեան, *նշ. աշխ.*, էջ 23-25):

⁵⁸Քեպուսիէ՝ Մուսա Լեռան գիւղերէն, Աստիոքէն 25 քլմ. արեւմուտք: Համաշխարհային առաջին պատերազմի նախօրեակին ունեցած է 251 տուն հայութիւն՝ 1125 բնակիչ, որուն 17 ընտանիքը (85 հոգի) 1915-ի Մուսա Լեռան ինքնապաշտպանութեան ժամանակ բարձրացած են լեռ ու փրկուած կոտորածէն, մինչ միսները աքսորուած են սուրիական անապատ եւ երկու երրորդով փնճացած (Գուշագճեան-Մատուտեան, *նշ. աշխ.*, էջ 104):

Ըստ այլ աղբիւրի, 1912-ին գիւղը ունեցած է 230 տուն հայ բնակչութիւն, որուն 2-ը աւետարանականներ, իսկ մնացեալները՝ առաքելական հայեր էին: Ունեցած է նաեւ Հայոց Միացեալ Ընկերութեան կողմէ բացուած վարժարան մը (Սայապալեան, *նշ. աշխ.*, էջ 9, 11):

Քեպուսիէն եւս, 1939-ին, Ալեքսանտրէթի շրջանի Թուրքիոյ բռնակցումով, Սուրիայէն խլուելով կցուած է Թուրքիոյ:

181	Ադամ Վանես	35	խարապ արասը [աւերակին մեջ]	հաճի Ավնի
182	Տէլի Մուսա	75	Եօղուն Օլուգ եղլոնտա [Եօղուն Օլուգի ճանապարհին]	
183	Փանըս Փանըսեան	40	խարապ արասը [աւերակին մեջ]	թօփալ [կաղ] Մուհամմետ
184	Մահտեսի Երրթըտ Կարապետ	65	խարապ արասը [աւերակին մեջ]	հաճի Ավնի
185	Սկրտիչ Մարգարեան	60	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Ալի չավլըշ, օղլը Ֆաիլ, տէլի Սաիտ, Ալիքօ, հալէտ չավլուշ [Ենթասպայ Ալի, որդին Ֆաիլ, խենթ Սայիտ, Ալիքօ, Ենթասպայ հալէտ]
186	Գեղամ Մարգարեան	23	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	քէլ [ճաղատ] Մուհամմետ
187	Միհրան մըլխթար [թաղապետ] Աւետիսեան	16	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Ալի չավլուշ, Ֆաիլ, գասապ Իսկէնտեր, տէլի Սաիտ, քիւմէֆէճի Հայտար [Ենթասպայ Ալի, Ֆաիլ, մսավաճառ Իսկէնտեր, խենթ Սայիտ, քիւմէֆէ [անուշեղենի տեսակ մը] պատրաստող Հայտար]
188	Քիւլահլի Յակոբ	30	Տօրթ Այագտա [Տօրթ Այագի մեջ]	Էյնիմօ, Չէյնիմին օղլը Ռեճեպ, թենթէճի Ֆատըլ օղլը Շեհուր, սալգինլի Խէյրօ, Մետուրըն կիւլէյիսի Սըֆօ, հալէպլի Համտօնըն օղլը Ապտօ [Էյնիմօ, Չէյնիմին որդին՝ Ռեճեպ, թիթեղագործ Ֆատըլի որդին՝ Շեհուր, սալգինցի Խէյրօ, Մետուտին փեսան՝ Սըֆօ, հալէպցի Համտոյի որդին՝ Ապտօ]
189	Տըր Արմենակ քահանայ	50	Ժամտա [Եկեղեցոյ մեջ]	Տէլի Սաիտ [խենթ Սայիտ], Իսկէնտեր
190	Տիգրան (տղան)	20	Ժամտա [Եկեղեցոյ մեջ]	Տէլի Սաիտ [խենթ Սայիտ], Իսկէնտեր

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ 1909Ի ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՄԱՍԻՆ

Միհրան Մինասեան

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս յօդուածով հրատարակութեան տրուած են 11 անտիպ փաստաթուղթեր որոնք կ'առնչուին 1909-ի Անտիոքի (Անթաքիոյ) հայութեան կոտորածին: Անոնք մեծ մասամբ գրուած են աղէտէն ետք քաղաք դրկուած քահանայ հայրերու կողմէ եւ կը նկարագրեն հոն տեղի ունեցած սպանդն ու ասարառութիւնները, կը շօշափեն կոտորածներէն ետք քաղաքին մէջ ստեղծուած իրավիճակը, կը խօսին տիրող ծայրայեղ թշուառութեան, որբերու եւ այրիներու ճակատագրի, որբանոցներու, օտար հաստատութիւններու կողմէ որբեր որդեգրելու, նպաստներու բաշխումի, պետական նպաստի դադրեցման, պատերազմական ատեաններու կողմնակալ ու անվճռական ընթացքի, ոճրագործներու ազատ արձակման եւ յարակից այլ հարցերու մասին: Առանձին ցուցակով տրուած է նաեւ Անտիոքի նահատակներու ընդհանուր ցուցակը՝ սպաննութեան վայրի եւ սպաննողի անուններու յիշատակութեամբ:

Առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուող այս փաստաթուղթերը նոր լոյս կը սփռեն դէպքերուն վրայ եւ կը հարստացնեն ո՛չ միայն Անտիոքի հայութեան պատմութիւնը, այլ կ'ամբողջացնեն Կիլիկեան կոտորածներու մասին մեր պատկերացումները:

Յօդուածի սկիզբի բաժինով փաստաթուղթերու հրատարակիչին կողմէ տրուած է ընդհանուր ակնարկ Անտիոքի հայութեան եւ 1909-ի քաղաքի կոտորածին ու անոր հետեւանքներուն մասին:

Հրատարակուող փաստաթուղթերուն կցուած են նաեւ բազմաթիւ ծանօթագրութիւններ:

Բանալի բառեր՝ կիլիկիահայութիւն, Անտիոք, 1909 թ., կոտորած, վերապրածներ, որբեր, օգնութիւն:

UNPUBLISHED DOCUMENTS ABOUT THE MASSACRE OF ANTIOCH (ANTAKYA)
ARMENIANS IN 1909

Mihran Minassian

SUMMARY

Eleven previously unpublished documents concerning the massacre of Armenians of Antioch district in 1909 are presented in this article. They are written mostly by the priests sent to the city after the disaster and describe the slaughter and destruction that took place there, address the situation in the city after the massacres, speak of the extreme misery, condition of orphans and widows, orphanages, collection of orphans by foreign institutions, allocation of aid, ceasing of state assistance for survivors, the biased and uncertain processes by the military courts, the release of the criminals and

other related issues. A separate list of the massacred Armenians of Antioch, with the names of the crime places and of the murderers is also given.

These documents put into scientific circulation for the first time cast a new light on the events and not only enrich our knowledge of the history of the Armenians of Antioch, but also contribute to the obtaining of more complete picture of the Cilician massacres.

The documents are accompanied with general introduction and notes.

Keywords: Cilicia Armenians, Antioch (Antakya), massacre, 1909, survivors, orphans, relief activity.

НЕОПУБЛИКОВАННЫЕ ДОКУМЕНТЫ О РЕЗНЕ АРМЯН АНТИОХА (АНТАКИЯ) В 1909 ГОДУ

Мигран Минасян

РЕЗЮМЕ

В статье представлены одиннадцать ранее неопубликованных документов, касающихся резни антиохийских армян в 1909 году. Авторами документов являются в основном представители армянского духовенства, отправленные в город после погромов, и содержат описания имевших место убийств и разрушений, представляют ситуацию в городе после резни, говорят о чрезвычайных страданиях, положении сирот и вдов, состоянии детских домов, приеме сирот иностранными учреждениями, распределении помощи, прекращению государственной поддержки для пострадавших армян, предвзятости и неопределенности в судопроизводстве военных трибуналов, освобождению преступников и так далее. Также приводится отдельный список убитых армян Антиохии с названиями мест преступлений и именами убийц.

Данные документы, впервые введенные в научный оборот, проливают новый свет на события и не только обогащают наши знания об истории армян Антиохии, но и способствуют получению более полной картины киликийской резни.

Документы снабжены общим введением и примечаниями.

Ключевые слова: армяне Киликии, Антиохия (Антакья), резня, 1909 год, пострадавшие, сироты, гуманитарная помощь.

Տաղորդումներ • Reports • Сообщения

ՄԱՐԶՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1915-23 ԹԹ.)

Ինեսա Սրեփանյան

Հայոց ցեղասպանության հետևանքով ինչպես Արևմտյան Հայաստանը, այնպես էլ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքը գրկվեց հայ բնակչությունից: Երիտթուրքերի և քեմալականների՝ քրիստոնյա փոքրամասնություններին ոչնչացնելու քաղաքականությունը դրսևորվեց կայսրության գրեթե բոլոր շրջաններում: Մեծ եղեռնի ուսումնասիրման տեսանկյունից խիստ կարևոր է դիտարկել ցեղասպան քաղաքականությունն ինչպես ամբողջ կայսրության մասշտաբով, այնպես էլ առանձին շրջանների, վարչական միավորների կամ բնակավայրերի ձևաչափով:

Այդ նպատակով հետազոտության համար մենք ընտրել ենք Մարզվան բնակավայրը: Ընտրությունն ամենևին էլ կամայական բնույթ չի կրում, քանի որ Մարզվանի հայության գողգոթան, Հայոց ցեղասպանության ամենադաժան դրսևորումներից մեկը լինելով, շատ դիպուկ, ցույց է տալիս ցեղասպան քաղաքականության շարունակականությունը Թուրքիայում իշխանությունը երիտթուրքերից քեմալականներին անցման համատեքստում:

Մարզվան քաղաքը գտնվում էր Օսմանյան կայսրության Սեբաստիայի (Սվազի) նահանգի (վիլայեթ) Ամասիայի գավառում (սանջակ)¹: Քաղաքի հայ բնակչության թվաքանակի մասին առկա տարբեր տվյալները հաստատում են, որ 1914-15 թթ. քաղաքի 22,000 բնակիչներից² 10.381ը³, այլ տվյալներով՝ 12.000⁴-14.000⁵-ը կազմում էին հայերը: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Մարզվանի հայ բնակչության թիվը հասնում էր 17.500-ի⁶:

Մարզվանը եղել է հայերի կրթական, մշակութային և կրոնական ակտիվության կարևոր կենտրոն: Այստեղ կային առաքելական, կաթոլիկ և բողոքական հայեր, 11 դպրոց, որոնցում սովորում էին 1221 աշակերտ⁷: Դպրոցներից նշանավոր էին

¹ Սեբաստիայի նահանգը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կազմված էր Սեբաստիայի, Ամասիայի, Թոքատի (Եվդոկիա) և Շապին-Գարահիսարի գավառներից:

² Յ.Լեփսիուս, *Հայաստանի շարքերը*, Կ. Պոլիս, տպ. Յ. Ասատուրեան և որդիք, 1919, էջ 64:

³ P. Кеворкян, *Геноцид Армян. Полная история*, Москва, Яуза-каталог изд., 2015, с. 510:

⁴ Յ. Լեփսիուս, *նշվ. աշխ.*, էջ 64:

⁵ Ս. Մ. Ծոցիկեան, *Արևմտահայ աշխարհ*, Նիւ Եորք, տպ. Ա. Յ. Լեյլեկեան, 1947, էջ 415:

⁶ Լ. Վարդան, Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան, «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԺԵ, Պէրյուֆ, 1995, էջ 509:

⁷ Տե՛ս P. Кеворкян, *նշվ. աշխ.*, էջ 510:

Հռիփսիմյան Աղջկանց բարձրագույն վարժարանը և Ազգային ճեմարանը: Հայերն ունեին բարեգործական, կրթասիրական հաստատություններ և կազմակերպություններ: Մարզվանում հայերը տպագրում էին մի շարք ամսաթերթեր՝ «Իրիս», «Հայկունի», «Բողոք», Ամերիկյան քոլեջի հայ ուսանողության «Նոր Այգ» և Ազգային վարժարանի «Հայորդի» միության ամսաթերթը: Այստեղ մեծ ակտիվություն էին ցուցաբերում նաև կաթոլիկ և բողոքական տարբեր առաքելությունները: Վաղ ժամանակներից Մարզվանում հաստատված էին ֆրանսիացի Հիսուսեան միաբաններ (ճիզվիտներ), որոնք հոգևորից բացի զբաղվում էին նաև կրթական գործունեությամբ: Քաղաքում գործում էին նաև ամերիկյան միսիոներների կողմից բացված հիվանդանոցը, Աստվածաբանական ճեմարանը և մի քանի կրթական համալիրներ: Մեծ հռչակ էր վայելում դեռևս 1886 թ. հիմնված Անատոլիա քոլեջը⁸:

Համիդյան կոտորածների տարիներին Մարզվանի հայ բնակչությունն ունեցավ մեծ թվով զոհեր, ինչպես նաև զգալի նյութական կորուստներ: 1895 թ. Մարզվանում կոտորածների սկիզբն ազդարարող նոյեմբերի 15-ը ճակատագրական օր դարձավ ինչպես ամբողջ քաղաքի բնակչության, այնպես էլ Անատոլիա քոլեջի աշխատակիցների և աշակերտների համար: Մուսուլման խուժանի անակնկալ հարձակումից փրկվելու համար տեղի բնակչությունը թաքնվել էր քոլեջի պատերից ներս: Եվ չնայած կրակոցները եղել են ամեն կողմից, ժողովրդին հաջողվել է հնարավորինս պաշտպանվել: Նրանց համար այդ օրը նշվեց օրացույցում՝ որպես «սև ուրբաթ» («Black Friday»)՝⁹:

Ըստ Սեբաստիայի նվիրված պատմագրքի տվյալների՝ քաղաքում զոհ գնացած հայերի թիվը կազմում է մոտ 150 հոգի, վիրավորներինը՝ 500¹⁰: Չնայած համիդյան կոտորածների ժամանակ կրած զրկանքներին և կորուստներին՝ տարիների ընթացքում Մարզվանի հայերը կարողացան վերականգնել իրենց տնտեսական դիրքը և կրկին ձեռք բերել նախկին կարգավիճակը:

Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի զանգվածային տեղահանություններն ու կոտորածները ևս չըջանցեցին Մարզվանը: Առաջին ձերբակալությունները տեղի ունեցան 1915 թ. մարտին: Մարզվանից և Անասիայից ձերբակալվում և Սեբաստիայի ուղղությամբ են աքսորվում քաղաքի հայ հնչակյան և դաշնակցական կուսակցությունների բաժանմունքների ղեկավարները, մտավորականներ և ուսուցիչներ՝ թվով 17 հոգի¹¹: Զրկվելով հայ բնակչությանն առաջնորդող ուժից՝ երիտթուրքերը ձեռնամուխ են լինում հայության տեղահանությանը: Այսպես, հունիսի 12-ին

⁸ Անատոլիա քոլեջի պատմության և գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Frank Andrews Stone, “Anatolia College and Sivas Teacher’s College: Armenian Education in American Schools”, in *Armenian Sebastia/ Sivas and Lesser Armenia*, Ed. By Richard Hovannisian, California: Mazda Publishers, Inc., 2004, pp. 207-236.

⁹ Տե՛ս Everett and Mary Stephens, *Survival against All Odds: The First 100 Years Of Anatolia College*. New York, Aristide D. Caratzas, 1986, էջ 26:

¹⁰ Տե՛ս Պարմենակոս-Յուշանյան Սեբաստիայի և Գաստի Հայրության, հատոր Ա, կազմեց՝ Առաքել Ն. Պատրիկ, Պէյրուօ, տպ. Մշակ, 1974, էջ 659:

¹¹ Կ. Գաբրիելյան, *Եղեռնասպարում Փոքրն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին*. Պոսթըն, Հայրենիք տպ., 1924, էջ 58:

ձերբակալվում են մոտ 1,200 տղամարդիկ և սպանվում Չորումի¹² ճանապարհին: Այստեղ մեծ դերակատարություն ունեին օսմանյան բանակի հրամանատար, կայմական Ֆայիկ բեյը և թուրքական ժանդարմերիայի հրամանատար Մահիր բեյը: Տեղահանությունը համատարած բնույթ է ստանում արդեն հունիսի 21-ից: Սկզբում հավաքեցին միայն տղամարդկանց, որոնց տարագրեցին նախնական 30, ապա մինչև 150-հոգանոց խմբերով: Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուի հետ Անատոլիա քոլեջի տնօրինության ունեցած համաձայնության արդյունքում հնարավոր եղավ գոնե քոլեջի հայ ուսուցչուհիներին և նրանց աղջիկ երեխաներին՝ շուրջ 100 հոգի, փրկել աքսորից: Չնայած ներքին գործերի նախարար Թալեաթի այն համոզման, որ ամերիկյան պաշտպանության ներքո գտնվող հայ բնակչությունն անվտանգ է, և կմնա Մարզվանում, այնուամենայնիվ չանցած մեկ ամիս տեղահանվեցին նաև կանայք ու մանկահասակ երեխաները¹³: Մոտ երկու շաբաթ տևած տարագրության հետևանքով Մարզվանի 12.000 հայ բնակչությունից մնաց ընդամենը 200-ը¹⁴: Մարզվանի թեմի՝ 1919 թ. վիճակագրույցի տվյալներով քաղաքում տեղահանությունից առաջ եղած 17,000 հայ բնակչությունից մնաց 1,700-ը, մնացած 15,300-ը գոհ գնաց աքսորին և կոտորածներին (տե՛ս աղյուսակ 1)¹⁵:

Աղյուսակ 1.

Մարզվան քաղաքի հայ բնակչության թիվը տեղահանությունից առաջ			Մարզվան քաղաքի հայ բնակչության թիվը 1919 թ.			Կորուստ		
Ար	Իգ	Գումար	Ար	Իգ	Գումար	Ար	Իգ	Գումար
8400	8600	17000	600	1100	1700	7800	7500	15300

Տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ Մարզվանից տեղահանվածներից միայն 20 տղամարդ և մոտ 100 կին էին հասել Հալեպ¹⁶:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Առաջին աշխարհամարտի տարիներին տեղահանության և կոտորածի արդյունքում բնաջնջվեց Մարզվանի հայության մեծ մասը: Հայության մի փոքր հատվածը միայն փրկվեց, մի մասը տարագրության ճանապարհին՝ մոտ 40-50 հոգի, մյուս մասը՝ կրոնափոխության և արհեստավոր լինելու շնորհիվ՝ մոտ 1,700 հոգի կամ 301 ընտանիք:

Օսմանյան կայսրության՝ պատերազմում պարտվելուց և Մուղրոսի՝ 1918 թ. հոկտեմբերի 30-ի գինադադարից հետո իրադրությունը փոխվեց: Զինադադարի ստորագրումից հետո, ինչպես և ակնկալում էր համաձայնագիրը, Մեծ Բրիտանիան իրավասություն ստացավ վերահսկելու որոշ ռազմավարական նշանակության

¹² Բնակավայր Անկարայի վիլայեթում, որն ընկած էր հայերի տարագրության ճանապարհին:
¹³ Յ. Լեփսիուս, *նշվ. աշխ.*, էջ 66:
¹⁴ Նույն տեղում, էջ 69:
¹⁵ *Մարզվանի և շրջակա գյուղերի վիճակագրությունը 1915թ.-ից առաջ և հետո*: Կ. Պոլսի փաստահավաք հանձնաժողովի արխիվից: Փաստաթուղթն այժմ պահվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանատանը:
¹⁶ P. Кеворкян, *նշվ. աշխ.*, էջ 510:

շրջաններ, ինչպես նաև տնօրինելու կազմավորված օսմանյան բանակի ռեսուրսները, կապի միջոցները: 1918 թ. վերջին և 1919 թ. սկզբի ընթացքում Մեծ Բրիտանիան ռազմական ներկայություն հաստատեց հարավային ու հարավարևմտյան Անատոլիայի որոշ առանցքային բնակավայրերում, այդ թվում նաև Մարզվանում¹⁷: Արդեն 1919 թ. ապրիլին այստեղ ժամանեց անգլիական մի զորախումբ: Դրանից հետո՝ մինչև 1921 թ. գարունն ընկած ժամանակահատվածը, նշանավորվեց տարագրությունից փրկված մոտ 2.000¹⁸ հայերի վերադարձով, կրոնափոխ եղածների՝ քրիստոնեությանը վերադառնալու գործընթացով:

Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում ընդդեմ Անտանտի սկսեցին ձևավորվել «ինքնապաշտպանական խմբեր», սակայն դրանց գործունեությունը հիմնականում ուղղված էր քրիստոնյա, մասնավորապես հայ բնակչության դեմ¹⁹: Ազգայնական (քեմալական) շարժման տարիներին Ամասիայի գավառում և հատկապես Մարզվանի հատվածում նկատվում է ազգայնական ուժերի՝ հանձինս թուրքական հրոսակախմբերի գործունեության մեծ ակտիվություն: Հենց այս ժամանակահատվածում Մարզվան քաղաքը վերջնականապես զրկվեց իր հայ բնակչությունից:

Նահանգը քեմալական շարժման կարևոր կենտրոններից էր, ուստի պատահական չէ նաև, որ Էրզրումից հետո հենց Սեբաստիայում կայացավ քեմալականների հաջորդ կոնգրեսը²⁰: Մարզվանը, աշխարհագրորեն բավական մոտ լինելով Սեբաստիային, չէր կարող անհաղորդ մնալ այս գործընթացին: Հայության մոտ խուճապային իրավիճակ առաջացավ այն բանից հետո, երբ 1919 թ. սեպտեմբերին քաղաքը թողեցին անգլիական զորքերը, որոնք հայության համար կարծես կյանքի ապահովության երաշխիք լինեին: Դրանից հետո արդեն սկսեցին դրսևորվել տեղի հայության գաղթի միտումները: Ուշագրավ է այն փաստը, որ տեղական իշխանությունները փորձեցին կանխել այն՝ ընտրելով սիրաշահելու մարտավարությունը: Պահպանվել են տեղական իշխանության ներկայացուցիչներից մեկի՝ Սյուրեյ բեյի հետևյալ խոսքերը՝ ուղղված հայությանը. «Ինչո՞ւ կը գաղթե՞ք, դուք շատերդ արդեն տեղահանութենե՞ նոր վերադարձած է՞ք, ձեր երթալիք տեղը թշուառ պիտի ըլլա՞ք, իսկ կառավարութիւնը ձեր թշուառութեան պատճառ ըլլալ չուզեր, ընդհակառակն ձեզ հանգստացնելու համար ամէն կերպով պիտի ջանայ»: Նրա խոսքերով հայ և

¹⁷ Տե՛ս Ռ. Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ.*, Երևան, ՀՍՍՀ Ակադեմիա հրատ., 1970, էջ 39-41:

¹⁸ Պ. Ա. Հայկունի, *նշվ. աշխ.*, էջ 9:

¹⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս Միքոյան Կ., *Թուրքիայում ազգայնական շարժման հարցի շուրջ 1918-1919 թթ.*, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., պր. XVI, 1996, էջ 125-142:

²⁰ Խոսքը 1919 թ. հուլիսի 23-ից օգոստոսի 7-ը տեղի ունեցած Էրզրումի և նույն թվականի սեպտեմբերի 4-11-ը Սվազի կոնգրեսների մասին է: Այս համաժողովներում ձևավորվեցին և հստակեցվեցին Ազգայնական շարժման հիմնական ուղղություններն ու նպատակները (տե՛ս Кемаль М., *Путь новой Турции 1919-1927*, т.1, *Первые шаги национально-освободительного движения 1919*, Москва, Литиздат, 1929, էջ 63-83 и 84-98):

թուրք ժողովուրդները միասին պետք է պայքարեին Անտանտի պետությունների դեմ²¹:

Թուրքական իշխանությունների՝ հայերին գաղթելու մտքից հետ պահելու այս հորդորներն ըստ երևույթին պայմանավորված էին ոչ թե մարդասիրությամբ, այլ միջազգային հանրության մոտ տեղի քրիստոնյա բնակչության ապահովության պատրանք ստեղծելու, ինչպես նաև քեմալական շարժման նկատմամբ համակրանք ձևավորելու նպատակներով:

Դժվար է խոսել այն մասին, թե հայերի համար որքան համոզիչ եղան քեմալականների հորդորները, սակայն անգլիացիների մեկնումից հետո առկա էր նրանց տեղում պահելու մեկ այլ հանգամանք ևս՝ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կազմակերպության և միսիոներների ներկայությունը: Սակայն, ի տարբերություն անգլիացիների, որոնք ունեին ռազմական ներկայություն, ամերիկացիներն այստեղ որևէ ռազմական կամ քաղաքական ազդեցություն չունեին, ուստի նրանք որևէ էական դեր չունեցան հայերի պաշտպանության գործում:

Շուտով սահմանափակվեց քրիստոնյաների տեղաշարժը, և հայ բնակչությունն արգելափակված մնաց Մարզվանի մեջ²²: Այս վիճակը շարունակվեց մինչև 1921 թ. հուլիս, երբ թուրքերի համար ներկայացավ հարմար առիթ՝ վերջնականապես հաշվեհարդար տեսնելու հայ բնակչության հետ: Բանն այն է, որ այդ ժամանակ հույն-թուրքական ռազմաճակատում²³ հույները լուրջ հաջողություններ էին արձանագրել: Հունական բանակը 1921 թ. հուլիսին գրավել էր Քյոթահիան և Էսքիշեհիրը, առջևում Անկարան էր, և թուրքերը նահանջելով Սաքարիա գետի արևելյան հատվածում կազմակերպել էին պաշտպանության վերջին գիծը: Հունական բանակի առաջխաղացմանը զուգընթաց սաստկանում էր նաև Փոքր Ասիայի տարածքը քրիստոնյաներից ազատելու գործընթացը²⁴:

Հենց այս ժամանակահատվածում տեղի ունեցավ Մարզվանի հայության վերջնական մարտիրոսությունը: Այս գործում բացառիկ դերակատարություն է ունեցել Ազգայնական շարժման գործիչներից Թովալ Օսմանը²⁵: Այսպես, Թովալ Օսմանը Սև ծովի շրջանից իր 3500 չեթեներով²⁶ շարժվում է դեպի Սաքարիա գետի հատված: Ճանապարհն անցնում էր Մարզվանով: Թուրքական հրոսակախումբը Մարզվան մտավ 1921 թ. հուլիսի 23-ին: Հաջորդ օրը՝ երեկոյան, սկսվեց ընդհանուր հարձակում հայերի տների վրա: Հայ ականատեսներից մեկը, որ միայն հրաշքով

²¹ Պ. Ա. Հայկունի, *նշվ. աշխ.*, էջ 13,14:

²² Նույն տեղում, էջ 15:

²³ Խոսքը 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի մասին է:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Թովալ Օսման աղա (1883-1923)- թուրք ռազմական գործիչ, Կերասունի շրջանի ազգայնական խմբերի առաջնորդ: Բալկանյան պատերազմների ընթացքում բուլղարացիների հետ ընդհարումների ժամանակ ծնկից վիրավորվել և կաղ է մնացել: Այդ պատճառով էլ նրան կոչում էին Թովալ Օսման: Դրանից հետո նա քրիստոնյաների նկատմամբ առանձնակի ատելությամբ էր լցված:

²⁶ Ավագակախումբ. չեթե՝ թուրքական ոչ կանոնավոր զորքի զինվոր, որը զբաղվում էր թալանով և սպանություններով:

փրկվեց այդ դաժանություններից, քանի որ կարողացել էր թաքնվել, այսպես է նկարագրում Մարզվանում տեղի ունեցածը. «... Բացարձակապես կողոպուտի եւ առեւանգումի շրջան մըն էր, որ կը կատարէին: Գիշերելու համար իրարու քով հաւաքուող հարիւրաւոր կիներու և աղջիկներու, մեծերու և կաթնկերներու ահեղախառն ու աղաղակները, աղիւծի մը ճիրաններուն տակ ճիչող թռչնիկի նման օգնութիւն աղաղակող կոյտերու վայնաստունները յարձակումներու դէմ գալարող դռներուն դողդիւնը գեհե՛նային իրական պատկեր մըն էր. Տիեզերքը կը դողար կատարուած իրողութեան մը առջև, իսկ մենք անզգայացած և քարացած կը դիտէինք կատարուած դէպքերը մեր շրջանակէն»²⁷:

Թուփալ Օսմանի ղեկավարությամբ իրագործված կոտորածից հետո Մարզվանում վերահաստատված 2,200 հայ բնակչությունից մազապուրծ եղան մոտ 600 կին և մանկահասակ երեխա, 30 տղամարդ, որոնք մնացին Ամերիկյան նպաստամատույցի հոգածության ներքո²⁸:

Մարզվանում Թուփալ Օսմանը հանգրվանել էր Մերձավոր Արևելքի նպաստամատույցի ամերիկյան բարեգործական կոմիտեի հովանավորությամբ գործող դպրոցներից մեկում: Դպրոցի սաներից մեկը, ով ամերիկացի միսիոներուհի Բերթա Մորլիի որդեգիր զավակն էր՝ Հովհաննես Հակոբ Կարապողոսյանը, պատմում է թուրք առաջնորդի և նրա հրոսակախմբի զինվորների գործողությունների մասին, նկարագրում հայ ժողովրդի դեմ իրագործված եղեռնը: Նույնիսկ առաջնորդի՝ քաղաքից հեռանալուց հետո թուրք ոճրագործները շարունակում են առանձնակի դաժանությամբ տանջել և սպանել տեղի քրիստոնյա բնակչությանը. «Մարդասպանները հաճույք էին ստանում հղի կանանց որովայնը կտրելուց: Նրանք հանում էին չծնված երեխային, նետում օդ և բռնում իրենց սրի ծայրով...»²⁹:

Մարզվանում տեղի ունեցած ողբերգությունը լայն արձագանք ունեցավ արևմտյան մամուլում: Այսպես, բրիտանական «Թայմս» օրաթերթը, անդրադառնալով Մարզվանին, գրում է. «Մոտ 500 կին և երեխա է արտաքսվել գյուղերը՝ Մարզվանի մոտ՝ 15 մղոն հեռավորության վրա: Քաղաքի մեծահասակ բնակչության մեծ մասը սպանվել է: Անկանոն գորքերը մեծ ջանք են գործադրում՝ հայտնաբերելու հայերին, որոնք իսլամացվել են 1915-1916 թթ., բայց հետո վերադարձել իրենց քրիստոնեական հավատին, երբ բրիտանացիներն էին վերահսկում Մարզվանը»³⁰:

Հրոսակախումբը դաժան հաշվեհարդար է տեսնում հայ բնակչության հետ՝ կոտորելով մոտ երկու հազար հոգու: Սա Մարզվանի հայության վերջն էր, քանի որ բնակավայրը վերջնականապես զրկվեց հայերից:

Այսպիսով, Մարզվան քաղաքի հայ բնակչության գողգոթան Հայոց ցեղասպանության իրականացման հերթական դրվագներից էր: Միաժամանակ Մարզվանում տեղի ունեցած ողբերգության յուրահատկությունն այն է, որ այստեղ շատ

²⁷ Պ. Ա. Հայկունի, *նշվ. աշխ.*, էջ 37:

²⁸ Նույն տեղում, էջ 45:

²⁹ Karaboghossian John Jacob, *Through The Valley Of The Shadow Of Death. Autobiography*, 1984, p. 21:

³⁰ «The Turk at Work», *The Times*, 26 October, 1921, p. 11.

ակնհայտ երևում են երիտթուրքերի և քեմալականների ցեղասպան քաղաքականության շարունակականությունն ու ժառանգականությունը: Մարզվանում դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես իրականացման մեթոդները, այնպես էլ երիտթուրքերի և քեմալականների նպատակը նույնն էր՝ ֆիզիկապես ոչնչացնել հայությանը:

ՄԱՐՉՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1915-23 ԹԹ.)

Ինեսա Ստեփանյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է Առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած տարիների ընթացքում Սեբաստիայի վիլայեթի Մարզվան քաղաքի հայերի տեղահանությունների և կոտորածների պատմությունը: Փորձ է արվում մեկ քննակալայրի օրինակով ցույց տալու թուրքերի ցեղասպան քաղաքականությունը, և որ ամենակարևորն է, դրա ժառանգականությունը: Մարզվանի օրինակն ակնհայտ ցույց է տալիս, որ քեմալականներն ազգային քաղաքականության հարցում շարունակում էին երիտթուրքերի ջարդարարական գործելաոճը: Ավելին՝ Մարզվանի օրինակը փաստում է, որ քեմալականները զարգացրին և կատարելագործեցին երիտթուրքերի կողմից կիրառվող մեթոդներն ու միջոցները:

Բանալի բառեր՝ Մարզվան, Սեբաստիա, Հայոց ցեղասպանություն, կեմալական շարժում, Թոփալ Օսման:

ARMENIANS OF MARSOVAN DURING THE GENOCIDE (1915-23)

Inessa Stepanyan

SUMMARY

This article presents the story of deportation and massacres of the Armenians of the town of Marsovan in Sebastia province during the First World War and the following years. Attempt is made to show the genocidal policy of Young Turks and consequent Kemalist government on the example of one settlement. The fate of Marsovan Armenians clearly shows that the Kemalists continued to use the genocidal methods of the Young Turks in their internal policy. Moreover, the example of Marsovan indicates that Kemalists further developed and perfected the methods applied by the Young Turks.

Keywords: Marsovan, Sebastia (Sivas), Armenian genocide, kemalist movement. Topal Osman.

АРМЯНСТВО МАРЗВАНА В ГОДЫ ГЕНОЦИДА (1915-23 ГГ.)

Инесса Степанян

РЕЗЮМЕ

В данной статье представлена история депортации и резни армян города Марзван провинции Себастья во время Первой мировой войны и в последующие годы. На примере одного города делается попытка показать последовательную политику турецкого правительства по уничтожению армянского населения. Пример Марзвана четко показывает, что в вопросе национальной политики кемалисты продолжали геноцидальную политику младотурок. Более того, кемалисты раз-

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ.ԴՐՎԱԳՆԵՐ ԿՅԱՆՔԻՑ ԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Էլինա Միրզոյան

«Անշուշտ, մահից վախենում եմ, սակայն մահը ոչինչ է, եթե հանգուցյալը կարող է լինել ոտքերի վրա ամուր կանգնած մեկը...»:

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ

1954թ. սեպտեմբերի 15-ին Մալաթիայում՝ Սալըքյուփրյու թաղամասի Բոնջուքլու փողոցի N 1 տանը¹, ծնվում է Հրանտ Դինքը: Նա հայրական կողմից սերում է գյուրունցի Հովհաննես² և արաբկիրցի Պայծառ Դինքերի, մայրական կողմից՝ Էրզրունցի Անդրանիկ և գյուրունցի Լուսի(ն)ե Չաքքըրների³ զերդաստաններից:

«Հրանտ⁴ նրան անվանակոչում է Հովհաննես պապը: Նա սպասվածից շուտ է ծնվում: Սպիտակամորթ, խոշոր աչքերով, ընդգծված, արտահայտիչ հոնքերով և երկար թարթիչներով: Նման էր իր պապին և՛ խելացիությանը, և՛ արտաքինապես»⁵, - հիշում են ազգակիցները: Պապը Հ. Դինքի կյանքում առաջնային և ծանրակշիռ տեղ էր զբաղեցնում. նա տիրապետում էր յոթ օտար լեզվի և շատ էր սիրում զբաղվել ընթերցանությամբ: Ինչպես և պապը, Դինքն անսահման կարևորում էր գիրքը՝ առաջնորդվելով պապի խորհրդով. «Տղա՛ս, մեր պապերը, թողնելով ոսկիները, առաջնահերթ վերցրել են գրքերը»⁶:

Հրանտն ավագն էր Սարգիս և Նվարդ Դինքերի երեք որդիներից: Հայրը՝ դերձակ Սարգիսը, Մալաթիայում ճանաչված և հմուտ արհեստավոր էր, հայտնի էր թերզի Հաշիմ (terzi hasım/վարպետ, դերձակ Հաշիմ) անվամբ: «Բարձրահասակ,

¹ Տե՛ս Tuba Çandar, Hrant, Istanbul, 2010, էջ 29:

² Հովհաննես (Օհաննես) Դինքն ընտանիքում ավագն էր: Մալաթիայի կիրթ, ուսյալ և հարգարժան հայերից էր, ում տանը միայն հայերեն էին խոսում. եթե հարևան տներում կարող էին թուրքերեն կամ քրդերեն խոսել, ապա իրենց տանն արգելված էր (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Tuba Çandar, *նշվ. աշխ.*, էջ 24-28):

³ Լուսինե Չաքքըր գյուրունցի արհեստագործ, հինգ երեխաների հայր Մանուել Աշոտյան էֆենդիի դուստրն էր: Նա հոր միակ աղջիկն էր. հայրը նրան Ահչիգ (Աղջիկ) էր կոչում: Սերաստիայի մանկատան հայ աղջիկներից մեկն էր. 1915 թվի Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված, հայկական քարավաններից ընտրված և մանկատուն հանձնված մանկահասակ աղջնակներից էր: «Թուրքին գնալ չցանկանալով»՝ Լուսինե ամուսնացել է Էրզրունցի Անդրանիկի (Անդո) հետ (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Tuba Çandar, *նշվ. աշխ.*, էջ 23, 24):

⁴ «Իբրեւ «Հուր» եւ «Եռանդ» ըլլալով, որպէս հուր (կրակ) եւ եռանդ (կենսունակութիւն, խոյանք) իմաստով», - գրում է «Ակօս»-ը (թիվ 575, 6 ապրիլ, 2007): Բոլոր մեջբերումները պահպանված են բնագրային ուղղագրությամբ, բացառությամբ մեր կողմից կատարված թարգմանությունների:

⁵ Tuba Çandar, *նշվ. աշխ.*, էջ 29, 30:

⁶ «Sirtlayip getirenlere», «Agos», 18 Ekim 1996.

բարետես, բարի, մաքուր և մեծ սիրտ ունեցող տղամարդ էր»-- հիշում են հարազատները⁷:

Հայրը՝ Սարգիս Դինքը, թեև ճանաչված և հմուտ արհեստավոր էր, այնուամենայնիվ, դժվարությամբ էր վաստակում ընտանիքի ապրուստը, ուստի 1958-59 թվականներին ստիպված եղավ գնալ Կոստանդնուպոլիս՝ Գում Գափու՝ արտագնա աշխատանքի:

1959-ի տարեվերջին Հովհաննես պապը Նվարդին երեք երեխաների հետ ճանապարհում է Պոլիս՝ Սարգիսի մոտ: Դինքի հայրը Գում Գափու թաղամասում՝ Արայրջը փողոցում գտնվող մի տուն է վարձակալում: Այն գտնվում էր ծովեզերքի մոտ և պատկանում էր մի ձկնորսի: Այս փողոցն Արևմտյան Հայաստանից եկած հայերի հավաքատեղին էր: Շուրջ մեկ տարի են միասին ապրում այս տանը. նոր կյանք սկսելու փորձերն ապարդյուն են անցնում:

1961 թվականն էր, երբ դատական ատյանի որոշմամբ Դինքի ծնողներն ամուսնալուծվում են, դատարանը երեխաների խնամակալությունը հորն է հանձնում: Մայրն այս ընթացքում տեղափոխվում է Արմենակ Չաքրի՝ Հրանտ Դինքի մորեղբոր տուն: Երեխաները, չցանկանալով մորից անջատ ապրել, տանից փախուստի են դիմում:

Խոսքով (Օրհան) և Երվանդ (Լեվենթ) Դինքերը փոքր էին, իսկ Հրանտը «մեծ մարդու նման», ինչպես Երվանդ Դինքն է նշում, իր «հասակից բարձր գործ է բռնում», կազմակերպում է փախուստը. գուցե դա կյանքում նրա առաջին ընթուստությունն էր⁸:

«Տանից փախուստի դիմած և փողոցներում կորսված երեք եղբայրներ...Ես և եղբայրներս միասին Գում Գափուի փողոցներով շարունակ վազում էինք ու վազում...թե որքա՞ն դա տևեց, չգիտեմ...Վերջապես ոստիկանությունը գտնում է մեզ...Գում Գափուի ձկնորսական պահոցում՝ մի քթոցի մեջ... Երեքս, որքան ուժ ունեինք, փարված մեկս մյուսիս, քնած էինք այդտեղ՝ անոթի և ծարավ: Ես յոթ տարեկան էի, Խոսքովը՝ հինգ, Երվանդը՝ երկու»⁹, - գրում է Դինքը:

⁷ «Terzi Haşim'in oğlu Firat», «Aksiyon», 22 February 2007.

⁸ Tuba Çandar, *նշվ. աշխ.*, էջ 38-40:

⁹ «Kaybolmayın çocuklar», «Ağos», 8 Kasım 1996.

*Գետիկփաշա թաղի Հայ բողոքական եկեղեցու մուտքի հարկն օգտագործվում էր իբրև մանկատուն, սկզբում մանկատնից օգտվում էին 4-5 տղա, որոնց թիվը կարճ ժամանակում հասնում է 100-ի: Ժողովարանը հիմնականում Արևմտյան Հայաստանից բերված որբացած և աղքատ հայ երեխաների ապաստան-գիշերօթիկ դպրոց էր, որտեղ նրանք բողոքական կրթություն և դաստիարակություն էին ստանում, թեև կրոնական պաշտամունքն այդքան էլ խիստ չէր կարգադրվում: Մեծ ծիսակարգեր չէին կատարվում, սակայն տնօրենը խիստ վերահսկում էր, որ Ժողովարանի ներսում խոսեն միայն հայերեն՝ իրենց մայրենի լեզուն չնոռանալու համար (Tuba Çandar, *նշվ. աշխ.*, էջ 42-46): Ժողովարանը մանկատնից առավել կարելի է «Մանկանց բույն» անվանել, ինչպես ինքը Դինքն է ասում: Այն որբացած, փողոցներում անտեր, անպաշտպան մնացած հայ երեխաներին ապաստան տալու, մեկ վայրում ժողովվելու և կրթություն տալու վայր էր («Meleklerin müjdesi», «Ağos», 13 Nisan 2001):

Բարերարները և բարեգործական կազմակերպություններն անսակարկ նեցուկ էին կանգնում պատանեկան այս տուն-դպրոցին: Եվ բարերարների հետ կապված հիշողությունները վառ ու

Այս դեպքից հետո Հ. Դինքի տատը՝ Լուսիե Չաքըրը, գնում է Գետիկփաշայի Հայ բողոքական եկեղեցաշենքի ներքնահարկում գործող Ժողովարան(Մանկանց բույն)* որբանոց-մանկատան տնօրեն, Կազդուրման կայանի տնօրեն Հրանտ Քյուչուքգյուզեյանին (Գյուզեյան) տեսնելու: Վերջինս Գետիկփաշայի հայ բողոքական եկեղեցում կուսակրոն քահանա էր, ով որբացած հայ մանուկներին առաջին ապաստան տվողն էր. նա հայ մանուկների փրկության գործը նախաձեռնողն էր: Սկզբում նա մերժում է՝ ասելով, որ այդտեղ միայն հայ որբացած և աղքատ երեխաներին են ապաստան տալիս, իսկ երեխաների թիվն արդեն անցնում էր հարյուրից: Սակայն երբ Դինքի տատը պատմում է ձկնորսական քրոջի մասին, վերջինս համաձայնվում է:

Ժողովարանում ապաստան ստանալով՝ Հ. Դինքը և իր եղբայրները Գետիկփաշայի հայ բողոքական եկեղեցուն պատկանող Ինջիրդիբի նախակրթարան են հաճախում. մանկատան տղաներն այստեղ էին ուսանում:

Այս ընթացքում մայրը կանացի վերարկուներ էր կարում և հանձնում վաճառքի, իսկ հայրը սերաստացի վարպետ Սահակի մոտ քալֆա էր: Հայրը նպատակ չուներ, որ որդին ուսումը շարունակի, ուստի նրան իր հետ աշխատանքի էր տանում որպես օգնական: «Դերձակ հայրս զիս քովը առաւ որպէս չըրախ (օգնական): Ինչպիսի՞ գործեր կ'ընէի հօրս քով, լաւ չեմ յիշեր... Սակայն գործ մը կար, որ երբեք չէ կորսուած յիշողութենէս: Բազմաթիւ վերարկուներ կը դիզէին ուսերուս վրայ ու ես զանոնք կը տանէի վերջին արդուկի համար ուրիշ գործարան մը: Բազմութեան ուշադրութիւնը կը գրաւէի փողոցին մէջ վերարկուներու տակ կորսուած, բարակ, նիհար տղայ մը, - հիշում է Դինքը, - բայց այդ պահուն բոլորէն ալ գէր... Օր մը Փրկիչս (Օննիկ Ֆրչըջյան) զիս ազատեց... Հօրս հրահանգեց որ զիս իր մօտ տանէր, դպրոց արձանագրելու համար»¹⁰:

Օննիկ Ֆրչըջյանը Բեզջիյանի միջնակարգ (բարձրագույն նախակրթարան) դպրոցի երջանկահիշատակ տնօրենն էր: Եթե չլիներ նա, ապա Դինքի կյանքը, ինչպես ինքն է գրում, «աղտոտութեան և դժբախտութեան մէջ պիտի ընթանար»¹¹, քանի որ նրա պահանջով է, որ Դինքը շարունակել է իր ուսումը. ավարտելով նախակրթարանը՝ նա սովորում է Բեզջիյանի միջնակարգ (բարձրագույն նախակրթարան) դպրոցում¹²: Այդտեղ սովորելու տարիները նրա համար եղան բնատուր ձիրքերի հասունացման ու ստեղծագործական մտքի կազմավորման արգասավոր մի շրջան. կրթության պակասը լրացվում է ընթերցանությամբ: Նրա գրական

գունավոր էին Հրանտ Դինքի համար: «Մանկությունս անցկացրած Գետիկփաշայի մանկանց բույնի մեջ ամենանշանավոր, ամենակարևոր և երբեք չմոռացվող հիշողություններից մեկը, - հիշում է Դինքը, - Ամերիկայից ինձ հետ մոտիկից ծանոթանալու և ինձ այցելության եկած բարերար ընտանիքի հետ միասին Ստամբուլ կատարած զբոսանքն էր» («Kafadan atiyorum», «Agos», 12 Aralık 1997):

¹⁰ «Այլու», Ստամբուլ, թիւ 8, 19 ապրիլ, 1996:

¹¹ Նույն տեղում:

¹² <http://www.hurriyet.com.tr/pazar/5850528.asp>

նախափորձը մայրերի օրվան նվիրված բանաստեղծությունն էր, որի համար նա 2.500 լիրա մրցանակ էր ստացել¹³:

Օննիկ Ֆըչըջյանի բարեբախտ ազդեցությամբ Հ. Դինքին հնարավորություն է տրվում կրթելու հրապարակախոս-քննադատի իր միտքն ու գեղագետի ճաշակը. դեռևս այդ տարիներին նա թղթակցում է թուրքական «Զումհուրիյեթ» թերթին: Երիտասարդ Դինքի գրական դաստիարակության գործում պակաս կարևոր դեր չի կատարել նախակրթարանի ֆրանսերենի ուսուցչուհի Աիդա Թանիքյանը*: Վերջինիս տանը հարուստ գրադարան կար: Հրանտը հաճախ էր հյուրընկալվում նրան՝ գրքերից օգտվելու¹⁴:

Դինքը պատանեկության տարիներին նաև զբաղվել է ֆուտբոլով. խաղացել է և՛ Զարասփորում (Գում Գափուում հայկական մարզական ակումբ), որտեղ ստացել է վկայական, և՛ Թաքսիմսփորում, այնուհետև Գալաթասարայի երիտասարդաց թիմում: Սակայն ուսման հետ չհասցնելով համատեղել՝ թողել է ֆուտբոլը:

Միջնակարգ կրթությունը Բեզջիյանում ստանալով՝ Հ. Դինքը Սուրբ Խաչ Դպրեվանքի մեջ ուսանեց, այնուհետև Շիշլիի լիցեյն ավարտեց: Ապա ավարտելով Պոլսի բնական գիտությունների ֆակուլտետի կենդանաբանության բաժինը՝ ստանում է նաև փիլիսոփայական կրթություն և հանուն ձախակողմյան քաղաքական պայքարի՝ հրաժարվում է կենսափիլիսոփայության ամբիոնի հետ կապված երազանքներից¹⁵: Նա Թուրքիայի մեջ ծավալվող ձախակողմյան քաղաքականության մեջ գործուն պայքար էր ծավալում: Հայկական համայնքը հայտնի դժվարություններից հեռու պահելու և պաշտպանելու նպատակով Դինքը և Դպրեվանքի իր երեք ընկերները հայկական ծագումը չշեշտելու համար դատարանի որոշմամբ փոխում են իրենց անունները¹⁶, և Հրանտը Ֆըբաթ* անունն է ընտրում:

1970-1980 թթ. Կոստանդնուպոլսում տարածված կարծիքի համաձայն՝ Դպրեվանքը վերածվել էր «կոմունիստական օջախի»: Հրանտ Դինքի Դպրեվանքի եղբայրներից (ահպարիզ) Օրհան (Արմենակ) Բաքըրը TIKKO*-ի առաջնորդներից էր, իսկ Դինքն ու նա մտերիմ ընկերներ էին: Երկրում տիրող քաղաքական պայմանները խորապես գիտակցելով՝ Դինքը մի կողմ է դնում խաղաղ կյանքը

¹³ St' u Tuba Candar, *Նշվ. աշխ.*, էջ 75:

Աիդա Թանիքյանը Տիրան Բաքարի («Ակօսի» հիմնադիրներից, իրավաբան) նախկին կինն էր:

¹⁴ Նույն տեղում, էջ 81-84:

¹⁵ <http://www.hurriyet.com.tr/pazar/5850528.asp>

¹⁶ <http://web.archive.org/web/20070927203957/http://www7.vatanim.com.tr/root.vatan?exec=yazdetay&tarih=&Newsid=61569&Categoryid=4&wid=94> (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Tibrevank için..., «Agos», 8 Mayıs, 1998, Tibrevanklilik ruhu, «Agos», 29 Kasım, 1996, Tibrevank'in sol yani, «Agos», 8 Ağustos, 2003):

* Ֆըբաթը Յըլմազ Գյունեյ կինոռեժիսորի թուրքական «Հուսալքվածները» ֆիլմի գլխավոր հերոսն էր, ում անունն էլ ընտրում է Դինքը (Tuba Candar, *Նշվ. աշխ.*, էջ 106):

* Թուրքիայի բանվորների և գյուղացիների ազատագրության բանակ, որը ձախ ծայրահեղական կազմակերպություն է:

* «Հայ մեծանուն վիպասան Բաֆֆու «Խենթը» պատմավեպի գլխավոր հերոսին էր նա մեզ հիշեցնում», -նշել է «Ակօս»-ի հայերեն բաժնի խմբագիր Սարգիս Սերովբյանը (Tuba Candar, *Նշվ. աշխ.*, էջ 185):

և մտնում հասարակական գործունեության հորձանուտը: Այս տարիներին, երբ ընդամենը 18 տարեկան էր, նրան շրջապատում «խենթ»¹⁷ էին կոչում, քանի որ քաջ, խիզախ, պոռթկուն, նվիրյալ, անհանգիստ և եռանդուն, ամեն խնդրի համար առաջինը նետվող պատանի էր: «Հրանտը ծայրահեղության դիմող, խելագար, խենթ մարդ էր: Մի քաղաքական բանավեճից հետո «խենթ» բառը բերանիցս դուրս է թռչում, և ես նրան ի սկզբանե «խենթ» անվանակոչեցի», - հիշում է գրող Մասիս Բյուրքյուզիլը¹⁷:

Թեև Հ. Դինքը ծավալում էր հասարակական ակտիվ գործունեություն, սակայն դա չի խանգարում, որ նա այդ տարիներին դրսևորի իր հուզական խառնվածքը Հրանտ և Ռաքել սիրո բարձրակետում: Ռաքել Յաղբասանը հայկական Վարդո աշիրերթի (ցեղախումբ) ցեղապետ Սիյաբենթ Յաղբասանի դուստրն էր: Ծնվել է 1959 թվականին: Սիյաբենթ և Դելալ Յաղբասանների 13 երեխաներից մեկն էր: Նա հազիվ 9 տարեկան էր, երբ մայրը մահանում է*, և վերջիններս դժվարին վիճակում են հայտնվում:

«1968 թվականն էր... Ստամբուլից մեր գյուղ են գալիս Հրանտ Գյուզելյան քահանան, Տեր Կիրակոսը և Օրհան Յունքետը*... Մի քանի օր մնում են գյուղում», - հիշում է Ռաքել Դինքը¹⁸:

Հրանտ Գյուզելյան քահանան այցելում է ցեղապետ Սիյաբենթ Յաղբասանին. տասնամյակներ հետո Վարդո ցեղախմբի գոյության փաստը հայտնի էր դարձել Պոլսի հայկական համայնքում: Երկար ընդմիջումից հետո սա վերապրած հայերի առաջին հանդիպումն է լինում հայ հոգևորականի հետ: Նրա այցի շնորհիվ հայկական ցեղախումբը տեղեկացել է, որ Թուրքիայում իրենցից բացի դեռ քրիստոնյա հայեր կան: Քահանա Գյուզելյանը ցեղապետին առաջարկում է աշիրերթի երեխաներին Պոլիս ուղարկել՝ հայ-քրիստոնեական կրթություն ստանալու: Ցեղապետ Յաղբասանը, օրինակ ծառայելով իր մյուս ցեղակիցներին, համաձայնվում է Պոլիս ուղարկել իր 9-ամյա աղջկան՝երկու եղբայրների հետ¹⁹: Ցեղախմբի մյուս անդամները ևս, օրինակ վերցնելով, քրդախոս շուրջ 25 երեխայի ուղարկում են Թուրքիայի հայկական որբանոց-ճամբար:

«Ընտանիքիցս, գյուղիցս բաժանվելով՝ Ստամբուլ ենք գնում...Որոշ ժամանակ Թուրքիայում ենք մնում...Առաջին անգամ այստեղ ենք սկսում հայերեն սովորել...Հետո տեղափոխվում ենք Ժողովարան, այնուհետև երկրորդ տարեկեսին նախակրթարան ենք սկսում հաճախել»²⁰, - հիշում է Ռաքել Դինքը:

¹⁷ Tuba Çandar, *Կըվ. աշխ.*, էջ 105:

Ռաքել Դինքի մոր մահից հետո Սիյաբենթ Յաղբասանը երկրորդ անգամ ամուսնանում է հանգուցյալ կնոջ մորեղբոր դուստր Բեդրո Յաղբասանի հետ (Նույն տեղում, էջ 128):

* Ուրֆացի բժիշկ (<http://www.dnforum.am/showthread.php/5632-Պոլսյ-Պատանեկան-Տունը>):

¹⁸ Tuba Çandar, *Կըվ. աշխ.*, էջ 125:

¹⁹ «Կինս աղա Սիյապէտին խըջէն (աղջիկ) է: Ան իր հօտէն գողցուած քանի մը գառնուկներէն մեկը եղաւ, որ մնաց Եւրոպա գաղթած իր պարագաներէն քիչ մը հեռու: Խօսքը մեր մէջ, լաւ որ գողցեր եմ այդ գառնուկը», - գրում է Դինքը («Մարմարա», Կոստանդնուպոլիս, 18 մարտ, 1994):

²⁰ Նույն տեղում, էջ 63:

Դպրոցին կից հարկաբաժնում բնակարան էր տրամադրվել աղջիկների համար: Աղջիկ երեխաների պատասխանատուն Իսկուհի Հեթումյանն էր (երեխաները նրան Իսկուհի մորաքույր էին կոչում), ով Ռաքելին իր խումբ է վերցնում: Նրանց խմբին մորաքույրուն քրզլարը (morakuyr'un kizlari/մորաքրոջ աղջիկներ) էին անվանում: Ռաքել Դինքը նրանցից մեկն էր²¹: Այնուհետև, երբ Ռաքելը Բալաթայում գտնվող հայկական դպրոցում էր սովորում, Հ. Դինքն այդ ընթացքում դպրոցի պատանիների հսկիչն էր: Նա արտակարգ երաժշտական լսողություն ուներ. և՛ դաշնամուր, և՛ սազ նվագել է սովորում*: Մի օր Հ. Դինքը Ռաքելի փաստաթղթային նկարներից մեկն ինչ-որ կերպով գտել և մեծացրել էր և փոքր-ինչ գինովցած՝ սկսել էր սազ նվագել: Այսպես սկսվում է նրանց սիրո պատմությունը: Նրան սկսում են կոչել ջուրթակ (ջութակի պես բարձրահասակ և վայելույզ էր)²²:

Ինչպես նշել ենք, Վարդո աշիրեթը 1978 թ. տեղափոխվել է Պոլիս, սակայն անգամ այստեղ ներցեղային սովորույթները, այդ թվում՝ ներքին ամուսնությունները, չեն փոխվում: Սա արտահայտվել է այն ժամանակ, երբ Դինքը ցանկություն է հայտնել ամուսնանալու Ռաքելի հետ, ում ճանաչել է դեռևս մանկատնից*: Վարդո ցեղախմբի երիտասարդները սպառնում են Դինքին և պահանջում հրաժարվել այդ մտքից: Հարցը կարգավորվում է միայն Հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանի միջամտությամբ: Նա անձամբ է ցեղապետ Սիյաբենթից աղջկա ձեռքը խնդրում, և կրոնասեր հայը չի կարողանում մերժել բարձրաստիճան հոգևորականին²³:

1975 թ. փետրվարին Հրանտ Դինքի և Ռաքելի նշանադրությունը տեղի է ունենում Ֆերիքոյում: Նրանց նշանը կատարում է կաթոլիկ հոգևորական Հակոբ Մինասյանը²⁴: Վերջապես 1977 թ. ապրիլի 23-ին Նարլոզափուի հայկական եկեղե-

²¹ Նույն տեղում, էջ 63, 64:

* Հ. Դինքը երգել շատ էր սիրում. հատկապես սիրում էր կատարել «Սարի աղջիկ» երգը:

²² Tuba Çandar, *նշվ. աշխ.*, էջ 142, 144-146:

* Մանկատան երեխաներն ամառներն անցկացնում էին Թուրքիա Քամփում (ճամբար): Այստեղ երեխաները «և՛ աշխատում էին մեղվի պես, և՛ խաղում» (<http://www.istanbulermenivakiflari.org/tr/istanbul-ermeni-vakiflari/el-koyma-hikayeleri/yok-edilen-atlantis-uygarligi-tuzla-ermeni-cocuk-kampi/88>): Առաջին խումբը, որ ժամանել էր ճամբար, 8-10 տարեկան երեխաներից հավաքված 20-հոգանոց խումբն էր, որի մեջ էր նաև Հրանտ Դինքը (8 տարեկան)(«Aşk olsun», «Agos», 5 Temmuz 1996): Ճամբարում նա շուրջ 20 երկար ու խնամյալ տարիների աշխատանք է տարել: «Մեր ընտանիքները, հարազատները, գիշերները հեռուն՝ քաղաքին պլպլացող լոյսերը դիտելու ժամանակ կը յիշեինք միայն: Լման երեք տարի, առաօտուն արեւածագին արթննալով, մինչև կէս գիշերները աշխատեցանք եւ Գամփի շէքին մէջ շինութիւնը ամբողջացուցինք: Մեր մէջ ամենէն կարճահասակներէն մին՝ Զաքար, որուն Քիւթիւք՝ կոճղ անունը դրած էինք, առանձինս կը գրկել ջեմենտի պարկը եւ մինչեւ տանիք կը հանէր»,- հիշում է Դինքը: Այն շրջադարձել է նրա ողջ կյանքը. այստեղ է ծանոթացել իր կնոջ՝ Ռաքելի հետ: Միասին մեծացել են, ապա ամուսնացել... Երեխաներն էլ այստեղ են ծնվել («İsyanimin pike uçuşları», Agos, 13 Ağustos 1999): «Անադոլուի(Արևմտյան Հայաստան-Է.Մ.) կանաչ դաշտերուն մէջ անմեղութեամբ իրարու հետ խաղացող հայ եւ թուրք տղաքը իրարէ բաժնելու», ԱՄԱԼԱ-ի շարքերը համալրելու մեղադրանքով ավարտվել է «Ատլանտիդյան քաղաքակրթությունը» (<http://www.dnforum.am/showthread.php/5632-Պոլսոյ-Պատանեկան-Տունը>):

²³ Տե՛ս Մելքոնյան Ռ., *Իսլամացված հայերի խնդիրների շուրջ*, Եր., 2009, էջ 47, 48:

²⁴ Tuba Çandar, *նշվ. աշխ.*, էջ 151-153:

ցում տեղի է ունենում նրանց ամուսնության արարողակարգը, և ողջ ընտանիքով տեղափոխվում են Ֆերիքոյ՝ Դինքի հոր տանը բնակվելու²⁵: Նրանք երկու դուստր և մեկ որդի են ունենում՝ Պայծառ (Դելալ), Արարատ (Արատ) և Սերա*:

1980-ականներին Հ. Դինքը նոր հորիզոններ հղացող արտահայտություններով հասարակության ուշադրությունը գրավում է՝ «Յենի Յուզլը», «Ջաման» և «Բիր Գյուն» թերթերում անկյուն զբաղեցնելով: 1990-ական թվականներին Դինքը Ջութակ²⁶ ծածկանվամբ Կ. Պոլսի «Մարմարա» օրաթերթում «Նոր գրքեր» ընդհանուր խորագրի ներքո, ներկայացրել և լուսաբանել է թուրքահայ համայնքից դուրս լույս տեսնող բոլոր այն նոր գրքերը, որոնք անդրադարձել են Հայկական հարցին²⁷, քանի որ «Հայկական Հարցը թուրք հրատարակչական մարզէ ներս այդքան ալ ձեռք առնուած ու քննարկուած հարց մը չէր եղած եւ «թապու» մը ըլլալով տեսնուած էր անընդհատ»²⁸:

1996 թ. Հ. Դինքը և իր համախոհ ընկերները հիմնադրում են «Ալօս» երկլեզու (հայերեն-թուրքերեն, որը Պոլսի մեջ նմանատիպ առաջին շաբաթաթերթն էր) պարբերականը: Այն Դինքի և իր ընկերների կողմից ի սկզբանե հրապարակ իջավ «որպես անխուսափելի ձայն համատարած լուծության մեջ»²⁹:

Ինչպես կասեր արևմտահայ գրող, հրապարակախոս, գրաքննադատ, խմբագիր Արփիար Արփիարյանը, Թուրքիայում խմբագիրը պետք է լարախաղացի ճարպկություն ունենա, հակառակ դեպքում կսայթաքի և կջախջախվի: Դինքը, համաձայն խմբագիրների դեմ իրագործվող թուրքական ավանդույթի, դառնում է թիրախային կետ: Թուրքական օրենսգրքի 301 (թուրքականությունն անարգող) հոդվածով երեք անգամ քրեական գործ է հարուցվում նրա դեմ. «Տինք, Թրքահայերու ապրած լուծեան եւ վախի պատին վրայ ծակ մը բացած ըլլալուն համար

²⁵ Նույն տեղում, էջ 155-159:

* Հրանտ և Ռաքել Դինքերն իրենց երեխաներին հայկական անուններով են անվանակոչում, սակայն հայտնի պատճառներով երեխաների իսկ ապահովության համար անունները փոխվում են. Պայծառը (Հ. Դինքի հորական տատի անունով) դառնում է Դելալ (Ռաքել Դինքի մոր անունը, որը քրդական անուն էր), իսկ Սերային Սուրբ Գրքի Սառա անունով են կոչում, Արարատն էլ կրճատվելով դառնում է Արատ (նույն տեղում, էջ 258, 264):

²⁶ Այս նույն առաքելությամբ հետագա տարիներին Ջութակը «Ալօս» - ում անկյուն է զբաղեցնում «Ջութակէն նօթագրութիւններ» խորագրի ներքո. «Այս գիրքերուն մասին ատեն-ատեն ծանօթագրութիւններ ընել սկսած էինք անցեալ երկու տարիներու ընթացքին «Մարմարա» օրաթերթին մէջ: Այդ աշխատութիւնները ատելի շատ նոր հրատարակուած գիրքերու մասին էին: Աշխատանքը պիտի շարունակենք «Ալօս» շաբաթաթերթով, ուր պիտի ջանանք ատելի սիւթնատիկ աշխատանք մը տանիլ եւ հետաքրքրողներուն համար արխիւ մը պատրաստել: Ուրեմն, հաւանաբար, ժամանակ առ ժամանակ մեր այս յօդուածաշարքին մէջ պիտի տեղադրենք նաեւ ատել առաջ Ջութակ ծածկանունով լոյս տեսած գիրքերու ծանօթագրութիւնները եւս: Մեր յօդուածաշարքին այս պատճառաւ տուինք «Ջութակէն նօթագրութիւններ» անունը» («Ալօս», թիվ 22, 30 օգոստոս, 1996):

²⁷ «Մարմարա», 12 նոյեմբեր, 1993:

²⁸ «Ալօս», թիվ 22, 30 օգոստոս, 1996:

²⁹ Չենգիզ Աքթար, *Կոչ ներքումի*, Եր., 2011, էջ 15:

վերջին ամիսներին ընթացքին երեք անգամ³⁰ «Թրքությունը անարգելու» համար ամբաստութեամբ իր դեմ դատ բացուեցաւ»³¹:

Դեռևս 1980 – ականներին՝ համալսարանական տարիներին, ձախակողմյան հատվածի շարժումներին մասնակից լինելու համար նա երեք անգամ հսկողության տակ է առնվել, ամիսներով բանտում մնացել և երկար տարիներ (25 տարի³²) չի կարողացել անցագիր վերցնել: Ինչպես նաև քանիցս նրա դեմ դատեր են բացվել այլևայլ առիթներով³³, մինչև որ ռճրագործ ստորին ուժերը թիկունքից սպանում են նրան «Ալյու»-ի խմբագրատան դիմաց:

Հրանտ Դինքի վերջին ու մեծագույն սխալն այն համոզումն էր, որ Թուրքիայում մարդիկ վնաս չեն տալիս «աղավիններին»³⁴. Հրանտ Դինքը ընկած է խմբագրատան առջև՝ «այն շատ վտանգաւոր ուղեղէն զարնուած կաշկանդուած խաղաղութեան աղունկիկ մը պէս»: «Ալյու»-ի հիմնադիրներից, հայերեն էջերի բազմամյա խմբագիր Սարգիս Սերովբյանն այս առումով նկատել է տվել, որ խփեցին, բայց չմտածեցին, որ նա առասպել պիտի դառնար, իսկ առասպելները չեն մեռնում³⁵:

Չխորանալով առանձին ուսումնասիրություն պահանջող խնդրի մեջ՝ նշենք այն, որ դատավարությունը դեռ շարունակվում է, և այն տակավին չի բացահայտել իրական պատվիրատուներին. «Ողբերգությունը ասարտուեց, սակայն կատակերգությունը շարունակվում է»³⁶:

³⁰ Առաջինը «Թուրքականությունը նախատելու» համար վեց ամիս բանտարկության դատապարտության վճիռն է կայացվել, սակայն պատիժը հետաձգվել է: Հաջորդը իր գրություններից մեկում «թունավորված արյուն» արտահայտությունն օգտագործվելու համար է դատական գործ հարուցվել, բանտարկության է դատապարտվել, սակայն սա ևս հետաձգվել է: Այնուհետև մեկ այլ գրության մեջ «Թուրքական արդարությունն ազդեցության տակ առնելու» ամբաստանությամբ է դատ բացվել («Ալյու», թիվ 529, 19 մայիս, 2006, տե՛ս նաև թիվ 538, 21 հուլիս, 2006):

³¹ «Ալյու», թիվ 529, 19 մայիս, 2006:

³² Տե՛ս «Ալյու», թիվ 498, 14 հոկտեմբեր, 2005:

³³ Նույն տեղում:

³⁴ Հրանտ Դինքը վերջին օրերին իր հոգեվիճակը վախվորած աղավառ հոգեվիճակի հետ էր նույնացնում, սակայն վստահ էր, որ Թուրքիայում աղավիններին վնաս չեն հասցնում: Աղավինին անմեղության, մաքրության և բարության խորհրդանիշ է, սակայն Լիբանանում կա «Թիր օ փիժօն» հասկացությունը: Ձիարձակարանի նման մի վայրում հավաքված և շրջան կազմած մարդիկ, օդ արձակված աղավիններին կրակելով, գրավ և բախտախաղ էին անում: Իսկ շրջան կազմած մարդկանցից շատերը սպասելով, որ աղավինին վայր ընկնի, բզկտում և իրար ձեռքից փախցնում են: Հրանտ Դինքն էլ, հարկ է ասել, որ այդ աղավինների բախտակիցը դարձավ («Ալյու», թիվ 565, 26 հունվար, 2007):

³⁵ Նույն տեղում:

³⁶ «Ալյու», թիվ 570, 2 մարտ, 2007:

ՀՐԱՆՏ ԴԻՆԲԴՐՎԱԳՆԵՐ ԿՅԱՆՔԻՑ ԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Էլինա Միրզոյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են նշանավոր հայ լրագրող, հասարակական գործիչ, պոլսահայ «Ակոս» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր Հրանտ Դինքի կյանքն ու խմբագրական գործունեությունը: Լուսաբանվել են նրա կյանքի և հասարակական գործունեության բնութագրող և ընդգծված կողմերը: Դինքը Թուրքիայի այն ակնառու հայերից էր, ով հայտնի դարձավ՝ Հայոց ցեղասպանության թեմատիկայի շուրջ բարձրաձայնելով: Փաստերի համադրման և վերլուծության արդյունքում լույս է սփռվել նրա կյանքի կարևորագույն և շրջադարձային իրադարձությունների վրա: **Բանալի բառեր՝** Հրանտ Դինք, «Ակոս», Ռաքել Դինք, Վարդո, Թուզլա:

EPISODES FROM LIFE AND EDITORIAL ACTIVITY OF HRANT DINK

Elina Mirzoyan

SUMMARY

This article presents the life and activity of Hrant Dink, the Armenian famous journalist, public figure, founder and editor-in-chief of the Armenian weekly “Agos”, the typical sides, characteristics of Dink’s life and activity. Hrant Dink was one of the famous Armenians in Turkey, who had become known as one of the authors to raise the issue of the Armenian Genocide. In the article we also emphasize the important and main events in Dink’s life on the basis of the analysis of the facts.

Keywords: Hrant Dink, “Agos”, Rakel Dink, Vardo, Tuzla.

ЭПИЗОДЫ ИЗ ЖИЗНИ И РЕДАКТОРСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ГРАНТА ДИНКА

Элина Мирзоян

РЕЗЮМЕ

В статье представлены жизнь и деятельность известного армянского журналиста, общественного деятеля, редактора-основателя армянской газеты «Акос» Гранта Динка. Освещены типичные стороны, основные вехи жизни и общественной деятельности Динка. Динк был одним из выдающихся армянских деятелей в Турции, ставшим известным благодаря своим последовательными шагам по поднятию темы геноцида армян во внутритурецкой общественно-политической жизни.

Ключевые слова: Грант Динк, «Акос», Ракель Динк, Вардо, Тузла.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նարինե Հակոբյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող: Զբաղվում է 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների առանձին ասպեկտների ուսումնասիրությամբ:

Ռեգինա Գալուստյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: Ուսումնասիրության թեման է «Թուրքական ինքնության ձևավորումը և Հայոց ցեղասպանությունը»:

Ռոբերտ Թաթոյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող, Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Զբաղվում է արևմտահայության ժողովրդագրության հարցերի ուսումնասիրությամբ: Մեկ մենագրության հեղինակ է:

Ավետիս Հարությունյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ:

Դերենիկ Մելիքյան, Թեհրանի «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր:

Շուշան Խաչատրյան, ՀՅԹԻ Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի գիտական աշխատող: Պատրաստվում է պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության հետազոտման կրոնագիտական խնդիրները» թեմայով: Ուսումնասիրությունների ոլորտն ընդգրկում է Օսմանյան կայսրության կրոնական վիճակը, կրոնների բախումը Մեծ եղեռնի ընթացքում, ցեղասպանության աստվածաբանությանը, Հոլոքոստի փիլիսոփայությանն առնչվող թեմաներ:

Նարինե Մարգարյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի վարիչ: Զբաղվում է արաբական երկրներում Հայոց ցեղասպանության արձագանքի թեմայի ուսումնասիրությամբ: Մեկ մենագրության հեղինակ է:

Ինեսա Ստեփանյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող:

Էլինա Միրզոյան, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: Զբաղվում է

թուրքահայ մամուլի էջերում Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրմամբ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ արևմտահայ մամուլի էջերում հայ և թուրք ազգային ինքնությունների թեմայի քննություն, հայկական թեմատիկան թուրքական տպագիր մամուլում: Մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ:

Միհրան Մինասյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության երկրորդ փուլը (Միլիայի տարածքում), հայ գրքի և ձեռագրերի պատմություն, հալեպահայ գաղթօջախի պատմություն և այլն: Յոթ մենագրության և բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

Հրատ. խմբագիր՝ Ազատուհի Սահակյան:

Համակարգչային էջադրումը՝ «Կոլլաժ» ՍՊԸ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 11.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «Կոլլաժ» տպագրատանը
Երևան, Սարյան 4 • Հեռ.՝ (+374 10) 52 02 17
Էլ. փոստ՝ collageltd@gmail.com • Էլ. կայք՝ www.collage.am